II 2/8



Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

891.99-2

2004

1935 — 42



ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԻՆԵԱԼՔ

Ի Հ. ՊԵՏՐՈՍ Վ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՅՈՒԽՏԷ

ՄԽԻԹԱՐԱՅ ՄԵԾԻ ԱԲԲԱՅԻ

ՀԱՏՈՐ Ա.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՔ



ԻՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1845

ԸՋԴ

Ընդ ամենայն կարևորաց 'ի զարգացումն ազգի՝ յանյիշատակ ժամանակաց հետէ և ամենայն ազգք բարգաւաճեալք յիմաստութեան՝ կարևոր դատեցին զքերթողութիւնս թատերականս, յորս ոչ եթէ միայն իբր 'ի պատկերի նկարագրէ քերթողն զառաքինութիւնս և զթերութիւնս մարդկան և զկիրս, այլ զարսն զայնոսիկ՝ որք առաքինութեանցն այնոցիկ և թերութեանց տեարք իցեն, առեալ ածէ 'ի մէջ կենդանիս, որք ինքնին յանդիման ցուցանեն զգործս իւրեանց զառաքինիս և զմոլեկանս, և զհատուցումն վարձուցն և տուգանաց անդէն առեալ խնդան, և կամ՝ 'ի զեղջ և յապաշաւ նստին: Այս չէ շատ. այլև զոր 'ի բնութեան ոչ տեսանեմք՝ զխորհուրդս մտաց մարդկան զառաքինեացն և զմոլելոց, եթէ զինչ 'ի

*

խիղճս մտացն և 'ի սրտին զգայցէ այր
այր 'ի բարեգործելն կամ 'ի զառածանել
'ի չարիս, յայս ազգ քերթուածոց ա-
մենայնն մերկապարանոց կայ 'ի կենդանի
մարդիկն. և թէ որպէս նոքա յաճախ
ոչ զոր ունին 'ի սրտի՝ հաղորդեն այլոց,
այլ բազում ինչ ընդ պատրուակաւ, մա-
նաւանդ յորժամ"ի կրից առաջնորդիցին:
Արքն այնոքիկ կենդանացեալք 'ի խրատ
հանդիսականաց ամենեցուն, կենցաղավա-
րին ընդ միմեանս՝ որպէս մեքս յաշխարհի:
Բայց գաղտնիք մերոցս սրտից միայն Ա-
ստուծոյ գոլով յայտնիք, և զոր մեզ թուին
պատշաճականք՝ զայն և եթ հաղորդեմք այ-
լոց. իսկ սոքա զհանդիսականսն ունին ա-
մենայն խորհրդոց մտացն և սրտից հաղոր-
դըս, գոգցես իմն այնպէս՝ որպէս մեքս ի-
ցեմք անմարմնական հոգեղինացն յանդի-
ման. իբր զի հանդիսականքն արտաքոյ հա-
մարին տեսարանին յորում կան արքն այ-
նոքիկ կենդանացեալք ըստ կամս քերթո-
ղին, և ամենևին ոչ ինչ բան է նոցա ընդ
նոսա. միայն 'ի խրատ լսողացն մերկանան
առաջի նոցա զամենայն զյօժարութիւնս
մտացն, զկամս, զխորհուրդս ծածուկս,

և զխիղճս յորոց տագնապին 'ի գաղտնիս՝ 'ի դէմսն զուարթութիւն բերեալ. և կամ՝ ընդհակառակն՝ եթէ 'ի խղճին բերկրեալ և առ մարդիկ վշտացեալս համարին: Տեսանի անդէն՝ եթէ որպէս պատրուակ յամի առնուն մարդիկ զառաքինութի, և 'ի միսել անդ 'ի չարիս՝ զպէտս ինչ և զիրաւունս բաղբաղեն: Եւ այս յայտնութիւն գործոց և ներքին խորհրդոց ոչ միոյ ուրուք է անդանօր, և ոչ տասանց ոմանց, այլ անթիւ անհամար որերոյ. ոչ միայն քաղաքակցացն կամ ազգին, այլ և ամ աշխարհի մարդկան. ոչ սերկեան ժողովելոցն, կամ ժամանակցաց այնր դարու, այլ 'ի սկզբանէ աշխարհի և այսր եղելոց մարդկան, ընդ ամենայն ոլորտս երկրի: Արդ քանի՛ խտիր է ընդ մարդ՝ որ սակաւօրեայ կենօք կեայ 'ի տան և յաշխարհին իւրում, և ընդ այր՝ որ զամս կենացն հաշուէ 'ի սկզբանէ աշխարհի և այսր՝ վեցիւք հազարօք ուրեմն զամսն չափեալ, և տուն բնակութեան անձին զոլորտս երկրի ունելով, և քան զԱրամազդայ զառասպելեալ զընթացսն՝ 'ի գագաթունս լերանց զոտնափոխսն առնելով: Քանզի սա յանկարծ 'ի նոյն 'ի նմին ժամու ընդ

հինգ մասունս աշխարհի պարայածի. և ոչ այսու շատացեալ, և զամենայն զհնոց ժամանակաց զաշխարհս, զքաղաքս և զամուրս յոտին՝ որպէս էինն յայնժամ՝ տեսանէ, և ընդ մարդկան ամենայն աշխարհաց և դարուց լինի կենցաղակից, և ոչ միայն ընդ վիճակակցացն իւրոց արանց, այլ ընդ ամենայն առն մահկանացուի՝ որոյ շունչ յրռնգունս լեալ իցէ: Մ՝տանէ համարձակ առ դիւցազունս հրամանատարս աշխարհի, առ թագաւորս, կայսերս, նահապետս, և առ բռնակալս՝ որոց յանդիման չէր ումեք համարձակելի երևել. սա երթեալ կայ առ նոսա, քննէ զամենայն արարուածս նոցա, լսէ և զամենայն գաղտնիս մտաց նոցա և զծածկեալ յօժարութիւնս սրտից նոցին, և թէ զիարդ 'ի սպառնալ անդ այլոց և 'ի հրամայել նոցա, և 'ի կարծեցուցանել՝ եթէ ամենայն ցանկութիւն կամաց իւրեանց կատարիցի, տեսանէ զնոցա խորհրդոցն զանհնարին տագնապ և զտանջանս: Ընցանէ անտի առ թշուառացեալս աշխարհի. իջանէ 'ի բանտս չարագործաց, տեսանէ և զնոցա զխիղճս մտաց, 'ի միտ առնու զի է երբէք և ան-

մեղաց մատնել 'ի տանջանարանս փոխա-
նակ մեղապարտաց։ Ելանէ յանմարդա-
բնակ 'ի բազմավտանգ վայրս, ինքն աներ-
կիւղ գոլով ամենայնիւ. մտանէ 'ի պա-
տերազմունս, մխի 'ի սաստկացեալ ճակա-
տամարտս. ելեալ կայ 'ի վերայ պարսպաց
ընդ տարափով նետից, քարանց և ռմբացն
հրազինուց, և 'ի զնին կայ անկանելոյ 'ի
հիմանց ամրակառոյց բերդից և պարսպաց,
և 'ի խրամատսն 'ի մէջ արեանց գետահե-
տեալ հոսելոց. և ինքն անվնաս՝ վշտանայ
ընդ աղետալիսն, և խնդայ ընդ բերկրա-
կանս, և յայնմ ամենայնի ուսանի 'ի չա-
փու զանձն ունել։ Եւ զոր՞ս յիշեցից յան-
թիւ գործոց անտի յանցելոցն և որք լինին.
սա ամենայնի տեղեակ, ամենայնի առաջի-
կայ, ամենայնին ընտել. ոչ ինչ առաջի նո-
րա ծածկեալ կայ յերեսս երկրի և 'ի խոր-
հուրդս մարդկան։ Այսպէս ամենատես
ոք է, որպէս վայել է լինել պատկերին Ա-
ստուծոյ, բազմադարեանդ այդ մարդ, որ
'ի ժողովս թատերական քերթութեանց ճե-
միցի։ Ո՛վ գերակատար արուեստին, և
բազմաշահ ուսմանն։

Յետ ամենայնի տեսանէ մարդ և զանձն

իւր իբր 'ի հայելւոջ՝ 'ի թատերական տե-
սարանին, և զհոգւոյ իւրոյ զխորհուրդս ան-
պատրուակ նկատէ, այնպէս զի որ յառա-
ջըն յանձնասիրութեանն ախտէն խա-
բեալ մոլորէր, յայնմհետէ սկսանի ճա-
նաչել զանձն: Եւ զոր առնէ ինքն և զոր
կրէ յանձին, և թէ յո՛ կամ յի՛նչ ինչ
դիմէ յօժարամտեալ, և եթէ յի՛նչ վախ-
ճան յանկեսցին իրքն, զայն ամենայն ճըշ-
դիւ գտակաւ տեսեալ 'ի միտ առնու. և
խրատեալ ուսանի զոր ինչ պարտն իցէ առ-
նել յետ այնորիկ. և ոչ ոք իմանայ զխոր-
հուրդս մտաց նորա:

Այս ամենայն արգասիք են թատերա-
կան քերթուածոց: Եւ ո՞ ոք երբէք ոչ հիա-
ցեալ սքանչասցի, լուեալ՝ եթէ է յաշխարհի
այսպիսի իմն արուեստ՝ որ զմարդ տկար և
սակաւժամանակեան այսպէս կարող և
սքանչելահրաշ գործիցէ: Այսմ ա՞մի ա-
ւասիկ քաջ խելամուտ գոլով գերածայ-
րեալքն յաշխարհի ուսմամբ գիտութ՞եց և ա՞մ
կենցաղական հրահանգօք ազինք, Հելլենք
ասեմ, և Հռովմայեցիք, և որք ըստ նոցանէ
այժմուս բարգաւաճագոյն ժողովուրդք Եւ-
րոպայ, մտադիւր յօժարութեամբ թևա-

կոխեցին 'ի յաճախել և զայս ազգ քեր-
թուածոց ։

Էին և առ մերովքն արշակունի թագա-
ւորօք թատերական տեսարանք, յորս ար-
քայորդւոյն Արտաւազդայ 'ի հանդէս ան-
ցանէին ողբերգակ և վսեմ իմաստիցն նը-
կարագիրք, որպէս երաշխաւորէ մեզ Պը-
լուտարքոս. այլ աւա՛ղ, հանդերձ այլովն
ամենայնիւ և այնր պարծանաց վայելք և
սփոփութիւն կապտեցան զերծան 'ի մէնջ
անդառնալի ։

Իսկ զարդիս մինչդեռ վերստին սկսանի
ազգ մեր զսիրով ուսումնական հրահան-
գաց և կենցաղօգուտ յառաջադիմութեան
գալ, և խաղաղաւէտ անդորրութեամբ 'ի
խնամս տերանցն և 'ի սէր իրերաց վայելել,
կամ եղև և մեզ տալ նմա զճաշակ և զայսր
ազգի քերթութեան, զի մի և յայսմ յետ-
նեալ մնասցէ քան զայլս յազգաց ։

Սակայն որպէս զի առաւել բազմարդիւն
այս ուսումն յազգին մերում լինիցի, յա-
ռաջ քան զմատչելն 'ի գործ՝ 'ի քնին արկ-
ցուք սուղ բանիւ, Ա, զօգտութիւնս թա-
տերական բանահիւսութեանց. Բ, զդի-
տումն յոր պարտի ուշ ունել՝ որ կամիցի

վայսը սովորութիւն մուծանել՝ի մէջ ազ-
գակցայն . գ , եթէ քանի՛ չարիք՝ի թեր
ուղիղ զդիտումն ունելոյ յառաջ գայցեն :
()գտութիւնք թատերական քերթո-
ղութեանց բազմազգի են , մարթ է ա-
սել և ամենազգի , միայն եթէ ըստ օրինի
լինիցի , և կարգեալ՝ի վախճանն ուղիղ՝զոր-
մէ զկնի : Ընդ ա , Գլխաւորագոյն յօ-
գուտս նոցին են բարոյականին հրահանգք .
քանզի սոքա ձեռն կարկառեալ ունկնդրա-
ցըն՝ խնդութեամբ , զուարթութեամբ ա-
ծեն՝ի ձանապարհն ուղղութեան . զամե-
նայն ազգի ազգի մոլութեանց զչարիս հրա-
պարակեալ ցուցանեն . զմանկահասակս ,
զերիտասարդս և զծերս միանգամայն յու-
ղութիւն յորդորեն , առանց զայրացուցա-
նելոյ եւ՛բէք զոք , և ոչ զոք թողուն յիւ-
րում՝խակութեանն :

Գ . ()գտութիւն մեծ անակնկալ՝՝ի բա-
րեմարդութեան և՝ի քաղաքականութեան .
քանզի թատերական բանահիւսութիւն զա-
մենեսին մարդասէրս գործէ , ընկերականս ,
հլուս օրինաց և գոհս , և զամենեսին՝ի սի
սէր յօդէ , և զազգն ողջոյն՝ի սի գեր-
դաստան ժողովէ . և զհասակայն տարան-

ջատ վիճակ զօդէ 'ի միասին, զծերոյն և զայրացելոյն, զերիտասարդին և զպատանւոյ և զմանկան. այնպէս զի զվայրենական օտարութիւն 'ի բաց եդեալ, ամենեքին 'ի միասին կենակից գտանին գոհք և հաճք ընդ վայելսն:

Գ. Օգտութիւն անչափ 'ի կրթել զմիտըս յիմաստութեան. և այն զամենեցուն զմիտս միանգամայն, զմանկան և զերիտասարդին և զծերոյ, յազգի ազգի գիտութիւնս, 'ի պատմականն, յիմաստասիրականն, 'ի չափաբերականն և 'ի բնաբանականն. և 'ի գեղեցիկ յազատական արուեստսըն, այնպէս զի ոչ զոք թողուլ անուսումն և անոպայ ամենևին. զի այսպէս ասացից՝ զիմաստութիւն իմն հեղեալ 'ի միտսն ազդելով, 'ի զբօսեցուցանել անդ և դաստիարակէ:

Դ. Թատերական բանահիւսութեանց պէտք և օգտութիւն անչափ է յուսումն քաղաքավարական կենակցութեան, բարեհաճոյ երևելոյ և ընտիր, գիտելով ըստ ժամանակին և ըստ տեղւոյ, զխօսս պատշաճեցուցանել, ունելով և զբարեվայելուչ շարժումն 'ի կալ, 'ի խօսել, 'ի գնալ և 'ի

նստել. զհայեցուածս աչաց և զդէմսն, և բովանդակ իսկ զանձն գլխովին 'ի համապատշաճ դիրս կալեալ ըստ կրիցն յուզման և ըստ բանին իմաստից. այնպէս զի ակներև ցուցանիցի և արտաքուստ՝ եթէ զբանական հոգին զպատկերն Աստուծոյ կրեն մարդիկ յինքեանս:

Ե. Կատարելութիւն լեզուին և խօսից յազգս իւրաքանչիւր: Լուեալ մանկտւոյն յաճախ և 'ի բերան ուսեալ զհայկական շարամանութեան զքաղցր և զվայելչահիւս դարձուածս բանից ընտիր ոճովքն, իբրև 'ի մոմ'ի մատաղ միտսն դրոշմին նոքին անջնջելի. և այնպէս քաղցրացեալ յուշի նոցա բազմարուեստ դարձուածոց դիւցազնական քաջահնչող նոյեան լեզուիս, առաւել և ս փութոյ պնդութեամբ զհետ լինին կրթել զանձինս 'ի նոյն. և ըստ լեզուին կատարելութեան՝ միտքն և ս զարգանան 'ի խոկումն. զի որչափ քաղցրանան մտաց բանքն զոր լսէ ոք, նովին չափով յաւէտ յօժարամտի և 'ի գործադրութիւն ամենայնի որոց ականջալուրն եղև:

Զայս ամ ազգի ազ գի օգտութիւնս ցանկալիս թատերական բանահիւսութեանց լը-

ւեալ՝ զարմասցի ոք արդեօք, եթէ էր աղա-
գաւ ապա ցարդ ոչ փութացաք յուսումն
և 'ի գործադրութիւն այսպիսւոյ օգտամա-
տոյց արուեստի: Դարձեալ և ընդ այն
զարմասցի՝ եթէ զի՞ է ապա զի յԵւրոպէ
արդ զօր ամենայն՝ յամենայն 'ի քաղաքս և
յաւանս զբաղեալք 'ի թատերական յայս
տեսարան, և ոչ թուին ամենայնիւ այսքան
և այսպիսի օգտից ժառանգորդք: Ի լու-
ծումն կարևոր տարակուսութեցս մատու-
ցեալ, զերկրորդն նախ պարզեսցուք զերկ-
մտութիւն, որով և զառաջինն գտանիմք
պարզեալ:

Մ՝ եծամեծքն 'ի գործս մարդկան որչափ
առաւել օգտակարք իցեն, այնչափ ևս ա-
ռաւելութեամբ ընդ իւրեանս առեալ ածեն
վտանգս մեծամեծս: Աւանիկ առաջի աչաց
ամենեցուն մեր կան նորահնար գիւտք շո-
գեշարժ մենքենայից. ո՞ կարէ զչափ բարու-
թեանցն թուել՝ զորս եբեր ընդ իւր գիւտս
այս հանճարաւոր. այլ և վտանգքն որ 'ի
գործադրութենէ գիւտիցն ո՛րչափ մեծա-
մեծք են և անհրաժեշտք. և քանիօն նա-
խահայեաց զգուշութեան պէտք են առ 'ի
զառաջս ունելոյ ամենայն վտանգաց, և

առ բազմահմուտ առաջնորդութիւն : Նա
յետ այսպիսի և այսչափ զգուշաւորու-
թեանց՝ լսին դարձեալ և վնասք ուրեք ու-
րեք . և զինչ եթէ զկարևոր զգուշութիւնքն
զանց առնէին՝ յօգուտն միայն վայելել ցան-
կայեալք . ապաքէն յիրաւի էր յայնժամ
համարել զսոյն՝ հնարագիտութիւն իմն առ
՛ի ջնջել զազգս մարդկան յերկրէ՝ զառն
մահուամբ ՛ի հուր զամենեսին դատելով .
և ո՛ ՛ի մարդկանէ յանձն առնոյր երթալ
մերձ՝ հաղորդ օգտութեանն լինել կամե-
ցեալ : Արդ ՛ի միտ առ զկարևորութիւն
գիւտիցն , բայց առ նմին և զպէտս մեծի
զգուշութեանն . ապա թէ ոչ , օգուտն
այն մեծ՝ յևս մեծագոյն փոխի վնաս : Ն-
թէ ՛ի նիւթականս այսչափ , զինչ ապա
որք ՛ի բանաւոր պէտս՝ ՛ի կրթութիւն և
՛ի շահս օգտի մտաց և սրտից կարևորք ի-
ցեն : այն զի ամենամեծ օգտութեանց թա-
տերական արարուածոց՝ և մեծամեծ յոյժ
վտանգքն են առընթեր՝ եթէ յանզգոյշս
մատչիցի ոք ՛ի նոսա : Այսպէս ուրեմն
առ ՛ի վայելել յարդիւնս օգտութեանցս
այսոցիկ թատերական բանահիւսութեանց ,
նախ քան զամենայն ՛ի նոյն պարտ է զՀո-

տումն ուղղել՝ և ըստ այնմ՝ 'ի կարգի ունել
զամենայն. ապ՝ եթէ ոչ՝ քնութի՝ մեր յամե-
նայնի 'ի չարն հակամէտ, ուր ուրեք գըր-
գիռս ինչ ախտիցն գտանիցէ, անդէն մո-
ռանայ զամենայն զբարութիւնսն մեծամե-
ծըս, որպէս տեսանեմք պատահեալ և 'ի
թատերսն. զի առեալ մարդկան զգործին,
ուսեալ զարուեստն, սակայն առանց զդի-
տումն ուղիղ ամենայնիւ ունելոյ, ոչ ինչ
կամ սակաւ շահին. այլ յաճախ ևս վնա-
սին չարաչար: Յայսմ ազգի քերթութե՝ է
օգուտ՝ միանգամայն և բերկրութի՝. օգուտն
է վախճանն, և զուարճութիւնն պա-
տահումն և յորդորիչ օգտակարութեան
իրացն: Արդ եթէ ոչ յամենայն օգտու-
թիւնս թատերացն վայելեն մարդիկ, և եթէ
վնասին ևս յաճախ, ո՞ ոք զպատճառսն
անգիտասցի. զի առ բազումս 'ի մարդկանէ
վախճան և դիտումն հանդիսիցս զբօսանքն
և բերկրութիւն կարծեալ է. որպէս 'ի հին-
սըն, զորմէ խօսին Ոսկեբերան և այլք,
նոյնպէս և 'ի նորումս. իսկ օգտութիւնն
բաղբաղայք իմն են նոցա ըստ քմաց, որպէս
զի մի խափանել հասցէ արուեստին, և զըր-
կիցին ինքեանք 'ի զուարճութեանց անտի:

Վասն այսորիկ և արուեստս այս՝ գերագոյն 'ի բարոյականին կրթութիւն, և աղբիւր բազմապատիկ օգտից, յամենայն բարեսիրաց մտաւորաց՝ որք գիտեն 'ի գործոյն զվախճանն կշռել, 'ի հինսն նաև այժըմ յԵւրոպա, իրաւամբք վնասակար դատեալ է և կորստական. և բազում իմաստուն ծնողք որ անցեալք իցեն ընդ փորձ չարեաց աշխարհիս, զգուշացուցանեն զորդիսն մի յաճախել 'ի զնին թատերաց: Ապա կարի իսկ յիրաւունս և ՝սբ հարքն մեր նախնիք, որպէս և Յունացն և Լատինացւոց անդադար անգոսնէին և անարգէին զթատերս 'ի խրատս իւրեանց առ ժողովուրդս, և զգուշացուցանէին զնոսա յայնցանէ իբրև 'ի հաղբից և 'ի ծուղակաց՝ որ յանփախուստ 'ի մահ զմարդիկ մատնիցեն. որպէս է տեսանել 'ի յորդորակս սրբոյ Ոսկեբերանին և 'ի Մանդակունւոյ Ճառսն:

Եւ որպէս հնարաւոր էր մեզ ցարդ մուծանել և յազգ մեր արուեստգիտութիւն իմն այսպիսի, որ յանդէպս գործադրութեամբն զատեալ հեռացեալ էր ամենայնիւ յիւրմէ վախճանէն, և 'ի սրբոց վարդապետաց եկեղեցւոյ, և յայժմուս իսկ քաջըն-

թաց հովուաց և առաջնորդաց դատապար-
տեալ, և նզովիւք չափ արգելեալ ։

Բայց քանզի յայժմեան ժամանակիս և
'ի քիմս մերոցն ազգայնոց սկսանին տակաւ
քաղցրանալ օտարոտի տեսարանք այլալե-
զու ազգաց անզգուշից, և ընդ սակաւ քա-
ղաքական օգտութեցն սկսանին արդ մերքն
և մեծամեծ վնասս յանձինս ձգել անտի՝ 'ի
միտսն և 'ի հոգիս, և փոքր միւս ևս համար-
ձակեալ բուռն հարկանեն մուծանել նմանօ-
րինակս ինչ և յազգին մերում, զնոյն սովո-
րութիւնս ասեմ նոքիմբք կարգօք, յորոց
անշուշտ և բազում և անդարմանելի վնա-
սուց գտցին ժառանգորդք մանկունք ազ-
գիս իբր յանգէտս, զայս ամենայն ակն
յանդիման և անպատրուակ տեսեալ մեր,
փութամք արդ զառաջս առնուլ չարեացն ։
Գովել գովեմք զյօժարամտութիւն ազգիս
մերոյ 'ի փոյթ վայելելոյ յընտիր այս արուեստ
և 'ի պիտանի յոյժ 'ի զարգացումն. այլ
առնմին ցուցանեմք և զմեծամեծ վտանգսն
վնասուց՝ 'ի թերուղիղ զդիտումն ունելոյ.
միանգամայն առաջի առնեմք սիրողաբար և
զհնարս ուղղութեն 'ի սկզբան աստ, մինչ
չև 'ի կողմն մի զմիտսն խոտորեցուցեալ ։

Առ հաստատութեամբ 'ի վերայ կալ ճըշ-
մարտութեանն, յառաջ քան զամենայն
արժան է 'ի միտ առնուլ՝ եթէ թատերա-
կանս արարուած թէպէտ և բերկրական է
մտաց մարդոյ, բայց ոչ է և ոչ պարտի հա-
մարիլ 'ի թիւս հրապարակական հանդի-
սից՝ որոց վախճան է զբօսանք և եթ բնակ-
չաց քաղաքին. որպիսի են հանդէսք խաղ-
արկութեանց, պարուց, և որ այլն ևս:
Իսկ սա առանձինն պարտի կարգել 'ի խրատ
և յուղղութիւն ազգին և ժողովրդեան
յայնմ ամենայնի՝ զորս 'ի վեր անդր յիշա-
տակեցաք: Եւ առ 'ի բաց փարատելոյ զա-
մենայն երկմտութիւն՝ ունիմք և զօրինակն
յանդիման: Հրահանգք զինուորականք
թուին իմն առաջի ժողովրդոց հանդէս լոկ
ակնահաճոյ, վասն որոյ և 'ի մեծամեծ
փորձսն խուռն ընթանան ամբոխք 'ի տես և
զուարճանան: Այլ վախճան պետութեն՝
'ի մատուցանել անդ զզօրականսն 'ի փորձ
անդր, մի՞ արդեօք սփոփումն ժողովրդեանն
իցէ. ոչ բնաւ. այլ կրթութիւն զօրացն 'ի
վարժս զինուորութե. վասն որոյ և առ հա-
ճել զմարդիկ ոչ երբէք զսահմանեալ կար-
գօքն անցանէ. թէպէտ և ոչ արգելուցու

նոցա զուարճանալ 'ի տես կեղծ մրցման զի-
նուորացն : Հանդէս զինուորական հրա-
հանգաց կարգեալ է 'ի մարզել զզօրականան
'ի պատերազմ. և թատերական հանդիսիցն
գործ է պատրաստել զքաղաքացիս 'ի մարտ
ընդդէմ Կրից և Տգիտութեան, զի կա-
րող լինիցին պատսպարել զանձինս 'ի բրո-
նութենէ երկուց այսոցիկ հզօր թշնամեաց
մարդկութեանս. այլ եթէ 'ի կրթել անդ
և զուարճացուցանիցէ, այդ ձիրք են մե-
ծի արուեստին, որով հեշտեաւ յինքն ար-
կանէ զմարդիկ և հրահանգէ : Եթէ այս-
պէս իցէ, ապա 'ի բաց 'ի թատերաց պարտ
է հեռացուցանել զամենայն զպատճառս
վնասուց : Եւ ոյք այնոքիկ իցեն : — Պատ-
ճառքն դրգռիչք անառակութեան վարուց,
յոր հրապուրեալ բազմաց օրինակաւ թա-
տերականացն տեսլեանց՝ իբրև տոռամբ
ձգին 'ի գործս անարժանս, և 'ի մահ
մատնին հոգւոյ, նաև մարմնոյ :

Եւ պատճառք մեծի չարեացս այն է առա-
ջին, զի հաստատեալ են 'ի մտի՝ եթէ թատերք
իցեն կարգեալ 'ի զուարճութիւն և 'ի զբօ-
սանս և եթ. և զայսր կարծեաց զվրիպակ
հաւաստեցաք ցարդ : Երկրորդ անգամ,

զի հեթանոսականացն նախանձաւոր լինելով անպատկառութեանց՝ օրէն համարին մուտ տալ 'ի թատերսն և կանանց ազգի՝ որ լրբենի երեսօք անպատուեն զընդաբոյս զծնգասէր և զլի պատկառանօք զբարսն՝ հանդերձ պարուք և դիւական կաքաւմամբ և կայթիւք անդ 'ի թատրն: Եթէ և 'ի հեթանոսս անգամ ոչ էր օրէն հրապարակախօս լինել կանանց ազգի, ապա որպիսի՞ անհնարին չարիք ոչ ծնանիցին 'ի սովորութեանցն թատերականաց:

Անշուշտ եմք մեք, զի 'ի պարկեշտասէր և 'ի զգաստ բարս մերոյ ժողովրդեան ոչ ծաւալեսցի երբէք այս թոյն մահաբեր. այլ զի թերևս ոմանց 'ի նոցանէ անգիտութեամբ հրապուրեալ 'ի բանս և յօրինակս անպատկառից ոմանց, համարձակիցին արդեօք 'ի գովեստ առնուլ զսովորութիւն ելանելոյ և կանանւոյն 'ի հանդէս թատերացն, քեր տեսցուք առ վայր մի եթէ որպիսի՞ ինչ պատճառս պատճառիցեն ընդդէմ:

Առաջին՝ զի թատերական քերթութիւնք կարգեալ են առ ուղղել զկիրս. արդ ո՞չ ապաքէն մի է 'ի գլխաւորաց 'ի նոսա և ցանկականն. ապա արժան է, ասեն, և 'ի նորին

ուղղութիւն գուն դնել ։ Երկրորդ՝ զի և ա-
մենայն ազդք ծաղկեալք յիմաստութեան
զսոյն սովորութիւն կալեալ ունին ։ Երրորդ՝
զի՞նչ վնաս՝ եթէ երբէք թատրն եղիցի 'ի
զուարճութիւն և եթ ։

Ծանր է մեզ, և աւելորդ և՝ որպէս
յուսամք, երկարաբան զայսպիսեաց լինել.
սակայն արասցուք կարճ 'ի կարճոյ առ
առաջինն պատասխանի ։ Ի կիրս մարդոյ են՝
յորոց խուսափել պարտ է զի զերծցի ոք,
և են՝ որոց զհետ 'ի խնդիր պարտ է ելա-
նել առ 'ի կրթիլ 'ի նոսին. զոր օրինակ 'ի
կիրս ցասման, մինչդեռ չիցէ ոք ցասու-
ցեալ՝ պարտի խնդրել զպատճառսն և վար-
ժել զանձն 'ի համբերութիւն. այսպէս և
'ի կիրս նախանձուն, սապէս և յարհա-
մարհութեն, և այլն. բայց 'ի կիրսն յայ-
նոսիկ առ որս բնութին է ինքնին հակամէտ,
պարտ և արժան է բացէ 'ի բաց խուսա-
փել 'ի պատճառացն ։ Զամուսնական սի-
րոյ հրապարակախօս լինել այնպէս է՝ որ-
պէս եթէ ոք յանդիման արբեցողաց գին-
ըմպու լինիցի, որպէս զի գինեմոլքն ան-
դանօր ուսցին ժուժկալել ։ Կամ թէ առա-
ջի ագահին դրամս կուտեալ, տայցէ ոք և

այլոց չափով, զի ագահին նկատեալ զնո-
ցուն չափաւորութիւն, մի զհետ լինիցի ժո-
ղովել անիրաւութեամբ զդրամս. և իբր ոչ
լցուսցէ նա զքաղց ագահութեանն 'ի դրա-
մոցն առաջի եդելոց: Ապա ուրեմն եթէ
կամիմք ուղղութեամբ գործել զօգուտ ժո-
ղովրդեան, պարտ է յառաջագոյն խոր-
հել նոյնպէս ուղղութեամբ:

Առ երկրորդն՝ եթէ Եւրոպա ողջոյն
զնոյն ունի սովորութի՝, ասեմք, զի թէ և առ
մեզ մուտ գտեալ էր սովորութեանն, գրեա
եթէ անհնարին էր զառաջս առնուլ և խա-
փանել: Բայց և զայն գիտել արժան է՝ ե-
թէ քանի՛ դառն արտասուօք լան բարե-
պաշտքն և ուղղատես միտք ընդ ողջոյն
Եւրոպա զկորուստ հոգւոց յաղագս այն-
պիսւոյ սովորութեան:

Եւ ո՞յր ուրուք 'ի մերազնեայց չիցէ ըն-
թերցեալ զբեմբասացութիւնս Յովհաննու
ոսկեբերանի, զողբալ նորա և զնկարագրել
ոսկի գրչաւն զչարիսն որ 'ի թատերաց, և
զսպառնալիս պատուհասից հոգւոց յա-
ճախելոց 'ի նոսին, նա և զվնասս մար-
մնոց, և զչարիս ընտանեաց և զաւակաց,
և զքաղաքին և զազգին զթշուառութիւնս:

Եւ իցէ՞ հնար երբէք մարդոյ՝ որոյ աչք ի-
ցեն 'ի գլուխ՝ ոչ տեսանել և ոչ 'ի միտ առ-
նուլ զանհնարին չարիս թատերացդ այդո-
ցիկ ։ Սակայն մեք մինչդեռ 'ի նախա-
դրունս եմք տակաւին իրացս՝ պարտիմք ան-
շուշտ, և դիւրին է մեզ յոյժ, զչարիսն և
զօգուտսն կշռեալ՝ առաջի ունելով և զօրի-
նակս, ոչ մուծանել 'ի մերսն զայն ազգ
թատերաց՝ յորոց վնասքդ յառաջ գայ-
ցեն ։

Եւ առ քաջ խելամտութիւն իրացս և
առ բարւոք ընտրութիւն՝ այսպիսի իմն
կարգեսցուք բաժանումն ։ Երկու ազգք
թատերաց են յԵւրոպա՝ անուամբ ևս զա-
նազանեալք 'ի միմեանց. մին կոչեցեալ
Թատր աշխարհական, և երկրորդն Թատր
կրթական ։ Առաջինքն են ամենայն հրապա-
րակական թատերք. և երկրորդն առանձ-
նականք, որք գրեթէ յամենայն 'ի գլ-
խաւոր վարժարանս և 'ի կրթարանս Եւ-
րոպայ գտանին. և յայսոսիկ կրթական
թատերս ոչ մտանեն երբէք կանայք, այլ
միայն մանկունք, երի տասարդք՝ աշակերտք
վարժարանացն. և այս թատերք կարգեալ
են 'ի կրթութիւն և 'ի զուարճութիւն

միանգամայն ։ Իսկ թէ արդեօք զբօսե ցու-
ցանիցէ՞ն և այսպիսի թատերք, անտի յայտ
է, զի հոծ և խուռն մարդիկ ժողովին և 'ի
սոսա՝ թէպէտ և հատուցմամբ դրամոց իցէ
մուտն անդր ։ Եւ ամ ազգի ազգի թատե-
րական քերթութիւնք են և յայսոսիկ 'ի
կրթական թատերս . ողբերգութիւնք, նո-
խազերգութիւնք, եղերերգութիւնք, կա-
տակերգութիւնք և զաւեշտք ։ Եւ ահա յայ-
սոսիկ 'ի կրթական թատերս ընդ զուար-
ճութեանն են և ամենայն ազգք օգտու-
թեանց՝ զորս վերագոյն կարգեցաք, նա և
մխիթարութիւն իմն սրտի քաղցր . զի ազ-
դուութեամբն յորդորեն՝ պահպանեալ ըզ-
միտս սուրբս 'ի մեղմեխ և 'ի վայրաքարշ
կրից, կամ յաստուածպաշտութիւն և կամ
յազգասիրութի, և յամենայն ազգս առա-
քինութեան բորբոքեն . վասն որոյ անձինք
խոհականք և բարեսէրք հաճին յոյժ ընդ
սոսա ։ Եւ այսպէս յերևան ելանէ ճշմար-
տութիւնն, զի 'ի կամել մերոցն ազգասի-
րաց օգտել մեծապէս ազգին, և զառաջս
առնուլ զվերահաս նորանոր չարեաց, պար-
տին ընտրել առնուլ զայս ազգ թատերաց
և եթ ։ Եւ մի՞ ոք ասասցէ, եթէ 'ի թա-

տերս աշխարհական կոչեցեալս միթէ և ամենայն քերթուածքն գայթակղակա՞նք ի-ցեն՝ այնու զի կանայք անդէն երևին ։ — Ոչ արդարև . բայց զի 'ի լինել թոյլտուու-թեան՝ անհնար է այնուհետև կալ 'ի չա-փու . փորձն զսոյն ուսուցանէ ։ Զոր օրի-նակ ունել 'ի տան զզէնս 'ի պաշտպանութի անձանց ընդդէմ աւազակաց չարագործաց, այս օրէն է և խոհական ընտրութիւն . բայց եթէ բնակիչք տանն սկսցին 'ի գործ վարել զնոյնս առ զմիմեանս հարկանելոյ , և զդոյն համարիցին վախճան զինուցն 'ի տան պահելոյ , տես եթէ քանի՛ թիւր են միտ-քն և լի չար հետևանօք ։ Եւ ո՞ է այն այր մտացի որ ոչ կամիցի գլխովին 'ի բաց 'ի տանէն հեռացուցանել զզէնսն . այսպէս իմա ինձ և զկանանց 'ի թատերսն ։

Իցեն արդեօք և որք պատճառս 'ի մէջ բերեն զամբարշտականն զայն առած , եթէ զեկեղեցական սկզբունս 'ի քաղաքական սկզբանց պարտ իցէ զատանել ։ — Այո . բայց յայնժամ և եթ , յորժամ սահմանես-ցէ Ա՛ծ ոմանց 'ի մարդկանէ կալ մնալ յեր-կրի անմահական կենօք , և այլոց մահկա-նացուս լինել՝ որպէս եմքս , և 'ի հանդեր-

ձեալն առնուլ զհատուցումն բարեաց գոր-
ծոց կամ չարաց ։ Զի այսպէս յերկուս
բաժանին յայնժամ մարդիկ . ոմանք զաշ-
խարհիս եւեթ հոգալով, և այլք 'ի մահ
պատրաստելով, և յաշխարհի 'ի կարևոր
զգուշութեան կալով ։ Ապա թէ ոչ՝ ո՞ր այն
քաղաքականութիւն իցէ որ 'ի վտանգս
անօրէնութեանց հրամայիցէ անձնամատն
լինել . Ճշմարիտ քաղաքականութիւն այն է՝
կարգել զօրէնս որ հսկիցեն յանվրէպ պահ-
պանութիւն բնական և աստուածային օրի-
նաց ։ Եւ զայսպիսիս զկարգեալսն յուղղու-
թիւն բարուց՝ պարտ է յօրինացն Աստու-
ծոյ զնոսին ուսանել . իսկ զի բազումք ոչ
ունկն այսպիսի ուղղութեանց կամին մա-
տուցանել, ընդ այդ ոչ ինչ է զարմանալ .
զի յոլովք 'ի մարդկանէ սիրեն զվրիպա-
կանս , զհետ գնալով տգիտութեամբ յա-
ւէտ կրից իւրեանց քան ուղիղ բանին ։ Ո՞չ
ապաքէն և արդ իսկ են և յարևելս զբօ-
սանաց վայրք և խաղարկութիւնք , յորս
քրիստոնեայք որք զաստուածպաշտութիւն
յանձն առեալք իցեն , և 'ի դրունս անգամ
զբօսարանացն անձահից չմատչին ։ Յայսմ
ամենայնէ յայտ է , եթէ քանի՛ իրաւամբք՝

հակառակ կարծեաց ռամիկ մարդկան՝ արք
իմաստութեան ճաշակառուք, որք ճանա-
չեն զյարգ ճշմարտութեան և զընտրութիւն
քերթուածոց, զարմանան ընդ տաղտկալի
հանգոյցսն զոր գործէ 'ի բանահիւսու-
թիւնս Եւրոպացւոց միշտ մի և նոյն ա-
մուսնական սէր: Եւ անտի իսկ յայտ է
ճշմարտութիւն ասացելոցս, զի յանթիւ
բանահիւսութիւնս թատերականս ընտրե-
լագոյնքն, և յամենայն իմաստնոց աշխար-
հի գովեալք՝ այնոքիկ բանահիւսութիւնքն
են յորս ամենևին ոչ երևին տարփանք.
որպէս Գոթողիայն Ռասինի, Կեսարն
Վոլթէռի, և Հռոմ ազատեալ, և այլք:
Են և այնոքիկ՝ յորս բռնի մուծեալ զսէ-
րն ամուսնական առ հաճոյական գործե-
լոյ յաչս ռամկին, և այնու կորուսեալ են
զգեղեցկութիւն բանահիւսութեն, որպէս
ահա Եդիպոսն Վոլթէռի, զորմէ ինքնին
իսկ խոստովանի յասելն. « Յաւելի ան-
դէն զտարփանս առ ընդ միտ մտանել ամ-
բոխին և առ երկարել զքերթութիւնն.
բայց այնու կորեաւ ողբերգութեանն ճա-
շակ և կատարելութիւն »: Սա ինքն Վոլ-
թէռ՝ թէպէտ և թշնամի ուղիղ կրօնից ածն-

պաշտութեան առ անձնահաճ ամբարտա-
ւանութեան մտացն, այլ յիմաստասիրու-
թեան խորազնին և ճարտար, հասեալ
'ի չափ հասակի, և 'ի միտ առեալ զընիկ
քաղցրութիւն ողբերգութեանն, գրէ առ
դքսուհին Մէնի այսպէս. « Յողբերգու-
թեան Եդիպոսի (զոր և Սոփոկղ Յոյն
քերթող արարեալ էր առանց խառնելոյ 'ի
նմա զտարփանս,) այն ամենայն որ ըստ
մտաց Սոփոկղի էր՝ գովեցաւ առհասա-
րակ. իսկ այլ մասունք յորս տարփանք ե-
րևէին՝ յամ մեծանուն կրիտիսաց պար-
սաւեցաւ: Եւ յիրաւի. զի՞նչ քան զայն
ծաղու և արհամարհանաց գործ 'ի թա-
տերս մեր, և կանխակալ սովորութիւն »:
Լահարփ գաղղիացի կրիտիս հզօր և ուղ-
ղադատ, գովէ զայս համարձակախօսու-
թիւն Վոլթէռի, յայտ արարեալ՝ եթէ ար-
համարհ է սովորութիւնդ և վնասակար:
Եւ ինքն ևս զայս կարծիս՝ եթէ Առանց
կնոջ չլինիցի ողբերգութիւն, անուանէ
կանխակալ դատումն՝ որ և զթատերացն,
ասէ, կորուսանէ զպանծանս, և զքանքար
բանահիւսիցն կաշկանդէ: Եւ այլուր. « Որ
ունիցի յայսմ հետէ ճշմարիտ քանքար ող-

բերգական քերթութեան՝ պարտի յոյժ ըզ-
գոյշ կալ յայսմ թերութենէ. և 'ի վերջէ
հարկ է բոլորովին սրբել անտի զթատերս
Գաղղիոյ »: Եւ յոյժ պարսաւէ զայս սո-
վորութիւն, և զարմանայ թէ ո՛րպէս առ
հաճել զմիտս ռամկին զանց առնեն ուսում-
նականք զճշմարիտ գեղեցկութեամբ. մա-
նաւանդ յողբերգութեան, յորում վեհա-
պանծ ոգի և դիւցազնական միտք, բանք
վսեմք հանճարաւորք ընդ անարգ ախտից
և նուաստ կրից խառն առաջի լինին. և արք
դիւցազունք, աշխարհակալք հզօրք, յո-
րոց ակնարկութենէն քաղաքք և աշխարհք
սասանին, որք և ընդ անմահս թուին ունել
հաղորդութիւն, և զմեծամեծաց և եթ խոր-
հին և զանմահական գործոց. որք ազգաց
տան հրաման, և զօրէնս մարդկութեան
սահմանեն. որոց առաջի առօրեայքս ամե-
նայն գործք մարդկայինք արհամարհք են,
և ոչ արժանի նոցին մտադրութեան. արք
այսպէս գերաստիճանեալք, ելեալք զհետ
նուաստ ախտից և մոլութեանց, և 'ի
մեղկ կրից տարեալք 'ի քարշ, լինիցին 'ի
բանս կնոջ միոյ պչրողի. և յազգի ազգի
խայտառականս անկանիցին, մինչև մտաբե-

րել և անձին առնել՝ անկեալք 'ի մտաց ա-
մենևին ։ Եւ խառնուրդ այսպիսի չիցէ յան-
արգութիւն իջուցանել զվսեմութիւն և
զպերճութիւն բանահիւսութեանս ։ Եւ ե-
թէ ճշմարտիւ իցեն իսկ լեալ և արք այն-
պիսիք , ապաքէն անարժան են նոքա գրիլ
'ի կարգս գերապանծ վեհիցն ։ Ռոլէն 'ի
հնախօսութեան իւրում 'ի խօսելն զԵւրի-
պիդեայ քերթուածոց , ասէ . « Մի ոք այլ-
ընդ այլոյ զաղուն և զգորովականն առցէ
ընդ կրից՝ որ մեղկէն և կնատեալ լուծանէ
զսիրտ . և որ արդ ինքնակալէ 'ի թատերո
մեր . կամ թէ և ոչ ինքնակալեալ՝ այլ քան
զամենայն կիրս յաճախէ . քան զոր զի՞նչ այլ
նախատինք կայցեն ազգիս ։ Քանզի սովաւ
'ի բաց մերժեալք յամենեցունց 'ի նախ-
նեացն , եպերիմք և 'ի դրացեաց մերոց ազ-
գաց՝ հռչակելոցն հանճարով և կիրթ ա-
խորժակօքն 'ի գիտութիւնս և 'ի բանասի-
րութիւն ։ . . . Նախնիք , որոց ցանկ բը-
նութիւն խորհրդական և առաջնորդ էր ,
ոչ վայրապար՝ զերկիւղ և զգութ որպէս
շունչ և հոգի ողբերգութեան համարեցան ,
և զնոսա 'ի թատերսն յաճախեցին ։ Ար-
համարհ էին առ նոսա տարփանք , և դուն

ուրեք 'ի քերթածս մտանէին. այլ արդ միայն զօրավիգն են քերթողին:

Զկիրս զայս, որ ամենայն ժամանակի աւագ մարդկան վատութիւն և կեղտ համարեցաւ, կարևոր է համառօտս իմն քննել՝ եթէ ուստի՞ զօրացեալ կալաւ զթատերս մեր: Քոռնէյլ նախկին 'ի Գաղղիա ողբերգող կացեալ և հեղինակ այլոցն ամենեցուն, ետես զազգն զմայլեալ զեղծ առասպելեօք, և այլազգ մատենագրութեան ատեցողս, և 'ի հաճել զտեսողսն՝ որ ողբերգութեանցն դատաւորք բազմէին՝ զազգողագոյնն 'ի նոսա գործի կալաւ, և տարփանս 'ի քերթութիւնսն խառնեաց, զի նմանեաւ զառանցիկ վիպացն յաճախելոց շարժեսցին»:

Զսակաւս յոյժ 'ի բազմաց զկարծիս իմաստնոց նշանակեցաք աստէն. այն ափ և եթ՝ զի մի կարծիցի՝ եթէ իմաստունք Եւրոպիոյ ոչ իցեն 'ի միտ առեալ զվնասուցն չարիս, և ոչ ցանկանայցեն ուղղութեանն:

Եւ միթէ յոլովք 'ի կրթական թատերաց չիցեն կանգնեալք՝ զի անդր ժողովեալ մարդկանն, դադարեսցին յաճախել յաշխարհական թատերս: Ի Հռովմ 'ի մատրան Փիլիպպեանց, որ է 'ի չափ ընդ-

արձակ իմն եկեղեցւոյ, սկսեալ՚ի ծննդենէ Քրիստոսի մինչև ցզատիկ յարութեան, նաև ՚ի կիւրակէս քառասնորդացն, հատուածս հոգևորական եղերերգութեանց նուագօք իբրև զթատերացն ամենևին՝ ՚ի ժամսն հանդիսից այլոց աշխարհական թատերաց երգեն գուսանք. ոչ ինչ՚ի հանդիսատեսացն պահանջեալ, այլ զի փոխանակ ՚ի թատերսն ժողովելոյ՝ անդր հաւաքեսցին: Յոր բազում օտարականք և քաղաքացիք զուարճանան և օգտին: Թատրն սրբոյ Միքայէլի մեծի վարժարանին, յորում են մանկունք երեկօթիւք հինգ հարիւրիւ չափ, ընդարձակուի սրահին երիցս մեծ քան զաշխարհական թատերացն է. անդէն մանկունք թատրերգութիւնս հոգևորականս նուագօք առաջի առնեն, յորում բազմութիւն անչափ է ժողովականացն. այնպէս զի արգելեալ է մուտն ՚ի ներքս մինչ աւուրբք յառաջագոյն չիցէ ուրուք առեալ զտոմսակս: Զայս ամենայն ասացաք առ ՚ի յայտ կացուցանել զի եթէ կամ էր բարեպաշտել մարդկանն, էր հնար վայելել ընդ զուարճութեանն և ՚ի բարութիւնսն:

Կարծեմ ըստ բաւականին արարաք զպա-

տասխանի յայսոսիկ բանս նաև երկրոր-
դի խնդրոյն ։ Իսկ 'ի պատասխանի երրոր-
դի հարցուածոյն յաւելումք ասել և զայս,
զի բանահիւսութիւնդ այդ թատերական
եթէ չէր պատճառ վնասուց, յայնժամ
մարթ էր և առ 'ի զուարճութիւն և եթ ա-
ռաջի առնել. բայց ո՞ թուեսցէ զանթիւ
վնասս հոգւոյ և մարմնոյ, տան և քաղաքի
և ազգի ։

Ցայս վայր ասացեալքս թէպէտ և ըստ
կարի ածին 'ի յայտ զչարիսն յառաջ ե-
կեալս յոչ ունելոյ ուղիղ զդիտումն, բայց
աստէն խօսեսցուք սակաւուք և առան-
ձինն, զի ամենևին ոչ մնասցէ երկմտու-
թեան տեղի ։ Եւ քանզի ամենայն թատերաց
աշխարհականաց որ ենն արդ յԵւրոպա՝
ոչ են ուղիղ դիտմունք, լուր զվնասսն յա-
ռաջ եկեալս և հնչեսցեն երկոքին ականջք քո.
զի ընդ օգտութեց՝ զորս ասացաք մեծամեծս
լինել՝ յառնել անդ զկարևոր զգուշութիւնս,
'ի զանց առնել զնոքօք վնասք մեծամեծք են.
որ և առաջիկայ օրինակաւս լաւ ևս ցուց-
ցի ։ Օգտութիւնս թատերական հան-
դիսից համարեաց որպէս 'ի գիշերի մթու-
թեան զլոյս ճրագի. յայն խաւար մթու-

թեան պահուն զի՞նչ քան զլոյս ճրագին օգ-
տութեամբ լի. և ո՞ր ինչ քան զայն բերկրա-
կան: Յայն աղջամուղջ խաւարին՝ միայն
'ի լոյս ճրագի և ոչ այլազգ հնար է տե-
սանել զգեղեցիկ փայլումն ականց, ոսկւոյ,
կերպասուց, զարդուց և զամենայն իսկ
բնութեան զբարեվայելչութիւն, և վայելել
'ի նոսին և գործել զամենայն զկարևորս մեր
զգործս: Այնպէս զի նա միայն՝ լոյսն ճրա-
գի, 'ի զարհուրանաց խաւարին յորում
անփախուստ այսր անդր ծփիմք յերկիւղ
և 'ի տագնապ, զի մի դարահոս՝ 'ի վախս
կորնչիցիմք անձնամատն, և կամ ընդ հա-
րեալք հարուածիցիմք, լոյսն այն ճրագի
յանկարծ բորբոքեալ փարեալ զմեօք՝ յափշ-
տակեալ հանէ զմեզ 'ի դատապարտութենէ
յանլոյծ կապանաց խաւարին: Բայց ո՞ որ
միտս ունիցի՝ 'ի զուարթութենէ մտացն
յարձակիցի 'ի բոց անդր՝ յամենայն 'ի
բարութիւնս լուսոյն վայելել ցանկացեալ:
Ահա զանմիտ թիթռամբ ծիծաղիմք, որ
զուարթացեալ յանձն ընդ լոյսն՝ որ զնա 'ի
խաւարէն արտաքս կորզեաց, ոչ շատ գրէ
զչափաւոր բերկրանս յոր կարէ վայելել
անվնաս, այլ յափշտակեալ ընդ գեղ

լուսոյն՝ դիմէ՚ի վերայ, և՚ի կիզողական ջեր-
մութենէն յետս ընդ դէմ ընդոստուցեալ,
կամի դարձեալ՚ի մօտոյ վայելել յառաւե-
լութիւն լուսոյն, հնարս հնարելով յան-
զգաստից յանկարծօրէն՚ի վերայ հասանել
ճրագին, և առանց կիզելոյ կալ՚ի նմին.
և սկսանի պարայածիլ զճրագաւն այնչափ,
մինչև ամենևին անկեալ՚ի մտաց և ընկրղ-
մեալ՚ի զմայլումն, մատչի՚ի բոց անդր և
տոչորի. քանզի թէ և փորձով՚ի միտ առ-
նու եթէ առանց կիզելոյ անհնար է հուպ
մատչել՚ի բոցն, բայց այնուհետև անհան-
դուրժելի նմա թուի հեռացեալ կալ և
վայելել՚ի չափաւոր լոյս նորա: Սոյն այս
ամենայնիւ պատահէ և մարդոյ անմտի. զի
՚ի թատերսն զաշխարհ ամենայն տեսանէ
առաջի իւր, ոչ ինչ՚ի գործոց մարդկան
ծածկի յաչաց նորա. և մինչդեռ՚ի խա-
ւարի տգիտութեան կայր, և ոչ զանձին
զկիրս ճանաչել կարէր, յանկարծ՚ի սկզ-
բանէ աշխարհի և այսր գործք և խոր-
հուրդք մարդկան բանին առաջի նորա. և
այն ինչ յայս բերկրական տեսարան վայելել
կայ առաջի նորա, նա մոռացեալ զամենայն,
՚ի մին միայն յանպատշաճն կիրս միտ ե-

դեալ խանձոտի, այրի, և կորնչի 'ի դառն ցաւս: Ա՛ւա՛ղ... Արդ և առանձինն զա՛մ զվնասն միանգամայն այդոցիկ աշխարհական թատերաց համառօտիւ առաջի արասցուք:

Ա. Վնաս այժմեան յաշխարհական թատերաց այն՝ զի ամուսնական դաշնաւորութիւնք որք այնպէս վսեմք և պատուեալք են, և լռելեայն ընդ փորձ եղելոց արանց գործին յարևելեան ազինս, նա և առ հեթանոսս անգամ, յԵւրոպա անկեալ են 'ի յոյժ յանարգութիւն, որպէս յայտ է գիտակաց: Այլ նմին հակառակ ամենայնիւ հաւաստի է, զի թէ պակաս էին յԵւրոպա աշխարհական թատերք, 'ի ծաղկեալ քրիստոնէութեան դարու աստ՝ յոյժ առաւել պարկեշտագոյնք լինէին և ամենայն ազգք Եւրոպիոյ, և առաւել բազմամարդ. զի ճշդութեամբ յոյժ պահէր յայնժամ աստուածադիրն այն կարգ ամուսնութեան, և առաւել 'ի պատուի լինէր խորհուրդդ այդ մեծ Եկեղեցւոյ:

Բ. Չարիք, զի մատաղ մանկունք ուսեալք 'ի լրոյ և 'ի խօսից զամենայն ազգս անառակութեանց վարուց խառն ընդ օրի-

նաւորին անզանազան, ապականին բարք նո-
ցա, որով հազիւ հասեալք յարբունս, զուս-
մունս և զգիտութիւնս ևս առ ոտն հարեալ,
զուշս մտացն ողջոյն'ի թատերաց զբօսանս
դարձուցանեն. որոց յոլովից իբրև զչար
սուրհանդակ հասանէ մահ'ի վերայ:

Գ. Չարիք աստի յաճախեալք, անհա-
ւատարմութիւնք ամուսնական կենաց, և
սանձարձակ և ապերասան գոլ սննդոց ման-
կըտւոյն. և որպիսի՛ մեծամեծ վնասք իցեն
այսոքիկ՝ թող խորհեսցի իւրաքանչիւր ոք.
զի մի աստէն երկարեսցուք'ի բանս'ի վերայ
յայտնեաց:

Դ. Չարիք աստի՝ արհամարհութիւն
կրօնից, և աստուածպաշտութե՛ մերժու-
մըն: Եւ ո՞ ոչ գիտէ զի պատճառ նախնա-
կան այսչափ ազգի ազգի աղանդոց և ան-
կրօնութեանց և անհաւատութե՛ց են ախտ-
քըն այնոքիկ:

Ե. Նուազումն յառաջադիմութե՛ յա-
մենայնի, և մանաւանդ աստուածպաշտու-
թեան. մինչև տակաւ ընուլ բանին Քրիս-
տոսի՝ եթէ «Որդի մարդոյ եկեալ գտանիցէ՝
արդեօք հաւատս յերկրի»: Եւ պատճառք
մեծ այսմ'ի կարգէ դիպացն երևի թատե-

բացդ լինել: Այլ առ այս անշուշտ բազումք ընդդէմ բանս արկցեն ասել՝ եթէ հաւաստիք գործոցն զհակառակն վկայեն, զի ամենայն ազինք Եւրոպիոյ 'ի զարգացումն գիտութեանց օր ըստ օրէ պայծառանան: — Արդարև այդ այդպէս է. սակայն զարգացումնդ այդ նուազ է յոյժ առ համեմատութիւն գործեացն և դիւրութեաց՝ որովք հոծ և լի է Եւրոպա: Օրինակ 'ի մէջ առցուք զհամալսարան միոյ 'ի քաղաքաց Եւրոպիոյ՝ յորում բնակչաց թիւ իցէ իբր յիսուն հազար, և պատանիք՝ երիտասարդք համալսարանին իցեն թուով հազար և հինգ հարիւր: Երիտասարդքս այսոքիկ ոչ են ամենեքին քաղաքացիք, այլ՝ յողջոյն 'ի գաւառէն, սակաւք ոմանք նա և յարտաքոյ եկելոց: Յայնչափ բազմութեան պատանեաց հազար և հինգ հարիւրն և եթ ժողովեալ է յուսումն, այլքն ամենեքին յարհեստս զբաղեալք, կամ 'ի մեղկ կեանս դատարկասունք 'ի զբօսանս թատերաց և յայլ հաճոյականս վարեալք 'ի մրրկաց կրից: Սակայն և այնպէս եթէ 'ի հազար և հինգ հարիւր երիտասարդաց ամ ըստ ամէ գէթ ելանէին ուսեալք քաջք

հարիւր և յիսուն աշակերտք, գաւառն այն
փոխէր 'ի տաճար իմաստութեան: Բայց
արդ 'ի զարմանս մտաց ամենեցուն՝ յայն-
պիսում 'ի մեծի համալսարանի յամին երեք
կամ թէ քաջ հինգ և եթ պատանիք հա-
զիւ գտանին աւարտեալ զուսմունսն ըստ
պատշաճի. և նոքին ևս տկարք են ըստ
կիսոյն: Եւ այսոքիկ երկու կամ երեք
ուսումնական արք՝ մի քեզ սակաւք թուի-
ցին. զի 'ի յոլով գլխաւոր քաղաքս գտա-
նին այդպիսի ուսումնարանք, և այսպէս
դարձեալ սակաւքն այնոքիկ առեալք 'ի միա-
սին՝ բազումք լինին, և 'ի ձեռն սոցա յա-
ռաջեն ուսմունք և գիտութիւնք: Բայց յետ
այսչափ ջանից, կարգաւորութեանց, գոր-
ծեաց և հնարագիտութեանց առ 'ի զար-
գացուցանել զամենեսին յիմաստութեան,
'ի կրթել զնոսա 'ի ծանօթութիւն ճշմար-
տութեան, որպէս սակաւաթիւք են շահեալ-
քն: Զի՞նչ այլքն ամենեքին գործիցեն.
թատերքդ այդոքիկ գողանան զուշ և զու-
րուշ ամենեցուն և յիմարեցուցանեն: Ծը-
նօղք ամենեցուն նոցա առաքեն զնոսա մե-
ծաւ ակնկալութեամբ ուսանելոյ որդւոց իւ-
րեանց, և ծախեն մտադիւր 'ի նոսա զվաս-

տակս քրտանց իւրեանց. այլ նոքա յուլա-
ցեալք շրջին 'ի թատերս, վատնեն զդրամսն,
և ոչ ինչ ուսեալք՝ յուսահատ մեկնին, և
ոմանք անդէն իսկ մեռանին: Համառօտ
ասել. եթէ ոք մտադիւր ուշի ուշով մատչի
'ի քննութի՝ անցից որ անցանեն 'ի կողմա-
նըս Եւրոպայ, տեսանէ յայտ յանդիման,
զի բազում՝ չարեաց և անհնարին թշուա-
ռութե՝ց, աղքատութե՝ց, խռովութեանց,
սպանութեանց, անզաւակութեանց, ազգի
ազգի անօրէնութեանց, անհաւատուե՝ց,
և բազում՝ յոյժ դատապարտութեանց հո-
գւոց մայր և սկզբնապատճառ կացեալ է
թատրն աշխարհական:

Զայս ամենայն ասացեալ 'ի զգուշու-
թիւն մերազնեայ սիրելեաց, սկսանիմք ա-
ւասիկ առաջի առնել նոցա զօրինակս օգ-
տակարացն թատերական բանահիւսուե՝ց,
ցանկալով զի 'ի լաւն հաստատեսցին, 'ի
վնասակարացն զգուշացեալք: Եւ է այս
գլխաւորացն և իշխանաւորաց տեղեաց
տեղեաց պարտք, զի միաձայն հաւա-
նութեամբ դատապարտ արարեալ զվնա-
սակարսն, ոչ յանձին կալցեն մուծանել
յազգս մեր զսովորութիւն երևելոյ կանանց

'ի թատեր կամ պատանեաց 'ի հանդերձս կանացիս. և այսպէս բարեաց ազգին արդեաց և ապագայից պատճառք լինիցին, և մի վնասուց նոցա և դատապարտութեան։ Մեք զմերն զոր պարտն էր մեզ առնել արարաք. այսուհետև 'ի խոհականութիւն նոցին առնեմք յանձն, և մնամք ակնկալութեամբ մեծաւ լսել զուղղադատ նոցին ընտրութիւն։

Որպէս յիշատակեցաք վերագոյն, հինգ ազգք են թատրերգութեանց.

Ա. Ողբերգութիւն, յորում դիւցազնական իմն արարուած նախնեաց քաջազանց նկարագրի. 'ի սմա, որպէս և յայլ ամենայն ազգս թատերական քերթութեաց, դիւցազն արարուածին պարտի լինել ոք վսեմախոհ, առաքինի, 'ի սէր արդարութեան և բարութեան վաստակեալ ըստ քրիստոնէական կարգի, և կամ ըստ հեթանոսականին, որ յերկրաւոր վարձուց զրկի կամ առ թերութեանցն մարդկայնոց և կամ 'ի սէր առաքինութեան։ Եւ այնպէս 'ի բազումս աւարտի ողբերգութիւն մահուամբ դիւցազինն և կամ մատնութիւն 'ի թշուառութիւնս. և երբէք զերծանելով իսկ

'ի վերահաս մահուանէ յաջողութեամբ:

Բ. Եղերերգութիւն, յորում ողջոյն բանահիւսութիւնն նուագօք նկարագրի, և յաջողութեամբ յաղթանակաւ միշտ աւարտի: Մինչ ոչ է յազգին մերում ուսումն ներդաշնակութեան նուագաց, անհընար է զսոյն 'ի գործ արկանել:

Գ. Նոխազերգութիւն, դիւցազնական արարուած արդեաց, որ 'ի բազումս աւարտի յաջողելով և բերկրանօք:

Դ. Կատակերգութիւն, որ է նկարագիր առտնին արարուածոց մարդկան, և յաճախ աւարտի ճանաչելով զվրիպանս և առաջադրութեամբ ուղղութեան յայնմ հետէ, և անզեղջ չարագործացն կրելով զպատուհասս:

Ե. Զաւեշտ, նկարագիր բարուց 'ի ձև չափազանցութեան՝ շարժելով զամենեսին 'ի ծաղր, և զմիտսն համոզելով 'ի զգուշութիւն. աւարտի միշտ խնդագին, և ոչ ընդերկարի որպէս զայլսն:

Բաց յեղերերգութենէ, զայլոցն ամենայնի տացուք զճաշակ մերոցս ազգասիրաց և ազգակցաց՝ ոչ յառաջ քան զժամանակն, և ոչ յապաղմամբ ժամանակին:

2914

331

1) ԽՈՍՐՈՎ, ՄԵԾՆ

3) ՈՂ, ԲԵՐԳՈՒԹԻՒՆ

2) [illegible]

[illegible] 1845

ՑՈՅՑ

« Յետ սպանանելոյն զԱրտաւան և
» Թագաւորելոյն Արտաշրի որդւոյ Սասա-
» նայ, իբրև լուաւ զաղմուկ շփոթին Թա-
» գաւորն Հայոց Խոսրով, խաղայ 'ի վե-
» րայ Արտաշրի . . . հալածական առնե-
» լով մինչեւ յաշխարհն Հնդկաց: . . Ար-
» տաշիր նեղեալ յոյժ (զամս տասն մար-
» տիւ պատերազմի), բազում խոստմունս
» նախարարացն առնէ, թէ ոք բուժեսցէ
» զնա յայնմանէ: Յոր հրապուրեալ Ա՛նա-
» կայ, որ էր 'ի ցեղէն սուրենեան Պահ-
» լաւէ, յանձն առնու սպանանել զԽոս-
» րով, և հատուածի պատճառաւ փա-
» խըստական լինի յԱրտաշրէ: . . Եւ
» յետ անցելոյ երկուց ամաց գալստեանն
» Ա՛նակայ 'ի Հայս, յերրորդումն սպա-
» նանէ զԽոսրով . . . և մեռանի ինքն և
» իւրքն ամենայն, պահելով խնամոցն
» Աստուծոյ զսա (զՕարեհ) միայն »:
(Խորէն. Գիրք. Բ. հա:)

ՀՍԽՀ-ՍՍՀ Ա.
Ա. Ա. Ա. Ա.

Օգոստոսի առաջին տասնօրյակում Լուսավորչին Աղեքսանդրիայի ուղարկեցին Արիստակեսը, Եվթաղիոսը և Վրթանեսը, որոնք Հռոմում ուսումնասիրեցին քրիստոնեական վարդապետությունը և ուսանելով Լուսավորչի մոտ՝ ստացան եպիսկոպոսական ձեռնադրություն։ Հայրապետը նրանց ուղարկեց Հայաստան՝ իրենց հետ տանելով նաև Գրիգորի որդի Արիստակեսի որդիներ Գրիգորիսին և Վռամշապուհին։

Օգոստոսի վերջերին Լուսավորիչը Տարոնից ուղևորվեց Վաղարշապատ։ Ճանապարհին նա մտավ Աշտիշատ, որտեղ Անահիտ դիցուհու մեծ տաճարի մոտ հավաքված էր մեծ բազմություն։ Ժողովրդի մեջ կային նաև հեթանոս քրմեր, որոնք Լուսավորչի գալուստը լսելով՝ եկել էին, որպեսզի նրան խոչընդոտեն քարոզելու։ Սակայն Լուսավորիչը, անվախ և աշխույժ, սկսեց քարոզել։ Նա ասաց, որ Աստված մեկ է, Նա ամենակալ է և ամենազոր, Նա է ստեղծել երկինքն ու երկիրը, ծովերն ու գետերը, Նա է ստեղծել մարդուն և տվել նրան բանականություն, որպեսզի նա ճանաչի Արարչին և փառավորի Նրան։ Նա ասաց, որ աստվածները, որոնց պաշտում են հեթանոսները, չարքեր են, որոնք մարդկանց մոլորության մեջ են գցում, և որ նրանց պաշտելով՝ մարդիկ մեղանչում են Աստծո առաջ։ Նա ասաց, որ Աստված Նոյի ժամանակ ջրհեղեղով կործանեց մարդկանց, որոնք մոռացել էին Նրան և ապրում էին մեղքի մեջ։ Նա ասաց, որ Աստված Աբրահամին կանչեց Ուր քաղաքից, որպեսզի նա գնա Քանանացիների երկիրը, որը Աստված խոստացել էր տալ Աբրահամի սերունդներին։ Նա ասաց, որ Աստված Մովսեսին ուղարկեց Եգիպտոս, որպեսզի նա հանի իսրայելացիներին Եգիպտոսի գերությունից։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Օրենքը, որպեսզի նրանք ապրեն ըստ Աստծո պատվիրանների։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Երկիրը, որպեսզի նրանք ապրեն այնտեղ և աճեն։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Թագավորներ, որպեսզի նրանք կառավարեն Իսրայելացիներին։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Մարգարեներ, որպեսզի նրանք խոսեն Աստծո անունից։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Քահանաներ, որպեսզի նրանք մատուցեն զոհեր Աստծուն։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Տաճար, որպեսզի նրանք երկրպագեն Աստծուն։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Սուրբ Հոգին, որպեսզի նրանք ապրեն Աստծո կամքով։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Հավատքը, որպեսզի նրանք փրկվեն։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Հույսը, որպեսզի նրանք չհուսահատվեն։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Սերը, որպեսզի նրանք սիրեն Աստծուն և միմյանց։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Խաղաղությունը, որպեսզի նրանք ապրեն խաղաղության մեջ։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Ուրախությունը, որպեսզի նրանք ուրախանան։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Հավիտենական կյանքը, որպեսզի նրանք ապրեն հավիտյանս հավիտենից։ Նա ասաց, որ Աստված Իսրայելացիներին տվեց Փրկությունը, որպեսզի նրանք փրկվեն։

ՈՂԲԵՐԳԱԿՔ

ԽՈՍՐՈՎ	Արքայ Հայոց:
ԱՆԱԿ	Իշխան Պահլաւունի:
ԶԱՐԵՀ	Որդի Անակայ:
ՇԱՒԱՐՇ	Եղբայր Անակայ:
ԲՈՒՐԶ	Իշխան պարսիկ խնամատար Պերոզամատայ:
ՊԵՐՈԶԱՄԱՏ	Որդի Վեհսաճանայ կարենեան Պահլաւի, զերծեալ 'ի ձեռն մտերմի տան նորա Բուրզայ 'ի կոտորածէն որ յԱրտաշրէ 'ի ճանապարհին, 'ի գնալ նոցա 'ի կոչն Խոսրովու:
ԶՕՐԱԿԱՆՔ	

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ 'ի մայր քաղաքաց Թագաւորութեանն Արշակունեաց:



Սահիաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Ասարախան



Mlt. Ruhstuhl Ehemplung

Aliprandi inc.

Jv. Ulugp zuprug.nprsu.l zuunpuly t.lytug
L. Ltiptum, inp uppuy. ypugp ysp uhuuu
'ſp púng lpugtp Lq 110.

ԽՈՍՐՈՎ ՄԵԾՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է արքունի բուրաստան թագաւորացն Արշակունեաց որ 'ի Վաղարշապատ. որմունք ողջոյն արուեստակերտք 'ի մշտասաղարթ ծառոց մրտենւոյ, սոճւոյ, և այլն. և սիւնք և խոյակք յոստոցն հատեալք հնարիմաց ճարտարութեամբ. և արձանք և կոթողք անդէն մարմարիոնեայք երկուստեք՝ գործք ճարտարաց, և հոյակապ նախադրունք փառազարդք արքունեացն առ երի:

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵՐԱԿԵԱՆ 8
Ասարիան

ՏԵՍԻԼԱ.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ

ԱՆԱԿ

Արժան էր քեզ ունկնդիր լինել կամաց հօր քո և հնազանդ. և այլ ինչ չածել ընդ միտ. իսկ դու 'ի խորհուրդս ամբարտաւանութեան յեցեալ՝ յոչինչ գրեցեր զպատիւն հայրական, և չխղճեցեր զօրինօք

բնութեան վազել անցանել. այլև ոչ խամ հասակաւդ պատկառեցեր խաղ առնել զինև: Եթէ ոչ յիմ բանս էիր, Ա՛յ ապերասան, ընդէ՞ր յանձն առեր պատրանօք՝ մատուցանել նմա զբաժակն մահու:

ՁԱՐԵՀ

Ներեա՛ ինձ հայր. զի երկիւղ ցասմանդ ստիպեաց զիս 'ի նոյն. այլ խիղճ մտացս, և սէրն զոր ունէի առ նա՝ լուծին զձեռս իմ:

ԱՆԱԿ

Զի՞նչ այն խիղճն իցէ. միթէ ես ո՞չ գիտիցեմ զարդարն և զուղիղ. հայր եմ, զհպատակութեան օրէնս պահանջեմ 'ի քէն: Այլ գիտեմ, զի սիրտ քո քաջ 'ի բացեայ է յինէն. եթէ ոչ էր իմ գութ յաղիս, այժմ իսկ արեամբ քով զդաշոյն իմ թանայի:

ՁԱՐԵՀ

"Տագնա՛պք անհնարինք": Թո՛ղ ինձ հայր. չեմ անլսող բանից քոց, զոր ինչ և կամիս հրամայեա ինձ, ահաւասիկ եմ. դու ետուր ինձ զկեանս, հա՛պա բարձ զայն՝ եթէ այնպէս հաճոյ իցէ քեզ: Այլ կասին ոտք իմ յընթացից, և միտք իմ յապշութիւն կրթին, և ոչ բաւեմ'ի մահ Խոսրովու յանիրաւի դիմել:

ԱՆԱԿ

Է՛հ, վատ արանց. անիրա՞ւ ինչ հրամայիցեմ ես. չիցես դու տակաւին հասու, եթէ յո՛ր սակս պարտ է նմա մեռանել: Զոր ոչն գիտիցես՝ այն անիրա՞ւ իցէ. այլ ես ընդ այն զայրանամ, զի քով անսաստութ՚ը ցարդ կենդանի կայ բռնաւորն:

ԶԱՐԵՀ

Զիա՞րդ մարթէր ինձ գործել...

ԱՆԱԿ

Հրաման հօր զամենայն տայ գործել. այլ այժմ զի 'ի պատերազմ զիս փութացուցանէ գոռն, չիք ժամանակ նոր դաւանաց նիւթելոյ: Սակայն անմարթ է ինձ դլալ դադարել յայս միջոց ժամանակի, և 'ի պատերազմ ելանել. հուր վառեալ է յոսկերս իմ. այն ինձ շատ է զի զնա բարձից 'ի կենաց, թէ և մեռանել հասանիցէ. զի թէ ոչ դաւն յաջողեաց, անձամբ իսկ պարտ է ինձ պատահել նըմա՝ ուր և գտանիցեմ զնա: Եթէ դարձեալ խոչ ինձ ընդ ակն անկանիցիս, գիտասջիր քաջ, զի և 'ի քեզ ոչ խնայեսցէ երկաթն ծարաւի. 'ի սրտէ քումմէ անցցէ սուր 'ի սիրտ նորա:

ՁԱՐԵՀ, Արդասուագին.

Ա՛հ հայր իմ. զի՞ մեղաւ քեզ Խոսրով:

ԱՆԱԿ

Կարկեաց, ափ 'ի բերան լեր, խեռ և ստահակ ծնունդ. զի՞ փոյթ իցէ քեզ զմեղանաց նորա: Գիտեմ զի 'ի խնդիր ես մահու:

ՏԵՍԻԼ Բ.

ՇԱՒԱՐՇ, ԱՆԱԿ, ՁԱՐԵՀ

—

ՇԱՒԱՐՇ

Արքայ կոչէ զքեզ իշխանդ, և ունի ինչ խօսել ընդ քեզ բերան 'ի բերան:

ԱՆԱԿ

Տարաժամու խնդրիցէ՞ զիս արքայ. դաւ է 'ի բանիդ եղբայր իմ Շաւարշ:

ՇԱՒԱՐՇ

Զարդարն ոչ գիտեմ. այլ խռովեալ թուէր արքայ 'ի բանս իւր:

ԱՆԱԿ

Ա՛հ. խոչ ընդ ոտն ինձ եղև որդին իմ անարժան ամենայն բարեաց:

ՀԱՒԱՐՀ

Զի՞նչ ինչ չար գործեցեր սիրելիդ իմ Զարեհ ։

ԱՆԱԿ

Մատն եղև մեզ առ արքայի ։

ՀԱՒԱՐՀ

Զի՞նչ խօսիցիս ։

ԶԱՐԵՀ

Ո՛չ տէր իմ և հայր, մի՛ դներ 'ի միտս քո այդպիսի ինչ. որդի եմ քո հնազանդ. ահա առաջի քո կամ, Ի ծունր գայ. հա՛ր մի՛ խնայեր. և մի՛ հայրազեղծ կարծես զիս. Արտասուէ ։

ԱՆԱԿ

“Ո՛հ. այլ յայլմէ լինիմ ես ։” Եւ ընդ-էր անսաստեցեր, և ոչ արկեր 'ի գործ զոր քեզն պատուիրեցի ։

ԶԱՐԵՀ

Ասացի . . . .

ԱՆԱԿ

Այլ չես արժանի կենաց ։ Սկսանի էր-թալ ։

ԶԱՐԵՀ

Զառաջս առեալ հօրն և 'ի գուճս անկեալ. Թո՛ղ ինձ հայր ։

ԱՆԱԿ

Իբա՛ց լեր։ Գուցէ ինքնին արքայ զգաստ լեալ իցէ գործոյն յայլափոխ կերպարանացդ. գուցէ ետես ուրեք զդեղն մահու զոր հեղեր յերկիր...

ԶԱՐԵՀ

Եւ ոչ մի ինչ յայդցանէ ոչ պատահեաց երբէք. քանզի...

ԱՆԱԿ, Մէկուսի.

"Ոչ է արժան մեզ յախուռն յանխորհուրդս մատչել'ի գործ. նախահոգ զգուշութիւն արութե՛ բազկի անվկանդ յարդարէ ասպարէզ։" Ա՜ Զարեհ. Եթէ իցէ ուղիղ սիրտ քո ընդ իս, հապա հա՛ս վաղվաղակի առ Խոսրով. ասա զի զբաղեալ եմ ես'ի հանդերձանս գումարտակին. և եթէ գտցես զնա յուզեալ'ի խորհուրդըս մտացն, և զդաւանաց ինչ գործոյ կասկածոտ, փութա բերել ինձ զրոյցս։

ԶԱՐԵՀ

Ակնարկութեան հօրդ իմոյ կամակատար։ Ի ծունր. Այլաղաչեմ զքեզ, հայր, հաշտեաց ընդ քաջախորհուրդ դիւցազինն՝ որ ոչ ինչ'ի շնորհաց իւրոց պակաս առնէ առատաձեռնել'ի մեզ։

ԱՆԱԿ

Է՛հ . . Երթ առ ժամն 'ի լրումն իմոյ հրամանիս :

ԶԱՐԵՀ ՅԵրթալն, մեկուսի .

“Անհնար եղև ինձ հասանել 'ի խորս գաղտնեաց անողոքելի թշնամութեան հօրն իմոյ ընդ դէմ արդարակորովն Խոսրովու :”

ՏԵՍԻԼ Գ .

ԱՆԱԿ , ՇԱՒԱՐՇ

ԱՆԱԿ

Տեսանէս Շաւարշ, ո՛րպէս յերախտագիտութեան 'ի սէր կապեցաւ որդին իմ այս Զարեհ ընդ Խոսրովայ : Ասեմ քեզ ճշմարտութեամբ . ոչ զի իմ է մանուկդ՝ 'ի գովել առնում զդա . այլ սքանչացեալ կամ ընդ աշխոյժս եռանդան դորա և ընդ ուղղադատ միտսն . չէ իմ տեսեալ ուրեք երբէք զոք, և ոչ լուեալ յումեքէ յայս տիս մանկութեան որ հաղիւ զերկոտասանամենիւք գայ , առաքինանալ ումեք այսպէս իբրև այր ոք իմաստուն լցեալ ամօք և անցեալ ընդ փորձ ամենայնի . և պերճ համոզակեր բանիցն

քաղցրութի՝ յափշտակէ զսիրտ և զմիտս ։

ՇԱՒԱՐՇ

Ոչ վայրապար և թագաւորն Խոսրով հարեալ է 'ի սէր դորա, և իբրև 'ի մեծէ խորհրդականէ հարցանէ նմա խորհուրդ. և ազդմամբ դորա և հնարագէտ հանճարովն, 'ի քանի՛ պատերազմունս անվաստակ տարաւ զյաղթութիւն ։

ԱՆԱԿ

Այլ ոչ գիտէ դա զդաշն հաստատուն և զանդարձ զոր կապեցի ընդ Արտաշրի, սպանանել զԽոսրով և ելանել յաթոռ նորա, ձեռն ինձ կարկառելով Արտաշրի ։ Եթէ էր յայնժամ առ իս Զարեհ, անշուշտ ես յայս գործ բազմավտանգ ոչ մխէի ։ Ճշմարտութեամբ ասեմ, քաջդ Շաւարշ, զի յոյժ հարեալ եմ 'ի խղճէ յուղղադատ յանընդդիմակ բանից մանկանդ մտաբերեալ. այլ 'ի խոստումն յոր կապեցայ ընդ Արտաշրի անլոյծ, այդ միայն է որ բուռն առնէ ինձ կալ մնալ անյողդողդ 'ի խորհուրդս. զի մի՛ գուցէ եպերեալ անարգեցայց յԱրեաց տեառնէն և յազատորերոյն իբրև այր մեղկ, 'ի պերճութենէ փառաց և 'ի գթոյ աղետից և յերկիւղէ նուաճեալ, յաղթահարեալ ։

Զայդոսիկ վատութե՞ կարծիս շփել զինև ոչ առնում յանձն: Այր եմ զօրութեան. խոստացայ միանգամ, կացից անդարձ իբրև զվէմ անվրդով՝ անսասան յալեաց մրրկաց. ոչ գութ սիրոյ, ոչ բարեկամութեան զօդ, ոչ երախտեացն անչափութիւն, ոչ փոխեսցեն զիս 'ի մտացս:

ՀԱՒԱՐՀ

Խորհուրդ այրական արժանի առն պարթևազնի որ իբրև զքեզդ իցէ, եղբայր:

ԱՆԱԿ

Ա՛հ. եթէ 'ի վեր հանից ես զայս ամենայն Զարեհի, երկիւղ է ինձ արդարև նուաճել 'ի հզօր ընդդիմակ բանից նորա. վասն որոյ և ամենայնիւ հնարիմ ծածկել զպատճառս դարանակալ լինելոյ իմոյ կենաց Խոսրովու: Ոչ գադարեմ երբէք բողոք առ դիսն խնամակալս ունել. եթէ այսպիսւոյ իմաստուն որդւոյ կամէին լինել ինձ ծնող, էր ոչ ամօք ինչ յառաջագոյն ետուն ինձ զդա: Եւ ես այժմ ոչ էի մատնեալ յայս անել գառագիղ:

ՀԱՒԱՐՀ

Եթէ արդ այդչափ դժկամակ իցես ընդ գործդ, եղբայր, և զառաջինն որ

պատճառք էին թշնամութեան քո ընդ արքայիդ՝ զի յայդ ուխտ կապեցար ։

ԱՆԱԿ

Ոչ ինչ ամենևին ։

ՀԱՒԱՐՀ

Եւ ի՞բր անպատճառ յանձն առնուլ զսպանումն նորա ։

ԱՆԱԿ

Խորամանկեաց Արտաշիր. օձ դարանակալ, որ գիտաց չարանենգ հնարագիտութեամբ թուլացուցանել զբազուկս քաջաց, և զպարթևազունս զամենեսին գրգռել ընդդէմ իրերաց ։ Քանզի արդարև իսկ և Պարթևացդ ազգք մեղկեալ անկեալ էին 'ի քաջութենէն, և վատթարացեալ խորհրդովք. յոյր սակս և ես յօժարեցի մտադիւր զկողմն ունել զՍասանեան առնդ հզօրի ։

ՀԱՒԱՐՀ

Բա՛բէ. ո՞րպէս ըմբռնեցայք 'ի պատիրսն ։

ԱՆԱԿ

Լուր և զպատճառս յանձնառութեան իմոյ սպանանել զխոսրով ։ Արտաշիր 'ի

յոլով պատերազմունս նկուն եղեալ, և հալածեալ 'ի զօրացն Խոսրովու, յանհնարս մտանէր. ատեան ժողովեաց, և բանքն ողջոյն հրապարակախօս Ճառիցն յարհամարհութիւն ձգէին տանն Պահլաւի, զի զնա իբրև արժանի գահակալութեան Արեաց ընտրեցին փոխանակ Պարթևին. և յետ այնորիկ կան անգործ և յոչ մի ինչ 'ի հնարից 'ի խաղաղութիւն աշխարհին Արեաց ձեռն մխեն. մինչև 'ի զայրոյթ բորբոքեալ բանիցն, յաւելոյր ասել. Եթէ այդպէս առ խռովել զամենայն բարձրացուցէք զիս 'ի գահդ, ես չեմ արիւնըռուշտ ոք գազան. հարէք, սպանէք զիս աստէն, և դադարեսցի աշխարհս 'ի յուզելոյ. քանզի ո՞ր օգուտ ձեզ 'ի գահակալութենէս իմմէ. ոչ ոք է արդ յաշխարհիս մերում որ 'ի մահճին 'ի պարս որդւոց և թոռանց գոհութեամբ զկեանս վճարէ. և ամենայն Արիք 'ի տիս երիտասարդութեան 'ի դաշտս և յառապարս իբրև զգիշաբեկս 'ի գազանաց 'ի սուր Խոսրովու մատնին: Ես մի և եթ ունիմ կեանս, և զօր ամենայն սուսերք մըխեալք 'ի կողս քաջացն Արեաց յօշատեն զիս. լաւ է ինձ այսօր աստէն մի անգամ միայն ընդ սիրելեացն իմոց անկանել. հապա, մատիք, հարէք. զի՞ կայք: Զայս

այսպէս ասէր, և լռեալ 'ի Թախիծ ցաւա-
գին՝ շուրջ հայէր զատենիւն՝ հուր յաչացն
ցայտելով:

ՀԱՒԱՐՀ

Արդարև արժանի բանք քաջի առն
Թագաւորի և Արեաց տեառն:

ԱՆԱԿ

Յայնժամ յամենայն բերանոյ լինէր
լսելի. Կեաց վասն մեր և վասն որդւոց
մերոց. պատրաստ եմք 'ի մահ. արաս-
ցուք զհաճոյն յաչս քո, և յաջողեսցի մեզ:
Սկսաւ խորհուրդ հարցանել խաղաղասէր
մտօք. եթէ ո՞, զիա՞րդ կարիցէ բառնալ
զկեանս միայնոյ Խոսրովու և խաղաղա-
ցուցանել զաշխարհ: Եւ քանզի ես 'ի նա-
խատանաց բանիցն որ առ Պահլաւս՝ յոյժ
հարայ 'ի միտս իմ, անդէն յեռանդն սըր-
տիս, մինչդեռ ամենեքին խրախոյս մի-
մեանց կարդային, Ես, գոչեցի, ե՛ս պահ-
լաւիկս սրբել կամիմ զարատ վատութեան
յազգէն իմմէ. ես ցուցից Արեաց տեառն
զհաստատութիւն խորհրդոց իմոց. որ-
պէս յաւուրն յորում բարձրացուցաք ըզ-
տէրդ մեծազօր 'ի գահ, 'ի նոյն միտս եմ և
կացից, մինչև խաղալ մարմնոյ իմոյ 'ի ճա-
պաղիս արեան իմոյ վասն կենաց տեառնդ:

ՀԱՒԱՐՀ

Ո՛արիական մտացդ ։

ԱՆԱԿ

Եւ այսպէս ելեալ ամենայն տամբ իմով փութացայ հասանել յոտս Խոսրովու իբրու փախուցեալ յԱրտաշրէ և ապաւինեալ յազգն իմ և յարիւն ։ Ի Ճանապարհի, որպէս գիտես, քաջդ Շաւարշ, ետուն ինձ դիք զՉարեհ. որ յորժամ եհաս 'ի տիս, և լուաւ զի 'ի Պարսից եկեալ անկեալ եմք 'ի գթութիւն Խոսրովու, կապեցաւ 'ի սէր նորա իբրև բարերարի. և ես յիմաստութիւն նորա վստահացեալ՝ յայտնեցի նմա միայնոյ զթշնամութեան միտս իմ ընդ Խոսրովու. մինչև յանձն առնել ինձ նմին 'ի գլուխ զգործն հանել, զի ոչ երբէք յետս կացեալ ինչ է 'ի հնազանդութենէն ։

ՀԱՒԱՐՀ

Եթէ այդպէս իցէ, դիւրաւ վճարեսցին իրքդ ։

ԱՆԱԿ

Բայց նա յայսմ ոչ միայն ըմբոստ գտանի հրամանաց իմոց, այլև իրաւարար բանիւք իւրովք զիս 'ի զեղջ և յապաշաւ նստուցանէ ընդ յանձն առնուլ իմ զայս գործ եղեռան ։

Ա.Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА

ՀԱԻԱՐՀ

Ուրեմն կամիցիս հրաժարել 'ի գործոյդ մեծէ :

ԱՆԱԿ

Ասացի իսկ քեզ. զայդ ոչ կարեմ. զի այն ինձ դառն է յոյժ՝ իջանել յայդ անարգութիւն. երևել յանխորհուրդս ձեռն մխեալ յինչ, և ապա յայլոյ խելս լեալ՝ իբրև զհողմոց ամբոխումն անկայուն :.. Յամեաց Զարեհ զդարձն. ընդ այն ոչ ինչ կասկածեմ եթէ 'ի վեր երբէք հանցէ զխորհուրդս իմ... այլ մի՞ դուցէ բռնադատեսցէ զնա Խոսրով կասկած 'ի մտի ունելով զդաւանաց. և... Այլ զի՞ է ինձ վատանալ. զիարդ ինչ և իցէ, ելից առ Խոսրով. ոչ արիւն վատաց յերակունս իմ խաղայ : Ձեռն տացեն ինձ դիք, և զօրացուսցեն զբազուկս իմ. զի եթէ մահու կոչն իցէ, 'ի միասին Ճաշակեսցուք ընդ նմա : Գնայ :

ՏԵՍԻԼ Դ.

ՀԱԻԱՐՀ

Եղբայր իմ է. խորհուրդք անօրէնութեան են 'ի միտսն : Ընտրեաց և զիս յիւր խորհրդակից. ոչ դրժեմ սիրոյն հարազա-

տութեան : Այլ ես 'ի մանկութենէն
յարքունիս սնեալ Խոսրովու, որ պատ-
շաճական կարգօքն, և խաղաղական սիրով
պաշտօնէիցն զանցանէ զարքունեօք հզօ-
րագունից ազգաց, ոչ կամէի զանկումն
սորա . . . Այլ զի՞նչ՝ եթէ այսպէս իցէ
հաճոյ դիցն հզօրաց, եթէ հասանիցէ
Անակայ 'ի գահ թագաւորութեան Հայ-
ոց բազմել, և ես հասից յաւագութեան
բարձ ընդ նմա . վասն որոյ պարտ և ար-
ժան է ինձ յոտն 'ի մատն կալ յարթմնի,
յոր կողմն մէտ կշռոյն խոնարհեսցի 'ի դի-
ցըն ակնարկութենէ, յայն զգնացս ուղ-
ղել : Ես զառաջինն յերկիւղ կասկածա-
նաց ըմբռնեցայ, եթէ մի՞ գուցէ և 'ի
տանէն Հայկայ ջնջել հասանիցէ զարմին
Պարթևաց դիւցազանց, և անտերունչ
և ամայի աշխարհս այս մեծ մնասցէ . արդ
'ի վերայ հասեալ կամ զի չիք ինչ յայդպի-
սի վտանգաց 'ի միջի . զի ընդ հովանաւ-
որութեամբ Արտաշրի ելցէ Անակ 'ի
գահն Արամեան : . . Սակայն անպարտա-
կան մահ քաջակորով Պարթևազինն՝ յո-
րոյ 'ի ձեռն աշխարհս այս մեծ ձգեալ
տարածեալ 'ի Կասպիական ծովէն մինչև
ցՄիջերկրականն, և 'ի Պոնտական ալեաց
մինչև ցՄիջագետսն Ասորեստանեայց յող-
ջոյն իսկ յընդարձակատարը սահմանսն և

յամենայն տեղիս առաւելքան զառաւել 'ի շինութեան և 'ի բարեզարդութեան՝ վայելէ: Ա յսպիսւոյ խոհական և քաջի առն բարձումն յաշխարհէ բռնամահ՝ խիղճ է մտաց իմոց: Այլ առ նմին և եղբօրն իմոյ Անակայ կորով մտացն և բազկին ոչ նուազ ինչ է և յետնեալ: . . Եւ յիրաւունս իսկ. միոյ առն և եթ մահուամբ ո՛րչափ մահունք և դառնութիւնք պատերազմի դադար առցեն. և զեան ոչ ուստեք և ոչ միում ումեք: . . . Եւ զիա՞րդ ոչ լաւ ևս իցէ կեցուցանել զբազումս քան զմին, միանգամայն լեալ և օգտութեան անձին խնամակալ: . . Սակայն եթէ խայտառակեսցին դաւանքն, անշուշտ մահ մնայ և Անակայ. գուցէ և ինձ ընդ նմա: . . Այլ եթէ Անակ ոչ մատն ինձ լինիցի, իմ կեանք զերծ է 'ի վտանգաց: Անակ յաչս եդեալ է զմահ: . . Հաւաստին այսինչ է. եթէ յաջողեսցի Անակ 'ի գործս և թէ ոչ, յամենայնի ցաւեսցէ ինձ. ես ոչ կարեմ պակաս զարտասուսն առնել և 'ի վերայ մահուան միումն 'ի սոցանէ. զի այր զգօն մեծախորհուրդ՝ արժանի գահակալ քաջացն կորովեաց Հայոց է Խոսրով. այլ և Անակ արիւն իմ և հարազատութիւն, և ես վշտացն և փառաց նորա հաղորդ: Չիք և ոչ մի հնար յայսմ հետէ.

կնքեցին յերկնից դիք զմահ միումն 'ի
սոցանէ: Ի գումարել թխատիպ ամպոց,
եթէ իշխանին երկնից արփւոյն 'ի լուսա-
փայլութիւն և 'ի կենդանարարն ջերմու-
թիւն վայելել յօժարիցիս, պարտիս զի-
ջումն տարափոյ յորդախազաց ջուրց յան-
ձին ունել յառաջագոյն: . . . Է՞ր յա-
մեմ ես աստէն 'ի յոյզս մտաց ծփեալ.
ելից փութանակի. մի՛ գուցէ ցարդ 'ի
գլուխ ելեալ և աւարտեալ իցէ գործն:
Յերթալն ընդ առաջ լինի նմա Զարեհ:

ՏԵՍԻԼԵ.

ԶԱՐԵՀ, ՇԱՒԱՐՇ

—

ԶԱՐԵՀ

Ո՞ւր իցէ հայր իմ Անակ:

ՇԱՒԱՐՇ

Ընդէ՞ր յապաղեցեր ցայս վայր:

ԶԱՐԵՀ

Զի ոչ կարացի խօսել ընդ արքային. և
'ի լուր խրախուսանաց քաջալեր բանից
նորա որ առ սպայս գնդից և առ զօրա-
գլուխս՝ ընդարմացեալ յակճիռս կայի.
ո՛րպէս յեռանդն վառեալ բորբոքէին ան-

պարտելի գունդք քաջացն Հայոց 'ի բանից նորա հզօրաց, 'ի միակամ սէր ազգային ամենեցուն միտք զարթուցեալ: Եթէ անդէն պատահէր և Անակ, անշուշտ զամենայն զխորհուրդս դաւանացն 'ի բաց 'ի մտացն թօթափէր:

ՀԱՒԱՐՀ, Մէկուսի.

"Անզեղջ է նա 'ի միտսն հաստատունս":

ՋԱՐԵՀ

Ես աներկբայ նկատեմ զՀայս ընդ հովանաւորութեամբն Խոսրովու լինել տէր և ամենայն Արեաց աշխարհին. և ընդ միով թագաւորաւ զՀայս ընդ Պարսկաց զխաղաղութիւն համբուրել. զի քաջութիւն բազկացն Հայոց ընդ արիական միտս թագաւորին 'ի դէպ Ճահողակի պատահեալ՝ բնաւ իսկ՝ անյաղթք են, և պարիսպք երկաթի ընդդէմ թշնամեաց գնդին: Տեսեալ իմ զայսոսիկ՝ զուարթանան միտք իմ. այլ անդէն առ նմին ընդ միտ ածեալ զԱնակայ հօրն իմոյ զչարարուեստ նենգութիւն, 'ի յուսահատ խորհուրդս պաշարեալ տագնապիմ:

ՀԱՒԱՐՀ, Մէկուսի.

"Ո՛րպէս զգաստ է 'ի բանսն և ար-

դար ՝՝ : Ա՜ Զարեհ. Այլ արժան է քեզ մոռանալ զամենայն և կախել զբանից հօր քո :

ԶԱՐԵՀ

Ինձ անհնար է անտեսել զՃշմարտու-թեամբ, և լսող լինել անիրաւ ազդմանց հօր իմոյ :

ՀԱՒԱՐՀ

Է՞ր ոչ լսես հօր քում. ո՞չ գիտիցես զի վասն քո է ա՜մ փոյթ նորա, զի փառս քեզ պատրաստեսցէ :

ԶԱՐԵՀ

Ո՛չ եթէ անհնազանդ ինչ լինիմ նմա, այլ զի անիրաւութ՜ ոչ ուղղին աթոռք :

ՀԱՒԱՐՀ

Զօգուտ անձին խնդրել անիրա՞ւ ինչ իցէ :

ԶԱՐԵՀ

Եթէ արդարութեամբ ոք խնդրեսցէ :

ՀԱՒԱՐՀ

Ուստի՞ ուսար դու զանիրաւն և զար-դար. ո՞չ ապաքէն յԱնակայ 'ի հօրէն քումմէ :

ԶԱՐԵՀ

Այո՛ . . .

ՀԱՒԱՐՀ

Ապա 'ի նմանէ ուսիր և զգործելն նոքօք :

ՁԱՐԵՀ

Ճշմարտութիւն մի է, անկեալ 'ի բնութեան հասարակաց :

ՀԱՒԱՐՀ

Դեռ ևս մանուկ ես. աշխոյժք սրտի քո ոչ տան գործել զհակառակն սիրոյ : . . . Եւ ես գնացից զհետ Անակայ, զի սիրտ իմ բաբախէ և դողայ. Թերևս մարթացայց ձեռն տալ նմա : Գնայ :

ՁԱՐԵՀ

Դիցն հովանի 'ի վերայ գլխոց ձերոց :

ՏԵՍԻԼ Զ.

ՁԱՐԵՀ

Զի՞նչ ինչ քաղցրագոյն կայցէ քան ըզկեանս յաշխարհի. և յայնմ ոչ կամին վայելել մարդիկ. և սնապարծ խորհրդովք այր զընկեր յարևէ արկանէ : . . Ա՛հ հայր իմ, ո՞ արկ 'ի միտս քո սպանանել զարքայ զմեծ ազօրն և զարդարակորով : Առաւել քան ընդ որդեակս իւր՝ ընդ իս կապեցաւ նա սիրով : Ահա փառք և ճոխու-

թի՞ հօր իմոյ տուրք են աննախանձ սրտին արքայի: Այլ յորժամ ատելութիւն վառեսցի այր, և լոյս տուընջեան խաւար թուի նմա, և աղջամուղջ թանձրամած պատի զբբօք նորա: . . . Արդ զի՞ կամ ես 'ի բացէ անկարեկիր սրտիւ. եթէ դիմեաց նա 'ի մահ Խոսրովու, և ես հանդուրժիցեմ տեսանել զարդար զպսակաւորն յարեան Ճապաղիս. գուցէ ընդ նմին խառնեսցի և արիւն հօրն իմոյ . . . Ո՛վ դիք, օգնեցէք: . . . Հա՛պա անձն իմ, փութա՛, Ճեպեա՛ ելս իրացն գտանել: Սրանամ աւասիկ արգելուլ զհայրն իմ. ապա թէ ոչ՝ նախ արիւն իմ հեղցի. յառաջագոյն զիս ինքն տեսցէ դիակնացեալ առաջի իւր հայրն իմ. եթէ ոչ յիմարեսցի 'ի միտս իւր եղերական տեսլեամբն, ապա մտաբերեսցէ հեղուլ զարիւն արքայի: . . Ո՞ իցէ որ այսր ընթանայ: . . Ո՛վ տէր. յաջողեցին ինձ երկինք. առ իս կայ Խոսրով արքայ. կենդանի է տակաւին. վա՛շ ինձ. խանդաղատեցայ առ գութ սիրոյ քո. զիա՞րդ մեռանիցի պսակն որդւոց Թորգոմայ, և զի՞նչ վնաս. . .

ՏԵՍԻԼԷ.

ԽՈՍՐՈՎ, ԶԱՐԵՀ

—

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ գործես դու աստ առանձինն, որդեակ Զարեհ. Հայր քո 'ի պատրաստի կայ գումարտակ հանել ընդդէմ Արտաշրի. և յետ վանելոյ զնա միանգամ, և մեծամեծ ևս փառաց յինէն հանդիպեսցի :.. Այլ ընդէ՞ր տխրական՝ դիմօք երևիս դու, և խօսք ոչ գոն 'ի բերան քո : Ո՞ւր իցէ քոյին զուարթութիւն. եթէ ընդ յաղթութիւն հօր քո կասկածիցես, սակայն զուր տարապարտուց է երկմտութիւնդ. զի ահաւոր բազկաց նորա չիք որ տոկ ունիցի. դիտես և զզօրութիւն մերոյ որերոյն, զորոց 'ի միակամ յարշաւանսն պարտութիւն ուրեք երբէք չէ լուեալ ունկն բանաւորի. և վաղ ընդ փոյթ դարձցի այսրէն Անակ :

ԶԱՐԵՀ

Ոչ այդպէս, տէր արքայ. ո՛չ վասն այդորիկ ինչ, այլ... չգիտեմ զի՞նչ ասացից :

ԽՈՍՐՈՎ.

Յայտնեա ինձ, վասն էր իցէ տխրութիւն քո: Եթէ ես ինչ մեղայ քեզ, այլ ոչ այնպէս է. քան զի զամենայն զհաճոյս քո առնեմ ես առաջի քո վասն սիրելոյ իմ զքեզ և զհանճար մտաց քոց, որով զապստամբեալսն երբեմն զզօրս քաղցրաբանութիւն համոզեցեր, և ինձ խորհրդակից կալայ զքեզ 'ի դժուարինս: Հապա մերկեա 'ի քէն զտխրութիւն երեսաց քոց:.. Տակաւին ևս Թախծեալ կաս, գոնեա ծանո ինձ Խոսրովու՝ որ հօր պէս զքեզ սիրեցի. և 'ի դեռաբողբոջ հասակիդ զկատարելոյ տեսեալ 'ի քեզ զխոհականութիւն, ոչ ինչ 'ի կարևորացն Թագուցանեմ 'ի քէն օգնեալ 'ի խորհրդոց քոց յամենայնի: Յորմէ՞ իրաց նեղեալ ես դու:

ՁԱՐԵՀ, Մէկոսի.

„Անձկութիւն մեծ ունի զիս. դառնացեալ է ոգի իմ և անգիտանամ բանիւ պարզել":

ԽՈՍՐՈՎ.

Մինչև ցե՞րբ քօղարկեալ ունիցիս:.. Այլ զի հայր քո 'ի պատերազմ ելանիցէ... Երթիցուք արդ տեսանել զնա միանգամ և միւս անգամ, և գիտասցես զի ոչ յապաղեսցէ նա յօտարութեանն, և ոչ եր-

կիւղինչ է նմա յանզօր թշնամւոյն յԱր-
տաշրէ: Փոքր միւս ևս և զՊարսիկս ընդ
ձեռամբ կալցուք, և 'ի խաղաղ միութեան
վայելեսցուք: Հա՛պա ելցուք:

ԶԱՐԵՀ

Երթայցեմք առ հայր իմ. և տէրդ իմ
ընդ իս: Մէկուսի "Ահեղ տեսիլ":

ԽՈՍՐՈՎ

Եւ ընդէր ոչ. չկամիցիս տեսանել ըզ-
հայր քո. անարգիցես զնա:

ԶԱՐԵՀ

Հայր իմ է, ոչ արհամարհեմ ինչ զնա
երբէք: Այլարդ դիցես հրաման պատուի-
րանի 'ի վերայ նորա, զի երթեալ 'ի պա-
տերազմ և վաղվաղակի դարձցի այսրէն:

ԽՈՍՐՈՎ

Ոչ ինչ կարեմ 'ի վերայ կալ խորութե՛
բանից քոց: Երթիցուք առ նա 'ի միա-
սին, և զդոյն նմա օրինադրեսցուք:

ԶԱՐԵՀ

Այլ եթէ զսիրտ նորա մեղկիցեմք...
Բարիոք իցէ չերթալ առ նա:

ԽՈՍՐՈՎ, Զարմաղեաչ.

Ո՞չ կամիցիս դու երթալ առ հայր քո:.. Եթէ արդարև բարեկամ իցես արքայի, և անսաս բանից իմոց, պատմեա ինձ զինչ իրք իցեն. ապա թէ ոչ...

ԶԱՐԵՀ

Ո՛վ. բուռն առնես ինձ տէր: Մէկուսի. «Զի՞ գործեցից, հանից 'ի վեր զբանն»: Թո՛ղ ինձ տէր իմ արքայ երթալ 'ի տեղի ինչ խաւարին, և անդ զօղել դադարել. զի խռովեալ է անձն իմ, և ոչ կարեմ կալ յոտին:

ԽՈՍՐՈՎ

Այդպէս եպերանօ՞ք վարիս մանուկ դու ընդ սիրելւոյ քում և մեծազօր թագաւորի:

ԶԱՐԵՀ, Մէկուսի.

«Անձկութիւն և տագնապ յամենայն կուսաց»: Ի ծունկս. Տէր իմ, ահաւասիկ կամ. արա ընդ իս զոր ինչ կամք իցեն քեզ. և 'ի մահուանէ ոչ դարձուցից զերեսս. անցցէ դաշոյն ընդ սիրտ իմ բառնալ յինէն ընդ դեռաբոյս աւուրցս, և զտագնապ վարանաց իմոց: Երթ յայնժամ առ հայրն իմ, տա՛ր զրոյց նմա. յարեան իւրում թաթաւեալ կայ Զարեհ. Թերևս

ամոքեսցի սիրտ նորա արտասուօքն զոր հեղուցու ։

ԽՈՍՐՈՎ, Մէկուսի.

“Այլ յայլմէ լինիմ ես. սիրտ իմ գելու. այլ վատութեան նշանակ մի՞ ագցի ընդ յարկաւ իմով” ։ Յոտն կաց որդեակ. այլ սնոտի համարիմ ես զամենայն՝ եթէ լռես յինէն դարձեալ զյայտնութիւն բանիցդ այդոցիկ ։

ԶԱՐԵՀ

Սուր քո մխեալ 'ի սիրտ իմ՝ պատմեսցէ զամենայն. բացցէ նա զխորհուրդս իմ առաջի քո. այլ... ներեա՛ ինձ տէր, հրաման տուր ծառայիս քո տեղի տալ ասի, զի...

ԽՈՍՐՈՎ

Մինչչև ինչ լուեալ 'ի քէն, և զիա՞րդ արձակիցեմ զքեզ. այլակերպութեամբ բանից քոց և զսիրտ իմ ճմլեցեր. գէթ յայտնեա՛ բան ինչ, և երկոքեան յանդորր ելանիցեմք ։ Մի երկնչիր. թէ և մեծամեծս յանցուցեալ կարծիցես ըզքեզ, ահա ներեալ քեզ. միայն հանդարտեցո՛ զյոյզս մտաց իմոց ։

ԶԱՐԵՀ

Ոչ ինչ եղեռն է 'ի ձեռին իմում, այլ... Մեկուսի "Ո՛վ սէր հայրենի ամենայաղթ": Ա՜ Խոսրով. Անդարմանելի են չարիքն, և անօգուտ յեղյեղել զնոյն. աստեղք բարերարք հովանի լիցին 'ի վերայ քո:

ԽՈՍՐՈՎ, Մեկուսի.

"Քանի՛ յամառութիւն է մտաց դորա. ո՛րչափ օտար թուի ինձ այս առաջին նուագ անսաստել սորա ընդդէմ բնական հանճարոյն և հեզ և քաղցր բարոյիցն. յանհնարիցն է մեղկել զմիտս մանկանդ": Ա՜ Զարեհ. Քեզ ասեմ, եթէ ոչ կամիս կցորդ ունել զիս վշտացդ, և դարման ցաւոցդ մատուցանել, թէպէտ և բազում իւիք նախատեցեր զիս զբարերար քո ըստ ոչ սովորութեանդ, ել մեկնեաց աստի. քանզի յեղումն բազում տեսանեմ 'ի քեզ. փոփոխեցար այսպէս յանկարծօրէն 'ի դիւրալուր և յընտել բարուցդ:

ԶԱՐԵՀ

Ա՜հ, լաւ էր ինձ յերկնաւոր շանթից կայծականց բիւրապատիկ մեռանել, քան խոժոռ դիմօք տեսանել զքեզ: Բայց սակայն երթամ ես լալ զթշուառութիւն իմ, որպէս և հրաման ետուր, տէր արքայ: Գնայ լալով:

ՏԵՍԻԼ Ը.

ԽՈՍՐՈՎ

Ցասումն և գթութիւն հակառակեալ յարեան 'ի վերայ իմ: Զի՞նչ պատահեաց երիտասարդին աղնուականի. զիա՞րդ թագուցանիցէ յինէն: . . Քաջ իսկ գիտեմ զբարուց նորա զհլութիւն և զհպատակութիւն. իսկ այժմ այլափոխեալ իմն երևի ինձ: Ցամառեալ կայ. ո՛վ դիք, ո՛րպէս թագուն են 'ի մարդկանէ խորհուրդք սրտից: Մանուկ մատաղ և իմաստուն որ զամենայն ինչ զիւր յիմ՝ ձեռն արար ապաստան, և ոչ իւիք ընդդէմ դառնայ հրամանաց իմոց. և 'ի վերայ այսր խորք սրտի նորա ծածկեալ են յինէն: Ո՞ գիտէ, գուցէ զի հրաման ետու Անակայ հօր նորտ երթալ 'ի պատերազմ, և ընդ այն խռովեալ իցէ անձն նորա: Այլ զիա՞րդ մահու չափ կողկողիցի ընդ յիշատակ իրացն: . . Կամ թէ և զնա ընդ իւր կամի տանել Անակ, և նա զի մեկնի յինէն, վասն այնորիկ խռովեալ իցէ . . . Ամենայն ճանապարհք կուրացան առաջի իմ, և ոչ գոյ ինձ ուստեք զուղիղն. իմանալ: . . Կոչեցից այսր զԱնակ. 'ի նմանէ

մարդ է ինձ հաւատալ զամէնայն : Ահա այսր գայ Բուրզ իշխան . թերևս ծանօթ ինչ կայէ իրացն :

ՏԵՍԻԼ Թ.

ԽՈՍՐՈՎ, ԲՈՒՐԶ

—

ԲՈՒՐԶ

Ողջոյն տեառն իմոյ արքայի :

ԽՈՍՐՈՎ

Ողջամբ եկիր : Ո՞ւր կայէ Անուակ . կամ և պատրաստ կայեն զօրքն :

ԲՈՒՐԶ

Ամենայնինչ կազմ և պատրաստ կայ . ակնարկութեան տեառնդ միայն . այլ Անուակ՝ էգիտեմ զինչ պատահեցին նմա :

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ բանք են գնոսանէ :

ԲՈՒՐԶ

Ահ՝ զի փոխանակ կալոյ՝ ի գլուխ զօրուն , աղմկայոյզ խուրհրդով այսր և անդր ատատանեալ կայծի , և ոչ ոք գիտէ զկուռզ

մունս մտաց նորա ։ Բազմօք թախանձեցի ես զնա , այլ անմարթ եղև առնուլ ինչ բանս 'ի բերանոյ նորա ։

ԽՈՍՐՈՎ

Ճշմարիտ իցեն բանքդ . . . Ուրեմն դէպք ցաւագինք և ծածուկք պաշարեցին զորդին և զհայրն միանգամայն ։ Սակայն ո՞ կարասցէ խելամուտ լինել խորհրդոց նոցա . այլ որպիսի՛ և է հնարիւք պարտ է պատառել զառագաստ գաղտնութեանն ։

ԲՈՒՐՁ

Արդար են բանք տեառն իմոյ արքայի . սակայն ոչ ինչ հետք վնասակարութեանց երևին 'ի գնացս նորա . որ և 'ի բաց թողեալ զփառս և զաւագութեան պատիւ՝ զոր մատոյց նմա Արտաշիր , ապաստան եղև 'ի տէր իմ արքայ ։

ԽՈՍՐՈՎ

Եւ ես իսկ յայն ապաստան կամ . այլ ո՞ գիտէ , է երբէք զի երկիր հիւթեղ և վայր պարարտարօտ որ արդեամբք և տեսլեամբ ամս յոլովս ուրախ առնէր զմարդիկ , 'ի մի վայրկեան ժամու փոխեալ 'ի հնոց բորբոքեալ և բերանացեալ , զոր ինչ և գտանէ կիզու , և 'ի դժոխս ներքինս ե-

բագընթաց ձգեալ տանի. վասն որոյ արժան է ինձ հասանել առ նա վաղվաղակի. և 'ի վերայ կալ ճշմարտութեանն: Գնայ:

ՏԵՍԻԼ Ժ.

ԲՈՒՐՁ

Ի գիցն ակնարկութենէ անկան 'ի մէջ ոոցա այս յոյզք շփոթի. քանզի անիրաւեցան 'ի Պերոզամատ. որոյ ազգովին կոտորեալ յԱրտաշրէ 'ի պատճառս Խոսրովայ, միայնակ զերծաւ 'ի ձեռն իմ յաշխարհն Արեաց. զոր և ապա կոչեաց արքայ այսր գալ: Տասն ամք են այսօր, 'ի համարի և 'ի պատուի որդւոց արքայի ելանէր և մտանէր. իսկ այժմ, չգիտեմ ո՛րպէս, զտեղի նորա փոխանակեաց Զարեհ: Թէպէտ ոչ ինչ փոյթ եղև Պերոզամատայ, կապեալ նորա 'ի սէր Զարեհի. նա և արքայ ոչ ինչ հոգ յանձին ունի վասն նորա... Արդ իրաւամբք զվրէժ նախատանաց նորա լուծցեն միանգամայն հայրն և որդի: Եթէ ոչ մէտ արդարութեան 'ի ձեռանէ անմահ արփւոյն տնօրինէր 'ի մարդիկ, ոչ կարէր աշխարհս կալ 'ի կայի իւրում: Ահաւասիկ գործ մեծ պատրաստեցաւ. և ես ճիգն 'ի ճիգն խառնեալ, Ջանացայց

հնարել գործել զամենայն. դիմագրաւ ե-
ղէց ամենայն վտանգաց, և 'ի դաւանաց իսկ
ոչ հրաժարեցից: Զի ուր արդարութեան
եմք 'ի խնդիր, անդ անիրաւութիւն տե-
ղի ոչ ունի:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԲՈՒՐՉ, ՊԵՐՈՉԱՄԱՏ

—

ՊԵՐՈՉԱՄԱՏ Տագնապաւ.

Զի՞ կաս բարեկամ. ո՞չ գիտիցես զի
աղմուկ մեծ խռովութե՛ անկեալ է զար-
քունեօքս. այր զարամբ ելանեն, և թէ
զի՞նչ պատճառքն իցեն՝ ոչ իմացայ:

ԲՈՒՐՉ

Ո՞գիտէ յի՞նչ խորհուրդ յուզէին Անակ
և Զարեհ. գուցէ 'ի վեր առին զպատ-
րուակն. այլ ես հաւանեալ եմ, զի այնու
քեզ աջողեսցէ դարձեալ գրիլ յորդիս
արքայի:

ՊԵՐՈՉԱՄԱՏ

Բա՛բէ, և ո՞ հաւատասցէ եթէ դար-
ձեալ սիրիցիմ ես 'ի մեծէն Խոսրովայ:
Քանզի թէ զիարդ ատելի եղէ՝ այնմ եր-
բէք հասու չեղէ, այլ ոչ կամէի թէ չար

ինչ անցցէ ընդ սիրելին իմ Զարեհ։

ԲՈՒՐՁ

Այսուհետև, որպէս ինձ Թուի, մերժեսցի Զարեհ յարքայէ, զի խակութիւն ոչ սակաւ գտանի 'ի նմա. զի ոչ արքայ ինքնին սիրեաց զնա, այլ զի ըստ խորհրդոց նորա վճարեցաւ երբեմն նուաճութիւն ապստամբացն զօրաց, և երկուք ոմանք 'ի նախարարացն գովեցին զնա առաջի արքայի, զի կամէին 'ի ձեռն նորա բառնալ զկեանս Խոսրովու։ Այլ Անակայ ոչ հաւանեալ, չգիտեմ ընդէր, կասեցան 'ի խորհրդոյն. ապա ոչ դժուարին լիցի մեզ այժմ հանել զնա յաչաց արքայի։ Եւ աղմուկ չփոթին զոր ասա ցեր՝ նշանակ է այն ձեռնտու մեզ լինելոյ դից։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Զի՞նչ խօսիս իշխանդ Բուրզ. և գտանիցի՞ խակութեան գործ 'ի Զարեհ. իբրև զնա մտախոհ զոք և արդարութե՞ հետամուտ չէ իմ տեսեալ երբէք ուրեք։ Ո՛հ, հատոր հոգւոյս Զարեհ. ոչ կամիմ զի չարիք կալցին զնա. Թող վայելեսցէ ընդ իմ 'ի շնորհս բաղդին։

ԲՈՒՐԶ

Մանուկ ես տակաւին, և ոչ գիտես և ոչ ինչ. 'ի խնդրել զվրէժ փառաց անձին՝ յաչս դնել օրէն է զամենայն:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Խաբիս իշխանդ Բուրզ. այլազգ են իմ խորհուրդք: Եւ եթէ ճշմարտեսցին բանքըդ, երկիւզ է ինձ զի մի՛ և մեզ չարիք պատահեսցեն 'ի ցասմանէ դիցն հզօրաց:

ԲՈՒՐԶ

Խնամատար որբոց են դիք, և յամենայն 'ի նոցա յաջողուածս ձեռնտուք:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ մի՛ գուցէ անգիտանայցեմք անգիտութիւն, և ընդ դիցանուէրսն մարտ յարդարիցեմք:

ԲՈՒՐԶ

Մի՛ ինչ վասն այդորիկ կասկածիցես, ես զամենայն հնարեցայց: Ընդէ՞ր ժամավաճառ լինիմք աստէն. փութասցուք վաղվաղակի յարքունիսն աղմկայոյզ, զի իրացն հասու եղեալ՝ յօրինեսցուք ըզպատշաճ որոգայթսն:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Եթէ սուսերք շողայցեն անդանօր, վերացուսցո՞ւք և մեք զէն. այլ ես քան զամենայն մարդիկ երկնչիմ 'ի մահուանէ:

ԲՈՒՐԶ

Օ՞ն անդր 'ի բաց տար. ոչ վայելէ առն պարթևազին երկչոտի կարծիս զանձամբ առնուլ: Քա՛ջ լեր. 'ի հետոց իմոց խոտորիցիս մի՛, ոչ յաջ և ոչ յահեակ. քաջութեան խորհրդով վառեա զմիտս քո:

ՀԱՆԴԷՍ Բ.

Տեսարանն է սենեակ ատենի արքային Խոսրովու ոսկեքանդակ զձեղունն ունելով. 'ի կէս սենեկին սիւնք արծաթիք չորք ասիական Ճարտարապետութեամբ խառն ընդ յունականին, որոց խարիսք և խոյակք ձոյլ ոսկի. 'ի սիւնամէջսն վանդակք ոսկէխաղացք բազմարուեստք 'ի տիպ ծաղկանց։ Ցետոյ կողմանէ սեանցն թիկնապահ զօրականին են կայանք։ Ցատակք սենեկին կՃեայ պաղպաջուն, և այսր քան զսիւնսն արկեալ մարգարտայեռ օթոց ոսկենկար։ Ցաջակողմն սենեկին գահ ոսկի քանդակագործ դրոշմեալ զարմանազան. և թիկունք և ծնստք գահուն ակամբք պՃնեալք, հովանի տարած ունելով 'ի վերոյ՝ ծիրանագոյն ոսկեՃամուկ, որոյ ծոպքն մարգարտաշար ոսկեթել հիւսուածոյ։ Բարձրացեալ գահոյիցն ընդ չորս աստիՃանս 'ի խորհուրդ չորից առաքինութեանց յորս կրթէին արքայորդիք. և թևք աստիՃանացն բազէի 'ի կերպարանս։ Այսչափ ինչ վեր 'ի վերոյ զսակաւն 'ի բազմաց ասացեալ, զստուեր իմն բերելով պերՃութեան զմերոց թագաւորացն հանդերձանաց։

ՏԵՍԻԼ Ա.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ

ԱՆԱԿ, Սուր 'ի ձեռին։

Անպիտան, որդի. եթէ անսայիր ինձ և չվատանայիր, այժմ յարեան իւրում թաւալէր Խոսրով, և վաղակաւորն իմ ոչ ունայն դառնայր յիս, և մեզ դիւր լինէր

յամենայն կողմանց զօգուտն մեր խոր-
հել. վասն այսորիկ մահահրաւէր երկիւղ
զմեօք խաղայ, յորմէ չիք զերծանել՝ եթէ
ոչ ծագեսցէ 'ի վերայ մեր լոյս կենաց յա-
թոռոց յանմահից:

ԶԱՐԵՀ

Ա՛հ. յոյժ ծանրացասումն լինիս հայր.
այլ զի՞ այնպէս աներկիւղ, իբրու ցնորեալ
իմն յարհաւրաց միայնակ անօգնական դի-
մեցեր 'ի սենեակ այսր, յորժամ ոչ գի-
տէիր՝ թէ ո՛ւր իցէ Խոսրով:

ԱՆԱԿ

Զի եթէ այսօր ոչ յաջողեսցի ինձ առ-
նուլ զքէն վրիժուն, հեղձամղձուկ լինիմ
յանձկութենէ սրտիս: Ո՞չ գիտիցես, զի
և պատգամ ետ ինձ գաղտնի հայրն դից
Զրուան.

"Մերժեա՛ զերկիւղ, կաց անվբրդով,
Արբո՛ զդաշոյնդ յարեան 'ի ծով:
Յաւիշկ դանդաղ անկցի Խոսրով,
Հեղձամըղձուկ զանձն ողբալով":

ԶԱՐԵՀ

Ո՛վ ապառում սրտին. յոր հասանել
ցանկան մարդիկ, զնոյն յԱստուծոյ պար-
գևեալ շնորհ խոստովանին:

ԱՆԱԿ

Սակայն ցարդ 'ի դերև ելին հաղբք իմ, և այժմ արքունիքս ամենայն խռովեալ են վասն իմ՝ տեսեալ զիս յայս կերպարանս. այլ չէ ինչ մահ յաչս իմ, եթէ միայն թացցի սուսեր իմ յարենէն Խոսրովայ: Իսկ եթէ անգործ մեռանիցիմ ես, 'ի քեզ յանձն է վրէժխնդիր լինել մահուանս իմում: Թէ ոչ պարտիք հնազանդութեն զարթուցին զմիտս քո, գէթ սէր հայրագութ գրգռեսցէ զսիրտ քո. այս սուր որ ցարդ...

ՏԵՍԻԼ Բ.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ, ԽՈՍՐՈՎ, ՇԱԻԱՐՇ, ԶԻՆԵԼՈՎՔ

—

ԽՈՍՐՈՎ, Առ Անակ.

Զի՞ յարուցեալ ես սրով 'ի վերայ որդւոյ քո. դարձո՛ 'ի պատեանս:

ԱՆԱԿ, Մէկոսի.

"Ի քեզ դարձուցանեմ, այլ"... Տէսէալ զի ոչ կարէ, զի շուրջ ունին զնա զօրականք, կասի:

ԽՈՍՐՈՎ

Յարիւն անմեղ ընդէր անօրինիս. մո-

ռացա՞ր զի արիւն է քո և դու ծնար զնա. եթէ այդ ևս ոչ կասեցուցանէ զքեզ, իմ արքայի հրամանք են. ցածի՛ր 'ի գաղանութենէդ, 'ի բա՛ց ձգեա զմահացու երկաթդ:

ԱՆԱԿ, Մէկուսի:

"Անգէտ է տակաւին մտացս, կեղծաւորել պէտք են": Այլ դառն է ինձ կասել 'ի խորհրդոցս. զի...

ԽՈՍՐՈՎ

"Խորհուրդք անօրէնութե՛ են 'ի քեզ. զի՞ յանցեաւ դա հակառակ քո. ո՞չ արիւն է քո, ծնունդ որովայնի...

ԱՆԱԿ

Այլ հակառակ կայ մտաց իմոց, և ոչ թոյլ տայ 'ի կատարումն ածել զգործն կարևոր՝ զոր ուխտ եդեալ է իմ թէ կենօք կամ թէ մահու 'ի գլուխ հանել:

ԽՈՍՐՈՎ

Ո՛չ այդպէս. եթէ սէր է որով քեզն դիմադարձ լինի, ապա սէր նմա պարտիս փոխարինել, և ոչ ատելութիւն: Եթէ քաջութե՛ խորհուրդք են 'ի քեզ, արհամարհեա զընդածին սիրով արութեամբ պարթևականաւ. այլ ոչ է քեզ օրէն զա-

բիութեն զպսակ արեամբ որդւոյդ թա-
թաւել: Յաղթեա՛ սիրոյն, դովեմ զքեզ.
այլ մի՛ զայրոյթ սնոտի խառնեսցի յա-
բիութիւնն: Ի հայրախնամ սիրոյ մի՛ նուա-
ճեսցիս դու. այլ և ոչ մահու և սպանու-
թեամբ կռուեսցիս ընդդէմ նորա: Ի
բաց ընկեա զսուրդ, և դարձեալ կապե-
ցարուք սիրով հայրդ քաջակորով ընդ ի-
մաստուն որդւոյ, զի 'ի միասին երթեալ
հանդերձեսցուք զամենայն զպիտոյս պա-
տերազմին:

ԱՆԱԿ

Այդպէս իցէ արքայ քաջ. բանք քո
ազդականք զամենայն բոց սրտմտութեան
իմոյ շիջուցին, որ յառաջն կալեալ ունէր
զաչս մտաց իմոց: Արդ եկ որդեակ մե-
ծահանճար, համբուրեցից զքեզ. թո՛ղ ինձ
հօր քում եթէ յանցեայ ինչ:

ԽՈՍՐՈՎ.

Յիշեա՛ դարձեալ որդեակ, զի ծնող քո է.
քաջալերեա՛ց, զուարթ կաց, և 'ի մօտոյ
ամենայն հոգք սահեսցին զքև: Գնան:

ՏԵՍԻԼԳ.

ԶԱՐԵՀ, ՇԱՒԱՐՇ

—

ԶԱՐԵՀ

Ո՛վ սոսկալի տեսիլ. զիա՞րդ 'ի թիկունս օգնականութեան եհաս հօր իմոյ բախտ յեղյեղուկ. և յորպիսի՛ վտանգաց զերծաւ նա անվնաս: Այլ դարձեալ խիթամ ես. երկիւղ ունի զիս և վասն երկոցուն:

ՇԱՒԱՐՇ

Թերևս խրատեսցի այսուհետև հայր քո հրաժեշտ տալ 'ի խորհրդոցն չարաց, և քեզ դիւր լիցի 'ի դառն հոգոցդ:

ԶԱՐԵՀ

Ո՛չ, սիրելիդ Շաւարշ, ոչ փոխեսցի նա երբէք 'ի մտացն հաստատութենէ. թեթև տոյժք թուին նմա կորուսանել զանձն և զիս, եթէ յաջողեսցի միայն 'ի մեր կործանումն պարանել և զարքայ:

ՇԱՒԱՐՇ

Մի՛ այդպէս այլակերպս խորհիցիս բարեկամ. ընդ խորհուրդ և ընդ գործ խտիր բազում է. բանք յորժամ յարդիւնս ե-

կեսցեն, փոխեն զլեզու, զմիտս և զխոր-հուրդ: Ի բազմաց բազում անգամ'ի հուր դատեցաւ աշխարհ, և մեծամեծ փոփոխ-մունք եղեն 'ի նմա. այլ երկիր տակաւին կայ մնայ անսասան:

ՁԱՐԵՀ

Բարեգուշակ մեզլինիցին բանք քո. զուարթացան միտք իմ 'ի բանից քոց 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ. Նորոգ կենաց սկիզբն եղիցի ինձ ժամս այս՝ եթէ այդպէս վճա-րեսցին ասացեալքդ: Որչափ աւուրք են կենաց իմոց, նոյնչափ մահունս և ես մե-ռայ մինչև ցայժմ: Ո՞ւր գտանիցի արդեօք հայր իմ, զի 'ի նմանէ հասու լինէի թէ կատարեալ իցէ իմս ուրախութիւն:

ՇԱՒԱՐՇ

Այլնա արդ 'ի վերայ զօրացն կայ՝ կար-գել կազմել զնոսա, զի 'ի պատերազմ խա-ղայցեն... Ոտնաձայն է...

ՁԱՐԵՀ, Հայեցեալ.

Նա ինքն է հայր իմ:

ՏԵՍԻԼ Դ.

ԶԱՐԵՀ, ՇԱՒԱՐՇ, ԱՆԱԿ

—

ԶԱՐԵՀ

Ի մեռելութենէ'ի կենդանութի՞ փոխեցայ, հայր, զի յանզերծանելի յորոդայթէն մազապուր զերծար:

ԱՆԱԿ

Եւ ես իսկ զարմացեալ կամ ցարդ, և անհաւատալի իրքն ինձ թուին. այլդու... Առ վայր մի տեղի տուր աստի քաջդ, առ իս կացցէ որդին իմ: Ելանէ Շաւարշ:

ՏԵՍԻԼ Ե.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ

—

ԱՆԱԿ

Հարկ'ի վերայ կայ քեզ'ի ծանծաղհանել զանձն իմ և հանգուցանել զհայր քո: Արդ ասա ճշմարտիւ. կարիցեմ ես վըստահել'ի քեզ և զայս նուագ:

ԶԱՐԵՀ, Մէկուսի.

«Ա՜հ. դարձեալ տագնապ ունի զիս»։

ԱՆԱԿ

Հաստատո՞ւն իցես 'ի սէրդ և հաւատարիմ առ հայր քո։

ԶԱՐԵՀ

Եւ քանզի սիրեմ զքեզ զհայր և զծնող կենդանութեան իմոյ, վասն այսորիկ անհնարին վիշտք են ինձ տեսանել զքեզ ծըփեալ 'ի խոտորնակ խորհուրդս, և զմահ անձինդ խնդրել և զմեծազօր արքայի։ Պատրաստ եմ ես դնել զկեանս իմ 'ի վերայ քո՝ եթէ էր հնար այնու շրջել զքեզ 'ի մտացդ և զերծուցանել զքեզ 'ի չարաչար 'ի վերահաս մահուանէդ։ Եւ 'ի հաւատարմութեանս առ քեզ կամ անսասան այնչափ՝ որչափ պարտք են որդւոյ։

ԱՆԱԿ

Արդ եթէ այդպէս զփրկութիւն իմ հոգաս, ա՛ռ յինէն զսուրս զայս. ընկալ։ Առնու Զարէհ զսուրն՝ փաթամսեալ զարհուրանօք։ Թաքո՛ արդ 'ի գրկիդ ընդ տառատոկաւդ։

ԶԱՐԵՀ

Զի՞նչ այսոքիկ նշանակիցեն։

ԱՆԱԿ

Լուր : Գնացեալ մտցես 'ի սենեակն հանգստեան արքայի, և անդէն ծածկեալ կացցես :

ՁԱՐԵՀ

Եւ զի՞նչ . . .

ԱՆԱԿ

Հանդարտեաց տակաւին : Այն ինչ մտեալ արքային 'ի մահիճս հանգստեան, և 'ի գիշերային թմբրութեանց ըմբըռնեալ խորդայցէ, հա՛ր 'ի սիրտ նորա :

ՁԱՐԵՀ, Մէկոսի.

"Ա՛հ. և լսել անգամ ոչ հանդարտեմ" :

ԱՆԱԿ

Գիտեմ զի սիրես զիս. հա՛պա արիացի՛ր 'ի գործ, մի՛ երկնչիս. և ապա ե՛լ արտաքս անվեհեր, իբր 'ի խորհուրդ կոչեցեալ կարևորաց ինչ գործոց, և դառնայցես. և եկ առ իս անդէն վաղվաղակի, և ես յետ այնորիկ հոգացայց առնել զարժանն :

ՁԱՐԵՀ

Բա՛բէ. որպիսի՛ դառնութեան հրաման սաստկապահանջ. տակաւին պնդեալ կաս, հայր, 'ի խորհուրդս քո : Ընդէ՞ր հայր այդչափ ոխակալ լինիցիս, մինչև մոռացօնք

եղեն քեզ և կեանք քո ։

ԱՆԱԿ

Արդ ահա 'ի վեր հանեմ քեզ զճշմարտութիւնն, զի ծանիցես եթէ ես ոչ յանխորհուրդս ինչ մտաբերեմ յայդ եղեռըն ։ Եթէ ոչ կատարեսցի ուխտիմ զորընդ Արտաշրի եդի, հանգոյն մահու լինիցին ինձ կեանք իմ. քանզի և յարհաւրաց դիշերայնոց հասանէ ինձ տագնապ ։

ԶԱՐԵՀ

Զի՞նչ լսեմ ես. յուխտ ուրեմն ընդ Արտաշրի մտեալ է քո 'ի մահ Խոսրովու ։ Եւ զի՞ կայ քո ընդ գոռոզին սասանեան ոխերիմ թշնամւոյ պարթևազանցս գրոհի ։ Քննեա՛ և տե՛ս զի՞նչ խորհիցիսդ, հայր. դա՛րձ յանձն քո և 'ի միտ առ, զի...

ԱՆԱԿ

Ի միտ առեալ է իմ զամենայն ։ Չիք ինձ անդորրութի՞ կենաց յերկրի աստ, եթէ ոչ մահուամբ Խոսրովու. զի և պատերազմն որ առաջիս կայ՝ ահ արկանէ ինձ ։

ԶԱՐԵՀ

Դարձեալ ահ և հոյն ընթանայ, դարձեալ շշուկ մահու է ։

ԱՆԱԿ

Զի՞ զարհուրեալ ես . քաջալերեա՛ց . և ընդէ՞ր տխուր տրտմութիւն զքեւ պատիցի : Ո՞չ ապաքէն ես հայր քո պատուիրեմ քեզ զայս . և ոչ ինչ անիրաւիցիս՝ եթէ յորժամ իրքն պահանջիցեն , և դու նենգեսցես ումեք : Գիտեա՛ քաջ , զի խանդաղել քո ընդ Խոսրով՝ վնաս գործեսցէ և քեզ և ինձ և բովանդակ իսկ Պարթևազանց , այլ՚ի մահուն միայնոյ Խոսրովու որ անհաշտ եկաց հակառակորդ Արտաշրի՝ խաղաղասցի երկիր ամենայն՚ի հանդարտութիւն . Նա և ինձ և քեզ հասցէ թագաւորել :

ԶԱՐԵՀ

Ո՛ սնոտի յոյս , և մահահոտ խաղաղութեան հրապոյրք : Հա՛յր . . .

ԱՆԱԿ

Հանդարտ լեր որդեակ . զմտաւ ած , ես ծնայ զքեզ , ես եմ հայր քո , և զամենայն ինչ զիմ՚ի քեզ յանձն առնեմ : Մի՛ համարիցիս եթէ ոճիր ինչ գործես . և եթէ գթոցդ խնամք՚ի քեզ շարժեսցին , գիտեա՛ զի ինձ նախ պարտիս զնոյն : Գնայ :

ԶԱՐԵՀ

Բայց ստկայն , ո՞րպէս . . . Ոչ լսէ ինձ և գնայ :

ՏԵՍԻԼ Զ.

ԶԱՐԵՀ

Եղո՛ւկ զիս. զի՞նչ ինչ լուայ դարձեալ... Ո՞ւր իցեմ ես ... երա՞զք իցեն թէ առ ա-չօք երևոյթք ... Ես 'ի սիրտ տեառն ի-մո՞յ ... Ա՛հ. լաւ էր թէ շանթիք երագ-ընթացք խաղային զինև, կամ երկիր բե-րանացեալ ընդ ոտիւք իմովք՝ յինքն ընդ-ունէր զիս, զի մի՛ միւսանգամ լիցի ինձ կրել զնոյն տագնապ: Օրէնք հպատա-կութեան զդաշոյն ինձ տան, այլ տեսիլ սճրագործ եղեռանն հարկանէ զմիտս իմ: Գիտեմ զի մատնեցայ, և իբրու յոտ-նակապս պնդեցայ ... այլ ... զի՞ գոր-ծիցեմ:.. Եթէ 'ի վեր հանից, արդար ցա-սումն արքայի մահուամբ հօր իմոյ միայն շիջցի. և եթէ լռեմ, ատելութիւն հօր իմոյ դարանակալ է կենաց արքայի ... Ա՛հ հրաման դառն ... ո՛վ հայր իմ ... ո՛վ տէր իմ արքայ ... Ի հասանել արդ ար-քայի՝ յի՞նչ կերպարանս յանդիմանեցայց նմա դարձեալ. զի՞նչ բարբառ արձակի-ցեմ ... Ո՛վ դիք. դառն եղև ինձ այս քան զառաջինն. զի անդ ոչ էր սուր, այլ ատ այժմ արիւնաթաթաւ վաղակաւոր

գացէ առ իս՝ եթէ 'ի յոյզ մատչիցի ։ Յոր-
ժամ ընդ միտս իմ հարկանի, դողան ամե-
նայն ոսկերք իմ. մեկնեցայց այլուր 'ի տե-
ղի առանձինն, զի ծածկեսցին և ցաւք
սրտի իմոյ որ խռովեն զիս . . . Կամի գնալ։

ՏԵՍԻԼ Է.

ԽՈՍՐՈՎ, ԶԱՐԵՀ

—

ԽՈՍՐՈՎ

Որդեակ Զարեհ, քաջալերեցա՞ր արդ, զի զերծուցի զքեզ ։

ԶԱՐԵՀ

Տէր արքայ ։ Մեկուսի. "Այժմ իսկ 'ի մահ յուղարկեալ գնամ" ։

ԽՈՍՐՈՎ

Եհաս քեզ դարձեալ խնդութիւն. զի 'ի պալատանս իբրև իմ հարազատ որդի կացցես դու ընդ իս, և ես փոխանակ հօր քո՝ հայր 'ի քէն կարդացեալ, քև և մտացդ խոհականութեամբ պանծացայց՝ որ սի-
րով քո ընդ քեզ կապեցայ, զի հաճոյ ինձ եղեր իմաստութեամբ քով ։

ՁԱՐԵՀ, Մէկուսի.

“Քանի՛ քաղցր են բանք սորա. չիք լեզու որ թարգմանիցէ”:

ԽՈՍՐՈՎ

Այլ ընդէ՞ր տխուր լռութիւն զքեւ շուրջ ունի. ո՞ւր յածին խորհուրդք քո. զի՞նչ ինչ պատահեաց. յո՞ միտք քո թռուցեալ երթան. խօսեաց համարձակ:

ՁԱՐԵՀ, Մէկուսի.

“Օգնեա՛ միայնումս, ձեռն տուր անմահ տէր”:

ԽՈՍՐՈՎ

Գիտեմ զի յառաջն անձկանօք խընդրէիր առ իս կալ և յորդիս արքայի գրիլ. արդ մինչ ե հաս լրումն փափաքանաց քոց, նաև 'ի խորհրդական ինձ կալայ զքեզ, և ո՞րպէս դու 'ի սուգ և 'ի տխրութիւն համակեցար: Զի հայր քո 'ի պատերազմ գնայ՝ դարձեալ ընդ ա՞յն արգահատիցես...

ՁԱՐԵՀ

Մի՛ ինչ յայդպիսեաց ինձ յուշածեր: Գիտե՛ա տէր իմ արքայ... Մէկուսի. “Զի՞նչ գործեմ ես”... Արժան էր ինձ արքայ... Ոչ կարեմ կալ առաջի քո, զարհուրի սիրտ իմ: Եթէ 'ի քեզ հայիցիմ

յարքայ մեծազօր, մանաւանդ զի խան-
դաղատանս լսեմ'ի քէն, յայնժամ ան-
կանին բազուկք իմ, և թուլանամ'ի հաս-
տատութենէ մտացս : Գնայ :

ՏԵՍԻԼ Ը.

ԽՈՍՐՈՎ

Ա՞յս կերպարանք իցեն մանկանն զոր
փրկեցի ես 'ի ժանեաց մահու : Ա՞յս
իցեն քաղցր սիրոյ նորա ցոյցք : Ա՞յսպէս
պատասխանի առնիցէ ազատարարին իւ-
րում : . . Է՞ր վասն արտասուք յաչս նո-
րա : Յո՞ր սակս 'ի խորոց սրտին հնչէին
հեծութեան և հառաչանաց արձա-
դանգք : Ընդ ապրե՞լն արդեօք զղջանայցէ,
թէ հայրասէր բարոյիւքն տաղտկացաւ
յամբարիշտ ծնողէն որ 'ի մահ զնա յու-
ղարկէր . . . Կամ թէ նորոգեցան 'ի նմա
խորհուրդքն՝ յորոց և յառաջն վշտագ-
նեալ էր : . . Այս երկու ամք են, և յոր-
մէ հետէ կալայ զնա առ իս ցայսօր չէր
իմ տեսեալ զնա յայսպիսի յայլափոխ
խորհուրդս : Այլ և ես փոխեցայց . ցու-
ցից նմա զամենայն սպառնալեաց կեր-
պարանս, գուցէ յերկիւղէ կասկածա-
նաց մահու զիրաւն 'ի վեր հանցէ : . .

Յոյժ սքանչացեալ կամ ընդ իմաստուն միտս նորա տարօրինակ ամենևին : Եթէ յայդպիսի զգաստ մանուկ յարձակեցայց սաստկութբ, և 'ի յոյզս արկից զիմաստութիւն խորհրդոց նորա, ես ընդ նորա զարհուրեալ 'ի տագնապի լինիցիմ. զմտաւ ածեալ զի զարդարակորով զմիտսն այնպիսւոյ մատաղ հասակի սասանեցի՝ զանպարտն. որ ոչ մարդոյ մահկանացուի թուի գոլ ծնունդ :.. Այլ նա արդ փոխեալ թուի, և ինձ պարտ է արիանալ ընդդէմ նորա. ոչ յիշելառ ժամ մի զըզգաստութիւն նորա, զսպառնալիս 'ի վերայ կապել, մահ ... Այլ գուցէ երկիւղիւ ըմբռնեալ և անձին արասցէ :... Ո՛վ դիք. յորպիսի՛ Ճապաղիս արեան թաթաւեալ տեսանեմ զնա, որ զարհուրեալ յիմոց սպառնալեաց չոգաւ զիւրովին : Եղո՛ւկ քեզ, Զարեհ .. և գունդագունդ արիւն ուղխօրէն խաղայ 'ի սրտէ քումմէ ... ո՛վ աղետալի տեսիլ :.. Եւ 'ի գաղտնեաց սրտին և ո՞չ ստուեր բանի արտաքս վազիցէ :.. Զդրոշմ սրտի կնքելոյ և ոչ մահ կարող է լուծանել :

ՏԵՍԻԼ Թ.

ԽՈՍՐՈՎ, ԲՈՒՐՁ

—

ԲՈՒՐՁ

Ողջամբ տեսի զտէր մեր արքայ ։

ԽՈՍՐՈՎ

Ի դէպ ժամու հասեր, թափել զիս յանձկութենէ իմմէ ։

ԲՈՒՐՁ

Յորո՞ց դժնդակաց նեղիցի արքայ ։

ԽՈՍՐՈՎ

Ծանօ՞թ ինչ իցես խորհրդոցն Զարեհի. գիտիցե՞ս ինչ զպատահարացն ։

ԲՈՒՐՁ

Տէր արքայ, այլազգի են խորհուրդք նորա, և օտար յազնուական իմաստից ։

ԽՈՍՐՈՎ

Ուրեմն յայտնի՞ են քեզ պատրուակքն ։

ԲՈՒՐՁ

Քաջիսկ'ի վերայ հասեալ եմ խորհըր-

դոցն Անակայ և Զարեհի ։

ԽՈՍՐՈՎ

Աղէ հան ինձ 'ի վեր զի հանդարտի-
ցիմ ։

ԲՈՒՐՁ

Ծանր է ինձ և զմտաւ ածել զայն չա-
րիս ։

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ իցէ պատահարդ մեծ ։

ԲՈՒՐՁ

Տէր արքայ, դարանակալ է կենաց քոց...

ԽՈՍՐՈՎ

Ո՞ լինիցի դարանակալ կենաց իմոց ։

ԲՈՒՐՁ

Ա՛հ. չէին ինձ կամք գուժկան լինել առ
արքայ ։

ԽՈՍՐՈՎ

Ասա՛ ինձ վաղվաղակի. ոչ կարեմ կալ ես
'ի վերայ բանից քոց ։

ԲՈՒՐՁ

Զարեհ սիրելին քո ։

ԽՈՍՐՈՎ

Զարեհ զկեանս իմ խնդրէ՞ ։ Ապշեալ ։

ԲՈՒՐՁ

Այո՛. նա կամի յարևէ արկանել զար-
քայ:

ԽՈՍՐՈՎ

Բարուրք են այդոքիկ յօդեալք 'ի քէն.
ոչ երկմտիմ. զՁարեհ ես քաջ ճանաչեմ.
երկի՛ր Բուրզ, զգոյշ լեր անձին քում, մի՛
խառնել ստութիւն 'ի բանսդ:

ԲՈՒՐՁ, Մէկուսի.

"Ի՞բր անհաւատանայ ինձ. ո՛ բաղդ
դժխեմ. անկանիմ արդ 'ի զարհուրանաց
սրտիս: Հապա մի՛ վհատել և անձին մատն
լինել": Առ Խոսրով. Ոչ ինչ ստութիւն
է յիս արքայ. և ոչ եթէ այժմ ինչ նիւթէ
նա զնենգութի՞, այլ յամէ հետէ զայդու
դառն գործով պատաղեալ է նա, որպէս
լուայ. և Անակ զկենաց արքայի վրէժս
խնդրէր 'ի նմանէ՝ յորժամ խարբիւն կշռե-
լով տեսեր յարձակեալ 'ի վերայ նորա:

ԽՈՍՐՈՎ

Եւ եթէ այնպէս ինչ էր ճշմարտու-
թեամբ որպէս ասեսդ, առ ի՞նչ ոչ յայտ-
նեաց ինձ Անակ՝ մինչ ես ձեռն տայի 'ի
զուր դաւաճանելոյն արդ 'ի քէն մանկան:

ԲՈՒՐՋ

Առ այդ ասել ինչ ոչ ունիմ . . . բայց զի Թերևս այն . . .

ԽՈՍՐՈՎ

Երթ դու շնորհս կալ բանիդ զոր ասացեր՝ եթէ յայլմէ լուեալ իցես . և զի ըզքեզ տեսի 'ի կոտորածի ազգին Կարենեան Պահլաւին արիացեալս՝ զկողմն ունելով Պարթևաց , և քաջապէս անցեալ ընդ վտանդս զերծուցանելով զՊերոզամատ զմիմիայն պահլաւկացն ժառանդորդ :

ԲՈՒՐՋ , Մէկոսի .

„ Ձեռն ինձ տուք անմահ դիք կորզել զանձն իմ 'ի վերահաս վտանգէս „ : Ա-Խոսրով . Եթէ վրիպակ հնչէր լուրն , տէր արքայ , ես ոչ գիտեմ . այլ ես 'ի դաւանաց զերծ զկեանս վեհազինդ հոգայի կացուցանել :

ԽՈՍՐՈՎ

Եթէ փութայր Անակ ապրեցուցանել զկեանս իմ , պարտ էր նմա ծանուցանել ինձ զնենգութիւնն , և ոչ կասել 'ի գործոյն : Իսկ նա հակառակաւն վարեցաւ ընդ իս . իբրու եթէ դալստեամբս իմով պարգևք ելին նմա յինէն , զի ոչ շաղախեաց զձեռն իւր յարիւն հարա-

զատ, և գոհանայր զինէն ։

ԲՈՒՐՁ

Այլ մի ինչ զարմասցի ընդ այդ տէր իմ. զի գիտէ Անակ եթէ անզօր է մանուկն ստանանել ինչ արքայի, զի միայն ընդ միայն 'ի դոյն խորհի, և չունի զոք օգնական իւր. այլ զի ոչ հաւանեցաւ կասել յետս 'ի բազում յորդորանաց հօրն, վառեալ ցասմամբ ընթացաւ առ զսուրն, և երագէր առ որդին, կամէր անդէն սպանանել վասն անլսողութեանն. այլ իբրև ետես զքեզ և շիջան կիրք ցասմանն, զօրացաւ 'ի նմա դարձեալ սէրն ընդաբոյս, և ոչ մերկացաւ զխորհուրդն առաջի քո, յուսացեալ եթէ 'ի շնորհել քո նմա զկեանսն՝ և նա Թուլասցի յանդէպ մտացըն խորհրդոց ։

ԽՈՍՐՈՎ

Անդէպ ինձ Թուի խորհուրդդ այդ. և անբաւական 'ի հաւաստիս փուրսիշդ ։ Այլ 'ի վրիժագործ սրտմտութեանն Անակայ է ինչ սքօղեալ գաղտնութիւն՝ որում ոչ կարացի հասանել. ընդ որ և մանուկն որպէս ինձ Թուի՝ յոյժ 'ի խոր խոցեալ տագնապի ։ Եւ այն դարձեալ անհաս մտաց, զի մինչդեռ 'ի պատերազմ

ընդդէմ Արտաշրի պատրաստի, զսիրեցեալն յիւրմէ անչափապէս զորդեակ Ճարակ տալ սրոյն կամէր:

Ես հաւաստեաց ամենայնին ելից 'ի խնդիր:.. Զարեհ ինձ դարանակալ լինիցի, զկեանս իմ խնդրիցէ, և միայնակ 'ի նոյն մտաբերիցէ... Քսուի բանք են: Սակայն և նշանակքն... Յառաջքան զկամելն պատահել նմա հօր իւրոյ՝ տեսանէի զնա տագնապեալ 'ի միտսն. հառաչէր առաջի իմ, յոգւոց հանէր, և ոչ հանէր ինձ 'ի վեր զբանն. նոյնպէս և արդ յետ զերծուցանելոյ իմ զնա 'ի մահաբեր հարուածոյ հօրն յուզեալ տատանի յալեկոծ խորհրդոց...

ԲՈՒՐԶ

Սակայն գիտէ տէր իմ արքայ, զի բան մի դուզնաքեայ և խոժոռ հայեցուածք մեծամեծ ատելութիւնս սովոր են ծնանել:

ԽՈՍՐՈՎ

Արդար են բանքդ, այլ... Զի՞ յանօգուտս վարանիմ ես. և ա՜մ չարահընար մենքենայք գաղտնորոգայթք լարին. եթէ Անակ 'ի միոյ աւուր ժամանակի զհայրագութ սէրն 'ի մահահրաւէր փոխեաց ատելութիւն, ո՞րչափ ևս առաւել յիմմէ սիրոյս զովանալ հնարաւոր ինչ է

նմա. գուցէ զի որդին ոչ արհամարհէ զսէր
իմ, ընդ այն զայրագնեալ՝ երկիւղիւ մա-
հու կամէր զնա սասանեցուցանել. գու-
ցէ զեղջ է սրտի նորա, զի օտարացեալ 'ի
հայրենի բնակութենէն աստէն կայ ան-
փառունակ :.. Այլ զի՞նչ այլ ևս փառս
նմա կարէի պատրաստել. 'ի սեղանոյ իմ-
մէ ուտէ ինքն և որդին հանապազ, և
սպարապետ զօրաց իմոց ընդդէմ Արտա-
շրի կարգեցի զնա :.. Մի՛ գուցէ մատն
զօրաց իմոց առ Արտաշիր լինիցի. և
զիա՞րդ. կին և որդիք և ամենայն գերդա-
ստան նորա 'ի ձեռին իմում կան ... սա-
կայն ... Ո՛չ այդպէս : Ո՛վ սնափառ խոր-
հուրդ. և 'ի խաղաղութեան խռովէ զմար-
դիկ :.. Արդ հասի՛ց. ընդ մէջ հօրն և
որդւոյն զի՞նչ այս տագնապք և շփոթք.
անձամբ հաւաստել պարտ է, և զառաջս
առնուլ զչարեաց : Գնայ :

ՏԵՍԻԼԺ.

ԲՈՒՐՁ

Տագնապեցաւ արքայ 'ի խորհուրդս իւր
'ի բանից իմոց. և ես 'ի տագնապ ըմբռնե-
ցայ յուսահատ, այլ ձեռն ինձ կարկա-
ռեաց կոյր բաղդ : Չիք արդ երկմտել,

զի կամ՛ի քաց արձակեացէ զհայրն ընդ
որդւոյն, և կամ՛ի դիպահոլ արգելու-
ցու, և դարձեալ Պերոզամատ հաւատա-
րիմն նմա՝ սիրելի նմա լինիցի ... Ար-
դարև ոչգիտեմ եթէ ընդէր յարձակեալ
էր Անակայ՛ի վերայ Զարեհի. այլ զոր
՛ի կարճ ասացի, Թերևս հաւատի իակ
այնպէս էր: Քանզի Անակ յորժամ ոչ
հաւանեալ ընդ խորհուրդս երկուցոմանցդ
նախարարաց բարեկամաց իւրոց, որ կե-
նախուզ խոտրովայ լինել ճգնէին, կա-
սեցոյց զնոսա՛ի խորհրդոյն, գուցէ որ-
դին յամառեալ էր տակաւին՛ի նոյն
խորհուրդ. և զի ոչ կամէր զդոյն Անակ,
զմահ որդւոյն արդեօք առաւել ընտրեաց
քան զարքայն. և վասն այսորիկ թագոյց
զնենգութիւն որդւոյն, զի մի և նա մատն և
տուր լինիցի իւրոց բարեկամացն: Այլ
եթէ ճշմարտիւ էր այս և եթէ ոչ՝ ոչ
գիտեմ. շատ է զի Պերոզամատ դարձեալ
զիւր տեղին կալցի, և ընդ որդիս ար-
քայի վայելեսցէ: Ո՛ է որ մատանէ առ իս:
Նա ինքն Զարեհ այսր հատանէ: Յայտ-
նեցից և նմա եթէ՛ի միտս կատածոտս է
զնմանէ խոտրով. Թերևս ինքնին՛ի բաց
հրաժարեալ որոշեսցի յարքայէ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԲՈՒՐՁ, ՁԱՐԵՀ

—

ՁԱՐԵՀ

Ո՞ւր իցէ Խոսրով արքայ:

ԲՈՒՐՁ

Զի՞նչ բանք են քո այլ ևս ընդ Խոս-
րովայ:

ՁԱՐԵՀ

Ունէի ինչ խօսել ընդ նմա. զի...

ԲՈՒՐՁ, Մեկուսի.

"Ո՛հ ապշութե՛ մտաց դորա": Ա-
Ձարեհ. Այլ գիտիցե՞ս արդեօք զի Խոս-
րով յերկմիտս է զքէն, եթէ դու դարա-
նակալ իցես կենաց նորա:

ՁԱՐԵՀ

Որպիսի՛ աղետալի բանս լսեմ ես:..
Եւ ուստի՞ գիտաց զայդ, և ո՞ պատմեաց
նմա զի ես թշնամացեալ իցեմ ընդ նմա:

ԲՈՒՐՁ

Թերևս յանձնէ ինչ զդոյն գուշակեաց.
զի ասէր եթէ ոչ կամի խօսել ընդ իս Ձա-
րեհ:

ՁԱՐԵՀ

Բանսարկու և չարասէր մարդոց զեղ-ծուցեալ է զարքայ ։

ԲՈՒՐՁ

Ոչ ինչ ոչ գիտեմ ես յորոց ասացերն. զայս գիտեմ, զի իբրև 'ի դարանակալէ կենաց նորա խորշի մերժի 'ի քէն արքայ, և բարկութ՚ զարթուցեալ 'ի վերայ քո՝ Ճշմարտին 'ի խնդիր է, և զքէն հարցանէ ամենայն ուրեք ։ Արդ երթամ ես հայթ-հայթել զպէտս զօրացն ։ Գնայ ։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՁԱՐԵՀ

Աւա՛ղ ինձ, և եղո՛ւկ եմ ես. ո՞չ շատ է ինձ զի բռնադատեալ տագնապիմ յԱ-նակայ շաղախել զձեռս իմ յարիւն Խոս-րովայ. արդ և կասկած նորա յաւելցէ վիշտս անհնարինս 'ի վիշտս իմ ։ Զի՞ գոր-ծիցեմ... Գնացից առ հայր իմ.. Դառ-նայ երթալ... Այլ նա ստիպէ զիս մխել յարիւն անպարտ ։.. Յանդիմանեցայց առաջի թագաւորին. այլ կասկածէ նա զի-նէն... Արդ նեղեալ տագնապիմ յանձ-կութենէ սրտիս. տառապիմ 'ի խորհըր-

դոց իմոց: Ա՛հ օր գառնութեան, մի գը-
րեսցիս 'ի թիւս աւուրց. իցէ՛ թէ յան-
դորր ելանիցեմ 'ի տառապանաց աստի...
Ո՛վ հայր իմ Անակ, տակաւին ևս արեամ-
բըն Խոսրովու ծարաւի՞ իցես: Թերևս
այժմ իսկ զաչացու ատելութեամբդ յար-
ձակեալ 'ի վերայ նորա մատնեցար և դու 'ի
մահ տիրադաւից... Ընդէ՞ր ծնար զիս.
միթէ 'ի լա՞լ զմահ քո. միթէ յոգի՞ս ապաս-
տան լինել վասն սպանութեան սիրելեաց:
Ո՛հ. ես սակաւօրեայ մանուկ, և ծանր
վշտօք յալևոյթ, դարձեալ: Ո՞ւր իցես
արդեօք, արքայդ Խոսրով. ո՞ր լեզու
նենգաւոր պատրեաց ղքեզ կասկածել
զինէն: Մխեցա՞ւ արդեօք արեամբ քով
արիւնախանձ դաշոյն Անակայ հօրն իմոյ:
Եթէ մահու մեռար, հանգոյն մահու
աղէտք գտցեն և զիս. իսկ եթէ կեն-
դանի կայցես, զիա՞րդ համարձակեցայց
տեսանել զերեսս քո վայրապար գըժ-
դմեալ ընդ իս: Ա՛հ. նեղեալ եմ 'ի
ցաւոց, և ոչ գոյ որ դարման տանիցի
կեղեքելոյս. գոչիւն հեծութեանս առ
երկնիւք քերէ, և որ սփոփէն՝ չերևի:
Ակն ունիմ ձեռնտուի, սակայն ամե-
նեքին ոտնահար լինին գլորելոյս: Մա-
հու ցանկացայ, և նա հեռացեալ փա-
խեաւ յինէն. ողբք և հառաչանք միայն

ուխտիցն դաշանց ոչ դրժեցին. 'ի շըղ-
թայս ծանունս, և 'ի խաւարամած կա-
պարանի ընդ իս նահատակեսցին: Հա՛պա
գնամք սիրելիք ընդ անտառս ձայնակից
լինել կոծով տրտմազգեաց նոճիցն և հըս-
կայաձև մայրից: Սկսանի երթալ. ընդ ա-
ռաջ էլանէ խոսրով:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԽՈՍՐՈՎ, ԶԱՐԵՀ

—

ԽՈՍՐՈՎ

Յո՞ դիմեալ խուսափես . . .

ԶԱՐԵՀ, Մէկուսի.

“ Խոսրով մեծ արքա՞յ իցէ զոր յանդի-
ման տեսանեմ ”: Երթամ տէր ողբալ
զվիշտս իմ:

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ վիշտք իցեն քո, ա՛յ անագորոյն:

ԶԱՐԵՀ, Մէկուսի.

“ Ո՛. զի՞նչ ասացից ես. լեզու իմ ըն-
դարմանայ . . . ”

ԽՈՍՐՈՎ

Ընդէ՞ր այդպէս լռեալ կաս առաջի իմ:

ՋԱՐԵՀ

Քանզի ոչ կարեմ առաջի առնել զվիշտս իմ:

ԽՈՍՐՈՎ

Է՞ր վասն . . . Ո՛չ խօսիս . . Ես ասացից քեզ ա՛յ հէգ և թշուառ. լո՛ւր ուստի իցեն վիշտք քո: Այն՝ զի տակաւին կենդանի եմ ես, և զի ոչ մարթացար շիջուցանել զլոյս աչաց իմոց:

ՋԱՐԵՀ

Կոհակք լերանց և անդունդք խորոց բաժանեսցեն զայնպիսին՝ որ չարախօսն եղև զինէն առաջի քո:

ԽՈՍՐՈՎ

Զա՞յդ փոխանակես, մանուկ դու, սիրոյն իմոյ որ առ քեզ: Ի կենդանութեան իմում ոչ ինչ պակասեսցէ քեզ. և եթէ բարձցես զկեանս իմ, ամենայն ինչ քեզ պակասէ, թերևս և՝ի կենաց իսկ անկցիս: Չարեաց արուեստագէտք ոչ տեսցեն ըզբարի, այլ՝ի չարիս ծնգեալ ծիւրեսցին:

ՋԱՐԵՀ

Ես զմահ տեառն իմոյ կամիցի՞մ. ա՛հ. դառնացաւ ինձ և լուրն. սակաւիկ միւս ևս, և՝ի շնչոյ պակասեալ գտանէի: Ե՞ս

դաշոյն 'ի սիրտ ... ո՞հ. յիշատակ սրոյն զարհուրեցուցանէ զիս, և ո՞րպէս 'ի խժա-կան գործն մտաբերիցեմ ... Ոչ ևս ու-նիմ ժոյժ. ամենայնի յաղթող է սէր անձին. գիտիցե՞ս արքայ ո՛ է որ ... Մէկուսի. "Զի՞նչ գործեմ, մատնտու լինել հօր ի-մոյ":

ԽՈՍՐՈՎ

Է՞ր վասն դելուն բանք 'ի շրթունս քո: Սակայն ոչ կարացեր թաքուցանել զոր կեղծաւորեցարն: Գիտեմ զի և ստութի՞ ընդ ճշմարտութեան վարագուրաւ ծած-կի: Եթէ է ինչ այլ ճշմարտութիւն ծած-կեալ յինէն 'ի մտի քում որ տագնապէ զքեզ, է՞ր ծածկիցես յինէն. քաղցրութի՞ իմ անչափ զքեզ 'ի ստահակութի՞ կրթէ. ո՞չ գիտիցես եթէ ո՞ իցէ Խոսրով. չիցե՞մ ատակ ընդ երամս երկչոտ նապաստակաց արշաւել անցանել: .. Ո՛չ 'ի կալանս ար-կից զքեզ, և ոչ մերժեցից 'ի սրահից պա-լատանս, զի զանմարդի բարս քո իմով մարդասիրութեամբս ուղղեսցես: Գնայ:

ՏԵՍԻԼ ԺԴ.

ԶԱՐԵՀ

Որպիսի՞ դառն խաւար մածեալ պա-շարեաց զիս ... Անմահիցն իսկ կաճառք

զերեսս դարձուցին յինէն: Յո՞ դիմե-
ցից, զորմէ՞ բուռն հարից. ոչ գոյ ինձ
ուստեք ձեռնտուութիւն. զԱնակայ նէ՞ն-
գըն ցուցից, թէ յարքայ ոչ անխայեցից.
սակայն և երկոցուն աղետիցն ոչ ժուժայ
տևէ անձն իմ... Զի՞նչ ապա. ընդ
անձին ոգորեցայց. զանձին արիւն հե-
ղից... Իցէ՞ թէ յանդորր ելանիցեմ 'ի
խիստ անձկութենէս:.. Գնացից արդեօք
առ հայր իմ, և յայտնեցից նմա զկերպա-
րանս բանից արքայի, և նա՝ կամ զոր ետն
զկեանսն բարձցէ յինէն, և կամ զոյգ ընդ
արքայի 'ի ժանեաց մահուն Թափեսցի:

Տեսարանն է դահլիճ պալատանն կամարակապ ոսկեփայլ յարկաւ քանդակագործ. ընդ մէջ կամարացն կենդանակերպք երկնից՝ ի կապուտակ յատակի դաստակերգեալք պայծառ ոսկեզոյն աղեղատեսիլ. սիւնք՝ ի նմա բազմաթիւք կձեայք ոսկի խարըխօք և խոյակօք արուեստակեալք: Ողջոյն ընդարձակ տարածութիւն դահլճին իբր զշքեղ իմն տաճար. յորմունդն կազմածք և գործիք պատերազմականք՝ ի ձաձանչաւոր ձամուկս:

ՏԵՍԻԼ Ա.

ԱՆԱԿ, ՇԱՒՈՐԴ

ԱՆԱԿ

Վասն այդորիկ ոչ կամէի և ոչ հաւանիմ էի ընդ խորհուդ նախարարացն երկոցուն՝ ապանանել զխոսրով. զի ոչ կամէի եթէ նոքին յինքեանս գրաւեսցեն զաշխարհ Հայաստանեայց. այլ զի ձեռն Սասանեանն Արտաշրի հրամանատար լցի երկրիս:

ՇԱՒՈՐԴ

Այլ գիտեցեա զի մահ մնայ քեզ այժմ. խայտառակութեան մենքեննայքդ, որպէս ինձ թուի:

ԱՆԱԿ

Զարեհ արդեօք յայդ ժպրհեցաւ ։ Ուստի՞ եհաս 'ի քեզ երկիւղ կասկածանաց . տեսե՞ր զարքայ ։

ՀԱՒԱՐՀ

Այո՛ ։

ԱՆԱԿ

Եւ ասա՞ց ինչ քեզ ։

ՀԱՒԱՐՀ

Բազում անգամ ձեռն արկ պատմել զորպէսն , բայց չեղև նմա հնար յաւարտ զխօսսն հասուցանել ։ Թախծեալ զայրագնեալ խռովի , և բոցախառն գոլոշի ընդ քիթսն յորդեալ ելանէ . և երբէք կերպարանք գթութեան ոչ նշմարին յաչս նորա . և այնպէս ոչ զօրեաց յայտնել ըզծածկութիւն խորհրդոց իւրոց ։ Եւ ցարդ իսկ ոչ վերանայ 'ի մտաց իմոց տեսիլն քըստմնելի ։

ԱՆԱԿ

Եւ ես իսկ զայդմանէ կասկածէի , թէ մտերմութիւնն Խոսրովայ պատրիցէ ըզ-Զարեհ , և ամենայն հնարք մեր վատթարեսցին . վասն որոյ և խորհէի զՊերոզամատ յորդորել 'ի սոյն ։

ՀԱՒԱՐՀ

Այլ ինձ անակնկալ էր՝ եթէ որդի ոք մոռասցի զսէր և զգութ հօր ։

ԱՆԱԿ

Քանզի կարի դիւրաւ էր Զարեհի գործել զոր կամիցին, զի կապեալ է 'ի սէր թագաւորին։ Այլ եթէ ճշմարտիւ յայտնեալ իցէ արքայի զխորհուրդս իմ, հատուցից 'ի գլուխ նորա ։

ՀԱՒԱՐՀ

Բայց այժմ կարևոր է քեզ քան զամենայն ինչ զկենաց քոց փոյթ ունել։

ԱՆԱԿ

Եթէ այդպէս իցէ, փութա ճեպեա առ զօրականն, և հրամայեա՛ զի . . . Այլ երկիւղ է ինձ . զի յօգնութիւն նմա . . . լաւ ևս լիցի . . . մի . ծանր վտանգ հասցէ մեզ 'ի հարուածոյն . . . Զի՞ գործեսցուք եղբայր սիրելի . զի ես այլ յայլմէ եղէ 'ի դժնդակ բօթոյս, և ոչ գիտեմ խորհել ինչ ։

ՀԱՒԱՐՀ

Յաւելցուք 'ի թիւս պահապանաց պալատանս, և դիցուք զոմանս առ արքայի

դէտ կալ ելից և մտից նորա, որք զխոր-
հրդոց նորա և զբանից ածցեն մեզ զրոյց,
որպէս զի և մեք սկեսցուք 'ի վերայ ան-
ձանց մերոց, և մի՛ շտապաւ ինչ լուծցուք
վրէժս. քանզի պատնէշ խարխուլ մեծ
ևս գործէ վտանգ:

ԱՆԱԿ

Ո՛վ առաքինիդ Շաւարշ, լե՛ր և դու
ինձ պատսպարան. 'ի միասին յաղթա-
նակեսցուք:

ՇԱՒԱՐՇ

Ա յդպէս իցէ. խրախուսեսջիր յանձն
քո. նախ ես մեռայց, ապա թէ դու:

ԱՆԱԿ

Ա յլ իմ երկիւղ կրկին յաւելու, թէ-
պէտ և չէ ինչ յայտնի մատնութեանն
բան. սուսեր ընդ օդս շողացուցեալ հա-
մարեցայց և յիմ սիրտ իբրև 'ի թշնամւոյն
մխեալ, եթէ յայտնեսցի դաւն՝ յոր աշ-
խատ եղէ յամաց բազմաց մինչև ելեալ
եմ 'ի հայրենի աշխարհէն իմմէ. քանզի
ճշմարտութիւն ոչ յերկար բնաւորեալ է
ընդ պատրուակաւ մնալ:

ՇԱՒԱՐՇ

Ա յլ մի՛ կարի վշտանայցես եղբայր.

գիտեմ քաջ՝ զի եթէ յանձն լիցի գործն Պերոզամատայ ուշեղ պատանւոյ, յայն-ժամ թէ և հասու եղեալ իցէ ևս արքայի խորհրդոց քոց, ոչ առնուցու ժամ գոր-ծել ինչ. քանզի և Պերոզամատ ոխացեալ է ընդ նմա, և պարապ գտեալ զվրէժ քի-նուն հանցէ ընդ կառափն Խոսրովու:

ԱՆԱԿ

Այլ զի անկասկած լիցուք, ընթա հա՛ս դու առ Խոսրով, քննեա զխորհուրդս մտաց նորա. և եթէ Զարեհի յայտնեալ իցէ զդաւն, ասա ցԽոսրով. պահ ունի Անակ կորուսանել զԶարեհ, ամբաստան լեր զինէն, մի՛ ինչ ակն ածիցես. զի այնպէս պարապով մարթասցի 'ի գլուխ հանել Պերոզամատ զգործն մեծ և կա-րևոր:

ՀԱՒԱՐՀ

Արարից զամենայն ըստ հրամանի քում:

Գնայ:

ՏԵՍԻԼ Բ.

ԱՆԱԿ

Որչափ յապաղեցի դաւաճանել զԽոս-րով՝ դէպ ժամանակի մնալով, նոյնչափ և

առաւել ևս յանձկութիւն ըմբռնեցայ. զի արդ յաչս եդեալ եմ և զկեանս որդւոյ իմոյ: Ա՛հ. ցաւէ ինձ որդեակ իմ, որ 'ի վեր քան զհասակդ իմաստութեան վարդապետես ծերոց... Անսաստէ և ըմպահկէ և անգոսնէ զպատուիրանօք իմովք. այլ անյողդողդ առաքինութիւն է որ վարէ զանմեղկելի բարս նորա: Տագնապ է ինձ ամենայն ուստեք:.. Այլ նենգեաց զիս. առ ոտն եհար զհրամանս հօր. մեռցի անօրէնն, հեղցի արիւն նորա... Ա՛հ, գութք յուզին յաղիս իմ: Ո՛վ մանուկ դիւրապատիր. այդչափ դիւրագնի՞ մատնես զհայր քո. պատրեցին զքեզ կեղծաւոր բարքն Խոսրովայ, և խաղոյ իրք են յաչս քո մահ հօրն քո: Այլ ոչ... Զի՞ գաս այսր որդի հայրասպան...

ՏԵՍԻԼ Գ.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ

—

ԶԱՐԵՀ, Խռովէալ.

Կարիցե՞մ արդեօք միւսանգամ ընդ հօրն իմոյ և տեառն...

ԱՆԱԿ

Յառաջ մատիր ։ Ապշութիւն ունի զիս թէ զիա՛րդ ընդ փասքուս թագաւորին ոգեխառնեցար ։

ՁԱՐԵՀ

Մի՛ այդպէս բարբառիր հայր իմ. ահա ոչ հրաժարեցից մատնել զանձն 'ի մահ՝ քաւութե՛ զոհ 'ի վերայ կենաց քոց կամ ժողովրդեանն ազատութեան ։ Ո՛չ ոք նը-կատեսցէ յիս երկիւղ և վատութիւն՝ յոր-ժամ քաղիցին արիական իմ ոգիք ։ Իսկ եթէ վնասակարութեան 'ի խնդիր լինի-ցիս, ծանի՛ր, զի ծակախիթ եղեալ ան-յայտիմ ։

ԱՆԱԿ

Աղէ ասա. քան զհայր քո առաւե՛լ սի-րիցես զարքայ, զի մատն եղեր անձին ի-մոյ ։

ՁԱՐԵՀ

Ջնո՞յն լսիցեմ դարձեալ հայր. մատնիչ ոչ ումեք եղէ, և ոչ բնաւ լինիցիմ, և դուք երկոքեան 'ի սուտ համբաւոյ գրգռեալ բուռն լինիք ինձ ։ Սիրեմ զարքայ, ոչ և զայն ժխտեցից. այլ եթէ հրաժարեմ ինչ 'ի գլուխ տանել զհրաման քո, հաւատա՛ ինձ հայր, զի առաւել վասն սիրոյ քո առ-նեմ զդոյն քան վասն նորա ։ Քանզի 'ի

մեռանել արքայի դադարեն ընդ նմա և ամենայն ցաւք և հեծութիւք նորա. իսկ 'ի վերայ քո յաճախեսցեն ամենայն թշուառութիւնք: Խաղաղութիւն փախուցեալ 'ի բաց գնայ 'ի քէն, զի արիւն անպարտ հեղեր, և յայրն բարեգործ մեղար. և 'ի վրիժուց ցասման ծառայից նորա չիք քեզ ուրեք փախուստ և թաքուստ: Թէ և 'ի մարդկանէ խուսեսցես, այլ ակն ամենատես բաւական է ամենայն ուրեք ածել պատիժս 'ի վերայ քո: Եթէ տեսցես երբէք շողալ սուսերաց, համարիցիս զնոսին մխեալս 'ի սիրտ քո, և զսաստկութիւն ցաւոցն լացցես. 'ի մրրկել օդոց և 'ի շանթել երկնից՝ կարծիցես կայծականց ըզքեզ հարկանել: Տխուր և դառն գիշերք յաջորդեսցեն աւուրց քոց աղմկելոց. ատեցեալ յամենեցունց, և թշնամի ամենեցուն, անձամբ անձին ծանրանայցես, և քաղցր թուեսցի քեզ զմահ ճաշակել: Ա՛հ. Ի գուճս. Աղաչեմ զքեզ հայր. թող 'ի բաց զնենգաւոր դաշինսն: Զի՞նչ բանք են քո ընդ Արտաշրի ոխերիմ մահահոտ գազանին որ զճետն պարթևազանց քաջաց՝ եթէ կարող ոք էր, բառնայր յերկրէ: Կարծիցե՞ս հայր հանդիպել բարեաց առ 'ի նմանէ. աւա՛ղ քեզ, զի 'ի ծուղակս բանից նորա մատնեալ կաս. ո՞չ տեսա-

նես, զի նա զորս 'ի ձեռս եբեր զորեար ազգիդ՝ անողորմ սրոյ ետ Ճարակ. և ըզ-քեզ զոր անձեռնհաս գտաւ մատնել 'ի սուր, Թունաչից լեզուին սլաքաւն վիրա-ւորեաց 'ի մահ չարատանջ՝ քան զսրեալ պողովատին զհարուածսն: Հայր սիրե-լի, զարթիր աղաչեմ 'ի թմբրութենէ մը-տացդ. եկ յանձն քո. մտաբերեաց: Ի չարիմաց վիրաց լեզուին Արտաշրի բու-ժեսցեն զքեզ դառն այս արտասուք որ-դւոյդ՝ որ տոչորեալ խորովիմ 'ի հեծու-թիւնս անմխիթար ողբոց: Լո՛ւր ինձ, գթա յիս. զի մաշիմ 'ի ցաւոց, և ոսկերք իմ ցամաքին 'ի հոգոց. յիշեա՛ զի արիւն եմ քո, և մարմին 'ի մարմնոյ քումմէ. որ-դի եմ հայրասէր. գոն և իմ արտասուք մարդոյ. ահա լուծեալ անկանիմ ես՝ զմը-տաւ ածելով զթշնամութիւն քո ընդ խնամոտ Թագաւորին. մերժեա...

ԱՆԱԿ, Մէկոսի.

"Որպիսի՛ մարտ հզօր յարդարեն 'ի սրտի իմում բանք սորա:.. Ո՛վ չուառա-կան Թագաւոր. յօժարէի արդեօք 'ի բաց կալ յանդէպ գործոյս, այլ..."

ՁԱՐԵՀ, Մէկոսի.

"Յուզին միսք նորա... գուցէ զարթի-

ցեն առաքինութեան խորհուրդք 'ի նմա . . .
Անմա՛հ դիք, առաջնորդ լերուք վարտնե-
լոյ ծնողիս " :

ԱՆԱԿ

Ներողութիւն ոչ եւս իցէ . խորհուրդք իմ
'ի նոյն հաստատեալ են, և ուխտից իմոց
ոչ դրժեցից . աւետեաց ակն ունի առ
յինէն Արտաշիր : Բարիոք էին բանք քո .
այլ մերձակայ ահն և երկիւղ զարհուրե-
ցուցանէ զիս . այն՝ թէ գուցէ ծանիցէ
խոսրով զխորհուրդս իմ երկնեալս 'ի վա-
ղուց հետէ . և եթէ ոչ փութացայց 'ի մահ
նորա, խաղաղութեան այլ ոչ հանդիպի-
ցիմ :

ՁԱՐԵՀ

Երկիւղ սնոտի :

ԱՆԱԿ

Արդ զերծո՛ զիս յերկիւղէ աստի յայս-
մանէ սնոտւոյ :

ՁԱՐԵՀ

Մի՛ զմտաւ ինչ ածիցես երբէք . . .

ԱՆԱԿ

Ես զմտաւ ածեմ, զի յոյժ խոչ ընդ ոտն
եղեր ինձ . և ես վաստակեալ իսկ եմ ոգե-
սպառ : Արդ հա՛ն 'ի գլուխ զգործն .
զսոյն խնդրեմ, և զսոյն հրամայեմ :

ԶԱՐԵՀ

Եւ ինձ անհնարին է կամել զդոյն ։

ԱՆԱԿ

Յանհնարիցն իցէ քեզ. դարձեալ ան-սաստես հօր քում ։

ԶԱՐԵՀ

Ես զառաքինութիւն և զփառս հօր ի-մոյ մեծացուցանեմ ։

ԱՆԱԿ

Ա՛յդպէս ո՞չ երկնչիցիս 'ի ցասմանէ իմմէ ։

ԶԱՐԵՀ

Առաւել քան ընդ ցասումն քո՝ վասն պատրանացն յոր որսացար զդողանի հար-կանիմ ։

ԱՆԱԿ

Մի՛ ինչ փոյթ լիցի քեզ զայնցանէ. միայն հնազանդ լեր դու ինձ ։

ԶԱՐԵՀ

Թո՛յլ արա ինձ հայր. չեմ բաւական առ այդ. զի և 'ի զմտաւն ածել միայն ընդար-մացեալ գտանիմ, և յայլոյ խելս եղեալ ։

ԱՆԱԿ

Ուրեմն 'ի կարիս անձին իմոյ այդպէս

լքեալ թողո՞ւս զիս ։

ՁԱՐԵՀ

Ա՛յլզոր ինչ և հրամայեսցես . . .

ԱՆԱԿ

Մի՛ ևս . ոչ այդպէս . ցարդ բազմապատիկ օրինակօք ծանեայ քաջ զհայրասէր բարս քո . գիտացի զի զԽոսրով առաւել սիրես քան զիս ։ Որ անսաստէն ինձ վասն նորա , անշուշտ և մատն ինձ եղիցի ։

ՁԱՐԵՀ

Ե՞ս ։

ԱՆԱԿ

Այո՛ . ահա պատուիրեմ քեզ , մի՛ ևս այլ տեսանել զերեսս Խոսրովու . ծանիր քաջ , և մի՛ կարծեր եթէ ամենայն խորհուրդք նորա ծածուկք , և քո ընթացք և բանք ստուերասցին յինէն . կարապետ մահու լինիցիս նմա եթէ մտանիցես առ նա . առե՞ր 'ի միտ զամենայն ։

ՁԱՐԵՀ

Այո՛ . բայց . . .

ԱՆԱԿ

Բայց չարութիւն սրտի քո խափանէ

զգործն յորմէ բարի ինձ լինիցի. որդի ապաշնորհ, անգութ. ո՞չ 'ի դէպ էր քեզ ձեռն տալ հօր քում 'ի մեծի տագնապիս: Այլ եկեսցէ ժամանակ, զի ծանիցես ե-թէ զի՞նչ ընդ մէջ կայցէ հօր և տեառն. և զի ատեցեր զիս, տեառն օրինօք զքեզ դա-տեցայց յահ և յերկիւղ, և 'ի մահ իսկ՝ եթէ միւսանգամ խոչ ընդ ակն լինիցիս ինձ: Գնայ:

ՏԵՍԻԼ Դ.

ԶԱՐԵՀ

Ա՛հ, հայր, յո՛ր անխորհուրդ յամա-ռութիւն անդարձ հաստատեալ պնդեալ կաս... Դարձեալ զեղան զինև վիշտք և տառապանք հոգւոյ. զիա՞րդ մարթիցիմ ես ապրեցուցանել զանձն, զարքայ և զԱնակ, որ...

ՏԵՍԻԼ Ե.

ԶԱՐԵՀ, ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Գիտիցե՞ս արդեօք Զարեհ, զի արքայ երկմտեալ վասն ձեր, զհետ լինի իրացն

հաստատութեան. և զարմանայ թէ որ-
պէս բարեկամք իմ և մերձաւորք նեն-
գութեամբ ընդ իս վարիցին...

ՁԱՐԵՀ

Ապաքէն և զիս 'ի նոյն համարիցի, և
ատիցէ, և կենաց իմոց դարանիցի, որ-
պէս թէ և ես զնոյն խորհիցիմ:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Ձունիմ ասել աւելի քան զայս. արքայ
Խոսրով այլ իմն զգեցեալ է կերպարանս.
այնպէս իմն թուի՝ թէ և զինէն կասկա-
ծիցէ: Ետես զիս, և փոխեցան գոյնք
երեսաց նորա, և թէ վասն էր՝ ոչ ինչ
յայտնեաց ինձ. և կամի զքեզ տեսանել,
և բերան 'ի բերան խօսել: Թերևս Բուր-
զայ գրգռեալ ինչ իցէ զարքայ, զի հաներ
յինէն զիմ պատիւն. այլ ես սիրեմ զքեզ
ըստ անձին իմոյ, և ոչ ինչ նախանձիմ
ընդ փառս քո:

ՁԱՐԵՀ

Շնորհ ունիմ քումդ սիրոյ. և արդ ո՞ւր
իցէ Թագաւորն: Երկի-ղագին:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Ել զհետ քո գտանել զքեզ. փոքր միւս
ևս և այսր հասանէ:

ԶԱՐԵՀ, Մեկուսի.

«Եղո՛ւկ զիս»: Լե՛ր ինձ 'ի Թիկունս ա-
ղաչեմ իշխան քաջ. յիշեա՛ զի երկոքեան
արիւն արշակունի եմք. և որչափ մար-
թիսն օգնեսցես արքայի և ինձ Թշուա-
ռացելումս. 'ի քեզ եմ ապաստան:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ ո՞րպէս հնար իցէ արգելուլ...

ԶԱՐԵՀ

Ջան դիցես պահպանութեան կենաց
նորա, խափան լինելով հասանելոյ նորա
առ իս, և այն շատ է. այլ մի՛ ծանիցէ
արքայ զոր յանձն քեզ արարի:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Սիրիցե՞ս արդեօք զարքայ:

ԶԱՐԵՀ

Առաւել քան զանձն իմ, իբրև զտէր
և զհայր:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Եւ զիա՞րդ ոչ կամիս տեսանել զնա:

ԶԱՐԵՀ

Ո՛չ գիտես յորպիսի՛ ցաւս վարակեալ
եմ. 'ի վարանս մտանեմ, և 'ի դրունս մա-

հու հասեալ կողկողիմ, և մխիթարու-
թիւն ոչ ուստեք է ինձ. և թէ իրացն 'ի
վերայ հասանէիր, խանդաղատէին յիս
արդեօք գութք քո. այլ և զայս զլացաւ
ինձ բախտ անողորմ: Գնայ:

ՏԵՍԻԼ Զ.

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ուստի՞ երկնչիցի արքայ Խոսրով. եթէ
'ի վտանգի կայցէ անձն նորա, էր վասն
ոչ հանից նմա 'ի վեր զվտանգն... Սուղ
ինչ յառաջ Շաւարշ եղբայր Անակայ
կամէր ասել ինչ, այլ 'ի վերայ եկեալ ա-
րանց՝ կրճիմն արկին բանիցն. և այլագու-
նեալ և խռովեալ մեկնեցաւ 'ի տեղւոջէն.
ո՞ գիտէ... Այլ ես ո՞րպէս արգելից ըզ-
Խոսրով չտեսանել զՁարեհ: Ես երկըն-
չիմ կասկած 'ի մտի դնել արքայի՝ եթէ
նախանձիցիմ ընդ բախտ Ձարեհի. զի մի
արքայ ատելութեամբ բերցի ընդ իս, ի-
բրև զի կամիցիմ յաչաց հանել զսիրելին
իւր: Ո՞ոչ սիրեսցէ զՁարեհ զզգօնն քան
զամենեսին: Ես երբէք ոչ նախանձիմ ընդ
բախտ նորա որում արժանին է: Այլ և
զգոյշ կամ 'ի դործելոյ զանարժանս ինչ.
ցանկամ զի յիս տեսցէ արքայ զՎեհսա-

Ճան զհայր իմ, և ազգն իմ Կարենեան Պահլաւին ինև նորոգ յարիցէ 'ի մէջ Պարթևազանց. որոց յիշատակաւ անողորմ կոտորածին, հիւծեալ մաշիմ. Երբ իցէ զի լուծցէ զվրէժն գոռոզն այն Սասանեան... Այլ այսպէս օտարանալ Զարեհի 'ի Խոսրովայ զինչ ինչ իրաց նշանակք իցեն. պակասեսցի՞ երբէք հանճար 'ի Զարեհէ. չճանաչիցէ՞ զպարտն և զպատշաճ. ապա իցէ ինչ կարևոր դէպ՝ զոր ես անգիտանամ, և զորոյ զծածկութի՞ն կամի յինէն Զարեհ:.. Մի՛ գուցէ իշխանն Բուրզ խորամանկեալ իցէ ատելի արքային առնել զԶարեհ, և յաջողեալ. զի նա միշտ զսոյն վեր 'ի վայր յեղյեղէր, և զիս ջանայր զարթուցանել 'ի զայրոյթ ընդդէմ Զարեհի, յետ միանգամ սիրելի լինելոյ նորա քան զիս յաչս Խոսրովու: Եթէ իմ ազգ Կարենեան բարձիւ 'ի վեր է քան զնորայն Սուրենեանն Պահլաւի, և մերձաւորագոյն արքայի, բայց Զարեհ բնատուր հանճարովն վերագոյն բազմեալ քան զամենեսին, ինքնին կրկնէր և երեքկնէր յունկն իմ, եթէ մի՛ ցաւեսցէ քեզ Պերոզամատ, զի յաչս եմ Խոսրովայ քան զքեզ. զի ես, ասէ, ոչ առնում յանձն աստիճանաւ 'ի վեր քան զբարձ ցեղին քոյ ամբառնալ զանձն իմ: Յոյժ արդա-

բակորով միտք են նորա, և անհնար է ինձ նախանձու և ատելութեամբ գնալ ընդ նմա:

ՏԵՍԻԼ Է.

ՊԵՐՈԶԱՄԱՏ. ԽՈՍՐՈՎ

—

ԽՈՍՐՈՎ

Ո՞ւր իցէ Զարեհ:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ո՛չ գիտեմ տէր:

ԽՈՍՐՈՎ

Ո՞չ փոքր մի յառաջ աստ ընդ քեզ էր:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այո... բայց... Ոչ գիտեմ յո՛ դիմեալ գնաց:

ԽՈՍՐՈՎ

Ա՞յդպէս պատասխանի տաս ինձ: Մեծազօր հրամանն իմ գտցէ զնա:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ներեա՛ տէր իմ արքայ. Ի ծո՜նր ի՜ջեալ ո՜նի զչղանդիցն:

ԽՈՍՐՈՎ

Ի բա՛ց կաց ։

ՊԵՐՈՋԱՄԱՏ

Լո՛ւր ինձ տէր . բազում ինչ ունիմ ա-
սել . . .

ԽՈՍՐՈՎ

Ո՛չ ևս , քաջ ծանեայ և զքեզ ։

ՊԵՐՈՋԱՄԱՏ

Աղաչեմ զքեզ տէր , լո՛ւր ծառայի
քում ։

ԽՈՍՐՈՎ

Եւ դու միաբանեցեր ընդ թշնամիս ան-
ձին իմոյ . վասն այսորիկ արգելուս յինէն
տեսանել զՋարեհ ։

ՊԵՐՈՋԱՄԱՏ

Ո՛չ տէր , մի՛ լիցի . զի խռովեալ է յոյժ
տնձն նորա ։

ԽՈՍՐՈՎ

Եւ ընդէ՞ր խորշիցի . գուցէ ճշմարիտ
իցեն ամբաստանութե՞ն բարուրք որ զնմա-
նէ . ընդ որ երբէք չեմ ես հաւատացեալ ։
Այլ զի լուայց զպատճառս տարօրինակ
սգալից դառնութեան մտացն , կեղծեցի
առաջի նորա իբր ընծայեալ հաւատս կե-
նախուզ դաւաճան կենաց իմոց լինելոյ
դորա ։ Գիտեմ զի յոյժ տագնապեալ

աղմկեցաւ 'ի միտսն. սակայն և ես յոյժ 'ի խոր խոցեալ կամ ընդ անխօս լռութիւն իւր՝ զամենայն սպառնալեօք չարեաց ունչս առնելով:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Քաւ 'ի նմանէ խորհուրդ նենգութե՛ . և ոչ 'ի միտս անկեալ է նորա այդպիսի ինչ:

ԽՈՍՐՈՎ

Արդ գուցէ և դու գիտիցես ինչ, և թագուցանել հնարիցիս զանծածկելիսն . պատրեաց նա և զքեզ:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Զճշմարիտն ասացից . յուզեալ նեղի 'ի բազում խորհրդոց, որպէս և կերպարանքն ցուցանեն, այլ ոչ ինչ զպատճառացն գիտացի:

ԽՈՍՐՈՎ

Ապա լուարուք ամենեքեան . եթէ ոչ 'ի վեր առջիք զպատրուակ ծածկութե՛ն, 'ի խիստ քննութիւն արկանեմ զամենեսին, սկիզբն 'ի սիրելեաց իմոց առնելով:

ՊԵՐՈԶԱՄԱՏ, Մէկոսի.

"Զի՞նչ լսեմ ես . յիմարին միտք իմ, և ոչ կարեմ կալ 'ի վերայ":

ՏԵՍԻԼ Ը.

ԽՈՍՐՈՎ, ԲՈՒՐՁ, ՊԵՐՈՁԱՄԱՏ

—

ԲՈՒՐՁ

Ընդէր խռովեալ իցէ արքայ. ո՞ արդեօք զայրացոյց զտէր իմ:

ԽՈՍՐՈՎ

Ո՛Հ. հարց ցՊերոզամատ, և յայտնեսցէ քեզ զամենայն: Կամ երթալ:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Յո՞ գնաս տէր իմ արքայ:

ԽՈՍՐՈՎ

Մի՛ դարձեալ ընկիճեալ կայցես առաջի իմ:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Այլ կամայ թէ ակամայ հարկ'ի վերայ կայ ոչ թողուլ զքեզ'ի ձեռս....

ԽՈՍՐՈՎ

Թո՛յլ տուր ինձ. սնոտի է զիղջ անագան: Գիտեմ յո՛ դիմեալն եմ, և զինչ զոր գործիցեմ:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ'ի ծածուկ խօսել...

ԽՈՍՐՈՎ

Տեղեակ եմ ամենայնի: Զափամբ գարնանազայր գետոյ զգոյշ կաց չսերմանել, զի մի ունայնաձեռն ապաշաւեսցես: Նենգութեան ինչ կերպարանս ոչ նշմարեցի յոք, սակայն սիրտ մահկանացու խաղալիկ է բախտին քան զտերև աշնայնոյ: Գնաց:

ՏԵՍԻԼ Թ.

ՊԵՐՈԶԱՄԱՏ, ԲՈՒՐԶ

—

ՊԵՐՈԶԱՄԱՏ, Ա- Բուրդ.

Մնա խաղաղութեամբ:

ԲՈՒՐԶ

Յո՞ դիմեալ գնաս:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Զհետ Խոսրովու:

ԲՈՒՐԶ

Բանք ինչ են իմ ընդ քեզ զիրաց կարևորաց:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Դարձայց այսրէն փութանակի, մի ինչ խռովիր. ոչ է արժան թողուլ լքանել զարքայ: Գնայ:

ՏԵՍԻԼ Ժ.

ԲՈՒՐՁ

Երբէք ոչ պատահեցի այսպիսում ներհակակիր բախտի. գուն գործեցի զՁարեհ յաչաց հանել արքայի, զի Պերոզամատ դարձեալ 'ի նոյն Ճոխասցի: Այլ զի յոյժ սիրէր զնա արքայ, գուցէ ընդ ամենեսին 'ի հարց և 'ի փորձ մատուցեալ, յերևան ած և զհնարսն իմ զոր հնարեցայ 'ի կործանումն փքացելոյ մանկանն Ձարեհի. և ընդ ձեռն իմ և Պերոզամատ պատուհաս կրեսցէ, որ անգոսնեալ զհրամանօք իմովք՝ ոչ ինչ հոգայ զփառաց անձինն:.. Արդ գիտեմ զի յոյժ զայրագնեալ գրգռեսցի նա, զի այսպիսի բարուրանս զսիրելեաւն շփեցի... Այլ 'ի զուր է ինձ կարծեօք 'ի ստուերէ մահու զարհուրել. ելից արդ զհետ Պերոզամատայ. եթէ լուայց ինչ չարագուշակ, գրգիռ արկից դարձեալ 'ի մէջ երկոցուն նախարարացն, զի ելցեն 'ի վերայ

Խոսրովու . . . Եւ հիմ ոչ . զի նա ինքն կոչեաց զՊերոզամատ . և այժմ ընդէր փոխեցաւ 'ի խորհրդոցն , և մեծարոյ եցոյց զՉարեհ քան զնա : Ապա անիրաւութիւնք նորա 'ի գլուխ իւր դարձցին : Եթէ ոչ գիտէ Պերոզամատ զփառաց անձին խնդրել զվրէժ , ես ինքն վրէժխնդիր եղէց անարգանաց նորա . ես զկեանս նորա դարձուցի 'ի նա , ապրեցուցեալ 'ի կոտորածէն . արդ զոր ետու նմա , և քարիոք պահպանութեան նորին պարտապան եմ : Նա անարգի , և ես կրեմ զամօթ անարգանաց նորա . զի ոչ եթէ արհամարհելոյ ումեք կեանս շնորհեցի . գիտեմ զո՛ ապրեցուցի , և թէ առ ո՛ ելանիցեն անարգանքն . մեռայց ես , այլ խնդրեսցի վրէժն :



ՀԱՆԴԷՍ Դ.

Տեսարանն է Սենեակք բազումք մէջ առ միջոյ պճնօրէն զարդարեալք գահաւորակօք և ոսկեման կերպասիւք, ոսկեճամուկ սրահակօք, և ծաղկակալ սկտեղքք. որ է բնակարան Զարեհի։

ՏԵՍԻԼ Ա.

ԶԱՐԵՀ, ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Սակաց այս ինչ ճշմարիտ է, զի այս կամք են նորա. զձեռս իմ շաղախել յարիւն արքայի՝ յորմէ դուն հրաժարես։

ԶԱՐԵՀ

Եւ ո՞րպէս հաւանեցոյց զքեզ յայդ եղեռն անհնարին՝ որ միամտեալն էիր յարքայ. և զիա՞րդ իշխեաց յայտնել քեզ զծածուկսն։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Որ ինչ ցանկալին է՝ և դիւրագործ կարծի։ Նա համարեցաւ զիս մախացեալ ընդ փառս քո և ոխացեալ ընդ Խոսրո-

վու. և ոչ ինչ երկմտեաց և ինձ զոխու-
թիւն իւր առաջի առնել:

ՋԱՐԵՀ

Արդ զինչ պատասխանի արարեր առ
այդպիսի անգութ հրամանն:

ՊԵՐՈԶԱՄՍՆ

Զառաջինն սարսեցի յերկիւղէս. ապա
այնպէս ինձն թուեցաւ ինձ՝ եթէ 'ի դու-
ռըն կորսեան յուշարկեալ երթամ: Զի
ո՞չ տագնապեացի 'ի լուր մահահրաւէր
խորհրդոյն: Զան 'ի վերայ եդի եթէ ոչ
այլ ինչ, գոնեա վայրկեան ժամանակի
դողանալ, և վեր'ի վերոյ հաւանեցայ հնա-
զանդել նմա: Հաւատարմագոյն քան զիս
ոչ զոք կարծէ գտանել նա առ 'ի լրումն
տալ ամպարիշտ գործոյն: Կարօղ եմ
ծածկել զերեսս իմ, և կամ զբանն հա-
նել առ արքայ:

ՋԱՐԵՀ

Խօսեցար ինչ յաւանչս նորա:

ՊԵՐՈԶԱՄՍՆ

Ոչ. այլ ասացի ցնշեանն Բուբղ. որ
խնդացեալ ընդ այս, և ևս ինձ յորդոր
լինէր 'ի սոյն գործ դառնութեան:

ՁԱՐԵՀ

Զի՞նչ գործեցեր. և էր սակս յայտնեցեր զայդ յունկն նորա. նա արդ թանայ զսուր իւր յարիւն Խոսրովու. յորպիսի՛ վտանգ մեծ արկեր զարքայ. յետ այնչափ հառաչանաց և հեկեկանաց, յետ բազում արտասուաց որովք ընդ վայր ջանայի թագուն ունել զգաղտնիսս զայս. արդ դու...

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Քա՛ւ յինէն խորհել ինչ հակառակ քեզ. ոչ նենգութեամբ ինչ...

ՁԱՐԵՀ

Ընթա՛ աղաչեմ առ Բուրզ... Լաւ ևս է զի զգուշացուցից զարքայ... Ո՛վ տէր... երագէ նա զհարուածն... Տե՛ս որպիսի՛ աղէտս տարակուսի ածեր յիմ վերայ... արդ մահ է և երկոցուն, և ինձ գլխովին:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ ես կարծէի...

ՁԱՐԵՀ

Ե՛րթ առ Բուրզ. ա՛րկ առաջի նորա թախանձանս...

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Կատարեսցի հրաման սիրոյ քո: Սկսանի երթալ:

ԶԱՐԵՀ

Այլ կա՛ց առ վայր մի. լո՛ւր զինչ ասեմըս. մի՛ ինչ 'ի վեր հանցես զինէն...

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Բարի է բանդ: Սկսանի երթալ:

ԶԱՐԵՀ

Ո՛չ, դադարեա՛ց. ե՛ս երթայց առ արքայ, և յիս ընկալայց զհարուածն: Սկսանի երթալ:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Լո՛ւր ինձ Զարեհ սիրելի:

ԶԱՐԵՀ

Մի՛ լինիր ինձ խոչ ընդ ոտն:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ահա՛ նա ինքն արքայ: Այլ ես երթայց առ Բուրզ: Գնայ:

ՏԵՍԻԼ Բ.

ԶԱՐԵՀ

Ո՛վ աղէտիցս. խնդրեմ զարքայի զփըրկութիւն, այլ յուսահատ լինիմ և յիմմէ փրկութենէ. չգիտեմ ուստի՛ լուաւ նա

զբաղբաղայսն որովք զիսն բամբասեցին. և արդ նա անհաւատ լինի ինձ: Ա՛հ, հայր իմ, զի՞նչ գործեցեր... Խնդրեմ տեսանել զարքայ և ոչ երբէք մեկնել 'ի նմանէ. այլ սպառնալիք նորա... այլ բռնադատութիւն նորա... այլ ահեղասաստ պատկեր կերպարանաց նորա... Վա՛յ ինձ. երկնչիմ և դողամ յոյժ... ընդ մահու մրցել օրէն ոչ է. այն ինչ կոխեալ զդրունս երեքտասաներորդի ամին՝ գերեզ մանականա՞ցն հաւասարիցեմ... Ո՞մն դայ այսր... ետես Պերոզամատ զարքայ այսր ընթացեալ, և չերևեցաւ տակաւին... Թագեայց յերեսաց նորա... այդչափ բուռն եղև ինձ երկիւղ մահու... ընթացայց ընդ առաջ արքայի...

ՏԵՍԻԼ Գ.

ԶԱՐԵՀ, ԽՈՍՐՈՎ

—

ԽՈՍՐՈՎ

Որդեա՛կ իմ, զի՞ խռովեալ ծփիս. լուայ զամենայն. արդ արդար ես. այլ զիա՞րդ ինձ...

ԶԱՐԵՀ

Ես աղերս արկանէի և պաղատէի, և ոչ լսէր տէր իմ: Մեկուսի. "Առ իս բաղ-

դըն իմ. վի և կենդանի է, և վկայ անմե-
ղութեան իմոյ ապագայ »:

ԽՈՍՐՈՎ

Սակայն ոչ ընդ վայր. վի վինչ այլայ-
լութիւն դիմացդ ցուցանէր:

ԶԱՐԵՀ

Այդ վի ոչ կարացի ասել զոր կամէին.
այդ զաէրն իմաց յերկմտութիւն, այլ...

ԽՈՍՐՈՎ

Զինչ դարձեալ հատուկիր բանք.
հաս է արդ. գիտեմ վի ոչ ինչ մեղար. և
դարձեալ յորդիս իմ գրեացիս. մատիր
առ իս: Գնչի ընդ խաւն էինին:

ԶԱՐԵՀ

Սակայն էս. ա՜հ...

ԽՈՍՐՈՎ

Զի՞ կաք. ասա՛:

ԶԱՐԵՀ

Ալաչեմ տէր, մի բռնադատեր զիս:
Եթէ հնար ինչ էր տեսանել զալէտս սրտի
իմոյ, յայնժամ թշուառութիւն իմ յայր-
տասցես զամենեսեան յորդորքդ. եթէ

գիտէիր ... Մնա՛ խաղաղութեամբ տէր արքայ ։ Գնայ ։

ՏԵՍԻԼ Դ.

ԽՈՍՐՈՎ, ԱՊԱ ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ԽՈՍՐՈՎ

Ո՛վ դիք, յի՞նչ ակնարկութիւն ունի-ցին բազմադիմի դարձուածք բանից դո-րա. և ո՞ւր երթայցէ այժմ։ Պարտեցայ 'ի մանկանէ, զի ոչ կարացի իմանալ զոր 'ի մտին յեղյեղիցէ ... Այլ ես յԱնա-կայ լուայց զամենայն ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Փութա՛, մի՛ յապաղեր, տէր արքայ.

ԽՈՍՐՈՎ

Յո՞վ փութայցեմ. զի՞նչ իրք իցեն ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ընդվզեցաւ ապստամբեցաւ անօրէնն, և չիք որ զդէմ ունիցի. քում հրամանին սպասէ մեծ սպարապետն ամենայն Հայ-ոց քաջն Կոռնակ վրէժ առնուլ 'ի նո-ցանէ վաշտկաւ զօրաց ։

ԽՈՍՐՈՎ

Ուրեմն դաւաճանութիւն լինել հաւաստեցաւ յոք ։

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Սպարապետն արևելեան գնդին Անակ Թշնամի է կենաց քոց ։

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ լսեմ ես ։

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Ահա դաշոյնն որով դարանակալ կենաց քոց լինել զիս ստիպեաց. իբրև զի կարծէր թէ թշնամութեամբ իցեմ ես ընդ քեզ, զի զպատիւ իմ կալաւ Զարեհ...

ԽՈՍՐՈՎ

Ա՛յ անագորոյն գազան. արդ կարի քաջ՚ի վերայ հասի մեղմեխ խորհրդոց սըրտի նորա ։ Ա՛յսպէս գրգռի ընդ իս, փոխանակ զի սիրով ընդգրկեցի զնա, և մեծապատիւ ճոխացուցի ։ Այդ է ուրեմն որ և զՁարեհ տագնապեալ խռովէ...

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Փութա՛ տէր խաղաղել զաղմուկ անմիտ ամբոխին ։

ԽՈՍՐՈՎ

Սակայն մի՛ թեթևութեամբ ինչ և կատաղի մոլութեամբ գործեսցուք... Ածէք առ իս զՉարեհ. Թէ և զխորհուրդսն ոչ մերկասցի, սակայն ես ծանեայց յերեսացն զնկարագիր սրտին: Երթան զօրականք:

ՏԵՍԻԼ Ե.

ԽՈՍՐՈՎ, ՊԵՐՈՉԱՄԱՏ, ՇԱՒԱՐՇ

—

ՇԱՒԱՐՇ

Լո՛ւր ինձ արքայ. երկիւղ ունի զիս...

ԽՈՍՐՈՎ

Զի՞ եղև քեզ. ընդէ՞ր երկնչիցիս:

ՇԱՒԱՐՇ

Կալեալ զօրականացն զՉարեհ՝ վարէին առ Անակ, զի զխորհուրդս հօրն նա յայտնեաց քեզ:

ԽՈՍՐՈՎ

Նա ինքն մատնեաց զանձն իւր: Աւա՛ղ ընդ վայր սիրոյն որով գգուեցի զնա:

ՇԱՒԱՐՇ

Յոյժ կատաղեալ և մոլեգնեալ իբրև զար-

բեալ ոք. անշուշտ ընդ տեսանելն անդամ անդամ յօշեսցէ զմարմինս Զարեհի:

ԽՈՍՐՈՎ

Ելցեն ընդ իս սպառազէնք: Սկսանի երթալ:

ՀԱՒԱՐՀ

Եւ ես ընդ քեզ եմ թափել զԶարեհ, կամ ընդ նմին մեռանել: Մեկուսի. "Զի 'ի յայտնել դաւանացն գէթ զանձն իմ և զԶարեհ ապրեցուցից":

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Յո՞ դիմեալ յախուռն ընթանաս տէր արքայ. բերան առիւծուն 'ի վերայ քո բացեալ է. խորհուրդ 'ի մէջ առցուք:

ԽՈՍՐՈՎ

Չեն ինչ պէտք խորհրդոյ. եթէ յապաղեմք, մեռանիցի Զարեհ. ոչ գիտէի զի իժ 'ի ծոցի կրիցեմ. ապականեցաւ արիւն դիւցազանց ազգի Արշակունեաց. զկորուստ խնդրեն զիրերաց. փուտ շառաւիղք ատելութեան ընձիւղեցին 'ի սիրտս նոցա, և այր ընդ եղբօր փռնչեն: Գնայ. և Պերոզամատ ևս կամի երթալ:

ՏԵՍԻԼ Զ.

ՇԱՒԱՐՇ, ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ՇԱՒԱՐՇ

Որդեակ Պերոզամատ, կա՛ց դու աստէն, զի արիւն արշակունի ես. ո՞չ գիտես թէ յորպիսի՛ մեծի վտանգի կայ ազգըդ Արշակունեաց՝ եթէ յաջողեսցին խորհուրդք Անակայ. մի՛ երևեսցիս 'ի խռան անդ, զի և 'ի քեզ ոչ խնայեսցեն:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Եւ զի՞նչ. կամիցի՞ս թողուլ լքանել ըզ-Զարեհ, և ինչ ոչ հոգալ: Մատն եղէց նմա, թէ յանձկութեան պահուս զանց ինչ առնիցեմ զնովաւ, և ոչ կցորդ եղիցիմ մահուան կամ փառաց նորա: Գնայ:

ՏԵՍԻԼ Է.

ՇԱՒԱՐՇ

Աստուածք բարերարք, դուք ինքնին խնայեցէք 'ի կեանս սիրելւոյ պատանւոյն. եթէ հրամանք են մեռանելումեք, մեռցի անզգամն. աջ ձեր զԶարեհաւ

հովանասցի, ահա ես խնդրեցի: Խոսրով նենգի, և ընդէր Զարեհ անկանիցի . . . ո՛չ այդպէս. սիրեցի զնա իբրև զիմ ծը-նունդ. ատեաց զնա հայր իւր, այլ ես ընկալայց ցնծացեալ սրտիւ. եկեսցեն ա-ւուրք զի պարծեցայց նովաւ. քանզի զար-մանալի եղև հանճար նորա, և զարմացոյց զմիտս բազմաց: Գնայ:

Փոխի տեսարանն 'ի գաւիթ ներքին պալատանն հոյակապ. յորում 'ի սիւնամէջսն դրօշեալ պատկերք թագաւորացն Արշա-կունեաց, և 'ի միջի Վաղարշակայն փառահեղ բազմեալ 'ի գահ. շուրջ 'ի սպասու ունելով զնախարարազունս, համակ մարմարիո-նեայ. գործ հնարիմաց ճարտարաց: Եւ երկուստեք հրաշակերտ սանդխոցն արձանք առաջնոց նահապետացն երկոտասան մեծաց նախարարութեանցն:

ՏԵՍԻԼ Ը.

ԲՈՒՐՁ, ԱՆԱԿ

ԲՈՒՐՁ

Յո՞ ամապարեալ գնաս իշխանդ:

ԱՆԱԿ

Արտաքոյ ապարանիցս խնդրել պա-տըսպարան:

ԲՈՒՐՁ

Եւ ո՞ պաշտպան լիցի քեզ յամբոխեալ

բազմութեան մարդկանն. ամենայն ոք նահատակի վասն կենաց արքայի. սակաւաւորք են յոյժ թշնամիք նորա. արդ դու նոքօք պահ ունիցիս զանդաստակօք արքունեացս, մինչև ես այլս յաւելից 'ի նոյն:

ԱՆԱԿ

Մի՛ գուցէ վրէպ խորհրդով 'ի դերև ելցուք:

ԲՈՒՐՉ

Կազմ է ամենայն ինչ. քաջալերեա՛ց, զօրացի՛ր յանձն քո, և տեսցես զելս կատարածին: Գնայ:

ՏԵՍԻԼ Թ.

ԱՆԱԿ, ՁԱՐԵՀ Կալեալ 'ի պահապանաց.

ԱՆԱԿ

Արդ ուրա՛խ լեր, զի պատարագեցաւ քով անսաստութեամբդ հայր քո 'ի վերայ սիրեցելոյ քում թագաւորին: Արդ յաղթութեան պսակ կապեա 'ի գլուխ քո. յոյժ հաճեցաւ ընդ քեզ արքայ, և կարի քաջ զփորձ առ զանկեղծ սիրոյ քո. ահա 'ի քէն պատրաստեցան մեզ այս ամենայն աղէտք անհնարինք: Այլ զի օրինաց ար-

դարութեան գիտացեր քաջ պաշտպանել, պանծալի օրինակ յետնոց կացցես մահուամբ քո ։

ՁԱՐԵՀ

Ո՞վ պատրութիւն . իմ չիք ինչ խօսեալ. խաբեցար հայր . Խոսրով . . .

ԱՆԱԿ

Ոչ ևս պատրիմ ես 'ի նենգաւոր բանիցդ . ո՞չ գիտիցեմ զի խօսեցար ընդ արքայի , Թէպէտ և պատուիրեցի քեզ չըտեսանել անգամ զարքայ ։

ՁԱՐԵՀ

Այլ ոչ վասն այնորիկ . . .

ԱՆԱԿ

Կարկեա՛ց , լո՛ւռ լեր , հայրատեաց որդի ։

ՁԱՐԵՀ

Հաւատա՛ հայր . . .

ԱՆԱԿ

Հաւատացի զի ատելութեամբ բորբոքեալ, 'ի վերայ իմ յարուցեալ ես . զի փոխանակ մահուն Խոսրովու , զմահ իմ խընդրես . զի ցանկաս տեսանել զիս Թաթաւեալ յարեան իմում ։

ՁԱՐԵՀ

Յի՛ս հայր իմ. խնայեա՛ յիս, մի՛ և զայս կիրս վշտաց յաւելուր յոգի իմ: Եթէ չիցեմ հաւատարիմ, շանթք յերկնից...

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ, 'Ի ՆԷՐՔՈՒՍՔ.

Մեռցի՛ անօրէնն:

ՁԱՐԵՀ

Ո՛վ, զի՞նչ ձայն է աղաղակի:

ԱՆԱԿ

Ամայի յամենայն օգնականուէ՝ կամակար մեռանիմ, այլ գոնեայ լուծից նախ զվրէժ իմ: Հանէ զսուրն:

ՏԵՍԻԼ Ժ.

ԽՈՍՐՈՎ, ՊԵՐՈԶԱՄԱՏ, ՇԱԻԱՐՇ, ՁԻՆՈՒՈՐՔ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

—

ԽՈՍՐՈՎ

Անկցի՛ չարագործն. շատ իսկ եկեաց.

ՁԱՐԵՀ

Ներեա՛ տէր արքայ. փոքր մի անսա: 'Ի բա՛ց կացէք...

ԽՈՍՐՈՎ

Թո՛ղ, զի 'ի մի հարուած...

ԶԱՐԵՀ

Այո՛ · այլընդ սիրտ իմ անցցէ երկաթն մահահոտ 'ի սիրտ նորա ։

ԱՆԱԿ, Մէկուսի ·

“Զի՞նչ լսեմ” ։

ԽՈՍՐՈՎ

Անօրէն է, մեռցի՛ · · ·

ԶԱՐԵՀ

Չգուցէ՞ ինչ 'ի քեզ գթութիւն եթէ զղջացեալ · · ·

ԽՈՍՐՈՎ

Վտանգ կենաց քոց · ·

ԶԱՐԵՀ

Զսմանէ հոգամ ես ։

ԽՈՍՐՈՎ

Չարեաց խորհրդական է ։

ԶԱՐԵՀ

Այլ հայր իմ է ։

ԽՈՍՐՈՎ

Ապստամբ է ։

ԶԱՐԵՀ

Արիւն և հարազատութիւն քո է ։

ԽՈՍՐՈՎ

Նա ատեայ զքեզ. և դու պաշտպանի ցեմ նմա :

ԶԱՐԵՀ

Ի բնութենէ զնոյն պահանջիմ :

ԽՈՍՐՈՎ

Այլ'ի կենաց բառնայ զքեզ :

ԶԱՐԵՀ

Նա ետ ինձ զնոյն :

ԱՆԱԿ, Մէկոսի.

"Ա՛հ որդեակ իմ" :

ԽՈՍՐՈՎ

Կամի՛ս արդ զի զսէր իմ...

ԶԱՐԵՀ

Յորժամ տեսանիցեմ զշողալ սուսերաց զհարբն իմով, և անձն իմ յարհամարհու թիւն գայ ինձ. Թող թէ...

ԽՈՍՐՈՎ

Յիշեա՛ զխնամսն և...

ԶԱՐԵՀ

Ամենայն ինչ ինձ մոռացօնք եղեն, հրա

մայեա նախ զնա ինքն հարկանել։

ԱՆԱԿ, ՄԷԿՈՒՍԷ.

„Ո՛վ առաքինի ոգւոյ պատանւոյն»։

ԽՈՍՐՈՎ

Մահապարտ է նա. մի խափան լինիր ինձ։

ԱՆԱԿ, ՄԷԿՈՒՍԷ.

„Անհնար է ինձ զերծանել. Թերևս օգնեսցէ խորամանկելն»։

ԶԱՐԵՀ

Ոչ կարեմ։

ԱՆԱԿ, ՅԱՒԱԳԻՆ.

Այո՛, ես միայն եմ մահապարտ, զի այսպիսւոյ առաքինի որդւոյ անարժան հայր եղեւայ. յաղթեաց սա առաքինութեամբ իւրով չարութեան իմում։

ԶԱՐԵՀ

Ո՛չ այդպէս. կենդանեաւ իմով ոչ ձգաշակեսցես դու զմահ։

ԽՈՍՐՈՎ

Այլ դաւաճան է կենաց իմոց. զնմանէ ապրեսցի։ ՄԷԿՈՒՍԷ. „Սքանչանամ ընդ

արիութիւն մանկանն . այլ . . . ”

ԱՆԱԿ

Մի՛ լսեր դմա արքայ . հրաման տուր 'ի բաց առնուլ զդա , և թող պատահեսցեն ինձ . զի քաջ գիտեմ թէ չեմ արժանի կենաց , և ոչ վայելել յարև ընդ դիւցազնացելոյ մանկան և ընդ ներող թագաւորիդ : Հա՛պա զօրականքդ , մատիք առ իս :

ԶԱՐԵՀ

Յարդարութենէ արքայի 'ի գթութի նորա բողոքեմ ցաւագին ողբովքս . Լայ : Խնայեա՛ յԱնակ . . . հայր իմ . . . տէր իմ արքայ . . . Յարդասուս լուծանի 'ի գուճս :

ԽՈՍՐՈՎ, Մէկուսի .

“ Խանդաղատեցաւ գութ իմ յեղերական տեսիլ մանկանդ ” : Այլ խիթամ . . .

ԱՆԱԿ

Ամօթով և պատկառանօք լի եմ ես . զի՞ կայք . լաւ է ինձ մահ քան զկեանս վատութեան :

ԶԱՐԵՀ

Տէր արքայ , մի՛ մերժեր զաղաչանս իմ . յիշեա՛ զանյիշաչարութիւն քո . լո՛ւր ձայնի եզկելւոյս . ապա թէ ոչ , ա՛հ . Լայ :

ԽՈՍՐՈՎ, Մէկոսի.

“Զի՞ գործիցեմ...”: Շատ է արդ. դարձցին սուսերք 'ի պատեանս. մի՛ ոք մեռցի. ահա շնորհեալ քեզ զամենայն:

ԶԱՐԵՀ

Մեծ է ինձ այս տէր արքայ. նորոգ կենաց հանդիպեցայ 'ի ձեռաց քոց. այսուհետև որպէս հարազատ որդի զանձն իմ եդից 'ի վերայ քո:

ԱՆԱԿ

Մի՛տք իմ դարձան յիս. բայց կեալ ինձ յայսմ հետէ իցէ՞ արժան..

ԽՈՍՐՈՎ

Տես արդ, ահա շնորհեցի քեզ զկեանս քո՝ երեսս առնելով բազմաթախանձ ողբոց որդւոյդ, զորոյ և դու ճանաչես զհանճարոյն զարգասիս: Այլ ես ի՞բր հաւատացից քեզ զանձն իմ յայսմ հետէ: Եւ յումմէ՞ ձգեալ դու ածար յայդ եղեռն. ո՞ շրջեալ սասանեցոյց զմիտս քո: Ա՛հ, ոչ կամէի հաւատալ ձախողակի լրոցն և չարագուշակ նշանացն որ զքէն մատն ինձ լինէին, մինչև շփոթք և աղմուկք առին շուրջանակի զքաղաքս: Եւ արդ իսկ տակաւին անհաւատանալ թուիմ աչացս.

այնպէս օտար 'ի քէն համարէի զգործ
այսպիսի չարախտավատ : Դու կենաց ի-
մոց Թշնամի՛ . դու զմահ իմ խնդրիցե՛ս .
Անակ ատելութիւն ընդդէմ ինձ 'ի սըր-
տին տածիցէ՛ : Դու Անակ , ընդ հովա-
նեաւ ձեռին իմոյ պատսպարեալ , հալա-
ծական վարեալ 'ի խրոխտ Թշնամւոյն Պար-
Թևացս , յինէն իբրև եղբայր հարազատ ,
ազգ իմ և արիւն , յինէն գիրկընդխառն
սիրալիր գթովք նպաստաւորեալ , դու
դաւաճան կենաց իմոց 'ի վերայ իմ յա-
րուցեա՛լ : Զո՞ր 'ի բարեաց պակաս արարի
քեզ ա՛յ չուառական . յո՞ր ինչ ընդդէմ
կացի խորհրդոց քոց , ապաշնորհ : Յայս
չափ աւուրս ամաց առ իս կացեալ՝ ինձ
'ի սեղանակցութիւն և յամենայն խոր-
հուրդս իմ խորհրդակից , զա՞յդ երկնեալ
տածէիր 'ի սրտիդ՝ առնուլ զկեանս իմ պա-
տեհաւ . և որո՞ց բարեաց ակն ունէիր
հանդիպել մահուամբս , ո՛վ քաջ , եթէ
իցես արժանի անուանդ . միթէ գահա-
կալե՞լ ընդ իմ խնդրէիր . և ո՞չ դիտես զի
սասանեանն այն , արիւնարբուն գազան ,
զանուն Պարթևազանց ջնջել յերկրէ
ուխտ ընդ անձին եդեալ է . և ժողովուրդս
երկփեղկեալ հակառակ ընդդէմ քո , և նա
պատեհաւ յարուցեալ 'ի վերայ քո , զի՞նչ
հատուցումն դաւանացդ առնուիր . զի՞նչ

այլ. բնաբարձ ջնջումն ազգիդ Պարթևաց։ Աւա՛ղ մեզ. տեսանեմ զխնամակալ դիս զերեսս 'ի բաց 'ի մէնջ դարձուցեալ յազգէն Պարթևաց. և մեք ինքնին անձամբ յանձինս եղբայր ընդ եղբօր թշնամի յարուցեալք ընդդէմ միմեանց. սուր 'ի ձեռն տալով թշնամեաց՝ զհետ ելեալ եմք միմեանց, ճռաքաղ առնել զանձինս։ Աւա՛ղ աղետալի պատահարիս. ես 'ի քիրտն և յապաժոյժ արեան զկեանս քո և զքոյոցդ մինչդեռ կամիմ կեցուցանել և յառաջին ածել 'ի փառս, դու երախտամոռաց, կենաց իմոց՝ ինև և քոց և քոյոցդ ամենեցուն դարանիս։ — Ո՞ր կատաղիք դժոխոց գրգռեցին զմիտս քո յանհնարին կուրութեան զքեզ պարանեալ։ Ահա զկեանսդ 'ի քեզ դարձոյց որդի քո. մինչ դու յիմարեալ յառաջքան զքոյդ կորուստ, որում զհետն ելեալ էիր, զնորայն կամէիր բառնալ՝ ոչ խնայելով և ոչ յաղիսդ անգամ։ — Կեա՛ց արդ. եթէ յերկնից եղև քեզ պատգամ իջուցանել 'ի դժոխս զազգ քո զպատուեալն ընդ աշխարհ, հրաման քեզ և յինէն. կա՛ց 'ի կուրութեանդ. յաջողեսցեն անմահք ապառում մտացդ, և ջնջեսցի անուն մեր յերկրէ. թող զօրասցին թշնամիք։ Այլ եթէ է 'ի քեզ սիրտ ըստ կերպարանացդ՝ մարդոյ, և յերա-

կունս քո արիւն մերոցս քաջազանց, լեր 'ի միտս: — Ես յայսմհետէ ոչ զգուշացայց կենաց իմոց 'ի քէն և 'ի քոյոցդ. աստէն իսկ արդ եթէ կամիցիս՝ պատահեաց ինձ: Զի եթէ դու կեցցես, 'ի սէգ խորհուրդս յեցեալ, զի՞նչ ինձ պիտոյ է այնուհետև կեանք այսպիսի. ես ո՞ւմ յաղթանակել վաստակեցայց. ազգակցա՞ց իմոց եթէ թշնամեաց: Եթէ մեք մեզէն զմեր անկումն խնդրիցեմք, և 'ի կռիւ ընդդէմ միմեանց կաքաւիցեմք, ես զկեանս այնպիսի քան զմահ չարատանջ՝ ևս դառն համարիմ: Մեք ազգ եմք և ծնունդ Պարթևաց դիւցազանց. մեք կամ որպէս ցարդըն արժանի ազգին մերոյ անուան 'ի քաջակորով արութեան կեցցուք և 'ի համակամ միութեան և 'ի փառս վայելեսցուք, և կամ եթէ ոչ՝ ջնջեսցի և անուն մեր յերկրէ: Զայս կէտ նպատակի եդեալ ունիմ մտացս, և այնպէս աննկուն ընդ քաջացն իմոց հայորերոյն անպարտելի, յաղթական և փառաւորեալ ցայսօր մղեմ զմարտըս, յարուցանել զազգն իմ յանկմանէն փութացեալ: Ահա հրաման քեզ Անակ. արիւն ես Պարթևաց, ազգ իմ ես. կեաց ազատ. եթէ ուղղեցար 'ի թիւր մտացդ, կամիցիս կեալ միախորհուրդ քաջազօր, արիւն իմ ես, կեաց 'ի փառս.

մոռացօնք եղիցին ամի զոր գործեցեր և զոր գործելն փութայիր ։ Այլ եթէ յամառեալ պնդեալ կաս 'ի չարանենգ վատութեան խորհուրդս, արա՛ զոր գիտես. այլ և 'ի միտ առ, զի յայնժամ սատակամահ բարձցիս յերկրէ՝ անարժան անուան ազգիդ և արեանդ. և վասն իմ և ազգիդ ողջոյն վճարեալ է այնուհետև. մտադիւր և մեք 'ի մահ երթիցուք, և մի՛ տեսցուք յահ և 'ի սարսուռ մտաց մերոց մթագնեալ զարև 'ի վերայ մեր ։ — Հա՛պա, զօրականք քաջք, խաղաղութիւն է յայսմ հետէ որպէս յերեկն և յեռանդն, ելէք. պատրաստական կացէք խաղալ 'ի մարտ ընդդէմ նենգաւոր դարանակալին ազգին մերոյ, ժանտին Սասանայ ։ Յայսմ հետէ կամ կեցցուք 'ի փառս, և կամ զաշխարհս՝ վատաց 'ի ձեռն մատնեալ իջցուք մտադիւր 'ի հսկայիցն դժոխս, և կեցցուք ընդ անմահիցն յաւերժականաց արեաց ։

ՇԱԻԱՐՇ

Կեաց մեծդ 'ի թագաւորս, հայր մեր հզօր. և մեք կամակատարք ակնարկութեան քո. յաջողեսցեն դիք քաջազօր բազկիդ ։

ԶՕՐԱԿԱՆՔ

Կեցցէ՛ արքայն մեծ Խոսրով ։

ԱՅԼՔ

Մեռցուք քաջութեամբ 'ի պարծանս քո, արքայդ հզօր։ Երթան։

ԱՆԱԿ

Ամօթ ապարտ ես ամենևին, կարկեալ և ափիբերան լինիմ, զմտաւ ածեալ զիմ չարիս և զքոյդ մտադիւր ողորմութիւն ներող։ Յաջողեսցեն անմահքն խորհրդոց քոց, և ես յայսմ հետէ կամակատար քեզ։ Զարիւնն՝ զոր շնորհեցեր ինձ այսօր, տէր արքայ, վասն քո հեղից յառաջակայ պատերազմիս. վկայ լիցին ինձ երկինք և ամենայն ազատանի տանս Պարթևաց։ Սրբեցից արեամբս իմով զաղտս չարեաց յանձնէս 'ի փառս քո. այժմ ծանեայ զի 'ի դիւաց խարամանեաց խաբեալ պարանեալ կայի։

ԽՈՍՐՈՎ

Քաղցր ակնարկեցին դիք 'ի մեզ, զի փոխանակ արեան հեղլոյ՝ ուղղութի՞ խորհրդոց մերոց եղև. հա՛պա փութասցո՛ւք ցնծութեամբ 'ի կռիւ մարտին։

ՁԱՐԵՀ

Եւ իմ խաղայ արիւն յերակս՝ փոխանակ քաջի արանցդ հեղուլ զնոյն։

ԽՈՍՐՈՎ

Մինչ չև 'ի չու անկեալ բանակին, այսօր 'ի խնդակցութիւն նորոգ ուղղութեան մտաց ամենեցուն, ելցուք 'ի ժողովեալ բանակին, և զհազարապետսն և զհաւնունի նախարարեանն զբազէակիրսն և զբազէակալս և զբարակապանս ընդ մեզ առեալ, ելցուք 'ի միասին 'ի հանդէս որսոյ. և այն գուշակ կացցէ մեզ իբրև զերէոց զջոկս խորտակելոյ և նուաճելոյ զթշնամիս՝ անմահիցն հովանաւորութեամբ: Գնան:

ԵՐԳ

Արշաւեն քաջք յասպար 'ի սուր,
Գոռ մարտադրին դաշինքն 'ի զուր,
Ծախեսցին 'ի հուր:
Վառեալ 'ի զէն 'ի զարդ փառաց
Արիական տոհմք քաջազանց
Ի վրէժ հայրենեաց:
Հապա արիական տոհմք քաջազանց
Ելէք 'ի մարտ գերապանծ:

Զարթեան արիք կուռ քաջալանջ
Ի հայրենեաց վառեալ ճաճանչ
Դիմեալք աննահանջ,

Հըղօր բազկաց պերճ յաղթանակ
Յերկնուստ 'ի ձօն բոլորի պսակ .
'Ի վրէժ հայրենեաց
Հապա արիական տոհմք քաջազանց
Ելէք 'ի մարտ գերապանծ :

Թընդաց երկիր քաջաց 'ի գնացս .
Երկինք առնեն հովանի զաջս
Յարեաց ճեպ ընթացս .
Վաշտք անմահից մեզ մարտակից
Յանշէջ 'ի բոց վառեն զոգիս ,
Յառնեն գիմագրաւ .
Հապա արիական տոհմք քաջազանց
Ելէք 'ի մարտ գերապանծ :



ՀԵՏԻԼԱ.

Տեսարանն է բանակետղ առ դրան Վաղարշապատու. տեղին՝ յորում ողբերգակքն են, է վրանն Խոսրովու երկնագոյն գործած ոսկեթել. ժապաւէնքն և ծոպք ոսկեհիւս մարգարտայեռ. ապաւանդակքն ոսկեման հիւսուած մետաքսեայ. գահ 'ի նմա 'ի կողմանէ՝ ծիրանի ոսկեճամուկ 'ի ծոպսն և 'ի քղանցս ասղնեգործ։ Զէնք և սուսերք յերախակալս ոսկիս ականակապս, նոյնպէս և վահանն՝ քանդակեալ 'ի նմա քաջագործութիւնք Արտաշէսի առաջնոյ։ Ի ներքուստ վրանին՝ իբրև զսիւնս որք 'ի վեր ունիցին զվրանն, պատկերք ձուլածոյք արծաթիք՝ զոսկիս ունելով ամղանս, Հայկայ, Արամայ, Պարոյրայ, Վաղարշակայ։

ՏԵՍԻԼԱ.

ԱՆԱԿ, ԶԱՐԵՀ

—

ԱՆԱԿ

Սակաց ոչ է հաճեալ անձն իմ ընդ հաշտութիւնն։ Քան զմահ դառն է ինձ հաշտել ընդ Խոսրովու։

ԶԱՐԵՀ

ԸնդէՐ հայր. զի՞ մեղաւ քեզ Խոսրով. և երդումն զոր երդուար յանուն դից զքեզ ո՞չ զարհուրեցուցանիցէ։

ԱՆԱԿ

Որ առ երկիւղի երդնուցուն՝ ոչ յուխտս համարեալ է. երդուեալ է իմ Արտաշրի որդւոյ Սասանայ, և ոչ կարեմ ժխտել:

ՁԱՐԵՀ

Զի՞նչ այն երդումն իցէ. անիրաւութիւն է կորուսանել զանպարտն, ընդ նմին և զազգ մի ողջոյն զանպարտական:

ԱՆԱԿ

Այլ իրաւունք են հսկել իւրաքանչիւր բախտի զոր պարգևեցին ումեք դիք:

ՁԱՐԵՀ

Յիշեա՛ հայր, զի յայնժամ և դու և ամենայն տուն քո և ես միանգամայն 'ի կորուստ եղիցուք. զարիւն քո և զազգ առ ոտն հարեալ գտցես:

ԱՆԱԿ

Թող անկցի ազգն իմ. ես կամակատար գտայց անմահիցն, եթէ գուցեն:

ՁԱՐԵՀ

Է, այո՛, արարիչ ամենակալ և արդարադատ. երկի՛ր...

ԱՆԱԿ

Ոչ ուստեք է ինձ երկիւղ. Արտաշիր դիցն խնամօք ել 'ի գահն արքունի. որում և վկայեցին երկինք՝ գուշակեալ ընդ շրթունս Արտաւանայ 'ի մահիճսն մահու զկորուստ թագաւորութեանն. և իմ երդուեալ է նմա խաղաղացուցանել զաշխարհ մահուամբն Խոսրովու, և ընդ անպարտ արեանցն հեղումն յերեսաց երկար պատերազմաց գելուն աղիք:

ԶԱՐԵՀ

Գազանային ցասումն, հայր, կուրացուցանէ զմիտս քո:

ԱՆԱԿ

Ո՛չ այդպէս. ո՛չ ցասումն է որ զիսն գրգռէ, այլ արդարութիւն վառեալ է 'ի միտս իմ. երդումն զոր երդուայ Արտաշրի՝ հանապազ առաջի աչաց իմոց կայ: Դառնացան ինձ կեանք իմ քան զմահ. լոյս ինձ խաւար թուի. մեռայց ես, 'ի մահուանէ ոչ խուսեմ, կամակար յօժարեալ եմ 'ի դոյն, միայն թէ տեսից զԽոսրով անկեալ, զի հաշտ ակամբ հայեսցին ընդ իս անմահ դիք: Տա՛յր ոք ինձ տեսանել զԽոսրով, զի յայնժամ վճարին իրք:

ՁԱՐԵՀ

Իմանայցե՞ս հայր, գիտիցե՞ս զինչ խօսիսդ. ցնորելոյ բանք են ամենայն. անիրաւութիւն երբէք ոչ արդարանայ: Յիշեա զահն և զտադնապ մտացդ 'ի տեսանելքո զսուրն շողալ զգլխովդ. արտասուք իմ զքեզ կեցուցին հայր, ոչ զի զայլս յարևէ արկցես, այլ զի 'ի միասին...

ԱՆԱԿ

Լո՛ւռ լեր, պապանձեա՛ց. դեռ ևս ընդդիմախօս ինձ լինիս. յամառեալ պնդեալ կաս 'ի նոյն բանս: Ահա գնամ ես: Գնայ:

ՏԵՍԻԼ Բ.

ՁԱՐԵՀ

Աւա՛ղ աղետիցս. յանհնարիցն է դմա այլ ևս մերկանալ յինքենէ զանիրաւութիւն: Այլ ինձ ցաւէ յոյժ, զի և ես ծնունդ անօրինի և անզգամ առն կոչեցայց... Ո՞ւր իցես արքայդ Խոսրով. զիա՞րդ ոչ կարացեր պատսպարել զանձն յերեսաց դառն մախանաց հօր իմոյ: Ստուերք մահու շուրջ զինև պարուրին՝ յորժամ զմտաւ ածեմ եթէ Խոսրով մեծ թագաւոր արդարակորով զուզի յարեան

իւրում, ոչ 'ի ձեռաց թշնամեաց ազգին 'ի Ճակատու անկեալ, այլ 'ի սերտ բարեկամէ և յազգակցէ, 'ի հօրէ և 'ի ծնողէ իմմէ. և հայր իմ, ա՛հ, և նա պատառ պատառ կոտորեալ և արեամբ անմեղին հեղձեալ կորուսեալ: Եղո՛ւկ զիս...

ՏԵՍԻԼ Գ.

ԽՈՍՐՈՎ, ԶԱՐԵՀ

—

ԽՍՍՐՈՎ

Ո՞ւր է Անակ հայր քո. կամէի խօսել ինչ...

ԶԱՐԵՀ, Մէկուսի.

"Տակաւին կենդանի է արքայ": Ըզհա՞յր իմ խնդրես տէր արքայ. և նա զքեզ: Մէկուսի. "Այլ ծածկեսցի արեգակն 'ի քօղ թանձրութեան խաւարի, զի մի տեսցեն զմիմեանս":

ԽՈՍՐՈՎ

Հի՞մ տխրեալ թախծութեամբ հեծես. զի՞նչ ինչ պատահեաց... Է՞ր ոչ բարբառիս:

ԶԱՐԵՀ

Զի՞նչ խօսեցայց. լեզու իմ ընդարմանայ. որպէս կրկին շղթայիւք կապիմ կաշկանդիմ:

ԽՈՍՐՈՎ

Կապանք և ոչ մի. բայց է ինչ դարձեալ 'ի միտս քո...

ԶԱՐԵՀ

Անյոյս եղէ և 'ի կենաց, զի ոչ և ս անձին զգամ 'ի ցաւոց սրտիս:

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ բարբառիցիս որդեակ իմ Զարեհ. ո՞չ ապաքէն հաշտեցաւ ընդ իս հայր քո. 'ի գլուխ իւր երդուաւ նա:

ԶԱՐԵՀ

Այլ կասկած երկիւղի տարակուսանաց 'ի միտս իմ տատանէ զիս. ոչ կարեմ հանդարտել այժմիկ. Թո՛ղ ինձ առ այժմ մեկնել աստի: Մէկուսի. "Գնացից առ հայր իմ, և ոչ մեկնեցայց 'ի նմանէ ո՛ւր և երթայցէ. նախ 'ի սիրտ իմ մացէ սուր նորա": Գնայ:

ՏԵՍԻԼ Դ.

ԽՈՍՐՈՎ, ԲՈՒՐՁ

—

ԲՈՒՐՁ

Ըստ հրամանի քո տէր հանդերձեցաւ

պառական և դամք և ամենայն կազմած որսոց ։

ԽՈՍՐՈՎ

Բարւոք է, այսօր իսկ հեծցուք յորս. այլ ոչ գիտեմ ընդէր ցաւագին դիմօք և տխրութեամբ տեսանի ինձ Զարեհ յայսպիսում աւուր ։

ԲՈՒՐԶ

Ի մանուկ տհաս տիս չիք հաստատութիւն մտաց և ընտրութիւն՝ ընդ որ արժան իցէ բերկրել. տխրի, և 'ի տխրականսն զուարճանալ թուի ։

ԽՈՍՐՈՎ

Ոչ այդպէս. Զարեհ ոչ 'ի նոցանէ է զոր դուդ կարծես ։ Եթէ զՊերոզամատէն ասէիր զայդ, էր արդեօք տեղի. թէպէտ և նա ոչ յաննշանից մանկանց է ։ . .

ԲՈՒՐԶ, Մեկուսի.

“Ո՛րպէս հաճեալ հաւանեալ է ընդ Զարեհ. և Պերոզամատ չէ յաչս նորա. ցաւէ ինձ ընդ այս ։ Բայց և ինձ յոչ կամս պարտ է հաճել զմիտս արքայի զի մարթացայց բարեխօսել զՊերոզամատայ” ։

ԽՈՍՐՈՎ

Այո. գուցէ և արդարութեամբ կաս

կածիցէ . . ոչ է արժան անտեսել զբա-
նիւք նորա, որ զխորս սրտից տեսանէ 'ի
մանուկ հասակին խորազնին մտացն հան-
ճարով:

ԲՈՒՐՁ

ՅԱնակայ կասկածիցէ արքայդ հզօր .
և չիցէ տարադէպ երկմտել ընդ գնացս
առնն, և զգուշանալ նմա:

ԽՈՍՐՈՎ

Այլ ես ետու նմա խոստումն անսուտ,
թողուլ զնա ազատ՝ առնել զոր կամիցին .
քանզի զի՞նչ շահ, ո՞ր օգուտ եթէ յին-
քեանս պառակտեալք իցեն Պարթևքն
ամենեքին . անարդիւն մրցմունքն լինի-
ցին: Լաւ իցէ յայնժամ մեռանել . . .
Քանզի ուր թագաւորէ կասկած և երկմը-
տութիւն: հալածական վարեալ է անտի
խաղաղութիւն . անդանօր և ոչ մի ինչ բա-
րեաց ակնկալութիւն:

ԲՈՒՐՁ

Գուցէ գիտուն և տեղեակ իցէ Զարեհ
մտացն Անակայ, և ծածկիցէ՝ ակն ունե-
լով կեցուցանել դարձեալ և զհայրն յար-
ժանահաս պատուհասէն . զի յոյժ հայ-
րասէր բարք են նորա: Զոր ինչ արարն առ
'ի զերծուցանել զհայրն մեղապարտ՝ որ

կենախուզ իւրումն անձին կամէր լինել, գերապանծ գթոցն խայրիք են ։

ԽՈՍՐՈՎ

Այդպէս իցէ ։ Մեկուսի. “Եւ է արդարև գործ վատաց՝ անձնամատն լինել ամենևին, և կամակար լքանել զազգն 'ի թշուառութիւն. ոչ այդպէս. հաւաստել հաւաստեցից, և զՁարեհ յերկևան և 'ի կեղակարծ խորհրդոցն զերծուցից. 'ի խոյզ և 'ի խնդիր մատեայց իմանալ զուղղութիւն մտաց նորա” ։ Ե՛րթ Բուրզ. ասա զի առ իս ելցէ Կոռնակ իշխան սպարապետն ամենայն զօրաց ։ Եւ ապա կամիմ ընդ Անակայ միայն ընդ միայն լինել. բացից զխորս սրտի նորա առաջի իմ անպատրուակ ։

ԲՈՒՐՁ

Հրաման տեառն արդիւնասցի ։ Մեկուսի յերթալն. “Եթէ չիցէ նորա յետս կացեալ 'ի չարանենգ մտացն, խիթալի է մի՛ գուցէ նենգիցէ զարքայ՝ միայն զնա գտեալ ։ Ձիղջ է ինձ զի 'ի պատճառս անկանելոյ յաչաց արքայի Պերոզամատայ քան զՁարեհ, երևեցայ հաւանել ընդ անագորոյն տիրանենգ խորհուրդս Անակայ ։ Արձագանգաց բաղխիւն արդարացի բանից սորա տակաւին հնչեն յունկն իմ. երկըն-

չիմ և զկենաց անձին իմոյ և զՊերոզամա-
տայ, զոր զերծուցի զոգիս 'ի բռին ե-
դեալ: Դիքն անմահք հովանի կացցեն
արշակունեացս զարմին" : Գնայ :

ՏԵՍԻԼ Ե.

ԽՈՍՐՈՎ

Ես իմովսանն ջանացայց հոգալ զփրկուի
գերապանծ ազգին իմոյ. եթէ այդպէս
խոտորնակի իմացաւ, առ ոտն ե հար զիմ
երախտիս, և զներողութեամբ իմով մե-
ծաւ անկուշեաց, ես կացից արդ վերըս-
տին Ճշմարտութեանն 'ի վերայ, և այն-
պէս 'ի գլուխ դաւադրին առանց ներո-
ղութեան դարձուցից զնենգն իւր. և
յայս յետին 'ի բազմավտանգ ալէտանջ
հողմոց ծփմանց զերծուցից զազգն իմ
տագնապեալ:.. Երբէք այսպէս երկփեղ-
կեալ յինքեան 'ի յիշատակս նախնեաց
չէր երևեալ ազգին Պարթևաց. արիւն
վատաց խառնեալ է 'ի ծնունդս մեր:..
Ի սկզբանէ նախնեաց Արշակ և Վաղար-
շակ եղբարք բաժանեցին զթագաւորու-
թիւնն յինքեանս. միաբանք միաշունչք
և ընդ ազգացն որոց իշխեցին, ընդ որս ո-
գեխառնեցան, ցայսօր յանմահ 'ի փառս

պայծառանային: Արդ ամենայն ինչ վեր
'ի վայր շրջեցաւ. Պարսք ինքնակամ 'ի գե-
րութիւն զանձինս ետուն աննշան նեն-
գագործին. այլ և մերքն ինքեանք Պար-
թևք յօժարեցան յանձն առին մտադիւր՝
տեստնել զազգ իւրեանց անարգեալ, ընդ
գետին քարշեալ: Եւ զսա մինչ դեռ կար-
ծէի անարատ 'ի վատութեան խորհրդոց
վսեմական մտաց հանդիպեալ, էհէ՛,
զձեռն յանձին հարեալ տեսի, և 'ի կո-
րուստ ազգին վառեալ պատրաստեալ:..
Գուցէ արդ և ինքն մտաբերեալ սրտա-
ռուչ և 'ի թախիծ նստեալ իցէ ընդ գործս
իւր:.. Այլ Զարեհին սգոյ և ցաւոց կեր-
պարանք զիս անվստահ ընդ զեղջ դորա
առնեն:.. Բայց ո՞ գիտէ, թերևս յիշա-
տակ անցելոց աղետից զնա խռովիցեն.
այն ինչ մազապուր զերծեալ 'ի վտան-
գէն, և անարգեալ յանուն ծնողին իբրև
որդի մատնչի կենաց իմոց՝ ամաչէ իսկ երե
ւելառաջի իմ: Եւ յիրաւի. զուարթուն
մտաց նորա այս խորհուրդ դառն դահիճ
լինիցի արդ յանհնարին տագնապ մտացն:
Այլ իմ թողեալ զնա առ ժամն մոռա-
նալ, գիտեմ ապա հանգուցանել զմիտս
նորա զյուզեալն անպարտ:.. Որ զինչ և
է, պարտ է ինձ իմանալ զխորհուրդս Թա-
գունս Անակայ և ըստ այնմ զգուշանալ:..

Եւ էր յապաղիցէ հասանել այսր Կոռ-
նակ. ես ելից մատեայց 'ի բանակ նորա,
և հրաման տաց նմա 'ի խորհրդականաց
իւրոց 'ի քաջորերոյն զսակաւաթիւս ո-
մանս ածեալ հասուցանել գաղտ 'ի պա-
լատն, և ծածկել ընդ սրսկապանօք սենե-
կիս. և ապա զԱնակ միայնակ 'ի խոր-
հուրդ առ իս հրաւիրեալ, և ձայն 'ի բա-
նակին հնչեցուցեալ՝ իբրև զի յերկրորդի
գահին իմում կամիցիմ զնա նստուցանել,
և թիկնապահ զօրաց իմոց հնազանդելոյ
նմա. զի եթէ ամբարեալ դեռ ևս ունիցի
խորամանկութիւն 'ի սրտին, վստահ ա-
մենայնիւ մատչիցի 'ի դաւն :.. Գիտեմ
պաշտպան կալ անձին, եթէ չարիս զինէն
անդէն խոկայցէ, մինչև յարձակեսցին 'ի
նա քաջքն, և այնպէս ոչ ինչ տեղի այնու-
հետև կասկածանաց գտցի. զի յանխռով
խաղաղութեան զազգն իմ և զաշխարհ կա-
լայց, և զարեացն աշխարհ զերծուցից 'ի
գերութեանն բռնութենէ : Երթայ :

ՏԵՍԻԼ Զ.

ՇԱԻԱՐՇ

Ո՞ւր արդեօք մեկնեալ հեռացեալ իցէ
արքայ. կամէի փութով հանդիպել նմա,

մինչ չև հրաման ինչ նոր զանձնէ Անակայ հանեալ նորա և կամ գիտացեալ: Ա՛հ. Ա-նակ 'ի խորհուրդս յամառուեն պնդեալ կայ: Բա՛ չիք հնար. միումն 'ի սոցանէ պարտ է իջանել առ Պղուտոն. և երկո-քին Պարթևազունք:.. Ինձ լաւ ևս իցէ կեալ եղբօրն իմոյ, որ և ինձ փառս պատ-րաստեսցէ. այլ անիրաւութիւն մեծ... Ա՛հ. աղաչէ զիս, պաղատի մի լքանել զեղ բայր իւր՝ խնայելով յօտարն. 'ի յու-սահատ խորհուրդս կայ. սակաւիկ միւս ևս և ինքնին անձամբ անձին մատն լինի-ցի:.. Վստահացեալ 'ի սէր Զարեհի՝ եր-թեալ յայտնէ նմա այս երկրորդ անգամ զխորհուրդս դաւանացն. կարծէ գտա-նել օգնութիւն յարդարակորով մանկա-նէն: Որ մթագնեալ զաչսն ունի, և զայլս 'ի նմին կարծէ խաւարի:.. Լուայ զի Զարեհ անդէն առ նմին երթեալ խօսե-ցեալ է ընդ արքայի, և յետ այնորիկ 'ի կոծ թախծութե՛ յիւրում վրանին ծած-կեալ կականաւ ողբայ զանձն և զհայրն: Արքայն յալեկոծ խորհուրդս... ո՞ւր արդեօք իցէ արդ. կամ էր ինձ իմանալ եթէ յայտնեա՞լ իցէ հաստատութիւն մտացն Անակայ, և տալ զբօթն Անակայ զի աճապարեալ անյայտասցի. ապա թէ չև իցէ բանն 'ի վեր ելեալ, հնարիմաց

Ճարտարութեամբ վստահ առնել զթա-
գաւորն ընդ արդար միտս Անակայ ։
Քանզի եթէ չիցէ ևս յայտնեալ ցարդ,
սակայն ոչ կարասցէ անշուշտ Զարեհ
ընդ երկար 'ի Թագստեան ունել զբանն
առ կասկած երկիւղին վասն կենաց Թա-
գաւորին. զի և տխուր կերպարանք նորա
և հառաչանացն հեծութիւն՝ որով միշտ
երևեսցի առ արքայի, ինքնին մատն լինի-
ցին դաւոյն ։ Պարտ է զառաջս առնուլ
վերահաս չարեացն, մինչև ժամ առնու-
ցու Անակ 'ի գլուխ զդաւն հանել ։

ՏԵՍԻԼ Է.

ԽՈՍՐՈՎ, ՇԱՒԱՐՇ

—

ԽՈՍՐՈՎ

Ա՞ստ իցես Շաւարշ ։

ՇԱՒԱՐՇ

Հրամանի տեառնդ կամակատար ։

ԽՈՍՐՈՎ

Խնդրէի զԿոռնակ ասել ինչ նմա, և
լուայ զի արտաքոյ 'ի մեծ բանակն գնա-
ցեալ է, և առաքեցի կոչել. և զքէն լուայ
մտեալ առ իս ասել ինչ. որո՞ց բարեգու-

շակ լրոց բանբեր եկեալ իցես ։

ՇԱՒԱՐՇ

Տէր արքայ, Անակ . . .

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ բանք են զԱնակայ . կայցէ հաւատարիմ՝ի խոստմանն ։

ՇԱՒԱՐՇ

Այո, տէր արքայ ։ Այլ զի յամօթոյ և 'ի պատկառանացն ընդ անձին ոգորի . ոչ գիտէ ո՛րպէս երևել յանդիման և տեսանել զերեսս արքայի . և զի ասէ, Անշուշտ արքայ անվստահ իցէ յիս յայսմ հետէ . վասն որոյ խնդրէ պաղատի զայս շնորհ 'ի քէն ։

ԽՈՍՐՈՎ

Զի՞նչ այն շնորհ է զոր յինէն խնդրիցէ . արարից նմա զամենայն, միայն եթէ հաւատարիմ յայսմ հետէ կացցէ հաստատուն յիրաւունս խոստմանն ։

ՇԱՒԱՐՇ

Շնորհն զոր թախանձէ 'ի քէն Անակ, արքայ, այս է՝ զի հանցես 'ի նմանէ զըսպարապետութիւն բանակին, և տացես նմա զսակաւաթիւ իմն գունդ քաջաց, զի

այնպէս առանձինն դիցէ զանձն իւր 'ի վերայ կենաց արքայիդ հզօրի և ազգիդ Արշակունեաց : Եւ դարձեալ զի անդէն առ նմին փութով մեկնեսցի աստի, և մի՛ երեւեսցի 'ի հանդիսի որսոյն. զի լաւ է ինձ, ասէ, ընդ գետին կենդանւոյն մտանել, քան առ արքայի այնպէս մեղապարտ երևել:

ԽՈՍՐՈՎ

Արդա՞ր ասացեր զամենայն :

ՇԱՒԱՐՇ

Եւ բան մի 'ի բանից նորա ոչ սխալեաց ծառայքո :

ԽՈՍՐՈՎ, Մեկոսի.

“Ես 'ի քնին զհաւատ նորա մատուցանել փոյթ 'ի մէջ առեալ էի. զի՞նչ քան զայս ինքնադատ խոստովանութիւն առաւել կայցէ ինչ 'ի հաւաստիս ճշմարտութեանն :.. Այլ մի՞ եթէ կեղծիցէ. և զգունդն առեալ՝ առ թշնամին անդր 'ի բաց ելցէ... ո՛չ. այդ անհնար իմն է. զի զի՞նչ անտի օգուտ անձին և վնաս թագաւորութեանս :.. Արդ եթէ թողից նմա առնել զոր խորհին... ապա ոչ ինչ չարիք են 'ի միտսն” :.. Ոչ այդպէս. ես 'ի հաւատարմութիւն նորա և յանմահսն

տեսուչս՝ յորոց 'ի ձեռս է կեանք և մահ, որպէս և ասացի նմա յուշարար բանիւք, յանձն առնեմ զբաղդն իմ: Իմ արքայի հրամանք են. կեցցէ նա սպարապետ զօրացն, զօրութեամբ երթեալ և փառօք դարձցի. և սրբեսցէ զարատ յանցաւորութեանն: Այլ և զի ըստ ուխտին իմոյ որ ընդ նմա, եթէ նա հաւատարիմ իցէ 'ի դաշն՝ ես, ոչ ևս յիշեցից զանցեալսն: Կեցցէ նա ընդ իս և առ իս որպէս յերեկն և յեռանդ. Թող եկեսցէ յորս, մի ինչ պատկառեսցէ. զբօսեսցուք 'ի միասին. ամենայն անցեալքն ընդ մոռացութեամբ կնքեսցին: Եւ 'ի վաղիւն անկցի յուղի բանակն. զայս այսպէս հրամայեմ անդարձ:

ՇԱՒԱՐՇ

Կատարեսցի հրաման տեառնդ: Մեկուսի. "Որպէս յաջողեցաւ խորամանկ խորհրդոցս":

ՏԵՍԻԼ Ը.

ԽՈՍՐՈՎ

Արդ ամենայնիւ աներկմիտ եմ ընդ ուղղութեամբ դարձն Անակայ. ընդ վայր ուրեմն 'ի տատամսութեան և յերկիւղի

տագնապէի. յաջողեցին մեզ անմահք. և փայլատակունք յարձակեցան առ մեզ անշանթք. այս գուշակ մեզ կացցէ և յաջողութեան, և լրումն առնելոյ յաղթութեանս յառաջիկայ կռիւս:

ՏԵՍԻԼ Թ.

ԽՈՍՐՈՎ, ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ի ՃահԿ և 'ի դէպ յաջողեաց ինձ տեսանել զարքայ. քանզի Զարեհ միայնակ ողբս 'ի բերան առեալ շրջի խնդրէ զԱնակ զհայր իւր, զվասն էրն ոչ գիտեմ. հարցի նմա և բազմօք Թախանձեցի, այլ ոչ ինչ խօսեցաւ ընդ իս:

ԽՈՍՐՈՎ

Պարտ է սփոփել զմանուկն. քաջ իսկ ծանեայ զնորա պատճառս Թախծութեանն. ընդ անարգութիւն գործոց հօր իւրոյ յուզին միտք նորա. և զի դարանակալի կենաց իմոց երևեցաւ ինքն որդի: Այլ յանցանել աւուրց մոռասցի. ես սփոփեցից զդառնացեալ միտս նորա:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ այժմ որպէս թէ և մահու հօրն փափաքիցէ, ցանկայ զի մի՛ յապաղեսցէ Անակ 'ի պատերազմն ելանել։

ԽՈՍՐՈՎ

Եւ այնր պատճառք ոչ ինչ զանխուլ են յինէն. քանզի կամի եթէ գոնեայ նորոգ քաջութեամբ սրբել զարատն յանձնէ՝ թէ հնար ինչ է, կարասցէ Անակ. զի և զիս սիրէ առաւել քան զառաւել, և գուն գործէ զի ինձ ևս յաջողեսցի, և վաղվաղակի բեկանիցին թշնամիք. վասն այսորիկ սէր ընդ սիրոյ պատերազմ յարդարեն 'ի միտս նորա, և այնու խռովեալ է։ Արդ հասից ես առ նա, և ապա 'ի միասին...

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Եւ ո՞ւր ապա 'ի միասին երթայցէք։

ԽՈՍՐՈՎ

Յորս ընդ Անակայ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Խիթամ ես ընդ Անակ։

ԽՈՍՐՈՎ

Վայրապար խիթաս։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Այլ ոչ թեթևութեամբ ինչ:

ԽՈՍՐՈՎ

Շատ է արդ. մի գուցէ այլ ոք զոր ճանաչիցես խորհիցի ինչ չարիս, և անուամբ Անակայ զնոյն քօղարկես:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Քա՛ւ յինէն խորամանկել ինչ հակառակ ազգակցին իմոյ և Թագաւորի:

ԽՈՍՐՈՎ

Եւ էր ազագաւ զայլոց գուշակ լինիցիս:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Զփրկութիւն քո խնդրեմ. զի զոր պատահելոցն է քեզ, որպէս 'ի պատկերի նկատեմ:

ԽՈՍՐՈՎ

Եւ դո՞ւ խորհրդակից իցես չարեացն, զի ճարտար գիտիցես զոր խորհին:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Օ՛ն անդր. մի՛ արասցեն դիք զի ես այդու յիմարութեամբ վարակիցիմ:

ՏԵՍԻԼ Ժ.

ԲՈՒՐՁ, ԽՈՍՐՈՎ, ՊԵՐՈՁԱՄԱՏ

—

ԲՈՒՐՁ

Եկն այսր Անակ. և ես եկի հարցանել եթէ և Զարեհ գնայցէ ընդ արքայի յորսս:

ԽՈՍՐՈՎ

Եւ ընդէր ոչ. եկեսցէ և սփոփեսցի փոքր մի:

ԲՈՒՐՁ

Մի՛ գուցէ տխրութեան կերպարանօքն յուզեսցէ զմիտս արքայի, և Անակ ամօթ կրեսցէ 'ի պատճառս նորա:

ԽՈՍՐՈՎ

Մի՛ ինչ կասկածեր. զի առաւել քան 'ի Վարդգէս յերէց որդի իմ՝ վստահ եմ ես 'ի նա, զի ոչ ինչ յանպատշաճիցն գործեսցէ:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Զայդմանէ վկայեմ և ես. այլ ընդ Անակ...

ԽՈՍՐՈՎ

Զի՞ քրթմնջէք ընդ միմեանս, և զհայր և զորդի միանգամայն թշնամանէք յոր-

ժամ ոչ ինչ գիտիցէք ստուգութեամբ։
Թողէք 'ի բաց զխօսս երկպառակութեան։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՇԱՒԱՐՇ, ԲՈՒՐՁ, ԽՈՍՐՈՎ, ՊԵՐՈ-ՁԱՄԱՏ

—

ՇԱՒԱՐՇ

Ակնկալեալ սպասէ Անակ գալստեան մեծի Թագաւորիդ. և ամենայն ազատանին և նախարարք անցեալք 'ի հանդէս, պատրաստք ամենայն ազգի ազգի կազմածովք, հեծեալք յորս, եկեալ հասեալ կան 'ի դուռն քաղաքիս։

ԽՈՍՐՈՎ

Ելցուք. յառաջ անցցէ որեարդ հուր վառել շուրջանակի զշամբիւն։ Յերթալն. Այսօր նախճիրս որսոց կոտորեսցուք 'ի զուարթ բերկրութեան։ Ի Թագաւորութեան և յաշխարհիս իմում բարձր 'ի գլուխ պսակաւոր գահակալեսցեն ինև և ընդ իս՝ միաբան սէր և փառք քաջաբազուկ արութեան, զաջ խաղաղութեան տուեալ միմեանց։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԲՈՒՐՁ, ՊԵՐՈՁԱՄԱՏ

—

ԲՈՒՐՁ

Աղմկեալ իմն են արքն Անակայ. այլ...

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Գիտեմ զի Անակ չարիս խորհի 'ի վերայ արքայի. խնամք դից պաշտպանեսցեն նմա:

ԲՈՒՐՁ

Խօսեցաւ ընդ իս յերկար սուղ ինչ յառաջ, այլ ոչ ինչ հաւաստիս պատմեաց: Այլ դու տարապարտ սիրով կապեցար ընդ Զարեհի. առ ոտն հարեր զփառս քո և զվաստակս, և Ճգանց իմոց ընդդէմ կացեր. և...

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՁԱՐԵՀ, ԲՈՒՐՁ, ՊԵՐՈՁԱՄԱՏ

—

ՁԱՐԵՀ

Ձեռն տուք արքայի:

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Զի՞նչ պատահարք իցեն:

ՁԱՐԵՀ

Անակ հայր իմ . . ո՛հ, ոչ հանդարտեմ. ելէք'ի դուռն մեծ քաղաքիս . անդ Անակ ընդ արքայի . . .

ԲՈՒՐՁ

Զի՞ տագնապիցիս . ո՞չ շատ է քեզ զի ոտնհար լինելով արքայի, և տակաւին յապահովս իցես :

ՁԱՐԵՀ

Աղաչեմ զձեզ տեարք, ձեռն ինձ տուք. ելէք առ արքայ պաշտպան կալ կենաց նորա, որ զաջ տուեալ Անակայ'ի միասին յուղի անկեալ մեկնեցան . և զի ես և ս կամէի կալ առ արքայի՝ մերժեաց զիս սպառնալեօք հայր իմ, և'ի ձեռն արբանեկաց իւրոց եհան զիս անտի : Եղո՛ւկ զինև . . . արքայ Խոսրով հայրագութ թագաւոր, այժմ իսկ . . .

ՊԵՐՈՁԱՄԱՏ

Գնացից տեսանել, և եթէ հնար ինչ իցէ օգնել արքայի, կամ թէ անդէն անկանել'ի սուր'ի վերայ մեծաղօրն Խոսրովու : Կամի երթալ :

ԲՈՒՐՁ

Հանդարտ լեր . յիրաւի պատահեցին

նմա, զի ոչ կամեցաւ լսել ինձ :

ՁԱՐԵՀ

Հայր իմ Անակ. Արքայ սիրեցեալ... Աղաչեմ զքեզ իշխանդ Բուրզ, խնայեա 'ի կեանս արքային մեծի և յաշխարհս. փութա՛ վաղվաղեա. աշտանակեա 'ի ձի սրընթաց. հա՛ս առ արքայ, և մի՛ մեկնեսցիս 'ի հետոց նորա. զի անշուշտ 'ի մայրիս անդ արքունի պատահել արքայի փորձ փորձեսցէ նա :

ԲՈՒՐՁ

Այլ ես ասացի արքայի մի՛ հաւատալ զանձն նմա :

ՁԱՐԵՀ

Փութա աղաչեմ. չէ ժամանակ յապաղանաց. քանզի Անակ աճապարէ 'ի գործն, երկուցեալ զի մի՛ 'ի յամելն 'ի խռովայոյզ միտսն և յայլափոխ կերպարանսն առ արքայի, տացէ տեղի երկուանաց արքայի. գուցէ և ոչ սպասեալ մնասցէ առնելոյ սկիզբն որսոյն :

ԲՈՒՐՁ

Երթայց առ հաճել զմիտս քո. սակայն ես ոչ կարացից հասանել զհետ երագընթաց արշաւասոյր գնացից արքայի, որ յամենայնի սիրէ զաշխոյժս ճեպընթաց վազից : Սկսանի երթալ :

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Սիրտ իմ'ի թնդոջ կայ, և ոչ տևեմ բա-
ւեմ կալ աստէն: Կամ էրթալ:

ԲՈՒՐՁ, Դառնայ յէպս.

Ոչ, կա՛ց. մի խլրտեսցիս ուրեք: Գնայ:

ՏԵՍԻԼ ԺԴ.

ԶԱՐԵՀ, ՊԵՐՈԶԱՄԱՏ

—

ԶԱՐԵՀ

Ա՛հ. որպիսի՛ անհնարին աղէտք հաս-
ցեն 'ի վերայ աշխարհիս՝ եթէ յաջո-
ղեսցի Անակ 'ի դաւն. քնաքարձ կորի-
ցուք և մեք յերկրէ:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Մի՛ այդչափ'ի յուսահատ խորհուրդս
դարձեալ զանձն քո արկաներ, սիրելիդ
Զարեհ. գուցէ տեսեալ Անակայ զխոսրո-
վայ զներողամիտ բարսն, և եթէ ո՛րպէս
անյիշաչար լեալ՝ ունի զնա դարձեալ ընդ
սիրելիս իւր, խոտորիցի և ինքն'ի խորհր...

ԶԱՐԵՀ

Ձի՛ք, քաջդ Պերոզամատ, չի՛ք այսու-
հետև յոյս ակնկալութեան դարձի նորա.
զի ես ոչ ինչ ոչ պակաս արարի առ շրջել

զնա յետս 'ի մահահրաւէր խորհրդոց մտացն: Արբեալ է 'ի կրից, և ոչ այլ ինչ տեսանէ յանդիման աչաց՝ բայց միայն զխոսրով դիակնացեալ յիւրոց անօրէն ձեռացն. զօր ամենայն 'ի միտս և 'ի խորհուրդս, 'ի սրտին, յաչս, յամենայնի զխոսրով նկատէ 'ի մահ տարածեալ. և 'ի միայնութեան իւրում զամենայն ինչ որ ընդ առաջ լինի աչացն՝ 'ի սայր սուսերի հարկանէ, զխոսրով կարծելով հարկանել. նաև 'ի մահիճս քնոյն յանկարծ ընդոստ 'ի վեր վազեալ համարի յարձակել 'ի խոսրով:

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Յորպիսի՛ յետսամիտ խորհուրդս յեցեալ կայ:

ԶԱՐԵՀ

Եթէ զերծեալ այսօր տեսից զխոսրով 'ի ճիրանաց կրից սորա, չէ և չէ հնար, ես պարտիմ բանալ առաջի խոսրովու զճշմարտութիւնն և աղաչել զնա զի իբրև 'ի հիւանդութենէ կալեալ զհայրն իմ գրեսցէ, և խնայեսցէ 'ի կեանս նորա, դնելով պահս զգուշութեան 'ի վերայ նորա, տուեալ նմա վայր առանձին՝ կալ նմա անդէն իբրև յաքսորանս 'ի միայնութեան. գուցէ յանցանել ժամանա-

կաց մտաբերեալ փոխեսցի յանպատեհ 'ի չար կամացն ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Քաջ է խորհուրդդ . յառաջագոյն պարտ էր քեզ'ի դոյն յորդոր մատչել առ արքայ ։

ԶԱՐԵՀ

Կարծէի հեղեղաւ աղի արտասուացս կակղել զխստութիւն սրտի նորա ։ Այլ այսօր իսկ աստէն 'ի դարձին յորսոյ ցուցից արքայի զամենայն , և այնչափ արտասուս հեղից , մինչև լուիցէ ինձ արքայ ։ Ա՛հ . կամիմ ես և զփրկութի՞ հօրն իմոյ . մոլորեալ է , այլ հայր իմ է . 'ի չարիս ծընգի , սակայն հայր իմ է . 'ի նմանէ ընկալայ զայս կեանս ։ Վա՛շ , եթէ կարէի կեցուցանել և 'ի միտս զնա դարձուցանել . անշուշտ եմ զի լուիցեն անմահք ուխտի սրտին իմոյ , և պատառեսցեն զառագաստ կուրութեան 'ի մտաց հօրն իմոյ ։ Դիւրին է առ Աստուծոյ ամենայն . և ես երբէք ոչ անկայց 'ի յուսոյ հանդիպել մխիթարութեան . ոչ ես միայն , այլ ընդ իս և աշխարհս ողջոյն , վայելելով 'ի մշտընջենաւոր խաղաղութեան ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ամենայն խորհրդոց քոց յաջողեսցեն անմահք ։ Լսի աղաղակ և դղրդիւն ։

ԶԱՐԵՀ

Զի՞նչ այս շփոթ աղմկի ։ Տագնապեալ այսր անդր ընթանայ ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Մի՞ արդեօք յանկարծ թշնամիք յարձակեալ իցեն 'ի քաղաքս ։

ԶԱՐԵՀ

Ահաւասիկ խուճապեալք զմիմեանս կոտորեն ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Ի բանակետղս մտին ։

ԶԱՐԵՀ

Մի՞ գուցէ և այսր հասցեն ։

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Զի՞ կամք . մատիցուք ձեռն տալ ։ Կամ երթալ ։

ԶԱՐԵՀ

Ո՛չ ևս անձին զգամ ես ։ Զի՞ եղև . Զի՞նչ տեսանեն աչք իմ . արքայ կիսամահ այսր . . . Ո՞ չար պատահար . . .

ՏԵՍԻԼԺԵ·

ԽՈՍՐՈՎ, Ի Գիրկս արանց զինուորաց· ԲՈՒՐՁ, ՊԵՐՈՁԱՄԱՏ, ՁԱՐԵՀ

—

ԽՈՍՐՈՎ

Ա՛Հ· 'ի հնարիմաց հանճար մտաց իմոց վստահացեալ խաբեցա՛յ···

ՁԱՐԵՀ

Եղո՛ւկ զիս· և վայր մի ևս, արքայդ հը-զօր, ոչ կարացեր զգոյշ կալ յԱնակայ· զի ես յայնմհետէ վահան ամրութեան լինէի կենացդ· ո՛ դառն հարուած: Լայ:

ԽՈՍՐՈՎ

Եւ ես չիցեմ բաւական 'ի գլուխ նեն-գաւորին դարձուցանել զհարուածն:

ՁԱՐԵՀ

Հա՛պա երագեսցուք 'ի դարմանն:

ԽՈՍՐՈՎ

Վ՛ճարեալ է վասն իմ ամենայն: Եւ չի-ցէ՞ չափ չարանենգ ոխակալութեան:

ԶԱՐԵՀ

Տէր արքայ Ընթանայ առ նա. գնա՛ս 'ի մէնջ. աւա՛ղ ինձ եղկելւոյս. Թողո՞ւս զիս. ի՞բր ոչ կարացի...

ԽՈՍՐՈՎ

Նենգաւ արշակունեաւ զրաւեցայ 'ի կենաց:.. Ո՛չ պատկառեաց անօրէնն, ցայս վայր յանդգնեցաւ... զարեանն կը-ցորդութիւն, զօրէնս բնութեան և զեր-դումն և զուխտ առ ոտն եհար... Որ-դեա՛կ Զարեհ, մի՛ գրեսցիս յազգ Անա-կայ. զի նոքա 'ի դից և 'ի մարդկանէ հա-լածեալք... և բնաբարձ ջնջեսցի՛ ազգն Անակայ... կորիցէ՛ անօրէնն տոհմիւն... Զօրականք ոմանք երթան մերկացեալք զսուսերս:

ԶԱՐԵՀ

Եղո՛ւկ զինև: Մէկուսի. "Շնո՛րհ մեծ. այլ իմ առաջի յոյժ նուազ թուի:.. Դու երթա՛ս տէր իմ, և ա՛զգ իմ բարձցի... Ա՛յր գազանամիտ... զի՞նչ խօսիմ ես. ո՞չ հայր իմ է նա... Մա՛յր իմ և եղբարք սիրեցեալք, և նոքա՛... Հա՛-պա հարցեն և զիս... Ի լալ հարկանի:

ԲՈՒՐԶ

Պակուցեալ 'ի պատահարէս՝ յահի լի-նիմ. ողո՛րմ աեսիլ:

ԽՈՍՐՈՎ

Մի՛ խնդասցէ Արտաշիր . . . անիրաւութեամբ գահակալեաց , անիրաւութիւն գտցէ զնա . . . Ահա մեռանիմ ես . միտք իմ առ իս են . . . արդարութեամբ գործեցից զամենայն և ոչ մոլեգնութ՚ի : . . Արդարութիւն յանիրաւաց վրէժ խընդրէ . . . ապա կեցցէ Զարեհ որ առաւել քան զհայրն սիրեաց զիս , և քան զիմ որդիս . . . Որդեա՛կ Զարեհ , մի՛ այդչափ ընդ միտ տանիր . . . շնորհեցի քեզ զկեանսըն . . .

ԶԱՐԵՀ

Այլ ես ո՞ւմ կեցից , Թողեալ լքեալ յամենայն մերձաւորաց . Լայ : . . Հարէ՛ք . պատահեցէ՛ք և ինձ . ընդէր զերծայ ես 'ի հարուածոյ դաւաճան առն . . .

ՊԵՐՈԶԱՄԱՏ

Տխրագի՛ն տեսարան . ահա և ես 'ի Թախծութ՚էս անկանիմ ցաւաբեկ սրտառուչ ընդ սիրելիսն իմ . ընդ մին որ 'ի մահ գնայ , և ընդ միւսն որ կիսամեռ յոտին կայ . Լայ : Ա՛հ հարուած դառն :

ՏԵՍԻԼ ԺԶ.

ԶԻՆՈՒՈՐ ՄԻ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ ։

—

ԶԻՆՈՒՈՐՆ

Յարեան իւրում հեղձաւ Անակ տէր արքայ. և Շաւարշ և ամենայն ազգատոհմ նորա ըստ հրամանի քում բնաջինջ բարձցի յերկրէ ։

ԶԱՐԵՀ

Ո՛վ սիրելիք իմ.. ո՛վ ազգ իմ և հարազատք. մեռա՞յք. 'ի սպա՞նդ վարեցայք... Ա՛հ. և զիս հարցեն... ազգ եմ Անակայ ։

ԽՈՍՐՈՎ

Մի՛ որդեակ... դու կացցես յաշխարհի... արդարութեան իմոյ.. և գթութեան նկարագիր... կե՛աց դու...

ԶԱՐԵՀ, Լալագին

Զիա՞րդ կեցից. մեռանիմ 'ի ցաւոց. դառն հրաման կենաց... Հարազա՛տք.. եղբա՛րք սիրունք. արքա՛յ Խոսրով...

ԽՈՍՐՈՎ

Արդ քաղին ոգիքս իմ... շունչ...

իմ . . սպառեցաւ . . . Մատիր . . այսր . . որ . . .

ԶԱՐԵՀ, Լալագին.

Անշնչացար մեռա՞ր արքայ: Դու արդար ես. այլ և ազգ իմ բնաջինջ. և ես կեցի՛ց. Է՞ր արգելեր զմահ իմ ընդ սիրելեացս: Ո՞ւմ կեամ. այլ կշիռ արդարադատ հատոյց և հատուսցէ զարժանն. և իմ քաղի՛ն ոգիք:

ՁԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ:



ՍՄԲԱՏ ԱՌԱՋԻՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Բ.

[illegible]

[illegible] 1846

1936 - [illegible]

ՑՈՅՑ

Արքայն Սմբատ առաջին բագրատունի որդի Աշոտոյ մեծի, առաքինութեամբ գերափառ, առեալ յԱստուծոյ զամենայն պարգևս որովք ճոխանալ արժան իցէ առն թագաւորի, և ամբարձեալ 'ի գահն, ակընկալութիւն մեծ էր եթէ բարեզարդեսցի աշխարհն խրթնացեալ 'ի չարիս իւրոցն և օտարաց. այլ տգիտութիւն՝ անհաշտ ոսոխ ճշմարտութեան, ոչ ինչ հնազանդեցաւ ուղղութեան խրատուց, և զխաղաղասէր թագաւորն յար յանձուկս և 'ի վիշտս տագնապէր. մինչև սիրելեաց արքային և իշխանաց նորա երախտաւորելոցն 'ի նմանէ հակառակ նմա սուր վերացուցանել:

Եւ յայս մի նուագ և Ատրներսէհ թագաւորմիոյ մասին աշխարհին Վրաց՝ որում յամենայնի ձեռն տուեալ, զօրացուցեալ և թագ կապեալ էր նա ինքն Սմբատ, ոխա-

Հայաստանի
Պատմամատ
Հաշտոյ
Հաշտեցող
590-2007



Mtz. Nultsmüle Elemptung

Antonio Conte inc.

Lq 137

ցեալ ընդ նմա վասն ազատ արձակելոյ նո-
րա զԿոստանդին Թագաւոր Եգերացւոց,
զոր կալեալ Ատրներսէհ 'ի պատերազմի և
առաքեալ էր Սմբատայ 'ի պարգև. և գըր-
գռեալ ևս 'ի Սուրենայ որդւոյ Հասանայ
Արծրունւոյ 'ի վրէժ քինու աչաց հօրն,
զոր կալանաւորեալ Աշոտ արծրունի տէրն
Վասպուրականի, կուրացուցեալ էր՝ պատ-
ճառս առեալ զերդմնահարն լինել նորա յա-
նուն Աստուծոյ առ 'ի դառնալ 'ի հաւա-
տըս: Միաբանէ ընդ իւր և զայլ ևս նա-
խարարս հնգետասան 'ի խորհուրդ դա-
ւադրութեան: Այլ արդարախոհ հեզահամ-
բոյր արքայն անխռով իբրև 'ի ձեռանէ Ա-
տուծոյ ընկալեալ զամենայն վիշտս տառա-
պանացն երկայնամտէ:

ՈՂԲԵՐԳԱԿՔ

ՍՄԲԱՏ	Արքայ Հայոց:
ԱՇՈՏ	Որդի Սմբատայ:
ԱՏՐՆԵՐՍԷՀ	Կուրապաղատ և Թագաւոր Վրաց:
ՎԱՀՐԱՄ	Հազարապետ արքայի. այն է Հասան Հաւնունի:
ՍՈՒՐԷՆ	Որդի Հասանայ արծրունւոյ:
ՀՐԱՀԱՏ	Խնամակալ Սուրենայ:
ԱՐԲՈՒՆ	Իշխան:
ՇՄԵՐԴ	Նախարար:
ԶՕՐԱԿԱՆՔ	

Ի ՁՈՐՆ ՄԱՄՐՈՒԱՆԻ որ 'ի Տայս. 'ի Բանակետղ արքային Սմբատայ:

ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 907

ՍՄԲԱՏ ԱՌԱՋԻՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է վրան արքային Սմբատայ՝ ծիրանի շքեղաշուք ճամկաւոր. դրօշք կանգնեալք 'ի միջի աղեղնաւոր խաչանիշ, և զէնք և սուսերք և ասպարք պաճոյճ փաղփաղեալք առ փեղկօք վրանին: Առ երի գրակալ ոսկի արուեստակեալ, յորում աւետարան ոսկեհուռն ականակապ կողիւք, և խաչ մարգարտայեռ:

ՏԵՍԻԼ Ա.

ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ, Յերկուսաբէտ հանդէպ վրանին ընդառաջ էլանէն միմեանց:

ԱՇՈՏ

Օ՞ՆՁ խորհիցիս, հայր, ամենեքին ընդ Ատրներսեհի և ընդ Վահրամայ զզէնսըն 'ի բաց եդեալ՝ պաղատին գթութիւն:

ՍՄԲԱՏ

Հրաման ետու դադարեցուցանել ըզ-

հարուածն . արդ առաքեցից զՍուրէն առ ընկճեալ դաւադիր ապստամբսդ , զի Ատրներսէհ և Վահրամ ելցեն այսր առ իս մտանել ընդ նոսա ուխտ , դադարել յընդվայր յուզելոյ . ա՛հ , ես ունէի զդոսա առ սիրելիս իմ : Առ զօրականս . Առ իս Սուրէն : Երթան երկուք 'ի զօրականաց :

ԱՇՈՏ

Այլ եթէ նոքա 'ի յուսահատ խորհուրդըս յարձակիցին 'ի վերայ քո , տէր արքայ . վտանգ է կոչել զնոսա այսր առաջի քո առանձին :

ԱՄԲԱՏ

Ես 'ի մահուանէ ոչ զանգիտեմ, որդեակ Աշոտ . եթէ նոքա յուսահատք իցեն 'ի կենաց , իմ յոյս հաստատեալ է յԱստուած . եթէ ազգն ոչ ճանաչէ զիւր ընտրութիւն , և ոչ կամի վայելել 'ի բարութեան , այլ մեծաւ մասամբ հաճ և հաւան է կալ յիշխանութեան ամիրապետին և ոստիկանին Յուսփայ , և զիմ թագաւորութիւն համարին 'ի վնաս անձանց , և եթէ այսպէս ինձ պարտ իցէ ելանել յաշխարհէս , ես ոչ հրաժարեմ . . .

ԱՇՈՏ

Այլ զբարին զոր սկսաւ առնել Աշոտ

հաւն իմ բարեսէր, ո՞չ կամիս, հայր սի-
րելի, զնոյն արդիւնացուցանել՝ որչափ
'ի ձեռս է քո:

ԱՄԲԸՏ

Այո. և ես յայն յամենայն սրտէ դէտ
ակն կալեալ եմ:

ՏԵՍԻԼ Բ.

ՍՈՒՐԷՆ, ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ

ՍՈՒՐԷՆ

Ըստ ակնարկութեան տեառնդ աւա-
սիկ կամ:

ԱՄԲԸՏ

Սուրէն որդեակ, ըստ համոզկեր ընտել
բարոյիցդ գնացեալ առ ընկճեալ գուն-
դըն անօրինաց, որք ակնկալեալ մնան պա-
տասխանւոյ հայցուածոց իւրեանց՝ հան-
դիպելոյ ներողութեան, ասասցես, զի
ոչ ահա միայն ըստ բազմաթախանձ խըն-
դրուածաց նոցա դադարեցուցի 'ի զօրաց
իւրեանց զհարուածն, այլ և կամիմ զի 'ի
բաց զզէնսն եդեալ Ատրներսէհ և Վահ-
րամ ելցեն առ իս, և լինիցի նորոգ խաղա-
ղութիւն 'ի միջի. զի մի ազգ եմք ամե-
նեքին և մի միաբանութիւն. ներեցի ես

նոցա զվրիպական կարծեաց նոցա զգըր-
գռութիւն մտացն ։

ՍՈՒՐԵՑ

Արարից զամենայն որպէս հրաման ե-
տուր, տէր արքայ ։ Յերթալն մեկուսի.
“Այլ ինձ ցաւէ յոյժ զի այդպէս ընկ-
ճեցան դոքա, և արդար վրէժխնդրութի
կորստեան աչաց հօրն իմոյ Հասանայ ոչ
լրացաւ” ։

ՏԵՍԻԼ Գ.

ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ

ԱՇՈՏ

Հայր իմ մեծարոյ, եթէ ներեսցես հա-
մարձակութեան բանիցս, այդպէս լիա-
ձեռն ներումն շնորհեալ ապերասան այ-
դոցիկ որերոյ, և մեծագոյն չարեաց սո-
վին հորդի ուղի. քանզի արք որ կենաց
քոց դարանակալ շրջէին, և զողջոյն ար-
քունի տանս կամէին զջնջումն բնաբարձ,
եթէ արդ խոնարհեցան, կարծիցես զնո-
սա 'ի զգաստութիւն եկեալ ։ Ո՛չ, հայր,
այլ միայն վասն նկուն նուաճութեան
իւրեանց՝ յետ զամենայն հնարս հնարե-
լոյ 'ի կորուսանել զքեզ զարքայդ բարե-

գութ: Արդ յազատանալ իւրեանց 'ի վտանգէն, կալցեմ յոյս դադարել նոցա յայնմ հետէ յանօրէնութեան մտացն: Ոչ այդպէս. զի եթէ էր 'ի նոսա նշոյլ իմն բարեմարդութեան, ոչ ձեռն արկանէին 'ի մեծեղեռն յայսպիսի չարիս՝ 'ի միտ առեալ զվնասն զհետ եկեալ աշխարհիս ողջոյն, նա և անձանց իսկ իւրեանց. զի յայսպիսի որոգայթադիր դաւանաց ընդդէմ օրինաւոր տերանց՝ 'ի սկզբանէ և այսր ոչ երբէք, ոչ յաշխարհի ուրեք և յազգի յաջողութիւն իմն բարեացլեալ է: Արք ժանտագործք տիրադաւք երբէք ոչ են վայելեալք 'ի խաղաղութեան և 'ի փառս՝ յոր զաչս արձակեալ մխին 'ի չարիս. զի տէրունական է առածն՝ 'ի-տատասկէ անհնար գոլքաղել թուզ:

ԱՄԲԸՏ

Արդար են և ամենայն բանք քո, որդեակ Աշոտ. բայց յանձկութեան պահուս՝ յորում ես գտանիմ, և 'ի թշուառութեան՝ յոր զազգն իմ մատնեալ տեսանեմ, այլ իմն խորազնին տեսութեան մտաց պէտք են մեզ՝ առ 'ի կարող լինելոյ զազգն յոտին ունել: Եթէ ըստ օրինացն հրամայելոյ՝ ըստ կարգի այլոց ազգաց, ինքնաբաւ ինքնիշխան հրամայողաց, կա-

միցիմք ուղղել զսանձ պետութեանն, այն 'ի մեզ ևս չար գործէ պատառումն, և առաւել բազմաթիւ թշնամիս յարուցանէ: Ո՞չ տեսանես, զի Պարսիկք և Հագարացիք խեղդ 'ի պարանոցս մեր արկեալ 'ի վերայ մեր յարուցեալ, իբրև զվոհմակս դայլոց պարառեալ զմեօք անյագ ցանկութ՞ բերանաբացեալք, մնան աւուրն և ժամուն՝ յարձակել և վարատել զհօտն: Եւ 'ի մերոցն յոլովք սովորեալք յանսաստութիւն և 'ի ստահակութիւն, 'ի յուզմունս և 'ի կռիւս, յար պատճառս որոնեն պատճառախնդիրքն, զի 'ի փառս՝ թէ հնար ինչ է՝ ելցեն, և թէ ոչ՝ 'ի խռովութեան անդ վրդովմանց զբօսնուցուն: Արդ եթէ մահու դատակնիք կապեմ ես 'ի գլուխս սոցա, նորոգ ևս բազումք դրգռիցին ընդդէմ ինձ՝ զի զանմեղսն սպանի: Զի որպէս գիտեսն՝ միաբանութեան յոգունց յայս ապստամբութիւն պատճառ այն է, զի ըստ բաջաղելոյ նոցա՝ ես զխաղաղութենէ անձին միայնոյ փոյթ 'ի մէջ առեալ, և առ ընդ միտ մըտանել ամիրապետին, և ոստիկանին Յուսփայ՝ կեղեքել զժողովուրդն ձեռն հարեալ եմ. որպէս յայս նուագ հինգերորդեցի ամենեցուն զարարսն և զինչս 'ի պատճառս կրկին զսովորական զհարկն

պահանջելոյ յինէն ամիրապետին. դարձեալ և առ 'ի ընուլ զանյագ տենչ ընչաքաղցին Յուսփայ: Այլ եթէ ներեմ ես նոցա՝ 'ի մէջ բերեալ զպատճառս հինգերորդելոյ զստացուածս իւրեանց, անշուշտ եմ զի ոչ միայն այլք դադարեսցին 'ի յուզելոյ, այլ և յոլովք յապստամբացն 'ի միտ առեալ զարդարութիւն իմ յայսմ, և 'ի գթութենէ մարդասիրութ՚ես խանդաղատեալ՝ կասեսցին 'ի խորհրդոյ տպըստամբութեանն:

ԱՇՈՏ

Այո՛ տէր, արդար են ամենայն բանք քո և լի ուղղութեան խորհրդով. բայց 'ի ներելդ ամենեցուն՝ եթէ զգլխաւորսն ոմանս և եթ բարձցես 'ի միջոյ, կարծեմ ոչ ինչ ստնանել խորհրդոյդ. բայց թողլով քո և նոցա, նոքին ոչ հանդարտեսցեն. և եթէ անկցին յակնկալութենէ ժողովելոյ կուսակիցս, անդէն դիմեալ ելցեն առ Յուսուփ, և առաւել ևս 'ի չարիս զմիտս նորա դրգռեսցեն ընդդէմ քո:

ԱՄԲԱՏ

Տ՚ես որդեակ, և ուսի՛ր խոկալ ըստ ժողովրդոցն որոց իշխես, և ոչ ըստ կարգի իշխանութեանն զոր ունիս. և ես այդ-

պէս զփրկութիւն կամիմ հոգալ ազգիս, և եթէ հնար է յարուցանել զնա յառաջին 'ի փառսն իւր ցանկամ: Առ այս թերևս միտք քո ոչ հասանեն:

ԸՇՈՏ

Զինչ. 'ի ձեռն ապստամբաց խռովչաց ելցէ ազգն յառաջին 'ի փառսն:

ԱՄԲԸՏ

Ոչ եթէ նոքին խռովայոյզ մարդիկն 'ի փառս զազգն հրաւիրեսցեն, այլ զպատճառս այսչափ յաճախութեան ընդվզելոցն հետազօտեալ, անդէն 'ի միտ առնուցուս և զօրինակն հանդարտեցուցանելոյ զմիտս նոցա, և այնպէս առաջնորդելոյ ազգին 'ի փառս: — Է երբէք լինել յայտնի յաշխարհին և յազգին օրինաց ազգաց, որպէս էր երբեմն և 'ի մեզ 'ի ժամանակս Թագաւորութեն Հայկազանց, նոյնպէս և յԱրշակունեացն. յորում գտանին արք մահու՝ ընդդէմ տերանց և ազգին գրգռեալք, որոց 'ի յայտնել դաւանացն, պարտ է անդէն 'ի մահ տալ զայնպիսիս: Բայց արդ 'ի մեզ է անուն Թագաւորի, այլ ազգն Թափուր 'ի գիտութենէ օրինաց ազգի ազատի և իշխանութեան և պարտուց Թագաւորի: Եւ

յայսմ՝ի խռովութեան ժամանակիս, յորում յարձակմունք թշնամեաց կուռ զմիմեամբք ելևելս առնեն, և ներքին յոյզք անդադար զնա 'ի սասանել մերձ կան, անհնարին է առնուլ հաստատութիւն թագաւորութեան: Ո՞չ տեսանես, զիա՛րդ ամենայն բնակիչք աշխարհիս իբրև զորջացեալ ջոկս երէոց ցրիւ ամփոփեալք յամուրս, 'ի ծերպս և 'ի քաղաքս պարըսպաւորս, իբրև ինքնիշխանք օտարացեալք յամենեցունց այլոց ազգակցաց, կան յերկիւղի՝ պատսպարեալք ոչ միայն ընդդէմ օտարաց թշնամեաց, այլ և իւրեանցայոցըն, նա և ինձ իւրեանց թագաւորին: Եւ վասն այնորիկ կարծեն անիրաւել ինձ ընդդէմ նոցա, 'ի պահանջել հարկս 'ի նոցանէ կամ զօրս 'ի պահպանութիւն աշխարհիս. և ամենայն խորհրդոց իմոց և հրամանաց՝ համարին ունել իրաւունս կալոյ ընդդէմ, եթէ այնպէս նոցա արժան թուիցի՝ զառժամայն զիւրեանց պէտըս խորհելով: Եւ այսպէս ամենայն ապստամբութիւն սոցա արժանի է ներողութեան՝ մինչդեռ յայսմ ադիտութեան դեգերին:

ԱՇՈՏ

Այլ իշխանքն մեծամեծք, նոքա են որք յաւէտ իմն զայրացուցանեն զմիտս ժողովրդոցն:

ԱՄԲԸՏ

Այո. քանզի և նոքա 'ի նմին անգիտութեան կան. կարծեալ եթէ և ամենայն ումեք պարտք իցեն ջանալ 'ի բարձ և 'ի գահ հասանել, և ամենայն գաւառաց և քաղաքաց մի մի Թագաւոր կալ իշխան՝ մտադիւր հաւան գտանին. ահա յայս խորհուրդ յեցեալ՝ մի զհետ միոյ երթեալ յԱփշնոյ և 'ի Յուսփայ խնդրէին Թագաւորել Աշոտ արծրունի, Աշոտ իշխանիկ, Գագիկ վասպուրական: Նա և ռամիկն անգամ դժկամակ է ընդ իս, զի միայնակ կամիմ իշխել և 'ի վերայ ամ Հայոց. և յիրաւունս գրէ տեսանել և զամենայն իշխանս աշխարհիս Թագ կապեալ կալ ինքնիշխան հրամանատար գաւառաց իւրեանց. և ոչ գիտէ եթէ այդ ոչ միայն անարգութիւն է աղգին՝ 'ի շփոթս կալ և 'ի հակառակութեան ընդ միմեանս, այլ և կործանումն է Թագաւորութեան աշխարհիս Հայոց և 'ի վնաս ամենեցուն:

ԸՇՈՏ

Քանի՞ իրաւամբք ասես զամենայն, հայր վեհազն. այդ պատահումն է արդ աշխարհիս մերում և դոյն պատճառ ամենայն չարեաց աղետից մերոց: Երբէք ոչ յիշեմ 'ի վէպս նախնեաց մերոց լեալ՝

որ ինչ արդ յաշխարհին մերում պատա-
հէ: Քանզի և յամենայն ժամանակի հայր
զթագաւորն Ճանաչէր ազգն, և ոչ իւիք
յանձն առնուին տալ այլում ումեք զա-
նուն թագաւորի. 'ի ժամանակս թագա-
ւորութեան Հայկազանց՝ գրեա եթէ 'ի
շրջանս երկուց հազարաց ամաց, չիք ամե-
նևին յիշատակութիւն այսպիսի՝ բազում
թագաւորաց միանգամայն թագաւորել
ջանացեալ, և ժողովրդեան յանձին ու-
նել զայսպիսիս: Եւ 'ի ժամանակս Ար-
շակունեաց յայնժամ և եթ յաջողեցաւ
կալ երկուց թագաւորաց 'ի միասին՝ յոր-
ժամ օտարք սիրեցին, և բռնադատեցին
և մեզ բաժանել զաշխարհն յերկուս, որ-
պէս էր 'ի ժամանակս Աբգարու և յա-
ջորդաց նորա ընդ իշխանութեամբ Հռով-
մայեցւոց. Նոյնպէս և 'ի յետին ժա-
մանակս քրիստոնէութե՛ աշխարհիս մա-
սամբ ընդ Պարսից և մասամբ ընդ Յունաց
իշխանութեամբ կացեալ յոչ կամս: Բայց
հայր սիրելի, միթէ չիցէ՞ հնար ուղղել
զմիտս ժողովրդոց. և զի արդ ունին թա-
գաւոր՝ ծանուցանել նոցա զօրէնս քա-
ղաքականութեան ազգի և թագաւորի,
և մի՛ թոյլ առնել այսպէս իբրև 'ի ժամա-
նակս նահապետացն հնոց տանուտէրա-
կան իմն վարելով իշխանութի՛ յայսպի-

սի դառն ժամանակի՝ յորում թշնամիք շուրջ առեալ են զմեզ, զինեալ 'ի կորուստ մեր :

ԱՄԲԸՏ

Թէպէտ մի միայն ազգոյ դարման ուղղութեան ազգիս այդ է. սակայն ո՞ է՝ որ արդ 'ի միտս և 'ի սիրտ մարդկան ռամկաց և միջակայնոց, և մանաւանդ ազնուականացն նախարարազանց դրոշմել ըզսոյն ճշմարտութիւն կարասցէ, յորժամ չիցեն նոքին 'ի մանկութենէ յայս սկիզբն հաստատեալ : Բայց արդ ահա դիպողագոյն այս է ժամանակ, ունելով զթշնամին զանգէտն ուղղութեան 'ի դաւսն և 'ի նուաճութեանն 'ի պատերազմին. քանզի 'ի պահու աստ անձկութեան ունայնացեալ 'ի յուսոյ իւրեանց և պատրաստեալ 'ի կորուստ դատապարտութեան, 'ի գտանել արդ զփրկութիւն հանդերձ ուղղութեան դատաստանաւ, դիւրաւ 'ի միտս եկեալ սկսանին այնուհետև խորհել ուղղութեամբ. մինչև 'ի խաղաղանալ սուղ ինչ երկրին, յայնժամ և զամենայն մանկունս ազգիս յայս սկիզբն կրթեալ 'ի միութիւն, 'ի սէր, 'ի պատսպարութիւն միմեանց և 'ի ճշմարիտ ազգասիրութիւն, յետ այնորիկ հաստատութիւն լիցի աթոռոյս, և յառաջին փառս ազգն

Ճոխասցի. յայնժամ ոչ ոք 'ի ժողովրդենէն ապստամբաց և խռովչաց Թեկն ածել յանձն առնուցու: Երանի՛ քեզ որդեակ, եթէ հասցես դու յայսպիսի անդորրաւէտ խաղաղութեան աւուրս:

ԱՇՈՏ

Այլ թշնամիք մեր որ շուրջ ունին զմեզ՝ պակասիցի՞ն երբէք:

ՍՄԲԱՏ

Ոչ ինչ իսկ թշնամիքդ են. և քան զաւազ 'ի հողմոց ևս դիւրագոյն ցրուեալ անհետասցին, եթէ միութիւն յազգիս լինիցի:

ՏԵՍԻԼ Դ.

ԶՕՐԱԿԱՆ, ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ

ԶԱԻՐԱԿԱՑ

Ատրներսէհ և Վահրամ առաջնորդք թշնամեաց խմբին հասին արդ 'ի բանակն կորագլուխք ընդ քաջին Սուրենայ. արդ զի՞նչ հրամայեսցես առնել ընդ նոսա, տէր արքայ:

ՍՄԲԱՏ

Մերկացուցէք զնոսա 'ի զինուց և ածէք առաջի իմ:

Հայաստանի
Յոհոր
Դպրոցի

ՋԱԻՐԱԿԱՑ

Եղիցի որպէս հրամայեցերդ : Գնայ :

ՏԵՍԻԼ Ե·

ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ

ԱՇՈՏ

Կամիցիս հայր իմ և տէր, աստէն առանձին զբանիւք անկանել ընդ անօրինելոցն ընդդէմ քո, և ո՞չ առաջի բազմամբոխ վկայից, զի գոնեա կացցեն վկայ երկինք և երկիր անօրէնութեան նոցա անպատճառ :

ՍՄԲԱՏ

Ելից ես առ քաջորեարն հաւատարիմ. և յառաջագոյն առից 'ի գովութիւն զնոցայն քաջագործութիւն, և զմիամիտ սէր հաւատարիմ. և յետ այնորիկ կոչեալ զդոսա անդր 'ի հրապարակ, անդ ցուցից դոցա զամենայն զճշմարտութիւն՝ յորոց տարագիր մոլորեալ շրջին : Դու Աշոտ որդեակ, աստէն յառաջագոյն 'ի քնին արկեալ՝ մանրախուզիւ զհե՛տ լեր իմանալ եթէ յի՞նչ միտս կայցեն, և զի՞նչ զոր խորհիցին, և զո՛ր պատճառանս պատճառիցեն դաւադիր ճգանց իւրեանց, և 'ի պատերազմ ընդդէմ Թագաւորին կա-

քաւելոյ, և բե՛ր ինձ զրոյց ։

ԱՇՈՏ

Արարից զամենայն ըստ հրամանի քում հայր ։

ՏԵՍԻԼ Զ.

ԱՇՈՏ

Քանի՛ խոհական և ո՛րչափ զգոյշ գնացք հօր իմոյ Սմբատայ. և ԻԲՐ ձախող և հակառակ պատահարքն ։ Արք ամենեքին որդիք ազգին մերոյ տգէտք՝ 'ի ժամանակի աստ ալէկոծ վրդովմանց աշխարհիս. յորում ամենեքին կան յանձկութեան և 'ի տագնապ տարակուսի իբրև զջոկս երէոց որջացեալք յամուրս և 'ի քաղաքս պարսպաւորս ։ Մինչև ոչ զօդեսցին 'ի մի սէր միաբանութե՛ մեծամեծքն և աղատք, անհնար է ազատութիւն գտանել և խաղաղութիւն յազգիս ։ Եւ այսր աղագաւ էր իմ կարծիք՝ սակաւուց ոմանց յօդիւ սիրոյ կապելոց դաշն անեղծ 'ի միջի հաստատել ընդ թագաւորին, կապել մահու դատակնիք 'ի վերայ ամենայն ապստամբութեան գործոց՝ առանց ներողութե՛ ։ Յիրաւի խիստ է օրէնադրութիւն այսպիսի, բայց զսոյն պահանջեն դէպք ժամա-

նակիս. մինչև ապա ժամանակաւ համո-
զեսցին ամենեքին ընդ ուղղութիւն խոր-
հրդոցն, և ծանիցեն՝ եթէ որ ընդդէմ
կայ համակամ միութեան ազգին, այն-
պիսին նախ զի վաստակի 'ի նախատինս
անձին, 'ի վնաս և 'ի կորուստ, և յետ այ-
նորիկ ազգին ևս լինի պատճառ յուզ-
մանց և վնասուց, և ոչ երբէք հասանէ
փառացն որում զհետ մտեալ է:

ՏԵՍԻԼ Է.

ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՎԱՀՐԱՄ, ՍՈՒՐԷՆ, ԱՇՈՏ

ԱՏՐՑԵՐՍԷՀ

Ողջոյն քաջազն արքայորդւոյդ:

ԱՇՈՏ

Եւ ձեզ ողջոյն և խաղաղութիւն՝ եթէ
առնուցուք յանձն կասել 'ի խռովայոյզ
սնոտի խորհրդոց:

ԱՏՐՑԵՐՍԷՀ

Մեք զի երևեցաք հակառակ ընդդէմ
կալ բարձին արքայի, այլ մեք զհետ էաք
խաղաղութեան և ուղղութեան: Եւ արդ
եթէ արքայն Սմբատ, եթէ կամիցի խա-

զաղութեամբ և անաչառ ուղղադատ խոր-
հրդով ղեկավարել զաշխարհն, և զմեզ
ծանիցէ նիզակակիցս ինքեան: Բայց եթէ
ըստ հաճոյս իւր մատուցեալ 'ի գահ և 'ի
բարձ զանարժանս, և կողոպտեալ մեր-
կեալ զժողովուրդն յարարոց և յընչից,
և ո՞ ոչ հակառակ ողն ամբարձցէ ընդ-
դէմ:

ԳԱՀՐԱՄ

Արդ մեր վստահացեալ 'ի խոստումն
նորա, ահա անզէն և անպատսպար կամք
'ի ձեռին նորա՝ անցուցանել ընդ մեզ զոր
կամի առաջնորդեալ 'ի խղճէ իւրոցն մը-
տաց, արժանի պատուոյ թագին՝ զոր կրէ
'ի գլուխ նշանաւ խաչին որ 'ի նմա:

ԱՇՈՏ

Գովեմ զխորհուրդս ձեր զի զհետ էք
խաղաղութե՞ և ուղղութեան. այլ յոյժ
յանարգանս և 'ի պարսաւ ունիմ զգործս
ձեր, որով անօրինեցայք ընդդէմ՝ բնիկ
տեառն ձերոյ: Այլ զի արդ խոնար-
հեալ 'ի միտս ձեր, կամիք կալ 'ի սէր և
'ի միութեան ընդ արքային, մի ինչ երկ-
մտիք զի յաջողեսցի ձեզ: Քանզի և ին-
քըն արքայ պատրաստագոյն ամենայնիւ
ակնկալեալ մնայ դարձին ձերում՝ անյի-
շատակ զձեր յանցաւորութիւնն թա-

ղեալ. միայն զձեր զուղղադատ միտս կամի 'ի ձեզ տեսանել զօրացեալ 'ի կամացդ: Եւ եթէ կամիցիք 'ի վերայ կալ անարատութեան մտաց խորհրդոց արքայի և խաղաղասիրութե՛, լուարուք զոր ասէրն՝ անդէն 'ի լուր 'ի բաց զզէնսն դնելոյ ձեր, և զի էք ապաւինեալ 'ի նորայն գլթութիւն, ասէր այսպէս մեծագոչ. Որպէս յերևել լուսապայծառ արփենւոյն՝ անդէն թանձր խաւար գիշերոյն անհետ փարատի, այնպէս զի ոչ կարծել ումեք երբէք եթէ լեալ իցէ մասն ինչ խաւարի յերեսս երկրի, նոյնպէս զամենայն զխէթ թշնամութեան 'ի մտաց և 'ի սրտէս վանեմ մերժեմ 'ի բաց, կնքեալ ընդ անյիշատակ մոռացութեամբ զանցեալ զգործս խաւարային խորհրդոց նոցա՝ եթէ տեսից ճշմարտութեամբ պայծառացեալ 'ի միտս նոցա զարեգակն ճշմարտութե՛:

ԸՏՐՑԵՐԱԷՋ

Եթէ այդպէս անոխակալ գտցի արքայ և յառաջեցուցիչ բարւոյ ամենեցուն և մեր, յայնժամ եմք և լիցուք և մեք նմին որդիք կամակատարք:

ՎԵՑՐԱՄ

Ո՞ւր իցէ արդ ինքն արքայ, զի տացուք

նմին զպարտուպատշաճ զյարգանս, հայ. ցեալ 'ի նմանէ ներումն ընդ վրիպական խորհուրդս մեր:

ԱՇՈՏ

Ելեալ արդ ցուցից նմա զդարձ ձեր յօժարամիտ և զուղղութիւն խորհրդոց ձերոց, զի և ևս զուարթասցին միտք նորա: Գնայ:

ՏԵՍԻԼ Ը.

ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Տե՛ս արդ, քաջդ Ատրներսէհ, ես յամենայնի եկի զհետ իբրև քաջի և խորհրդական առն ամենայն խորհրդոց քոց, բայց այնոքիկ լի գտան յոյժ ձախողակի պատահարօք, մինչև ահա յայս իջաք անարգութիւն խոնարհեալ առաջի Սմբատայ, զոր սկսաք ատել՝ ասելով զնա այր մեղկ և օտարաց թշնամեաց յոխորտանացն երեսս առնել սովորեալ, և զի ներողամիտ յոյժ է նուաճելոցն: Արդ զի՞ եղև մեզ. ահա և մեք 'ի թշնամիս նորա, նաև մեք կարօտ գթութեան նորա. տե՛ս, եթէ յօժարիցի և առ մեզ ակնարկել նովին գթով, ես փոքր միւս ևս թուիմ նստել

'ի զեղջ ապաշաւանաց, զի այդպէս ընդունայնացայ 'ի խորհուրդս իմ. տես, եթէ չէին նորա բարք ներողամիտք, արդ ոչ ուրուք թախանձանացն մատուցեալ ունկն, զամենեսին զմեզ զպաշարեալս իբրև 'ի գառագղի՝ դատէր 'ի հուր և 'ի սուր:

ԸՏՐՑԵՐԱԵՑ

Դու այն Վահրամ ՀաւնունիՐն իցես, սպարապետդ քաջակորով. այդպէս փութով կթուցին զսիրտ քո դէպք ձախողք. ո՞չ դու այն ես որ ասէիրն, ունել նպատակ միայն զօգտութիւն ազգին, յաչս եդեալ զմահ և զկորուստ ամենայնի, միայն զի տեսցես զերծեալ զազգդ 'ի ձեռաց այսպիսի խորհրդակորոյս առն: Արդ զի՞ եղև քեզ՝ զի այդպէս մեղկեալ անկար. եթէ չէին, ասես, գորովական նորա բարք, զի՞նչ արդ լինէր մեզ: Ո՞չ գիտիցես. այն զի զԿոստանդ զթագաւորն Եգերացւոց զիւր և զիմ ոխերիմ զթշնամին, զոր 'ի պարգև ետու 'ի ձեռս նորա, ոչ արձակէր փառօք՝ կապեալ նմա թագ 'ի վարձ անիրաւ յարձակմանցն յերկիր տէրութեան իւրոյ՝ 'ի նախատինս ինձ և 'ի վնաս, որով և ոչ տայր պատճառս յուզելոյ չարախօսացն և ոստիկանին Յուսփայ, գրել զնմանէ ամբաստանութիւն

առ Ամիրապետն, եթէ Սմբատ ինքնա-
գլուխ կարգիցէ Թագաւորս աշխարհաց՝
զի զօրացեալ գլուխ ամբարձցէ : Յայս-
պիսեաց աստի տես քանի՛ք յորդեն հա-
նապազ 'ի գլուխ իւր և ազգին պատե-
րազմունք և տուգանք : Եւ ես իսկ ոչ եր-
բէք իւիք քակեալ հեռանայի 'ի բարեկա-
մութենէն իւրմէ . դարձեալ և ոչ այնպէս
տուրս յաւելոյր ծանունս 'ի վերայ ժողո-
վըրդեանն, որով ոչ գրգռէր ժողովուրդն
ընդդէմ նորա, յայնժամ և դու ոչ յա-
ծէիր 'ի խորհուրդս խնդրել զազատիչս
ազգին 'ի ձեռաց ներքին և արտաքին
թշնամեաց, և այսպէս ոչ իջանէաք և մեք
յայս անարգութիւն առնուլ զանուն դա-
ւաճանի, մատնչի ընդդէմ օրինաւոր տեա-
ռըն երկրին : Տեսե՞ր արդ . եթէ էր Թա-
գաւորն տէր արիական ոգւոյ, յորո՞ց ա-
ղետից ազատ և աշխարհն մնայր : Ի գի-
շերի մթութեան գործոց մարդկան՝ լոյս
է անաղօտ Թագաւորն . եթէ պայծառ
զչողս արձակէ լուսոյն 'ի դահլճի աշխար-
հին որում ինքն իշխէ, և լուսաւորէ զբը-
նակիչս այնպէս՝ զի աչօք բացօք տեսեալ
ամենեցուն որ ինչ է 'ի չարեաց և 'ի բա-
րեաց, 'ի բաց յանձանց զամենայն զչա-
րիսն Թօթափեսցեն, և ոչ ներեսցեն մատ-
չել հուպ խաւարային Թշնամեացն 'ի լու-

սաւոր իւրեանց աշխարհ: Այլ այժմ, ո՞հ, ամենայն ինչ վեր 'ի վայր:

ՊԱՀՐԱՄ

Յամենայնի արիական են խորհուրդք 'ի միտս քո, կուրապաղատդ մեծ, և հաստատուն ես յընտրութեան կամացդ:

ԸՏՐՑԵՐԱԷՀ

Այո. և այնու հաստատութեան մտօք ահա արդ բուռն հարի 'ի փոխարինութիւն թշնամութեան նորա առ իս, բառնալ զկեանս նորա, զի ուսցի մի 'ի նախատինս թշնամւոյն դնել զբարեկամ. և զի ելանեն հատուցմունք անիրաւացն 'ի գլուխ նոցա: Այլ ես յայն վրիպեցայ՝ զի ոչ յանձին կալայ ես ինքնին անձամբ մըխել 'ի կող նորա զպողովատն սրեալ:

ՊԱՀՐԱՄ

Եւ արդարև եթէ այդպէս վստահ ես ընդ ուղղութիւն գործոյդ, և արիական մտօքդ քաջախորհուրդ, էր յանձն արարեր զայդպիսի գործ մեծ այլում օտարի:

ԸՏՐՑԵՐԱԷՀ

Քանզի կամէի վճարել զգործ մեծ զայս յաւուրս սակաւս. որպէս և գիտես իսկ՝

յայնժամ Սմբատ էր 'ի կողմանս Տաշրաց, և մեզ հաւաքել անդր զդաշնակից զօրս էր գործ դժուարին : Մինչդեռ կայիր դու յայնժամ 'ի գլուխ զօրացն, ես անդ 'ի Տաշիրս ընդ այլոց Հաւնունեաց և Վանանդացւոց խորհեցաք յերկար զհնարիցն. և Հաւնունին քոյդ աներ կալաւ յանձին կալ մնալ առ արքայի՝ և 'ի գլուխ հանել դիպով զսպանութիւն արքային. և մեք ազդ և քեզ արարեալ, և հաւաքեալ մնայաք աստէն 'ի Տայս յաջողութեան լրոյ. զի այնպէս դիւրին լինէր մեզ աստի՝ ունելով և զՎրաստան 'ի թիկունս մեզ՝ սփռիլ ընդ աշխարհն, և իշխել խաղաղութեամբ և ամենայն կողմանց, յորդորելով 'ի հնազանդութիւն զամենեսին: Ապա թէ ոչ՝ կալով իմ 'ի Տաշիրս առ արքայի, նա եթէ և յաջողէր սպանութի՞ն՝ մեծ էր վտանգն, և խաղային Ճապաղիք բազումք:

ՎԱՀՐԱՄ

Բայց և արդ դարձեալ թուիմք վարեալ հալածականք յանաջողութե՞ բազդէն: Ունելով և զամենայն կուսակիցս առ մեզ, դարձեալ զօրացաւ արքայ 'ի մեր վերայ:

ԱՏՐՑԵՐԱԵՀ

Անյաջող ելք դաւոյն վեր 'ի վայր շըր.

Պատերազմ

ջեաց զամենայն: Մեք աստէն անգէտք անյաջողութեան գործոյն՝ ոչ 'ի պատերազմ ընդ Սմբատայ պատրաստեալք, այլ արշաւելոյ ընդ երկիրն, և խոստացեալ խաղաղութիւն և անդորրութիւն՝ հանգուցանել 'ի մեզ զմիտս ամենեցուն. և արդ անակնկալ յանկարծօրէն հասանել Սմբատայ 'ի վերայ մեր ամենայն զօրութեամբ, այս վհատեցոյց զմերսն. զի մինչ դեռ ակնկալեալ մնայաք լսել զլուր մահուան նորա, ահա եկեալ հասեալ հանդէպ մեր տեսանեմք զնա ինքն 'ի գլուխ զօրուն: Այս լքոյց զսիրտս ամենեցուն և թուլացոյց զբազուկս. զի յոյս ամենեցուն հատաւ յանկարծ. այնպէս զի թէ հնար էր՝ այր այր կամէին թողուլ և 'ի բաց 'ի պատերազմէն ելանել. զի ոչ լսէիր զքրթմնջիւն զօրացն: Եթէ և յաղթեմք իսկ, զի՞նչ մեզ շահ անտի՝ մինչդեռ թագաւորն կայ յոտին և հրամանահան է երկրիս:

ԿԱՏՐԱՄ

Զի՞նչ արդ խորհիցիս քաջդ Ատրներսէհ:

ԱՏՐՇԵՐՍԵՀ

Ես կամ հաստատուն 'ի նոյն յառաջին յիմ խորհուրդ. եթէ մեք՝ որպէս զերդումն առեալ ելաք այսր 'ի բանակս, եթէ

հանդիպեսցուք կենդանութեան, և եթէ այսօր աստէն անկցի Սմբատ, մերքն ամենեքին անդէն ոգի առեալ զօրասցին, և ամենայն զօրքն Սմբատայ լիցին մեզ 'ի զօրավիգն: Ե՛ս պատահեցայց նմա անձամբ. Նա գուցէ այժմ իսկ յերևել առաջի նորա տաց վախճան մեծի գործոյս. եթէ մահ մեզ առաջի կայցէ, մեռցուք անվեհեր. իսկ եթէ արիական միտք յաջողեսցեն կորովոյ բազկին, յաղթանակեսցուք. այլ կեալ այսպէս ամօթապարտ, այդ չէ արժանի մեզ քաջաց:

ՓԱՏՐԱՍ

Քաջ է խորհուրդդ, արժանի արիական մտացդ. քանզի 'ի մահու միոյն զգեցցի կենդանութիւն ազգն ողջոյն, և անիրաւութեան եղելոյ քեզ արժանի հատուցումն լինիցի, և Հաւնունիքս և Վանանդացիք ըստ իւրեանց քաջախորհուրդ արութեանն ելցեն 'ի պատիւ:

ԸՏՐՑԵՐՍԵՏ

Նաև Սուրենայ ոխութիւնն լուծցէ զվրէժ կուրութեան աչաց հօր իւրոյ. ընդ որ դառնացեալ 'ի սրտին, գրէ 'ի նախատինս անձին զամենայն քաղցրութիւնս Սմբատայ: Եւ տեսեր իսկ եթէ

ո՛րպէս ստիպէր զիս համոզկեր բանիւք՝ մի՞ վհատել և մի՞ կասիլ 'ի խորհրդոյս ։

ՊԱՏՐԱՄ

Քանզի յոյժ սիրելի լեալ է յաչս հօր իւրոյ յառաջագոյն, և 'ի կորուսանել նորա զաչսն՝ մեծապէս դառնացեալ հայրըն և որդին միանդամայն ։ Հայի. Ահա և նա ինքն ։

ՏԵՍԻԼ Թ.

ՍՈՒՐԷՆ, ԱՏՐՆԵՐՍԵՀ, ՎԱՀՐԱՄ

ՍՈՒՐԷՆ

Ա՞ստ իցէք քաջքդ. արդ յի՞նչ խորհուրդս կայք ։ Տեսէ՞ք զարքայ ։

ԱՏՐՆԵՐՍԵՀ

Զի՞նչ կամիցիս լսել 'ի մէնջ. ո՞չ գիտիցես զի անյաջող ելիւք պատերազմին ակընկորեալք զերկիր նշմարեմք՝ յամենայն քաջութեան խորհրդոց Թուլացեալք ։ Եւ ընդ միտ բերեալ զնախատինս երևելոյ առաջի Սմբատայ, այսպէս իբրև յեղեռն ըմբռնեալք 'ի նկուն կերպարանս, լաւ զընդ գետին մտանելն համարիմք. և լաւագոյն համարէաք զանկումն 'ի Ճակա-

տունքաջութեամբ՝ եթէ չէաք ամենայնիւ հասու անյիշաչարութեան բարուցն Սըմ-բատայ :

ՍՈՒՐԵՑ

Յի՞նչ ակնարկիցեն բանքդ . այդպէս դիւրաւ յետս'ի քաջութեան խորհրդոց կացեալ էք . և կամիցի՞ք 'ի բաց յանձնէ թօթափել զգործ արդար վրիժուց իբրև զյանցանս եղեռան . և զկորանս նախա-տանաց ամօթոյ առնուցո՞ւք յանձն ա-ռաջի արքային , ազգին և քաջաբազուկ որերոյն : Ո՞չ դու ինքն Ատրներսէհ , դու քեզէն ժամաւ ինչ յառաջ ասէիր վստա-հութեամբ՝ եթէ պարտութիւն մեր այս ոչ է 'ի տկարութենէ բազկաց , և ոչ 'ի սակաւաթիւ լինելոյ միաբանելոցն խըմ-բին , այլ միայն անակնկալ , յանկարծ , յանպատրաստից 'ի վերայ հասանելոյ Սմբատայ : Ո՞չ.քո են բանքս. Գամ 'ի կոչն Սմբատայ ոչ առ 'ի լսել զատենական յորդորս նորա , այլ առանց արեան որե-րոյն քաջաց և առանց հնարագէտ դաւա-նաց սուր 'ի կողս նորա մխել և վախճան առնել հակառակութեանցն , լեալ հա-ւաստի, զի'ի տեսանել մարդկանն անշըն-չացեալ զարքայ , անդէն ամենեքին զկող-մըն ունիցին զմեր՝ ձանձրացեալք 'ի նորա մեղմեխ գնացից : Արդ ո՞ւր են այն ամե-

նայն մեծամեծ որոտաձայն ճայթմանց և փայլակնացայտ բանից վրիժագործ կայ-ծակունք . այդպէս ցնդեալք ընդ օդս անհետացան անգործ : Եթէ այդպէս ունէր երկիւղ զսիրտ ձեր յանկանելոյ 'ի կենաց՝ մինչև իջանել յայս անարգու-թիւն վատաց, կոչիլ և համարիլ յամե-նեցունց նենգագործ, անօրէն, տիրա-դաւ, միայն զի կալջիք յապահովի զձեր կեանս, էր ապա առանց քաջիկ խորհե-լոյ զվտանգս քաջագործութեց, և կըշ-ռելոյ զանակնկալ դէպս, և ճանաչելոյ զանկարութիւն ձեր, բուռն հարէք 'ի գործ այսպիսի մեծախոհ և քաջակորով առն :

ԱՏՐՑԵՐՍԷՏ

Մի՛ ցայդվայր յուզեալ տագնապիցիս քաջդ Սուրէն, գիտա՛ արդ զի մեք կամք 'ի նոյն յառաջին խորհրդեան մերում. արդ իսկ 'ի կոչելն զմեզ առ իւր, թէ և թիկնապահք իցեն շուրջ, ոչ ինչ զանգի-տեցից կորզեալ զվաղակաւորն յարքայէն մխել 'ի սիրտ նորա, և այնպէս վախճան առնել ամենայն յուզմանց : Գիտեմ ես անդէն և զսիրտ թիկնապահացն նորա՝ ծանօթիցն իմոց, անդէն յեղաշրջել ինձ 'ի կուսակցութիւն : Այլ եթէ 'ի սոյն ոչ յաջողեցայց՝ չէ ինչ. շատ է զի ես եղէց

վրէժխնդիր անիրաւութեց նորա ընդ-
դէմ ինձ և քո. և զքաջորեարն Հայոց ա-
զատ կացուցից 'ի լծոյ՝ զոր կամին և զհետ
են թօթափել: Եւ մերքն 'ի լսել զդրընդ-
դիւն 'ի բանակիս, ըստ յանձնելոյ մեր,
անդէն յարձակիցին անկանիցին 'ի վե-
րայ:

ՎԵՀՏԻԱՄ

Եւ ես անդէն ձեռն քեզ տաց յաջո-
զակութեամբ՝ յափշտակեալ զսուսեր մի-
ումն 'ի զինուորաց. մի երկմտիր քաջդ.
ոչ մեռցիս:

ԱՈՒՐԵՏ

Ոգի առի: Եթէ այդպէս է, և ես ան-
դէն սուսեր 'ի ձեռին յարձակեցայց 'ի
ներքս 'ի ձեր պաշտպանութիւն և 'ի յոր-
դոր զօրականացն՝ դադարել յունելոյ
զկողմն վախճանելոյն ընդ վայր:

ԸՏՐՏԵՐԱԵՏ

Ելցուք մեք, մինչ չև կոչեցեալ զմեզ
արքայի, հնարիմաց ճարտարութեամբ ի-
մանալ զմիտս որերոյ բանակիս:

ԱՈՒՐԵՏ

Ցանկամ յաջողել արիական ձերոցդ
խորհրդոց: Գնան:

ՏԵՍԻԼԱԾ.

ՍՈՒՐԷՆ

Ո՞ անյագ ցանկութիւն արդար վրիժուց որ վառեցաւ յիս ընդ շիջանելն ցանկալի լուսոյ յաչաց հօրն իմոյ սիրելւոյ: Զայրոյթ սրտիս ծնաւ ինձ զսոյն 'ի սփոփանս ցաւոց. այլ յոյժ գրաւեալ կալաւ զմիտս իմ. ա՜հ:

Իբրև տեսանեմ զթագաւորն 'ի փառս իւր՝ որ իւրով անգութ հրամանաւ զըրկեաց յաչացն զիմ հայր, խաւարեցոյց զարևունս նորա քաղցունս որովք յիսն ակնարկէր և զուարթանայր, և իբրև զմտաւ ածեմ զայն պատկեր ողորմ ցաւոցն կարեալ առաջի աչաց իմոց՝ զհայր իմ 'ի խաւարթանձր պատեալ անլոյս . . . ա՜հ . . . այն արդիւնք սնոտի գրգռութեան նորա են՝ դարձուցանել զամենեսին 'ի կրօնս քրիստոնէից, այն պատճառք իմոյ ոխակալութեան քինու, որով վառեալ անշէջ՝ փոխանակ կորստեան աչաց ծնողիս ոչ շատ գրեմ զդառն մահ սորա: Որպիսի՜ աղճատանաց բանք. որ ոք չէ քրիստոնեայ, չիցէ Հայ. միթէ նախնիքն մեր դիւցազունք չէի՞ն Հայ՝ զի զկուռս պաշտէին: Արծրունեաց քաջաց եմ սերունդ,

չեմ հագարացի և ելուզակ, ոչ ոք այնուա-
նուամբ ծանակ զիս արասցէ : Կատա-
ղեալ եմ անհնարին սրտմտութ՚ի . կոր-
ծանումն և աւեր աշխարհիս մերոյ յայս-
պիսի անիմաստ Թագաւորաց և իշխանաց
հասանէ . Ես վրէժխնդիր հօրն իմոյ և
ձեռնտու ազգին եղէց՝ զրկեալ 'ի կենաց
զայրն վատ զպատճառն աղէտից տանս
Հայոց : Ի ձախողել դաւոյն , և 'ի պատե-
րազմի աստ զքաջացն տեսեալ զպարտու-
թիւնն , յո՛ր յուսահատ խորհուրդս ան-
կանէի : Արդ առ իս բազդն իմ . ցորչափ
տեսանեմ զհայրն իմ զրկեալ յաչացն , 'ի
ցաւ սրտի , 'ի դառնութ՚ի մտաց , 'ի զայ-
րոյթ 'ի կատաղութիւն փոխեալ . ամե-
նայն ոսկերք իմ զդողանի հարկանին : Ի
լրման վրէժխնդրութեան աչաց նորա
միայն հանդարտեցայց սակաւուք 'ի բազ-
մակոհակ յամբոխմանէս :

Այլ յայսոսիկ յուզմունս կրից՝ և
վտանգն յոր արկանեմ զԱտրներսէհ զիմ
բարեկամ, ընդ որում կապեցայ և ազգակ-
ցութեամբ և 'ի սէր ճշմարիտ բարեկա-
մի՝ զիս զարհուրեցուցանէ . արութեամբ
քաջութեամբ կամի յայս նուագ անձամբ
'ի դլուխ հանել զդործն մեծ : Սակայն
դէպքն անհաւաստիք , ժամանակն ան-
պատեհ , և ինքն մատուցեալ առ արքայ

անզէն, և եթէ բաղդն ևս հակառակիցի, յայնժամ կորուստ է ամենեցուն. յայնժամ զի՞նչ օգտեսցէ բարեկամութիւն: Զգոյշ կաց մեծդ Ատրներսէհ. 'ի խընդրել զվրէժ 'ի թշնամւոյն՝ կորուսանել զբարեկամ, է վրիժապարտ զանձն առնել: Անողորմ սիրտ է որ հաճ գտանի ընդ քաղցրութիւն թացեալ արտասուաց դառնութեամբ: Դժբաղդութիւն մեծ է ումեք մահ թշնամւոյն՝ եթէ այնու յաղէտս և յողբս անկանիցի ինքն: Այլ եթէ ոք զվրէժ խնդրէ զաղէտից հօրն՝ էր արտասուեսցէ. իցէ՞ ինչ այլ կորուստ այսմ զուգական: Եթէ հնար լինիցի ինձ մահ փոխարինել ընդ լուսոյ աչաց հօրն իմոյ՝ առ ի՞նչ երկմտել: Բարեկամութիւն ճոխասցի փառօք՝ եթէ արդարութեան տեղի տայցէ. այլ ամաչեսցէ 'ի յաղթել նմին: Զլրումն արդարութեան պսակ 'ի գլուխ առնուցու բարեկամութիւն, և նովին յաղթական ճեմեսցէ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՍՈՒՐԷՆ, ՀՐԱՀԱՏ

ՍՈՒՐԷՆ

Երդուեալ եմ քաջդ Հրահատ, երդուեալ եմ յերդումն անդարձ: Ես ոչ

հանդարտիմ մինչև ոչ լցցի արդար իմ
վրէժխնդրութիւն. քանզի զի՞նչ անօրէնու-
թիւն մեծ քան զայն՝ եթէ ոք ապաւինե-
լոցն առ ինքն չարիս 'ի գլուխ կուտեսցէ:

ՀՐԱՀԱՏ

Զի՞նչ այդ պատահար իցէ ապաւի-
նութեան:

ՍՈՒՐԵՑ

Եւ զայս ո՞չ լուար տակաւին եթէ ո՛ր-
պէս կրկնակի անօրինեցաւ Սմբատ ընդ-
դէմ բնական գթոյ մարդկութեան. ա՛հ,
'ի յիշատակել իմում, 'ի զարհուրանաց
սրտիս յիմարին միտք իմ: Յորժամ Աշոտ
արծրունի կալեալ կապեալ զհայր իմ ոչ
կամէր արձակել, մեք ապաւինեցաք յար-
քայն Սմբատ՝ թողուլ զհայրն իմ ազատ:
Յայնժամ սա պատճառս անտի առեալ՝
կամէր զի հայր իմ յետս կացցէ յօրինացն
Մահմէտի: Եւ հայր իմ յանհնարս մտեալ՝
խոստացաւ վեր'ի վերոյ. և Աշոտոյ արծ-
րունւոյ յափշտակեալ զամուրն Սևաւան'ի
ձեռաց հօր իմոյ՝ երդմամբ դարձուցանե-
լոյ ողջամբ զհայր իմ. ո՛վ անգութ գազան,
քանզի հայր իմ ոչ եկաց 'ի խոստմունսն
դառնալոյ 'ի քրիստոնէութիւն, և նա
ստեաց երդմանն և հրամանաւ Սմբատայ
կուրացոյց զհայր իմ:

ՀՐԱՀԱՏ

Գիտեմ զի յոյժ դառն եղև քեզ այդ ։

ՍՈՒՐԵՑ

Եւ զի՞նչ քան զայս անօրէնութիւն մեծ ։ Եւ իցէ՞ հնար առն՝ յորում գուցէ նշոյլ արդարութեան և իմաստութեան՝ փոխել զհաւատսն առանց համոզելոյ մտացն 'ի ճշմարտութիւնն եթէ գուցէ ։ Եւ ո՞ վատթարագոյն քան զմարդ որ առաչս փոխիցէ զհաւատսն, թէպէտ միաք զհակառակն վկայիցեն ։

ՀՐԱՀԱՏ

Իրաւացի է զայրոյթ սրտիդ, և ոչ ոք արհամարհ դատեսցէ. և սովին որդի արժանի գրեսցիս զորոյ զաղէտիցն առնուլ խնդրես զվրէժ ։ Այլ եթէ ինձ լսես վայրիկ մի, բարեխառնել արժան է զգրգիռ մտացդ ։ Արքայն Սմբատ օր քան զօր ըզլիութիւն բարեաց 'ի քեզ առատաձեռնեալ, թուի իմն այնպէս՝ եթէ փոխարինել չարեացն լիուլի կամիցի. բազմադիմի նպաստքն մատուցեալք քեզ, հրաւիրեալ զքեզ յարքունիս, գրելով զքեզ յորդիս իւր, և զի սիրելի ես նմին ։

ՍՈՒՐԵՑ.

Այն ամենայն լինիցին ինչ նպաստ հօրն իմոյ 'ի ստացումն կորստեան լուսոյ աչացն, որ դառնագոյն է քան զբիւր մահունս: Եթէ մահու չարաւ կորուսեալ էր նորա զամենայն տուն հօր իմոյ, ոչ այսչափ ցաւէր ինձ արդեօք. զի լայի և եթ զմահ նոցա և զիմ միայնութիւն. այլ զարդիս ամենեքին կենդանի և ամենեքին մեռեալ: Բարձաւ ուրախութիւն 'ի տանէ մերմէ. չեմք միայն, զհայր ունիմք յանդիման ընդ մեզ. այլ և՛ս անհնարին չարիք. կենդանի է այո, այլ որ ինչ ամենայն եղկելեաց շնորհեցաւ, ողբալ զաղէտս անձանց, և զայն իսկ ոչ կարէ: Ա՛յ անգութ, քան զբնութեան օրէնս դառն դահիճ մեզ կացեր. եթէ չարիս կամիցիս կենսատուին իմոյ, բարձ 'ի կենաց. այլ եթէ կենդանեաւ չարատանջ վշտացուցանել և 'ի թշուառութիւն ածել զնա, գէթ զաչսն թող՝ լալ զաղէտս իւր:

Արդ եթէ իցէ ոք որ զիս բարեբաղդ համարիցի, գիտասջիր զի բարերարութիւն ոչ միշտ երախտապարտ զբարերարեալն կացուցանէ. այն ամենայն 'ի ձեռաց ատելւոյն 'ի վնաս համարի. որչափ առաւել 'ի պարգևս նորա վայելիցեմք,

այնչափ ևս յատելութիւն վառիմք ընդ-
դէմ նորա : Նա առատաձեռն է ինձ 'ի
բարիս՝ առանց ինչ փոխելոյ երբէք զիս
'ի մտաց : Ես եմ նոյն որ ինչ եմն, և հզօ-
րագոյն ևս արդ, զի բազումք ընդ աղէտս
հօրն իմոյ խանդաղատեալ, և յանձանց
իսկ չարեաց յատելութիւն ձգեալ՝ ձեռն-
տու ինձ գտանին : Եւ եթէ փոխանակ
անդրանկան իւրոյ ժառանգեցուցանէր
ինձ զթագաւորութիւն, լաւ ևս յաջողէր
ինձ գործ վրէժխնդրութեանս : Զքի-
նախնդիր լինել հօրն վշտաց ոչ ոք 'ի յան-
ցանս գրեսցէ : Որ 'ի Թակարդս պատիր
բարեաց ըմբռնեսցի, 'ի գին արեան իւ-
րոյ համարեսցի նմա :

ՀՐԱՀԱՏ

Այլ զի՞նչ հարկ 'ի վերայ կայցէ անշնոր-
հակալու երևել քեզ առ արքայ : Ո՞չ
տեսանես եթէ քանիք ոմանք մեծամեծքն
և նախարարազունք և իշխանք դարանա-
կալք են կենաց նորա, որոց ընչիւք նա
ճոխանայ և լնու զձեռս ոստիկանին Ափ-
շնի. են ևս որք 'ի տրոցն յաճախութենէ
հասեալք 'ի յետին չքաւորութիւն,
մտադիւր ձեռն տան նոցա՝ որք 'ի լծոյ
ծառայութեան սորա զերծանել ճգնի-
ցին. այլք ևս ակն եդեալ 'ի բարձ աւա-

դութ՞ե հասանել՝ փորեն արքայի խոր-
խորատ կորստեան: Ատելին ամենեցուն
ոչ յերկարեսցէ 'ի խաղաղութեան: Թո՛ղ
նոցա խնդրել զվրէժ չարեաց հասարա-
կաց: այլ եթէ և դու արդար համարիս
զկորուստ նորա, միայն ուխտիւք փափա-
քանաց խորհրդակից լեր նոցա:

ՍՈՒՐԷՑ

Եւ զի՞նչ. հնա՞ր իցէ ինձ ատել զնա, և
ոչ ըզհետ լինել զատելութեանն տապ
ցածուցանել՝ ապաւինեալ 'ի դէպս, և
զպարտս իմ զայս անլուծանելի լքանել՝
յուսացեալ 'ի դաշն սնոտի: Այր վատ
է որ զգործս հասարակաց անկաւորս ին-
քեան՝ յայլոց 'ի ձեռս թողու: Եթէ վրի-
ժապարտ է նա մահու, ընդ քաղցրու-
թեան վրէժխնդրութեան աղէտից հօրն
իմոյ յանձին կալայց և զփառս կորուսա-
նելոյ զթշնամին բարեաց հասարակաց.
հնչեսցէ ընդ ամենայն Հայս, եթէ Սու-
րէն 'ի կապել զազգն ողջոյն 'ի սէր մի-
մեանց՝ առ ոչ ինչ գրեաց զբարեկամութի
և զբարեկամ:

ՀՐԸՀԸՏ

Վայրապար գրգռութիւն: Քաջդ
Սուրէն, հայեա՛ց միանգամ եթէ յո՛ր
վախս ժայռից արկանես զքեզ անճողո-

պրելի, յորմէ բազումք անկան գահավէժ. մի՛ կուրօրէն 'ի մահ անդարձ շտապեր:

ՍՈՒՐԵՑ

Ոչ այդպէս. երկիւղ, գութ, խանդաղատանք՝ հրապոյրք են պղտորք. անակընկալք են պատահարքն, մեծամեծք են վտանգքն. այլ ո՛չ ինչ վտանգեսցի Ատրներսէհ իւրովն յանդգնելով: Թէ Թիկնապահք իցեն Սմբատայ, Թէ 'ի պահս զգուշութեան անձին կայցէ նա, այլ ո՛չ ինչ օգտեսցէ նմա այն ամենայն. զի որ զկեանս իւր առ ոչ ինչ գրէ, տէր է նա իւրումն անձին: Մեծամեծ վտանգք մեծագո՛յն ևս արդիւնս ծնանին: Յառաքինութենէ առաջնորդիմք, և փառս ձգեմք զհետ մեր: Այլ չիք ինչ հնար. կամ արքայն Սմբատ կամ մեք մեռցուք 'ի պատարագ աղէտից հօրն իմոյ: Զսոյն և Ատրներսէհ խոստացաւ ինձ 'ի ցոյց ճշմարիտ բարեկամութեանն և ազգակցութեան. և ինձ անմարթ է ժխտել զճշմարտութիւն բանիցն: Ելցուք դէտ կալ եղելոցն և լինելեաց, և եթէ ձեռին օգնականի իցեն պէտք, մատեայց և ես յառաջ:

ՀԱՆԴԻՍ Ի.

Տեսարանն է 'ի հրապարակ բանակին. առաջք թատերն է բարձրաւանդակ առ ստորոտով բլրոյն, որպէս էր սովորութիւն և յամենայն նուագի 'ի բանակել զօրացն պատրաստել տեղի բարձրաւանդակ. յորում կայ թագաւորն ընդ մեծամեծաց սպայիցն լինել հրապարակախօս առ զօրսն: Անդ հանգստարան արքային պատրաստեալ արքայաշուք:

ՏԵՍԻԼ Ա.

ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ

Ա՛ՅԼ զի՞նչ պատճառք էին մեծդ Ատրներսէհ, դառնալոյ ձերոյ անդրէն 'ի ձեր բանակն:

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Քանզի այն ինչ մեկնեցաք մեք 'ի քէն, մատեաք առ զօրապետս գնդից Սմբատայ, և իբրև առաջի արարի նոցա զպատճառս ապստամբութեան խորհրդոց մերոց, գտի զնոսա ամենայնիւ համամիտսընդ մեզ. աստի անկաւ խորհուրդ 'ի միտս իմ ելանել առ վհատեալ զօրս մեր աւետաբեր լինել նոցա զներողութեան մտաց Սմբա-

տայ և զհակամիտութենէ զօրաց նորա 'ի խորհուրդ մեր: Աստէն յանձն արարեալ ասել առ թագաւորն 'ի հարցանել նորա զմէնջ, իբրև զի լուեալ զբարեհաճութեան կամս նորա 'ի գթութիւն, գնացեալ իցեմք հանդարտեցուցանել զալէկոծ միտս զօրականին, և յորդորել զնոսա 'ի հլութիւն:

ՍՈՒՐԷՑ

Հասեր 'ի վերայ եթէ ոչ ինչ երկմտութեան խորհուրդ 'ի միտս ուրուք ուխտադրաց քաջացն անկեալ իցէ. և ընթերցար 'ի դէմս նոցա զհաստատութիւն մտացն՝ կալ հաւատարիմ յերդմանն:

ԸՏՐՑԵՐՍԷՑ

Երբէք ոչ եղև դաւադրութիւն այսպէս բարեյաջող. եռանդն անօրինակ 'ի պահպանութիւն երդմանն ուխտի. բազմութիւն զօրականաց քաջաց 'ի մի սիրտ և 'ի մի խորհուրդ զօդեալք՝ որք կային ամաչեցեալք ընդ պարտութիւնն դիպեալ ձախողակի: Արդ 'ի տեսանելն զիս և զՎահրամ հազարապետ 'ի նոյն յառաջին խորհուրդս անդարձ կացեալ մնացեալ, և զերծ 'ի վրիժուց քինուն Սմբատայ, այնպիսի իմն զուարթութիւն մտաց յա-

մեռանին զեղաւ, մինչև կարծել եթէ զա-
մեռանին և զնոսա իբրև զիս՝ ի նախատինս
եդեալ էին Թագաւորին, կամ որպէս
վաքոյդ՝ յաչաց զկեալ և՝ ի մահ վարեալ
զծնօղս և զընտանիս ամենեցուն նոցա:

ԱՍՈՐԵՑ

Զայդ և ես ասէի՝ ի միտս իմ՝ եթէ գի-
ուն Աստուածոյն ընտիր առնել արանց
քաջաց. ոչ՝ ի վայրապար մարդիկ առնէ
տպատատան զանձին և զիմ արդար վնաս-
նդրուածքն:

ՏՐԳԵՐԱՑԻ

Եթէ տեսանէիր՝ յորպիսի փոյթ և՝ ի
նախանձ վառին պատրաստին ձիոխարկ-
նել ընտրեալ ըմբռնողքն՝ ձախողելականակն-
կալ յարձակմանն: Արդ զի յաղթեցան
միանգամ՝ այն առաւելքան զառաւել
՝ի զայրոյթ գրգռեալ զարհուցեալ է
զամենեցուն զիմս. և ես ևս քան զնա
բուռնքեցի զնոցա բանիւք քաջալե-
րուելեան: Ընդ առաւն եւեթ սրբայնն
նել ընտրեալ ըմբռնողքն, միանգամայն և՝ ի

խորհուրդս մեր. 'ի մեզ է ապաստան
փրկութի՞ տանս ամենայն Հայոց կորըս-
տեամբ առն միոյ միայնոյ, եթէ արժան
իցէ անուանել զնա այր և ոչ գազան վա-
րատող հօտին իւրովքն անխորհուրդ գոր-
ծովք՝ 'ի ձեռս օտարաց ժանտից մատ-
նեալ զժառանգութի՞ իւր: Գիտէք իսկ-
եթէ քանի՛ քանի իշխանք և նախարարք
մերկացան յամենայնէ՝ 'ի լցուցանել զան-
յագ ծարաւ նորա, և 'ի հաճել զժանտի
այլազգւոյն զկամս: Է՛ երբէք զի 'ի սէր
ընդ իւրսն կապի 'ի մերկացուցանել զնո-
սա, և դարձեալ ընդ այլազգւոյն 'ի լնուլ
զձեռս նորա. այլ ինքն միշտ ակն եդեալ
յանխորհուրդ խաղաղութեանն վայե-
լել, ոչ ազգին հոգայ պայծառութեան,
և ոչ ինչ փոյթ յանձին բերէ 'ի նուաճել
զօտարս: Այլ միայն իբրև զգող, եթէ
կարէ, հասեալ 'ի վերայ իւրոցն ազգայ-
նոց՝ ջանահնար լինի կամ 'ի ստացուածոց
մերկել զնոսա և կամ 'ի կենաց. որպէս
ահա և այժմս արար: Եւ ապա յուշ ա-
րարեալ նոցա զառաջնոց թագաւորաց
զմեծանձնութիւն, և եթէ ո՛րպէս խրա-
խուսէին զնախարարեանն, և օրինակաւ
նոցա յորդորէին ամենեքին 'ի քաջութի՞.
և զի յայնժամ ոչ միայն զերծ էին 'ի
հարկաց, այլ և հարկատու զամենայն

շրջակայ ազգս ունէին. և այժմ, ասէի, եթէ գտցի ոք թագաւոր արժանի քաջալանջ և հուժկու որերոյն Հայոց, իշխան աշխարհի կացցեն Հայք, և ամենայն ուստեք մեծութիւն և փառք յաճախեսցէ նոցա: Աւա՛ղ, ասէի, զի՞ ցարդ լռեալ դադարեալ կայիք՝ հանդուրժել տեսանել ոտնակոխ յօտարաց զաշխարհս Հայոց՝ իբրև արք անզօրք՝ երեսս առնելով վատ և անխորհուրդ արքային ձերոյ: Եւ արդ միանգամ յօժարեցայք քաջանալ, և այն ձախող ելիւքն ա՜միւ սրտաթափ սրտառուչ արար զձեզ: Եւ այսպէս և և՛ս գըրգիռ լինէի նոցա փութալ 'ի մահ Սըմբատայ. յուշ առնէի նոցա առն իւրաքանչիւր զառաջին զընդվայր ջանսն 'ի դարման չարեացն, դիմելով ընծայիւք առ ամիրապետս և առ ոստիկանս, և մերկացեալ յամենայն ընչից՝ ո՛չ ինչ փառաց և պատուոյ հասանել, և կորակոր յետս դարձեալ՝ սմա ևս տուդանել: Ծով է, ասէի, բազմակոհակ տուն այլազգեաց, որ ոչ լնու երբէք. եթէ 'ի նա ապաւինիք՝ յուզեալ խռովէ, քայքայէ, ապականէ. և եթէ լնուլ փութայք զծարաւ նորա, ոչ ինչ յագի՝ մինչև և զձեզ զամենեսին ընդ ամեհի կոհակօքն իւրովք անհետ ծածկեսցէ: Զի՞ այդչափ լքոյց զձեզ՝ իբրև

հրոսակաց գնդից դիմումն՝ այս յանկարծ
օրէն գալուստ Սմբատայ. արդ գիտա-
ցէք զի և զամենեցուն զօրաց նորա
զմիտս յանկուցի յիս: Մի՛ ևս այլ երկմտի-
ցիք զի 'ի ձեռս մեր է արդ յաղթութիւն:
Ընտրեցէք ձեզէն թագաւոր խորհրդա-
կան. որ իբրև զձեզ յեռանդն հարեալ՝
քաջութեան խորհրդովք և զօրութեամբ
գիտիցէ թումբս ամուրս զաննկուն բա-
զուկս քաջացն ընդդէմ ահագին ջուրց
կոհակացն արկանել. զի՞ ցարդ լռեալ կայք
ընդ լծով վատազգի առն, որ ոչ այլ ինչ գի-
տէ՝ բայց եթէ պեղել և յատակել եթէ
գուցեն ինչ խափան ալեացն ընդդէմ, և
ընդ անուամբ խաղաղութե՛ լքանել զբա-
զուկս քաջաց, և կորուստ անփախուստ
տանս արեաց ածել 'ի վերայ: Արկէք 'ի
կշիռ զմի զայս ձախողութիւն դիպաց
բախտին ընդ այնչափ ծառայութեանցն՝
յորս մատնեցայք 'ի պատճառս անխոր-
հուրդ առաջնորդութեան, որ զքաջս
ընդ քաջաց 'ի կռիւ զարթոյց սուր 'ի կող
ընկերին իբրև 'ի սիրտ թշնամւոյ մխել
յանխնայ. մինչև բազմաց իսկ նա և յան
լուր վատթարութիւն խոնարհեալ՝ հրա-
ւիրել 'ի ներքս զբուռն թշնամին, միա-
նալ 'ի նոսա, իբրև եթէ մահ խնդրել
անձանց և որդւոց: Զէ ժամ 'ի դէպ երկ-

րորդել քեզ աստանօր զԹիւ առաքինեաց
քաջաց Հայոց՝ զորոց մի առ մի յիշատա-
կեալ և զվաստակս՝ և եԹէ որպէս յուսա-
հատ'ի ձեռս Թշնամեաց կորեան առ վատ-
Թարութեան Թագաւորաց, և վասն ան-
խորհուրդ լռութեան իշխանաց: Ոչ կա-
րեմ բանիւք պարզել զեռանդն քաջորե-
րոյն և զզայրոյԹ սրտից նոցա և զբաղձանսն
ձեռն 'ի գործ առնելոյ: Ես դարձեալ
յաւելի 'ի բանսն՝ ոչ ինչ տեղի տուեալ
շիջանել կրիցն, եԹէ ոչ ուստեք ու-
մեք երկիւղ 'ի սիրտ անկանիցի, ոչ մի ինչ
կասկած. զի փորձիւ 'ի վերայ հասեալ եմ
զօրութեան առն առն իւրաքանչիւր,
մինչև կարող լինել մի մի 'ի ձէնջ զտասն
արանց զդէմ ունել և պարտել. և եԹէ
զերագութիւն ընդ քաջասրտութե՛ խառ-
նիցեմք, յոյս մեծ է իմ եԹէ ընդ վատա-
խորհուրդ Թագաւորին և զամենայն զօ-
տարախորհուրդ վատացն զգունդս իբրև
զխռիւ 'ի հուր և 'ի սուր մաշեսցուք, և
վաղվաղակի անհարկ և ազատք լիցուք, և
անուն քաջութեան մերոյ զնախնի հայ-
կազանցն զյիշատակ զարԹուսցէ 'ի միտս
ամենեցուն, և ահ մեր անկցի 'ի վերայ
ամենայն ազգաց: Ընդ այս բան ոչ կա-
րէին այլ ևս հանդարտել բաւել. մինչև
հարկ ինձ եղև 'ի յորդոր մատչել 'ի չափու

ունել զգրգիռն: Արդ իսկ, ասացի, այ-
ժըմ ելանեմ ես առ նա խօսել 'ի դաշն խա-
ղաղութեան իբրև եթէ առ 'ի մոռացօնս
գրել զանցեալսն. ես զդաշոյն նորա 'ի
նմանէ կորզեալ, իւրումն շիջուցից զարև
նորա. գիտասցէ նա եթէ ո՛ իցէ Ատըր-
ներսէհ. և 'ի սրբել զնախատինս իմ յան-
ձնէ՝ սրբեցից և զձեզ 'ի նախատանաց վա-
տութեան և 'ի լծոյ բռնութեան հագա-
րացւոյն: Այն ինչ աւարտեալ բանիցս՝
այր իւրաքանչիւր զերդումն հաւատար-
մութեան կրկին հաստատէին, և ընդ
դէպն բարեպատեհ հաճեալք՝ այր այր
առաջին 'ի քաջութեան լինել ըղձանային:
Ահա այսպէս պատրաստականք յօրի-
նեալք՝ սպասեալ մնան յինէն աւետաբեր
լրոյ: Այս է ահա, քաջդ Սուրէն, և
քոյդ վրիժուց լրումն. այսօր կամ ազա-
տարար կարդասցեն զմեզ ազգին և կամ
լացցեն զանպարտ զմահ իմ. և զթագա-
ւորն կամ այր անխորհուրդ կարդասցեն
լուծեալ զվրէժ իւրումն անմտութեան,
և կամ յաղթական խաղաղարար: Բոյս
բարուց է ամբոխին՝ կենդանւոյն և յաղ-
թականին տալ զպսակ, և մեռելոյն զար-
համարհանս կշռել: Այլ թէ յաջողեսցի
ինձ կամ թէ ոչ, եթէ 'ի փառս և եթէ
'ի մահ, շատ է ինձ այն՝ զի զիմ և զքոյդ

նախատանաց զվրէժ խնդրեմք 'ի միասին :

ՍՈՒՐԷՑ

Մի՛ ինչ երկմտիցես եթէ փառք ամենայն ուստեք յաճախեսցեն մեզ վասն այսորիկ. և եթէ դէպքն ոչ յաջողեսցին, գուցէ զրկիցիմք 'ի կենաց, այլ ոչ և 'ի փառաց անուան : Որ միանգամ վասն արդարութեան մրցեսցի ոք, զամենայն բերան ստասցի անձին գովաբան : Ո՞չ ապաքէն զանուանս նախնեացն առաքինեաց ցայսօր իբրև զկենդանեաց 'ի գովեստ առեալ մեծարեմք : Այլ ես իսկ ելից ըզհետ քո, և անդէն ընդ քեզ սուր 'ի կող նորա մխեցից, և բաժանակից եղէց զաղէտս մահուն ածել 'ի վերայ նորա : . . Բայց զի՞նչ ունիցի Դեհրան այսր առ մեզ:

ՏԵՍԻԼ Բ.

ԴԵՀՐԱՆ, ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՍՈՒՐԷՆ

ԴԵՀՐԱՆ

Ա՞ստ իցես տէր Ատրներսէհ. ես յածէի 'ի խնդիր քո և հազարապետին Վահրամայ հրաւիրել զձեզ այսր. զի արքայ աստէն այժմ նստելոց է յատեան առաջի ամենայն սպայից և զօրագլխաց, իշխա-

նացն և նախարարաց գաւառապետաց:

ԸՏՐՑԵՐՍԷՀ

Կամի արքայ հանել զմեզ յատեան, Ճշմարիտ իցէ Դեհրան:

ԳԵՀՐԸՑ

Ըմերդ նախարար մնայ քեզ առ դրան արքունի վրանին՝ ընդ իւր ունելով զօրականս քանի մի, լուեալ զի դուք պատրաստեալ էք մատչել առ արքայ, զի առեալ ածիցէ զձեզ այսր. և 'ի յամել ձեր՝ կամէր այսր գալ ընդ իս զհետ քո. այլ հնարիւք իմն զառաջս կալայ զնորա: Զգոյշ լեր անձին քում տէր, զի մի՛ ինչ 'ի չարեաց պատահեսցէ քեզ:

ՍՈՒՐԷՑ

Զի՞նչ յայտ առնիցեն այդպէս յատեան կոչել զձեզ: Ա՛հ. մատն եղէք անձանց բարեկամք, նա անշուշտ դատաստանաւ պատրաստեալ է 'ի ձեր դատապարտութիւն:

ԸՏՐՑԵՐՍԷՀ

Ո՛չ, մի՛ այդպէս. յոյս կալցուք բարեաց:

ՍՈՒՐԷՑ

Ո՛ մեծդ Ատրներսէհ, անշուշտ կո-

րուստ է քեզ. վայրապար է երկմտել: Եթէ կոչէ զձեզ 'ի մահ, այլ ոչ գիտէ զի և յինէն պարտի զանգիտել. եթէ չարի իմիք պատահիցէք, և ես միայնակ հարից և անկայց. գիտեն և ձեռք իմ հարկանել զայս պաշտօն: Արդ ես խորհրդակից բարեաց եղէց քեզ. աճապարեա՛, ել, մեկնեաց 'ի բանակէս, զի զանողոքելի զցասումն 'ի դերևս հանցես. շատ է ինձ լալ զաղէտս հօր իմոյ, մի և զքեզ 'ի ճիրանս նորա տեսից մատնեալ՝ ինձ և ժողովրդեան քում յանմխիթար ցաւ անօգուտ:

ԱՏՐՃԵՐՍԵՏ

Կամիցիս ինչ քաջդ Սուրէն այդպէս երկչոտի բարս ունել ինձ և վատութեան պարսաւանս տալ շփել զինև: Մատն անձին եղէց փախստեամբս իմով. ձեռնթափ լինել յամենայնէ՝ ուր պարտ էր ընդ ամենայն անցանել աներկիւղ. եթէ 'ի խօսել հաշտութիւն ընդ մեզ եկեսցէ, և տարապարտուց իցէ կասկածն, ընդէր սնոտի երկիւղիւ մատն եղէց գործոյս. այլ եթէ ոչ յաջողեսցի պատահել նմա, այլում դիպողագոյն ժամու մնասցէ. բայց եթէ ճշմարտութեամբ դատակնիք մահու կապեսցէ 'ի գլուխ մեր, յառաջ քան զպատահել նոցա ինձ, ես կենդան-

ւոյն իջուցից զնա 'ի դժոխս անվրդով ա-
րութեամբ և ճեպով, գուցէ և այնպէս
անդէն և զսիրտ քաջացն յանգուցից յիս:

ՍՈՒՐԷՑ

Եւ զի՞նչ քեզ լինիցի եթէ աստէն յե-
րևել ձեր առաջի նորա՝ տացէ հրաման
կալ և կապ առնել զձեզ մինչ չև մերձ
գնացեալ առ նա:

ԸՏՐՑԵՐՍԷՑ

Քաջութիւն բազկի ընդ առաքինու-
թեան անաղօտ յիս փայլեսցէ. 'ի գլուխ
անդր վախից անստգիւտ ժամանեալ, ճա-
կատ ընդ մահուն տուեալ պսակեցայց
փառօք. նախանձու մաշեսցի և թագա-
ւորն իսկ ինքնին 'ի ճապաղիս անդ արեան
իմոյ, ոչ կարացեալ զվատութեան անուն
կարդալ յիմ վերայ. և 'ի զարհուրանաց
սրտին յիմարութիւն առցէ զնա: Աներ-
կիւղ վստահութեամբ սասանեցուցից և
զնոսա որք մերձ առ իս եկեսցեն, և զկա-
րևոր ինձ զէնս 'ի նոցանէ կորզեալ, դար-
ձեալ յաջողեցայց 'ի գործն: Արդ ես
կացից մնացից աստէն գալստեան Սմբա-
տայ, այլ դու քաջդ Սուրէն, 'ի դէպ իսկ
է քեզ մեկնել աստի 'ի բաց ելանել. յան-
ձին բեր դարձեալ զառաջին արութեան

խորհուրդս քո: Եթէ ձախողակի հանդի-
պեսցին դէպք դաժանք, մեռայց քաջու-
թեան խորհրդով՝ թէպէտ և աւաղելի ոք
զիս համարեսցի. խորհուրդք քաջութեան
են՝ զի ոչ ինչ յետնեալ կասեցայց 'ի դնե-
լոյ 'ի գործ զարժանին առն դիւցազին.
և աւաղելի՝ զի ոչ ըստ արդարութեան
վաստակոց կշռեցաւ ինձ հատուցումն:

ՍՈՒՐԷՑ

Մնա՛խաղաղութեամբ Ատրներսէհ, ողջ
կաց իշխանդ քաջազօր, մի՛ լսեր ձայնիս.
արդ և ես վերստին զգենում քաջալերս
յանձին. զմեղկութե՛ խորհուրդս իմ առ
ոչ ի՛նչ գրեսցես: Եթէ նա արդ 'ի մահ
զքեզ կամի յուղարկել, արդ զճանապարհս
ունի նա, զի մի՛ զերծցիս 'ի ձեռաց:
Կա՛ց աներկիւղ վստահութեամբ արժանի
քումդ արիական սրտիդ և առաքինի մը-
տաց. եթէ մեռանել անկ իցէ, 'ի սէր
արդարութեան մեռցիս անվեհեր. թէ
և մահուամբ պսակեսցին գործք դիւցա-
զանց, և 'ի մահու անդ զթշնամիսն սըր-
տաբեկ պակուցանեն: Եւ մի՛ ինչ կաս-
կածիցես անգործ մնալ վրէժխնդրու-
թեանն. զի ես ինքնին 'ի գլուխ տարեալ
եկից զհետ քո:

ԱՏՐՇԵՐԱԷՏ

Մի՛ ինչ վնաս առնիցես անձին քում. զի բանք քո են միակ մխիթար հօր քում. ակն կալ այլում ևս դիպողագոյն ժամանակի՝ հանել զվրէժ նախատանաց և մահուան զիմ և զնորա կորստեան աչացն. և ես յուսով մեռանիցիմ կուտելով սպառնալիս անսուտս 'ի գլուխ նորա՝ եթէ է է վրէժխնդիր և մահուան իմոյ:

ԱՈՒՐԷՑ

Գիտեմ զի յանհնարիցն է ինձ այդ. յանհանդուրժելի ցասումն վառեալ իմ ընդ լուր մահուան քո, 'ի մի և եթ վայրկեան ոչ կարեմ հանդարտել. յայնժամ մահ իմ և նորա 'ի միասին անագորոյն բաղդին 'ի նուէր մատուսցի. կամ 'ի միասին ընդ քեզ յաղթանակեսցուք՝ պատուեալ զարդարութի՞ և փոխարէն պատուեալ 'ի նմանէ, և կամ մեռցուք 'ի միասին՝ խնդրելով զվրէժ անիրաւութեանց, այլոց յանձն արարեալ ձեռն տալ արդարութեան ծածկելոյ ընդ թանձր քօղով խոտորնակ բաղդին:

ԱՏՐՇԵՐԱԷՏ

Այլ աղաչեմ մի՛ յանխորհուրդս յարձակեսցիս, չև հաւաստեացն քաջ հասեալ 'ի վերայ:

ՍՈՒՐԵՑ

Մի՛ ինչ երկմտիցիս, յուշի կապեալ եթէ յարդարութենէ առաջնորդիմք՝ որ ոչն գիտէ պատրել: Գնայ ընդ Դէհրանայ:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Որպիսի՛ խռովայոյզ տագնապ կրեմ՝ի սրտիս: Է՛հ, 'ի բաց յինէն երկիւղ սնոտի. արութ՝ք քաջութեամբ կեցի միշտ, և նովին դարձեալ եթէ մեռանել անկիցէ՝ մեռայց. այլ ոչ ոք տեսցէ յիս ընկճելոյ կերպարանս: Պատերազմն այն Եգերացւոց, այն եկաց սկիզբն այս ամենայն աղետաբեր չարեաց. առաւելութիւն սիրոյն իմոյ առ Սմբատ ծնաւ զանչափութիւն զայս ատելութեան 'ի սիրտ իմ: Ա՛հ. եթէ փոխանակ բարեմարդութեան զդաժանութիւն 'ի գործ արկեալ էր իմ... զայն սուր զոր 'ի սիրտս Կոստանդնի պարտ էր ինձ մխել, արդ անցուցից ընդ սիրտ բարերարին նորա: Ծանիցեն և Եգերացիք, զի եթէ Սմբատ զարդար զիմ վրէժխնդրութիւն արհամարհեաց, և զիս ծաղր և ծանակ առաջի իւրեանց կացոյց, ինքն հատոյց ինձ զփո-

խարէն անարգանացն. և ինքեանք երկի-
ցեն լուծանել զվրէժ յոխորտանացն ընդ-
դէմ ինձ: Հայի. Ահա գայ վատախոր-
հուրդն տարաբախտ... Արհամարհեալ
են առաջի իմ մահ և դժոխք... և ամե-
նայն զօրագլուխք և ամենայն ազատանին
ընդ նմա. երկիւղ մի ագցի ընդ յարկաւ
իմով. այլ երկիցեն յարիական ոգւոյս
որք մօտիցինն առ իս:

ՏԵՍԻԼ Դ.

ՍՄԲԱՏ, ՎԱՀՐԱՄ, ԴԵՀՐԱՆ, ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՍՊԱՅՔ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ

ՍՄԲԱՏ

Ո՛իշխանդ Ատրներսէհ, և դու հազա-
րապետդ Վահրամ, և երկոքեանդ եր-
բեմն իմ աջ բազուկ ընդդէմ թշնամեաց
իմոց երկոքումբք. իմաստուն խորհրդովք
և արութեամբ քաջութեան:.. Քանի՛
չարաբախտ գտայ ես, զի տեսի և զձեզ
ընդ թշնամիս անձին իմոյ ընդդէմ ինձ,
'ի վերայ իմ յարուցեալ:.. Յանբոյժ ցաւս
արդ և քաջալերիմ, զի տեսանեմ զձեզ
դարձեալ առ իս յապաշաւ 'ի միտս
եկեալ, և զիջեալ 'ի խաղաղութիւն:..

Ես ոչ ստգտանեմ իւիք զձեր զայս գնացս. քանզի ես հայր կացեալ եմ ժողովրդեան իմոյ. բայց եթէ ես այնպէս պակասիմ'ի պաշտամանս զի և խոհականագոյնքն և ազգասէրք և մեծամեծք'ի դէպ դատին չճանաչել զիս իւրեանց հայր, ո՞է նա որ ընդդէմ կալ կամաց ազգին յանձն առնուցու: Միայն այս ինչ ցաւէ մեծապէս, զի փոխանակ առաջի առնելոյ ինձ զհաճութիւն կամաց բազմաց, այդպէս դաւով և արեամբ կամեցայք վճարել զգործ զայս մեծ, փոխանակ ջանալոյ հանել'ի գլուխ խոհական քննութեամբ: Կրից յոյզք հուր է բորբոքեալ. ուր հուր է. անդ հրդեհք, աւերք և աղեկէզ մորմոք. բարութիւն և ոչ մի: Ես արդ մտադիւր յանձն առնում գրել'ի մոռացօնս զանցեալսն զամենայն'ի սէր նկուն եղեալ և այն ինչ սակաւուք զգլուխն'ի վեր ամբարձեալ վշտատես և տառապեալ ազգին իմոյ. և ոչ իբրև'ի նուաճեալս ոմանս ակնարկեմ'ի ձեզ. այլ որպէս յերեկն և յեռանդն և այժմ պատուեմ զխոհականութեան միտս ձեր. և զոր յառաջն պարտ էր ձեզ առնել, և որում փափաքէքն, ղնոյն ես ահա առաջի առնեմ ժողովեալ յատեան զամենեսին զգլխաւորս զազատս: Արդ դու իշխանդ Ատրներսէհ,

և դու հաղարապետդ Վահրամ, 'ի բաց 'ի մտաց հանեալ զամենայն զխէթս՝ լուարո՛ւք զոր եսն խորհիմ: Թագաւորութիւն այս մեծ Հայոց, Ճոխութիւնքս ամենայն ցանկալիք, իշխանութիւնս հրամանահան և պայծառութիւն պատուոյս. այս ամենայն յոր վայելեմ՝ թէպէտ 'ի հօրէ ինձ պատշաճէր, և խաղաղութեամբ մարթ էր ինձ ելանել յայս աթոռ, այլ բազում արեանց հեղութիւնք եղեն՝ մինչև խաղաղացեալ անցի 'ի գահ քաջացն Հայոց, և քրտանց և վաստակոց տարայ. այլ այս ամեայն և որ ինչ նախանձելի մարդկան Թուին, և որոց վասն մեծարեն զիս, այս ամենայն, ասացի, են պատիր և դուզնաքեայ խտաղանք աչաց՝ ցանկալի որոց չենն ստացեալ, և արհամարհ իւրեանց տերանցն. Եւ առաւելութեամբ ինձ արդ որ զազգիս միայն զբարգաւաճանս խնդրեմ, նուիրեալ 'ի սէր նորա զամենայն ինչ զիմ, նաև զարիւն իմ և զկեանս: Պատուասիրութիւն գրգեալ առ ժամն՝ տաղտկութիւն ծնանի առյապա, և այլ իմն նորոգ ցանկութիւն ընդ այնր 'ի միտս ծագէ. և յար զհետ նորագունից անհասիցն բաղձացեալ, իբրև ո՛չ ինչ այլ 'ի ցանկալեաց Թուի գտանել, դառնայ հայի յանձն, և ծանուցեալ լոկ և Թափուր յամենայնէ,

զի ուր ոչ է խաղաղութիւն՝ անդանօր և
ո՛չ ինչ վայելք մեծութեանց, անդ տը-
ւայտանք և տառապանք, անդ անարգ է
ամենայն ինչ քան զցնցոտիս անգամ որ 'ի
յարկս աղքատաց, ապա այնուհետև 'ի
խնդիր խաղաղութեան ելեալ շրջի մինչև
գտանիցէ: Զայս ամենայն յիմ վերայ
ճշգրտեալ տեսանեմ. ցանկալի էր ինձ
երբեմն ամբառնալ յայս գահ՝ մինչ աշ-
խոյժք երիտասարդութեան լուցեալ վա-
ռէին յիս. և կամեցեալ ո՛չ ինչ ստնանել
աստուածպաշտութեան, միանգամայն և
զիրաւունս անդրանկութեան մի կորու-
սանել, չառնուի յանձն շնորհել ումեք՝
մինչև 'ի պատերազմ ընդ Աբասայ հօրեղ-
բօր իմոյ գրգռել, և յաթոռն լուացեալ
ճապաղեօք քաջազանց՝ անցեալ բազմել:
այլ յայնժամ ոչ գիտացի զինչ իցէ որում
ցանկային: Իսկ գահակալեալ՝ միանգա-
մայն 'ի վերայ հասի եթէ զհետ դառն
վշտաց ելեալ է իմ. զի հոգք ալէտանջք
շուրջանակի զտիւ և զգիշեր, հաղբք և
դարանք ամենայն ուստեք, ո՛ թշնամի, ո՛
բարեկամ՝ ծածկագիտին Աստուծոյև եթ
յայտնիք. յորդեն արեանցն հեղեղք, ար-
դարք ընդ անարդարս կորնչին՝ զի հաս-
տատուն կացից 'ի գահս. երկիւղ, մահ,
կորուստ անփախուստ, հառաչանք անօ-

գուտք, խաղաղութիւն և ոչ մի. ո՞ւր բերկրանք և հեշտութիւն: Ի հնումն յորժամ 'ի Հայս կռոցն պաշտամունք յաղթանակէին, լինէին երբէք երբէք թագաւորք անդորրացեալք 'ի գահին. քանզի 'ի դիսն մոլեալք՝ զթշուառութիւն կուրութեան մտացն խաղաղութիւն անուանէին, և ոչ ոք ընդդէմ դառնայր նոցա. այլ այժմ քանզի թագաւորէ Ճշմարտութիւն և պաշտի 'ի բազմաց ստութիւն, վասն այսորիկ հարկ 'ի վերայ կայ՝ յար 'ի խռովութեան տատանել, և երկուստեք յանձուկս ահի և դողութեան. զի եթէ զմարմնոյ մահ հնարիմք խափանել, մի՛ գուցէ հոգւոյն մահուան հանդիպեսցուք: Լուայք արդ բարեկամք քաջք՝ եթէ յո՛ր յուզմունս խորհրդոց ծփիմ անզերծ: Արդ զերկմտութեան զիմ խորհուրդ լուծանել 'ի ձէնջ խնդրեմ առաջի ատենի քաջորերոյս, և 'ի նոցունց առնուլ զհաւանութիւն կարծեաց ձերոց, և հանդարտել և հանդարտեցուցանել նաև զմիտս ամենեցուն, որ քաջ հասու էք քան զիս բազմաց իսկ խորհրդոց և մտաց քաջացն Հայոց. և մի՛ ակն առնուցուք երեսաց՝ առ 'ի շուք դնել անուան թագաւորի՝ զոր ծանր իսկ է բազմաց լսել յիմ վերայ, և ինձ ծանրատաղտուկ 'ի կրել: Խօսեցարուք իբրև առ բա-

բեկամն ձեր և ոչ առ տէրն : Արդ 'ի ձեզ ապաստան առնեմ զՀայաստան, զթագաւորութիւնս և զիս իսկ. ընտրեցէք ըստ արժանւոյն եթէ զամենայն Հայս արկցուք ընդ իշխանութ՚ն այլազգւոյն, և կամ ազատ կացցեն, և եթէ ո՞ գահակալեսցէ. կարգեսցուք ըստ ակնարկութեան ձերում. և ես ըստ այնմ կացից դարձեալ իշխան՝ կամ հրաժեշտ առից յաթոռոյս :

ԸՏՐՃԵՐԱԵՖ

Մեծապէս զարմացեալ իմ ընդ այս խորհուրդ տեառնիմոյ, և զիմոց մտաց անբաւականութիւն խոստովանեալ՝ հնազանդեցայց ակնարկութեան ձերոյ և ատենիս՝ մի ինչ աչառանօք դատել և խօսել, և առ ժամս զպարտուպատշաճ յարգանացն ցոյց 'ի բաց դնել, զի մի արգելուցու զիս տալ զխորհուրդ զառ 'ի յինէն պատշաճականն կարծեցեալ : Լուր ինձ արքայ, մատուցեալ ունկն բանից իմոց իբրև այր՝ որ կամիցի փառաց անձին շուք դնել, զորս դու անընտրողաբար ընդվայր հարեալ արհամարհ գրես անդէպ յոյժ մտախոհութեամբ : Իմ խորհուրդք այս են արքայ. չէ 'ի դէպ հրաժարել 'ի փառաց որ արդարութեամբ իցէ ստացեալ, այլ մանաւանդ վայելել անխիղճ

յայնմ՝ ուր ոչն գուցեն ինչ մեղանք 'ի ժառանգելն. քանզի արդ 'ի վերայ հասա-նեմ զի և 'ի վերայ քո Ճշմարտի առածն՝ ե-թէ ըստ առաւելութեան գերազանցութեան ստացեալ բարեացն ուրուք՝ յաճախեն և զրպարտութիւնք 'ի վերայ նորա անիրաւ ստացութեան, միայն եթէ թոյլ լինիցի զրպարտչաց: Արդ մի մատուսցես ունկն վայրապար շաղակրատանաց, և յառա-քինի քաջութեան խորհրդոց մի կասեսցիս: Արդարութեամբ գահակալեցեր, և նոյն արդարութիւն է որ քեզդ առաջնորդէ հովուել ազգիս յալեկոծեալ ժամանա-կիս. յԱստուծոյ ընկալար զիշխանութիւն բարձիդ. բարեպաշտութեան քում նա խնամ կալաւ, և 'ի ձեռս քո աւանդեաց զժողովուրդ իւր առաջնորդել ըստ կամս իւր. եթէ դու ձեռնթափ լինիցիս խու-սափելով 'ի վշտաց, մատնելով 'ի ձեռս այլազգեացն զժողովուրդն Աստուծոյ, կամ յայլ ոք ամբարիշտ, առաջի Աստու-ծոյ և մարդկան ըստ արժանւոյն անար-գեսցիս, և ընդ երկրաւոր թագաւորու-թեան և յերկնաւորէն զրկեսցիս. և ա-մենայն արտասուք զրկելոց և անէծք նե-ղելոց և արիւն անմեղաց հեղեալ 'ի պատ-ճառս քո՝ յերկինս ելցեն ամբաստանք զքէն առաջի աթոռոյ բարձրելոյն. և

այսպէս կարծիցեմ 'ի խաղաղութեան վայե-
լել: Այլ եթէ լսես ինձ Տէր, յոչ
ինչ իրաց երկնչիցիս. զի Աստուած է քեզ
խնամակալ. նա եհան զքեզ յայս գահ,
և թէ ինքն ունի զձեռացքոց՝ ահա և յայս
դէպս յայտնապէս երևեցաւ. յորում,
աւա՛ղ, զի և ես բաժանակից ցուցայ չա-
րեաց խորհրդոց: Վայրապար դարանքն
ձգին քեզ, 'ի զուր խորհուրդք չարա-
հնարք, 'ի նանիր յաչաղեն յօծեալ տեա-
ռըն. ընդ վայր է ա՛մ ճիգն թշնամեաց.
խորհել խորհին զչարիս, այլ չիք որ 'ի
գործն եկեսցէ: Եւ եթէ մատն եղեալ
մեռցիս, և այն քեզ 'ի փառս լիցի աստ և
'ի հանդերձեալն. եթէ համարիցիս, ար-
քայ, հակառակ զբանս իմ գործոց իմոց,
զի մինչդեռ ձեռն ընդդէմ քո վերացու-
ցեալ երևէի, արդ զթագաւորելդ խըն-
դրեմ, ասացից, քանզի խնդրեցեր ասել
ինձ զամենայն անպատրուակ: Տեսեալ
իմ զյոլովութիւն որերոյն որ հակառակ
քո խորհին խորհուրդ, և լուեալ զպատ-
ճառսն, կարծէի գտանել իրաւանց և
յաղթել արդարութեանն և յաջողել. և
ես զարդարութեանն ասպնջականութի՛
քան զզօդ բարեկամութե՛ն գրէի գեր 'ի
վերոյ: Այլ զի արդ ըստ յաջողել յաղ-
թութեան 'ի ձեռս քո արքայ, և 'ի տա-

բաձայնելոյ խորհրդոց որերոյն, ակն յայտնի տեսանեմ, զի իջանելքո 'ի գահոյդ ևս չար պատառումն գործեսցէ, և ամենեքին կացեալ մնացեալ անգլուխ, եթէ արդ զփորձ առեալ՝ ոչ նստիցին 'ի զեղջ ընդ խորհուրդս իւրեանց, փութացեալ և 'ի դարմանն, ապա ևս առաւել մեծապէս տուգանեալ լացցեն անօգուտ զչարիս: Զոր ինչ եսս խորհիմ՝ այս է. կարծեմ և զհազարապետէն Վահրամայ այսպէս զմտաւ ածել:

ՎԱՀՐԱՄ

Այո՛, և միաք իմ հաւանեալ են 'ի դոյն, եթէ իրաւամբք կարէ կալ յիշխանութեան իւրում արքայ Սմբատ՝ զոր ետուն նմա օրէնք աստուածային և մարդկային, և վարէ արդ առաքինութեամբ և քաջութեամբ՝ զարդարութեան պսակն ունելով 'ի գլուխ, զոր և դէպքն հաւաստեն. այլ ոչ և ընդ այն՝ եթէ անմարթ իցէ նմա ըստ կամս իւր հրաժարել 'ի պատուոյն, և եթէ պարտական իցէ արեան անմեղաց և յայլն ամենայն: Գիտէ Աստուած խնամել զարարածս իւր. եթէ ցարդ սմա յանձն արարեալ իցէ, գուցէ յայսմհետէ կամիցի յայլոց ձեռն այլազգ ինչ տնօրինել. ո՞ խորհրդական կացցէ

Աստուծոյ : Անկ է ամենայն ումեք կար-
գելըստ հաճոյս զճահաւորն , այլոց մա-
տակարարել կամ առ իւր ունել , զոր
շնորհեալ է և խառնիճաղանճին առնել՝
քեզ ընդէ՞ր լինիցի անհնարին . առ ի՞նչ
գերի մեծութեանն կայցես : Ո՛չ տէր .
իշխան ես քոյոցն ամենայնի . մի՛ յանձին
կալցես գերիլ 'ի նոցունց . արա զպատ-
շաճն քեզ անկաւոր ըստ ընտրութեան
խոհականութեան քո . զոր քեզ ծանր
համարիս , ո՞ բուռն արասցէ 'ի նոյն : Աս-
տուած ոչ զոք բռնադատէ քան զկարն 'ի
վեր առաքինանալ . եթէ ոչ հանդուրժես
տանել զբեռն իշխանութեանդ , և եթէ
գիտես զի հակառակորդք բազումք են
քեզ , և խռովութիւն և աղմուկ յուզի
անընդհատ 'ի պատճառս քո , և եթէ
յայլ ոք յանձնեսցես զդահդ՝ գուցէ և
ևս յաջողեսցի խաղաղութիւն աշխարհին ,
ընդէ՞ր ոչ կարիցես շնորհել այլում զպա-
տիւ իշխանութ՞եդ : Գործ որ լինի պատ-
ճառ կորստեան մարդկան՝ յիրաւի ան-
պատեհ է . զոր և իշխանդ Ատրներսէհ
հաստատէր . այլ ո՞րպէս մարթիցի հա-
ւաստել եթէ հրաժարելն 'ի պատուոյ
իցէ առիթ կորստեան . այլ մանաւանդ
բազմօք հաւաստի է խաղաղութիւն գտա-
նել այնու աշխարհիս . զի խաղաղասէրք

հպատակին ամենայն ումեք, իսկ աղմկա-
յոյզ մարդիկ թէ ոչ ընդ քեզ հաճք իցեն,
գուցէ այլում հնաղանդեսցին: Եւ քեզ
ևս այս 'ի փառս եղիցի. յաշխարհի թո-
ղուցուս անուն խաղաղասէր թագաւորի՝
մինչև յանձն առնուլ հրաժարել. և թէ
ոչ ինչ խնդրեցեր զպատիւ անձին, այլ
զժողովրդեանն անդորր վայելս, նա և
յերկինս ոչ անվարձ ելցես առաջի Ա-
տուծոյ: Ունկնդի՛ր լեր տէր աստուա-
ծային ազդեցութեանն, և մի ինչ երկմը-
տիցես: Լուր ինձ արքայդ հզօր. և 'ի պա-
տիւ և 'ի փառս ամբառնալ՝ այն բաղդին
են պարգևք, բայց առ 'ի մերկանալ անտի՝
առաքինութեան պէտք են. յոյժ սակա-
ւուց է յայս գործ վեհական ձեռն ար-
կանել: Եւ այս ևս յուշ լիցի քեզ տէր,
զի թէպէտ և բազում ճգունս առցես
յանձն, ընդ քով ձեռամբ ոչ երբէք խա-
զաղութեան վիճակեսցի ազգ Հայոց, ըստ
գուշակ լինելոյ պատահարաց անցելոց
և այժմուս և ապագայից: Գիտես իսկ՝
ցարդ քանի՛ք յիշխանաց և 'ի նախարարաց
դարանէին կենաց քոց՝ թէպէտ և 'ի դերև
ելին. ո՛րչափ ընծայս ոսկւոյ և արծաթոյ,
ո՛րչափ ինչս ծախեցին բազումք յայլազ-
գիս՝ 'ի յարուցանել զաղմուկ և 'ի տա-
պալել զաթոռ քո. և քանի՛ աւերումն

աշխարհաց և դաւառաց վասն այսորիկ ։ Ընդ ծանր աղքատութ՚ տուայտին ամենեքին ։ Ուսան օտարք թշնամիք կեղեքել զազգս մեր. 'ի նոցանէ առնուն՝ յառնել ընդդէմ քո, և 'ի քէն դարձեալ առնուն՝ 'ի խաղաղել. ցե՞րբ իցէ այս ընդվայր կորուստ ։ Եւ ո՞ երկմտեսցի եթէ այս քո խորհուրդ չիցէ յԱստուծոյ 'ի փրկել զքեզ և զժողովուրդն յանդադար ծփանաց խռովութեան ։ Աղէ լո՛ւր ինձ արքայ, և մի՛ վայրապար յորոգայթ չարեաց արկցես զանձնդ ։ Ցանկալի է արդարև մեռանել թագ 'ի գլուխ, թէ և 'ի դաւաճան ձեռաց, սակայն ցանկալին այն մահ արատս ածէ զմեօք՝ յորժամ մարթ էր մեզ ևս առաւել փառօք կալ յաշխարհի ։ Այս խորհուրդ էր որ և զիս կուսակից դաւադրացն երևեցոյց, այլ քաւ յինէն ձեռն մխել յինչ՝ յորում չգուցեն փառք ազգին և օգուտ հասարակաց աշխարհիս ։

ԱՏՐՑԵՐԱԵՑ

Եթէ վասն սիրոյ հայրենեաց պէտք իցեն վաստակել, հազարապետդ մեծ, հարկ էր քեզ ցանկալ որոց եսն 'ի յորդոր մատեայ կարևորացն անձին արքայի և ազգին ։ Եւ զի՞նչ հաւաստիք իցեն եթէ կացցէ հաստատուն իշխանութիւնն յայլ

ոք փոխանցեալ. Նա փոխանակ օգտու-
թեան մեծամեծ աղէտից մարթ է պա-
տահել: Եթէ սա տէրն խաղաղարար և
ժառանգ աթոռոյն այսչափ հակառա-
կութիւն կրէ արդ, քանի՛ պատիկ առաւե-
լուցուն աղմուկք և շփոթք՝ եթէ օտար
ոք և անծանօթ 'ի բազմաց նստիցի 'ի գա-
հըն, և կամ յազգէ սորա խռովարար ոք:
Սա հայրօրէն խնամով հաճէ զմիտս ամե-
նեցուն, որում դիւրին է խաղաղել զըս-
տամբակս. և այլ ո՛չ ոք բաց յԱստուծոյ
կարասցէ ցածուցանել զգրգիռ ապստամ-
բութեանն: Այլ և յիջանել սորա 'ի գա-
հէն և 'ի խլրտել ոմանց ոմանց տհաճեալք
ընդ փոփոխութիւնն՝ և ևս զօրասցին
շուրջանակի թշնամիք, և պատճառս մե-
ծամեծս առցեն 'ի կեղեքել զազգ մեր,
և ոչ ևս փրկութեան ինչ յոյս մնասցէ
մեզ: Այլ տէր արքայ, եթէ ունկն ինձ
մատուսցես, ոչ ինչ փոփոխութեան են
պէտք, միայն եթէ 'ի դէպ է և հարկ իսկ
կարևոր փաստիւք հաւաստել յատենի
աստ՝ ամենեցուն զօրավարաց առաջի և
զօրապետաց և քաջորերոյն զմեծամեծ
չարիսն որք յառաջ գայցեն յապաւինե-
լոյ յօտարս և յարհամարհ գրելոյ զմի-
մեանս:

ԱՄԲԱՏ

Այլ ատելութիւնն յոր վառին նոքա հակառակ անձին իմոյ՝ ոչ երբէք բարձցի 'ի մտաց նոցա. զի բուռն են կրից յոյզք, և վառին անդադար նա և ուր չիցեն ճարակք. արդ ջանալ զնոյն բանիւք շիջուցանել՝ անշուշտ և ևս գրգռեսցէ զոգիս:

ԳԱՀԲԱՄ

Այո. քանզի և այնչափ մերժին խորշին յարքայէ, զի և միոյ և եթ բանի ունկընդրութեան տեղի ոչ է 'ի նոսա. և առ ի՞նչ ակն ունել կործանման 'ի փոփոխութենէն: Եթէ ընտրեսցի ոք այլ՝ բազմաց հաւանութեամբ, որում ընդդէմ չև իցէ ուրուք զարթուցեալ, և նա բանիւք քաղցրութեան, և զշահ օգտութեան անձին իւրաքանչիւր առաջի արարեալ յորդոր մատուսցէ գալ 'ի միաբանութիւն խաղաղութեան, միթէ ո՞չ ինչ օգտիցի անտի: Ո՞շ յիշիցէք 'ի դիւանագիրս նախնեաց եթէ քանի՞ցս նորոգութիւնք այսպիսիք՝ պայծառութեան աշխարհիս գըտան պատճառք: Ո՞չ և Երուանդ թագաւոր էր արշակունի և աշխարհաշէն. և ամենայն ոք խաղաղացեալ ընդ հովանեաւ ձեռին նորա զհաճոյս անձին առնէր՝ անկասկած 'ի բռնութենէ. և յորժամ

ել Արտաշէս'ի վերայ նորա, և տկարացաւ կողմն Երուանդայ, միթէ սասանեցա՞ւ ինչ խաղաղութիւն աշխարհիս. այլ ըստ խոհական կշռութեան թագաւորին՝ և ևս բարգաւաճեալ ծաղկէր: Նոյն և այժմ անշուշտ պատահեսցի, մանաւանդ եթէ դարձեալ յարքունի զարմէ ոք ամբարձցի. տեսեալ նոցա զի ատելին համարեալն բռնակալ՝ հրաժարեցաւ առ'ի խաղաղութիւն ձգել զնոսա, անճարացեալ այլազգ տնօրինել, այս մեծապէս սասանեցուսցէ զխորհուրդս նոցա, և շիջուսցեն վաղվաղակի զհուր վրիժուց քինու'ի մտաց իւրեանց որով այժմ բորբոքեալ զայրագնեալ կան, թէպէտ արդ յանկարծուստ տադնապեալ և պարտեալ. սուղ իմն առժամս երևին խոնարհեալ: Եւ ո՞չ այս իցէ ցոյց մեծապէս գրգռութեան մտաց նոցա, մինչև մեզ իսկ հարկ լինել խոնարհել'ի կամս նոցա, խորհրդով գոնեայ և զանձինս ընդ ազգին զերծուցանել'ի վտանգաց. թէպէտ և արդ ծանեայ եթէ ցմահ պարտ էր կալ հաստատուն, քան այսպիսի մատնչի վատութեան անուն ժառանգել: Արդ նոցա տեսեալ ևս զայլ ոք՝ զի խաղաղասէր մտօք'ի միութիւն յորդոր լինի նոցա, ոչ ևս իշխեսցեն կալ ընդդէմ:

ԸՏՐՑԵՐԱԵՏ

Այո՛, եթէ գտցի ոք այնչափ խաղաղասէր՝ որ կարասցէ միաբանել զհակառակ խորհուրդս ամբարիշտ մարդկան ժամանակիս. և թէ ոչ ևս առիթ գրագռութե՞ առեալ անտի այլազգւոյն՝ ոչ ձեռն արկանիցէ և ևս բռնանալ 'ի վերայ մեր՝ մինչ չև իցէ խաղաղացեալ խռովութեանն նորոգ ծագելոյ ընդ փոփոխել թագաւորին: Այլ ես յասելն սասանիմ զոր նկատեմ զպատկեր դառնութեան՝ անապատ անկոխ դարձեալ զտունն Հայոց: Եթէ հրաժարեսցիս դու արքայ, գիտասջիր զի ոչ ոք այլ ևս անցցէ 'ի գահդ. 'ի ներքուստ և արտաքուստ ամեհի գազանք շուրջ կացեալ մռնչեն գիշատել զազգն ողջոյն. քո անխոնջ վաստակ և խոհական ընթացք ցարդ զդէմ ունին նոցա. և եթէ թողուցուս, 'ի մի ևեթ վայրկեան հասանէ վախճան ազգիս հրով և սրով. քանզի և ամենայն ոք թագաւոր զանձն կարդասցէ. և հագարացին ոչ ումեք ունկըն մատուսցէ այնուհետև: Եթէ մոռասցիս զազգն ողջոյն՝ անձին ևեթ հոգալոյ աղադաւ, էջ յաթոռոյդ. ապա եթէ փոյթ ինչ իցէ քեզ զժողովրդենէն Աստուծոյ, յանձին կալցես զամենայն դառնութիւն վշտացն արեամբ չափ, գուցէ

երբէք գթասցի բարձրեալն հայեցեալ 'ի տառապանս քո, յաջողել քեզ խաղաղել զամենեսեան: Աղաչեմ տէր, մի՛ անտեսեսցես զազգ մի ողջոյն ցարդ տառապեալ և 'ի բազում աղէտս մատնեալ. և մի՛ 'ի սնոտի երկիւղ ըմբռնեալ 'ի ծուղակս անելս Թակարդեսցիս: Կա՛ց դու հայր ազգիս, լե՛ր ցաւոց նորա ցաւակից, սփոփեա զնա. ա՛ռ յանձն մեռանել վասն նորա և մի լքանել 'ի ժանիս գայլոց, և այս լինիցին քեզ փառք անկապուտք: Լուիցուք միանգամ և զկարծիս ամենայն ատենիս:

ԸՄԵՏԵՔԻԵ

Կեա՛ց արքայդ հզօր տէր մեր և հայր խնամակալ գթովքդ:

ԱՄԲԸՏ

Շատ է ցայդ վայր. խանդաղատեցայ 'ի վերայ ազգիս. ոչ ինչ այլ փոյթ է ինձ զանձնէս. զշահս ազգին և զօգուտ խընդրեմ զաշխարհիս Հայոց. եթէ և տեղասցին շանթիք յերկնից յիմ վերայ, քաղցր լիցի ինձ մեռանել հայրենեաց վասն: Վայրապար ցարդ ելի զհետ խաղաղութեան. եթէ և 'ի շրջանս ամաց բազմաց յաղմուկս և 'ի շփոթս կալ ինձ հարկ իցէ, ոչ հրաժարեցայց 'ի սէր որդւոց ազգիս իմոյ. ըստ բանից ձերոց կալայց յանձին

զիշխանութիւնս իմ, այլ 'ի ձեզ և եթ վըս-
տահացեալ զի յայսմ հետէ դարձեալ ընդ
իս իցէք: Ծանեայ զձեր բարելաւութեան
զսիրտ նախանձաւոր բարւոյ աշխարհիս
և իմ: Նոյն սէր անխառն 'ի ձեզ յերկո-
սին բարբառի զհակառակս. վասն այսո-
րիկ և երկոքին իսկ արժանի էք ներողու-
թեան, որ ըստ բերել ժամանակին և 'ի
մերձաւորագոյն առթիցն արբեալ 'ի միտս
ձեր, թշնամիք ինձ երևեցայք: Վահրամ
որ ցարդ կայիր 'ի մեծի հազարապետու-
թեան, յայսմ հետէ լիցիս ինձ երկրորդ
յարքայութեան իմում և խորհրդական
և հազարապետ. զոր և գործիցես յի-
մում իշխանութեան՝ ընդ այն և ես հաճ
գտայց: Եւ դու Ատրներսէհ, որ ցարդ
իշխան կացեր արևելեան և եթ մասին
Վրաց, յայսմհետէ տաց քեզ ձեռն օգ-
նութեան թագաւորել և 'ի վերայ ամե-
նայն Վրաց ինքնիշխան, և ինձ եղբայր
սիրելի գրեսցիս և ձեռնտու յամենայն
պէտս իրերաց: Յոյս մեծ է իմ զի ընդ
ձեզ ամենեսին 'ի մի խորհուրդ և 'ի մի
բան ցրուեալ վատնեսցուք զջոկս անօրի-
նաց թշնամեաց: Եւ զՍուրենայ զխնդիրդ
լուայ՝ տալ նմա զիշխանութիւն բարձի
հօրն, զոր գրաւեացն Աշոտ. կամիմ զի
և ևս ընդարձակեցից նմա, միայն թէ

զքրիստոնէութեանն կրօն հարցն իւրոց դաւանեսցի. վասն այնորիկ բազում խնամով սնուցանեմ զնա յարքունիսս՝ 'ի մոռացումն տալ և զաղէտս հօր իւրոյ Հասանայ, որ չգիտեմ ո՛րպէս դեղեալ 'ի դիւաց՝ ոչ կամէր դառնալ 'ի հարցն կրօնս, մինչև յամառեալ ժխտեաց խոստմանն՝ լաւ վարկուցեալ 'ի վերայ ոգւոցն կուրութ՝ և մարմնով լինել զաչացու, քան կրկնակի լուսովն վայելել: Ի նոյն և սա պընդեալ կայ. այլ եթէ դարձցի ոչ, անմարթ է ինձ զգաւառս Հայոց այլակրօնիցն բրոնութեան մատնել. մինչև կենդանի իցեմ, երբէք ոչ կացցէ իշխան ոք այլադէն 'ի Հայս. նա զհետ եղէց վտարել և զգտեալսն ցարդ: Հա՛պա ով քաջք, դուք էք իմ ոյժ զօրութեան աննկուն. դուք ակնկալութիւն կենդանութեան ոչ մեռեալ, այլ 'ի մահ վիրաւորեալ ազգիս Հայոց մեծազօր և բազմազգի ցրիւք ճոխացելոյ երբեմն, և արդ ոտնակոխ 'ի թշնամեաց և յանխորհուրդ անձնասիրութ՝ է նուաճելոյ: Դուք քաջազանց ծնունդք, արդ ամենեքին 'ի մի խորհուրդ միակամ խրախուսեալք յԱստուած, և զայլս 'ի ձեր աշխոյժս միաբանեալ, յայսմ հետէ աննկուն զօրացեալք՝ ելջիք յամենայնի յաղթականք: Ո՜ պ յիշատակ քաջագործու-

թեան նախնեացն լեալ է սքանչելի յաչս ձեր. և 'ի ձեր արութեանց յարդիւնս վայելեալք յետնոց, և յիշատակ անձկութեան ժամանակիս հասեալ յականջս նոցա, և վաստակք աննկուն արութեանց ձերոց 'ի սքանչացումն զամենեսին յորդորեալ՝ խրախուսեսցեն և զնոսա արիանալ: Ելէք արդ այր այր 'ի խումբս իւր գրգռել զմիտս ամենեցուն յարութիւն քաջութեան. և դուք քաջքդ Ներսէհ և Վահրամ գնացէք 'ի խաղաղացուցանել զմիտս ամենեցուն. և ըստ ժամանակին դարձեալ գումարեալք 'ի ժողով զօրագլխացն և իշխանաց՝ կարգեսցուք զարժանն, և զօրասցուք տերամբ 'ի գործել բուռն եռանդեամբ: Արդ գնամ ես նորոգ զարթուցանել զմիտս Սուրենայ՝ խոստանալով զոր ասացին, և զխաղաղական զելս արշաւանաց մերոց աւետել նմա:

ՏԵՍԻԼ Ե.

ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Արդ յինչ խորհուրդս կայցես իշխանդ մեծ:

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Յոր ցայժմս կայի:

ՓԱՏՐԱՄ

Դու գլուխ դաւադրաց . արդ կուսակիցս արքայի ։

ԱՏՐՅԵՐԱԷՏ

Դու իշխան կուսակցաց . կամիս զի նա ապրեսցի ։

ՓԱՏՐԱՄ

Իմ կամք են իջանել նմա յաթոռոյն ։

ԱՏՐՅԵՐԱԷՏ

Եւ իմ կամք՝ և զվրէժ առնուլ 'ի նմանէ մահուամբ ։ Ուսցի՛ նա զինչ իցէ կեղծել զբարեկամութիւն . և զոխերիմ զիմ թըշնամի զեգերացին Կոստանդին զոր ձերբակալ 'ի պատերազմին արարեալ՝ սմա 'ի պարգևս առաքեցի, գաղտագողի հանեալ 'ի պատիւ թագաւորութեան՝ փոխանակ գլխապարտ առնելոյ , ծաղր և ծանակ կացուցանել զիս առաջի ազգաց արդ ի՛նքն լուծցէ զվրէժ մահու նորա , և զկեղծուպատիր բարեկամութեան իւրոյ ընդ իս ։ Դարձեալ ետ բրել զաչս Արծրունւոյն հօր Սուրենայ, զի նա ոչ կամէր դառնալ 'ի քրիստոնէութիւն . ո՞ր իրաւունք իցեն ։ Ամենայն ոք տուայտի յաղքատութեան 'ի կատարումն անմիտ խորհրդոց նորա . և արդ զի սակաւ ինչ հարկանի 'ի միտս իւր , և սնոտի յուսով 'ի վեր քան

զկար իւր կամի առաքինանալ, Թողցո՞ւք նմա կեալ. և այն զի ոչ գիտէ՝ և ոչ կարէ ելս գտանել յաշողութեան գնացից իւրոց: Եթէ կամք են Աստուծոյ դատել զնա 'ի ձեռս մեր, ընդ ապաշաւ ինչ անարդիւն զերծցի՞ նա:

ՓԱՏՐԱՄ

Այլ զՃշմարիտն ասել, եթէ նախարարքն միաբանք էին և համամիտք, յայնժամ դա ոչ ինչ արդեօք հակառակ մեզ երևէր գործել: Որպէս և ես Թէպէտ և սիրելի յաչս արքայի, այլ ծանր է ինձ յոյժ տեսանել զքաջորեար ազգին իմոյ զնախարարս և զիշխանս հաւնունիս յանտեսութեան: Այլ զի դա ինքնին կամէր հրաժեշտ տալ, ոչ էր արժան խափան լինել խորհրդոց նորա: Անմտութիւն է մերժել զբարին առաջիկայ, և անհաւաստեացն ակնկալութեամբ 'ի վտանգ բազմորոգայթ անձնամատն լինել:

ԸՏՐՑԵՐԱԷՏ

Մեծ ևս զառանցանք այն են, կարծել ապաքինել զախտս՝ զբուն արմատոցն անդէն Թողեալ: Թիւնալից յարդարին վէրքըն սպեղանեօք քաղցրութեան:

ՓԱՀՐԱՄ

Եթէ 'ի խնդիր ելանես արեան, յերկ-
բայս զգործն արկանես ։

ԱՏՐՑԵՐԱԷՀ

Եթէ խոյս տաս 'ի վտանգաց, 'ի նա-
խատինս քեզ գործն կրթեսցի ։

ՓԱՀՐԱՄ

Որ 'ի կապանաց զերծանիցի, ընդ այն
ամօթ ոչ կրեսցէ ։

ԱՏՐՑԵՐԱԷՀ

Եթէ զառաքինութիւն չունիցի առաջ-
նորդ, դսրովեալ և արհամարհ եղիցի ։

ՓԱՀՐԱՄ

Զի՞նչ առաքինութիւն իցէ՝ փութալ
խաղացուցանել զվտակս արեան. ո՞չ շատ
իցէ մերկանալ զթագն 'ի գլխոյ և զամե-
նեսին հաճ և հաւան կացուցանել ։

ԱՏՐՑԵՐԱԷՀ

Զի՞նչ վրէժխնդրութիւն իցէ թողուլ
զարքայ 'ի խաղաղութեան, և 'ի պարգևի
մասին առնուլ զբարեկամութիւնն 'ի
ձեռանէն. մի՞թէ ո՞չ ընկալցի նա զհատու-
ցումն արդեանց անկածութեան իւրոյ.

քամահեալ է յոյժ առ ինև նա՝ և պարգևք իւր ։

ՎԵՑՐԵՄ

Ուրեմն զթագաւորութիւն խոստացեալ քեզ և զմասն բաժնի Սուրենայ առ ոչ ինչ գրես ։

ԸՏՐՑԵՐԱԷՑ

Ծանր է ինձ ընդունել զայդոսիկ 'ի ձեռանէ նորա . այլ յետ լցուցանելոյ զցանկութիւնն վրիժուց՝ գիտեմ զայն յիս գրաւել, և մեծագունին եղեալ արժանի . և զսուրն իմ թաթաւեալ յարիւն նորա՝ օծանել 'ի նշան արքայութեան իմոյ . յայնժամ այսոքիկ պարգևք՝ մահուան նորա լինիցին ինձ տրիտուր ։ Եւ Սուրէն առանց ինչ բռնադատութեան թողլոյ զկրօնս՝ տիրեսցէ մասին ժառանգութեան իւրոյ ։

ՎԵՑՐԵՄ

Այլ դժուարին ինձ համարեալ է՝ եթէ զկնի մահուան նորա տիրեսցես դու աշխարհին Վրաց. և զՍուրէն ի՞բր կարասցես հաճել՝ ուրախութեամբ սրտի ելանել ժառանգել զերկիրն, որ յետ սպանանելոյ զարքայ թէպէտ համարեսցի նա հանեալ զվրէժ քինուն, այլ 'ի ցաւս կորստեան աչաց հօր իւրոյ յաւելցի 'ի սիրտ նորա և ապաշաւ անդարման ընդ մահ Սմբատայ,

'ի յիշատակ ածեալ զայնչափ բարութիւն սորա որովք գգուէ զնա սիրով, և զգթալից խոստմունս սորա, զոր կուրացեալ մտօքն արդ ոչ տեսանէ :

ԸՏՐԵԵՐԱԷՆ

Հազարապետդ մեծ, աստանօր մեզ խօսել զայսցանէ՝ անզգոյշ գործ է. ելցուք արդ 'ի զօրն մտանել 'ի խորհուրդ 'ի միասին՝ եթէ ո՛րպէս 'ի գլուխ հանցուք ըզգործս զայս մեծ :

ՀԱՆԴԷՍ Գ.

Տեսարանն է յապարանս Ատրներսեհի 'ի դահլճին մեծի 'ի քաղաքին Ուխթեաց. յորոյ 'ի բերդն խուսափեալ ամրացեալ էին խումբք ապստամբելոցն։

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱՀՐԱՄ, ԱՐԲՈՒՆ

ՎԱՀՐԱՄ

Նա ինքն մի առ մի պատմեաց ինձ զամենայն. Նախկին փոյթ նորա է վրէժ խնդրել զնախատանաց անձինն, զի զԿոստանդին զոխերիմ Թշնամի իւր հանեալ յամրոցէն Անւոյ՝ Թագակալ իշխան 'ի վերայ Եգերացւոց կացուցեալ իցէ, զի 'ի մարտ ընդ Ատրներսեհի խաղայցէ. և զՍուրենայ հօրն զաղետիցն ևս կամի առնուլ զվրէժ, որ յառաջագոյն խոստացեալ Աշոտոյ դառնալ 'ի հաւատս և երդումն տուեալ, և ապա ժխտեաց խոստմանն. որոյ աղագաւ և նա կուրացոյց զաչս նորա ըստ հրամանին Սմբատայ։ Արդ սա առ 'ի խնդրել զվրէժ այսոցիկ՝ ձգեաց և

զմեզ յապստամբութիւն. և զի բազումք գտան ունկնդիր նմա, զհետ է ևս զթագաւորութիւն հայկազանցս յանձն գրաւել: Վասն որոյ և ոչ ինչ ազդեցին 'ի սիրտ նորա խաղաղական բանքն արքային:

ԸՐԲՈՒՑ

Արդ քաջ հասու եղէ եթէ վասն էր ստիպէր և զարքայ՝ մի՛ թողուլ զաթոռն. քանզի եթէ նա հրաժարէր, ո՛չ ևս կարէր Ատրներսէհ վրէժխնդիր լինել և ոչ իսկ յուսալ 'ի գահակալութիւն:

ՓԸՅՐԸՄ

Ամենայն դաշնակիցք զակատեալ են յոյժ յոյժ զհետ շահախնդիր և անձնահաճ առնն, որ կեղծէ փափաքել զփըրկութիւն ազգին. և ես այր չարաբախտ յամենայնի, գլուխ ամբարձեալ ընդդէմ թագաւորին վասն փառաց անձին և ազգիս, զի մարթացայց 'ի Հաւնունիս զգահն փոխել, և արդ 'ի լրումն կամաց նորա վաստակիմ:

ԸՐԲՈՒՑ

Ի Հաւնունիս զգահն փոխանցել:

ՓԸՅՐԸՄ

Այո՛. յայս խորհուրդ կամաց վառեալ

իմ ցարդ՝ ժամ պարապոյ խնդրէի. և ցայժմ ես ինձէն մատն եղէ անձին, 'ի լրումն կամաց նորա կալով առաջնորդ: Արդ ես ինքն եթէ դարձեալ զհետ գնամ խորհրդոց նորա արհամարհեալ զթագաւորին, մահու՛ մնամ փոխանակ թագի արքայութեան. ձգեմ արդ զձեռն իմ քամել զարիւն անձին իմոյ. քանի՛ չարիս ինձ ծնաւ բարեկամութիւն:

ԸՐԲՈՒԵ

Հեշտ է քեզ դարման չարեացն մատուցանել, հանել զքեզ զերծ 'ի խորհրդոց դառնութեան: Մատն լեր ղնմանէ առ արքայ և յաջողեսցի քեզ, զի նա յուղարկեսցի 'ի մահ. յայնժամ գուցէ և արքայի հաճ երևեալ ը̄ քո խորհուրդ՝ գործեսցէ ըստ քոց կամաց:

ԿԸՅՐԸՄ

Մատնիչ լինել բարեկամի՛:

ԸՐԲՈՒԵ

Առ սէր անձին և ազգին այդ չէ ինչ տարադէպ: Որ փառաց նախնեացն և հայրենեաց շուք դնէ, քակեսցէ զբարեկամութիւն ընդ օտարաց: Եւ իրաւամբ իսկ հարկ է բանալ արքայի զխորհուրդս նո-

րա, զի 'ի լրումն փափաքանաց իւրոց դաւադիր լինի. մի այլ յիշեր զբարեկամութիւն, և մի զբարեաց կամս նորա առ տուն Արամայ :

ՎԱՀՐԱՄ

Չէ 'ի դէպ զհետ գնալ չարացն օրինակի :

ԱՐԲՈԻՑ

Նա և հակառակ նմին առ 'ի զդէմ ունել այսպիսի խորհրդոց անօրէնութեան՝ գործել զամենայն չէ անպատշաճ. ոչ ոք յանցանէ 'ի պատժել զմեղուցեալն :

ՎԱՀՐԱՄ

Այլ 'ի նորա ձեռն անշուշտ դադարեսցեն վրդովմունք և ամբոխք : Եւ կասկածեմ եթէ արքայն Սմբատ ոչ կարասցէ միաբանել զամենեսին, զի միանգամ ատելի լեալ ռամկին, դժուարին է յաչս մտանել այլ ևս. զի ռամիկն զհետ գընայ յաւէտ բնական բերմանն քան բանաւոր փաստից և իրաւանց :

ԱՐԲՈԻՑ

Ի ձեռանէ առն սոնքացելոյ ամբարտաւանութեամբ՝ կարծիցեն խաղաղութիւն և պայծառութիւն ազգի ընդու-

նել: Ոչ յօգուտ ինչ և 'ի պէտս բարեաց ձգի նա յայս գործ, այլ 'ի յագուրդ ցասմանն և 'ի նուաճել զազգ հզօր ընդ իւրև: Եթէ չէր նա տարեալ նախատանաց յարքայէ, արդ ընդ նմա եղեալ՝ հակառակ ձեզ մարտ դնէր. իջեր երբէք 'ի խորս սրտի նորա: Զհասարակաց փրկութիւն կարդայ 'ի բերանի, այլ 'ի սրտին գալար օձ բազմագլխի ղօղեալ սնուցանէ: Զմիտս ամենեցուն գողացեալ, և քեզ պատրաստէ ծուղակ կորստեան թէ ոչ մտաց նորա հաւան գտցիս յամենայնի:

ՎԵՑԻԱՄ

Եւ որպէս տալ զնա 'ի ձեռս առանց ինչ վնասու այլոց: Ամենայն դաշնակցաց մահաբեր լինիցի այս մատնութիւն. զի երևեսցին արհամարհեալ զգթութեամբ արքային, և հակառակ զինեալ բարւոյ աշխարհիս: Անհնար է ինձ գալ զայդու գործով. 'ի խնդրել զվրէժ անհանճար վիսութեան միոյ առն՝ զամենեսին 'ի մեծ ևս աղմուկ վրդովել. խրախուսիմ ելանել ընդէմ նորա, այլ վտանգ այլոց կորըստեան ընկրկէ զիս:

ԸՐԲՈՒԵ

Այլ արքայ Սմբատ ամենայնիւ փորձ

է՝ զի արեամբ և սրով ազգին յոյզք ոչ խաղաղին. նա դարձեալ սակաւուցն պատ-ժովք շատացեալ՝ 'ի յորդոր մատչիցի դա-դարել յաղմկելոյ :

ՓԱՀՐԱՄ

Վայրապար է այս ամենայն եթէ մատ-նեսցի Ատրներսէհ . . : Իմ կամք էին խաղաղութեան աշխարհիս լինել պատ-ճառք, և զՀաւնունիս բարգաւաճեալս՝ վերագոյն ցուցանել քան զԲագրատու-նիս և զԱրշակունիս, ե՛ս ինձէն զառաջինն յայն աթոռ պատուեալ : Արդ զեղջ է ինձ, զի և զնորա ձեռն ինձ յօգնութիւն կարդացի :

ԸՐԲՈՒԵ

Հարկ է քեզ այժմ նենգանօք բերիլ ընդ նմա, և զդաշնակցաց զմիտս 'ի քեզ յանկուցանել. այլ . . .

ՓԱՀՐԱՄ

Այլ եթէ ոք 'ի վեր հանցէ նմա զխոր-հուրդս իմ, ա՛հ . . .

ԸՐԲՈՒԵ

Այնպիսի խոչս խափանարարս իմոց մտաց արգել ընդդէմ արկանես, որոց առ յաղթանակել՝ հրաշից պէտք են. այլ ես

դարձեալ ոչ կասիմ'ի խորհելոյ, մինչև ըստ մեծի յուսոյ...

ՓԸՋՐԸՄ

Արդ մեկնեա՛ց աստի. յետ սակաւուց գտցուք դարձեալ զմիմեանս: Այսր գայ Ատրներսէհ, կամիմ խօսել ընդ նմա՝ առ լաւ ևս գիտելոյ յո՛ր ինչ ձեռն արկանել պարտիմքն:

ՏԵՍԻԼ Բ.

ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՎԱՀՐԱՄ

ՓԸՋՐԸՄ

Որպիսի՞ խորհուրդք բազմած ուփք յա-ծին 'ի միտս քո:

ԸՏՐՑԵՐՍԷՀ

Այլ ոչ անպատճառ:

ՓԸՋՐԸՄ

Եւ զի՞նչ այն պատճառք իցեն:

ԸՏՐՑԵՐՍԷՀ

Արքայն Սմբատ և Սուրէն. բարելա-ւութի՞ Սմբատայ և վրէժխնդիր ոխակա-լութիւն Սուրենայ և աւագանւոյն. Հա-

Ճեսցի տէր շրջել և զմիտս նոցա իբրև զիմն: Արդ յուշ է ինձ առաջին սէր արքայի. իբրև որդւոյ սիրելւոյ գութ և խանդաղատանս ցուցանէր ինձ. և գթութիւնն որով այսօր վարեցաւ ընդ մեզ, մեծի խնամոց էին յայտարարք: Իսկ ես կուրացեալ աչօք և պատրեալ 'ի սնոտի յառերևոյթ պատճառաց՝ կարծէի նախատ լեալ յոյժ 'ի նմանէ. այլ արդ լուեալ 'ի վերայ հասի, ընդ որ հաւանեալ իսկ եմ, եթէ թգ̃րեցուցանել Սմբատայ զԿոստանդին Եգերացւոց՝ ոչ հակառակութե̃ ինչ էր, այլ մանաւանդ սիրոյ յայտարար. զի երկուցեալ եթէ գուցէ զոք բռնագոյն կարգեսցեն ընդ նորա 'ի թագաւոր, զառաջս կալեալ իցէ նոցա. զի թէ ոչ՝ ևս սաստիկ ընդ իս և ընդ նմա գրգռէին Եգերացիք: Եւ զի ծածկաբար գործէր, և այն դարձեալ խնամոց էր ցոյց, զի մի արդեօք չև քաջ հասու եղեալ պատճառաց, զհրաբորբոք թշնամութե̃ն զբոց ինձ ունելով առաջնորդ, անլուր գտանիցիմ և խափան խոհական ընտրութեան նորա: Արդ իբրև յուշ ածեմ զզայրոյթ ցասման իմոյ փոխանակ գըրգութեան սիրոյ նորա, սարսուռ յիս ընթանայ ըմբռնեալ 'ի պակուցումն: Այն բանք սիրոյ՝ մինչև ասել ցիս, ես եղէց

փոխանակ քո 'ի վտանգս, և պատիւ իշ-
խանութեանս 'ի նմանէ ընկալեալ, և
դարձեալ խոստումն՝ թագաւոր ինձ կալ
Վրաց, և ըստ խորհրդոց իմոց առնել
զամենայն, և զի ես պատրաստէի ձգել
սուր 'ի կողս նորա, այս ամենայն ստէպ
նկարին առաջի աչաց իմոց: Արդ ասեմ
հարեալ 'ի խղճէ. պարտ է մանաւանդ ..:
Այլ Սուրենայ ոխութիւն. խոստումն
իմ առ նա. որպիսի՛ դառն արտասուս
ընդ աղէտս հօրն հեղոյր առաջի իմ. վըշ-
տալից պատկեր անձին նորա. ո՛րպէս ճըշ-
գրիտս նկարէր զանդարման ողբումն ըն-
տանեաց, դադարեցին ցյաւիտեանս ժա-
մանակաց ձայնք ուրախութեան 'ի տանէ
նորա. ա՛հ, խոստացայ և նմա և երդուայ
'ի վերայ ազգակցութեան զոր կալայ ընդ
տան նորա. ատելութիւն նորա անչափ՝
դարձեալ արկանէ յիս գրգիռ դաւել ըզ-
Սմբատ՝ բարրանս անիրաւութեան շփե-
լով զնովաւ:.. Այլ սէր սորա առ իս՝
արհամարհել ստիպէ զանշահ ցանկութի
վրէժխնդրութեան նորա: Գութ սորա,
և հեկեկանք նորա, անգիտանամ որպէս
փարիլ զմիովն և ընդվայր հարկանել զմիւ-
սըն:.. Այլ և ամենայն կուսակիցք մեր
վառեալ պատրաստեալ, յաւելեալ 'ի վե-
րայ նախկին գրգռութեանն միւս այլ՝

զոգի վրէժխնդրութեան նախատանացն պարտութեան ։

ՓԸՋՐԸՄ

Ընդունայն խորհրդովք տարուբերիս իշխան քաջ. ո՞ զքեզ այդպէս դրդուեցոյց 'ի մտաց ։

ԸՏՐՑԵՐԱԷՋ

Յորժամ 'ի կշռել զհարուածն մատչի այր, և եթէ չունիցի զՃշմարտութիւն իւր 'ի թիկունս, յայնժամ ոչ մի է թշնամին՝ այլ երկու ։ Լաւ ևս Ճանաչին չարիք 'ի մատչել անդ 'ի գործ ։ Մինչև յայն ծագ ժամանէ ոք աներկիւղ շլացեալ 'ի բռնութենէ կրից. բայց 'ի վերահաս ժամուն ո՞ ոչ սրտաբեկի. նա և 'ի զարհուրանացն և յահէն ո՞չ պակչի յանչափութենէ եղեռանն ։ Հաւաստեալ գիտեմ զի և այլք որք երբեմն յայսպիսի չարիս ձեռն արկին, այն ինչ 'ի կշռել զհարուածն՝ կամէին թէ հնար ինչ էր կասել 'ի գործոյն. մինչ չև տուեալ զվէրսն՝ ապաշաւ ստգտանաց յանձինս կրէին ։

ՓԸՋՐԸՄ

Ոչ այդպէս. չէին նոքա ամենեքին արք վատթարազգիք, և յանխորհուրդ եղեռն յարձակեալք. և ուր յարդարու-

թենէ առաջնորդէին, և 'ի բարեկամս և 'ի բարերարս անվեհեր քաջութեամբ ըզ-սուրն թաթաւէին, միայն զի յաղթանակ արդարութիւնն ընկալցի: Եթէ նմանել նոցա կամք իցեն քեզ, ձեռն 'ի գործ արա, և արդարութիւն քինահատոյց զա-պաշաւ սրտիդ ցածուսցէ՝ որ խափան ար-կանէ բարեաց ազգին ողջոյն: Մի՛ ըմբըռ-նեսցիս 'ի խաբկանս սնոտի բանից Սմբա-տայ. մի՛ վհատեցուսցեն զքեզ ունայն արգահատանք անցելոցն յիշատակաւ 'ի քեզ երևեալ:

ԸՏՐՑԵՐՍԵՖ

Բարեկամ, ա՛հ. բանքդ այդոքիկ չա-րեաց ինձ լինին տածիչ, ոչ ինչ քաջալերս ինձ շնորհեալ արիանալ 'ի գործն, զի յոյժ լքեալ եմ յանձն իմ. դադարեաց այլ ևս 'ի ստիպելոյ: Գիտեմ ես ելանել զհետ բարւոյն. այլ բարեկամութեան սիրոյն հակառակ մրցել ոչ եմ կիրթ. և իմով ձեռամբ բառնալ զբարերարն 'ի կենաց, և անկարեկիր նշմարել զնա բռնա-մահ մեկնել յաշխարհէ՝ ոչ բաւեմ: Թող զիս հանդիպել և Սուրենայ և լսել եթէ յինչ խորհուրդս կայցէ ցարդ: Գիտեմ զի իմ վիշտք ցաւոց տաղտուկս արկանեն քեզ. այլ միայնութիւն գիտէ փարա-տել զցաւս յինէն:

ԿԱՑՐԱՄ

Կամիցիս զխորհուրդս քո զայդ հեղուլ յականջս Սուրենայ, և կարծիցես փոխել և զնա 'ի խորհրդոյն. եթէ յաջողեսցիս, յայնժամ և ես . . . մնա խաղաղութեամբ. արա՛ ըստ ըղձից քոց ։

ՏԵՍԻԼԳ.

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Մի՛, բարեկամ քաջ, մի՛ այդպէս պարսաւադէտ լինիցիս ընդ վսեմական խորհուրդս մտաց իմոց, որ զառաքինութե՛ և զփառաց խնամս ընդդէմ արկանէ յանդուգն և անմիտ յարձակման անշնորհակալու հարուածոց. այլ յաւէտ արհամարհ կալցես զՍուրենայ ոխակալութի՛ն՝ որով վառեալս եմ, զոր թերևս արժան էր ինձ առ ոչ ինչ գրել. զի ոչ իմ է, և ոչ օգուտ ինչ անտի քաղիցեմ. սակայն ոչ բաւեմ և ամենևին ունել զնոյն 'ի պարսաւանս՝ թէպէտ և հանապազ 'ի մրցմունըս կամ։ Յայս անզերծ վախս վտանգաց զի՞նչ պարտ իցէ ինձ առնել. զորմէ՞ բուռն հարկանել, և յինչ խորհուրդ հաստատեալ կալ։ Եթէ սայթաքեսցի ոք կամովին, ստրջասցի մեծապէս, թէպէտ և

բազմարդիւն մեղանքն թուիցին : Լնուլ զոխակալութեանն զտենչ , հաստատութիւն երդմանն , պարծանք փառացն , յոյս գրաւելոյ զողջոյն զթագաւորութիւնն ընդ պատրուակաւ բարերարելոյ այլոց , չե՞ն ինչ այսոքիկ խթանք բաւականք առ 'ի մատնութիւն մտաբերել : Այլ միթէ արժա՞ն իցէ դաւել զարքայն քաղցրաբարոյ և առ իս ըստ ամենայնի առատապարգև և խորհրդոց իմոց մտադիւր ունկնդիր, որ և այնպիսի անօրինակ քաղցրութեամբ ընկալեալ ոչ ինչ դառնութեան կերպարանս արար՝ լուեալ և տեսեալ զի դարանիմ կենաց նորա : Անարժա՛ն գործ մատնութե՛ն . հարուա՛ծ անիծապարտ . թող յաճիւն փոխեսցի հուր վրիժուն . թող վշտասցին դիմակացք արքայի . թող և ես զրկեցայց 'ի մեծէ յուսոյ թագաւորութեան , և ոչ 'ի մեծեղեռն յայս ոճիր մխեցայց : Առ 'ի վայելել 'ի պարգևս նորա՝ ես յորոգա՞յթ մատնեցից զնա . և զոր 'ի պարգևս տայ՝ հի՞մ բռնութ՞ի կորզել ճգնիցիմք : . . Ո՛ ոխութիւն Սուրենայ , որ և ևս յորդեաց յիս ցասումն և ատելութիւն, ձեռն տալ վշտաց հօր նորա : Ո՛ երդումն անդարձ 'ի վերայ նորոգ ազգակցութեանն . ո՛ ըղձակաթ սէր թագաւորելոյ միայնակ

'ի վերայ ամենայն Հայոց: . . Ո՛ համբաւ ազատութեան Կոստանդնի. լուեալ զայն համբաւ՝ երիկամունք իմ զդողանի հարան. և յիշել անգամ ոչ հանդարտեմ. այն սկիզբն գրգռութեան իմոյ: Այսոցիկ ամենայնի պարտական դատիմ զբազուկ իմ հզօր և զանձն իմ գլխովին. ա՛հ, 'ի փոփոխել ուխտադրացն 'ի մտաց՝ որոց առաջնորդ խորհրդոցն է ակնարկութիւն իմ, և ես շիջուցից զբորբոք սրտիս. յայն ժամ կեցցէ արքայն Սմբատ: . . Բա՛ղդ դժոխըմբեր, որ զարս արդարս արկանես 'ի վտանգ անիրաւել առ բարեկամս. զայս ինձ Աստուած մի՛ համարեսցի 'ի մեղս. զի կարծէի յարդարութենէ առաջնորդել: Այլ կարօտ եմ օգնականութեան հզօր ձեռին յայսմ յանձկութեան ժամուս. տէր, եթէ հաճ ես ընդ արդարութիւն ծառայից քոց, բա՛ց և զմիտս Սուրենայ ճանաչել զճշմարտութիւն. թողուլ զատելութեանն բան. մի՛ և զիս շաղախել յարիւն անպարտ. հա՛ն և 'ի սրտէ իմմէ զանյագ ցանկութիւն փառաց: Ահաւասիկ և ինքն Սուրէն:

ՏԵՍԻԼ Դ.

ՍՈՒՐԷՆ, ԱՏՐՆԵՐՍԷՀ

ՍՈՒՐԷՑ

Շնորհս ունիմ զԱստուծոյ, քաջդ Ատրներսէհ. զի 'ի զուր երկնչէի: Խաղաղութեամբ վախճան լեալ է ձախողութեցն յանաջողել դաւոյն. և չեղեն պէտք դիմել ումեք 'ի մահ անդարձ: Զամենայն մի առ մի պատմեաց Արքայ որդւոյ իւրում Աշոտոյ՝ իմ առաջի. արդ զերծ եմ 'ի հոգոց և 'ի կասկածանաց:

ԸՏՐԷԵՐՍԷՀ

Մարթ ի ցէ քեզ ստունգանել պարգևաց նորա և արդեանց պարգևացն, և զմիաբան միակամ խորհուրդս հայորերոյն՝ 'ի մի սիրտ ընդ արքայի շահատակել յամենայնի՝ 'ի բաց զերկպառակ կարծիս մերժեալ յանձանց, առ ոչ ինչ դրել. և ըզթիւր կարծիս զոր ունէի զնմանէ՝ հաւաստել վերստին:

ՍՈՒՐԷՑ

Քեզ անկ է դիտել զարժանն:

ԱՏՐԵԵՐԱԷՑ

Եւ քեզ իսկ ։

ՍՈՒՐԷՑ

Հաստատուն կամ 'ի նոյն միտս և 'ի նոյն խորհուրդ. մի՛ պատրիլ 'ի սնոտի փաղաքշանաց, այլ խնդրել զվրէժ իմ և քո միանգամայն ։

ԱՏՐԵԵՐԱԷՑ

Այլ ո՞րպէս . . . Է՛հ, և ասել իսկ մա՞րթ իցէ ։

ՍՈՒՐԷՑ

Ուստի՞ քեզ երկիւղ. և ո՞ խափանարար խորհրդոցն քոց ։

ԱՏՐԵԵՐԱԷՑ

Գիտեմ զի աղմկեսցիս, այլ զի՞նչ. երկմտել ինձ պէտք ինչ իցեն. 'ի խնդիր եմ արդարութեան ։

ՍՈՒՐԷՑ

Եւ ո՞ ոչ գիտէ զի 'ի մահ նորա բարձր 'ի գլուխ պարծեսցի արդարութի՞ ։ Կարծիցես փոխել ինձ 'ի սէր նորա, այլ . . .

ԱՏՐԵԵՐԱԷՑ

Չեն հաւանեալ ընդ այդ միտք իմ. և վասն այսորիկ կասկածեմ եթէ անհաճոյ քեզ թուեսցին յոյժ բանք իմ ։

ՍՈՒՐԷՑ

Զի՞նչ խօսիցիս . փոխեցա՞ր 'ի մտացդ :

ԸՏՐՑԵՐՍԷՅ

Քաղցրութիւն բարոյից Սմբատայ . . .

ՍՈՒՐԷՑ

Շատ իսկ ասացեր . այդպէս ուրեմն յեղյեղուկ միտք են քեզ . և յամենայն հողմոյ բանից իբրև զշռնչանն դիւրադարձ փոփոխիս . ո՞ւր են առաջին այն յոխորտանաց բոցավառ կիզմունք սրտիդ . ո՞ւր երդումն տուեալ անդարձ իբրև զազգակցութեանն կապ անքակ . ո՞ւր արդար հատուցումն նախատանաց անձինդ . հողմոյ ետուր զամենայն . այդպէս ուրեմն գերեալ ես յահէ մահուան . աւա՛ղ, զի քաջութե՛ խորհուրդս կարծէի քեզ սնուցանել յանձին : Այր ինքնահալած է որ իբրև զքեզդ 'ի փքալից բանս ևեթ սպառնայ կալ արդարութեան ջատագով . իսկ յարդիւնս բանիցն և ոչ ծագիւ մատին հուպ լինի : Բանք շողոմարարք զարս վատթարս ևեթ 'ի զայրուցս յեղափոխեն և 'ի գութ . այր մեծապանծ՝ վէմ անգծելի հաստատուն 'ի միտս, ոչ 'ի վայրապար գրգռութի՛ վառեալ բորբոքի, և ոչ յունայն խանդաղատանաց մեղկի . ո՞ւր

արդ քո այն խորհուրդք անձնատոչորք, 'ի հուր'ի սուր ծախել զարս չարախտավատս. Էհ, մեղկեալ անկար 'ի լսել զթիւնալից և զաղու բարբառ նորա :..

ԸՏՐՑԵՐԱԵՑ

Մի՛ այդչափ ինչ 'ի դառն թշնամանս բերիցիս. լո՛ւր զզիարդն. գուցէ և դու... Գիտեմ զի առ ժամն սնոտի բանքս թուեսցին, զի աշխոյժք արեան սաստիկս ներգործեն. այլ մի՛տ դիր, լեր համբոյր:

Այն ինչ ես արհամարհեալ զամենայն զխանդաղատանս նորա և զդութ ներոզամիտ, և զվստահութիւնն որով լսէր ըզբանս իմ, զայս ամենայն և զառաւելն արութեան խորհրդով ընդոտնեալ, այն ինչ զմտաւ ածէի մատչել մերձ ընդ մերձ վաղիւն 'ի գործ, ոմն 'ի պալատականաց զառժամայն փոփոխութիւն կրից 'ի դիմացս գուշակեալ, գաղտ մատչէր առ իս 'ի հարց և 'ի փորձ, և 'ի կասկածի եղեալ զպատճառացն, զի և յառաջնմէ գիտակ էր թշնամութեանս ընդ Կոստանդնի, զոր իմովս ձեռամբ կալ և կապ արարեալ և 'ի ձեռս արքային Սմբատայ մատնեալ էի, ոչ ի՛նչ լուեալ յինէն՝ ինքնին պատմեաց զամենայն եթէ ընդէր արձակեալ իցէ 'ի բանտէ: Ծանեայ և ես զի յոյժ

այլազգի էին խորհուրդք իմ 'ի խորհրդոց
արքայի, և շիջանէր յիս գամքան զգամ
ամենայն գրգիռ և զայրոյթ սնոտի. ըզ-
մտաւ ածէի մի գուցէ և պատճառք կորըս-
տեան աչաց հօր քո այլ ոք...

ԱՈՒՐԵՑ

Յորպիսի՛ նանիր խորհուրդս ծփիցիս.
ո՞չ տեսանես զի ցարդ և ինձ ոչ դադարէ
արքայ համոզկեր լինել դառնալ 'ի կրօնից
և ապա ժառանգել զիշխանութիւն հօր
իմոյ. զի՞նչ այլ պէտք իցեն յայտարար
նշանաց: Եւ դու այդպէս 'ի կարծ բանից
ընդոստուցեալ շիջուցեր վաղվաղակի զան-
շէջ կարծեցեալ զհուր ցասմանդ. ոչ այդ-
պէս. յերկիւղէ վտանգի մահուան ձեռն-
թափ եղեր: Ոչ յիշեցեր և զքրիստոնէու-
թեան կրօնս քո. այսչափ ազատագունդ
որեար Հայոց կախեալ զքէն՝ հրամանիդ
քում մնան, ճողոպրեալ զանձինս տեսա-
նել 'ի ձեռաց անխորհուրդ բռնաւորին.
և դու զմիտս նոցա իբրև 'ի բարի ինչ դըր-
դեցեր. արդ զի՞նչ ոչ արասցեն. ո՞րպէս
զերծցիս և 'ի ձեռաց նոցա:

ԸՏՐԵԵՐԱԵՑ

Եթէ ես համախոհ ընդ արքայի՝ խա-
ղաղութեան վասն յորդոր նոցա լինիցիմ,

մի՞ ինչ երկմտիր՝ զի և ամենեքին հան-
դարտեալ դադարեսցին 'ի յուզելոյ ։

ՍՈՒՐԷՑ

Եւ զայդ արդարութիւն հտմարիցիս. հուր 'ի միտս ամենեցուն բորբոքել, և ապա սնոտի խորհրդով թուլացուցանել զազգասէր արութեան զբազուկս նոցա. կարծիցես անպատիժ ելանել ։ Գուցէ և զիրաւացի զպատճառսն զոր ասես՝ կեղ-ծիք իցեն, ո՛ գիտէ ։ Նա և ընդդէմ քո յայնժամ գրգռեալ զայրոյթ ցասման նախարարացն, ա՛հ, անշուշտ 'ի միասին ընդ արքայի լուծջիք զվրէժ անիրաւու-թեանց ձերոց ։ Եւ ես իսկ ահա եր-դուեալ քեզ 'ի կենդանին բարձրեալն, զի այժմ ինձէն յառաջեալ վաղագոյն առ արքայ՝ հարից զնա անդէն. և դու երդմնահար ուխտադրուժ, ընկալցիս զհատուցումն չարեացն քոց, փոխանակ մեղմեխ խորհրդոցդ ։

ԸՏՐԷԵՐԱԷՑ

Հանդարտ լեր վայր մի քաջդ Սուրէն, ոչ եթէ մեղմեխ խորհուրդք են որ յայս զիս ստիպեն, այլ երկիւղ եղեռնութ՚ն...

ՍՈՒՐԷՑ

Է՞հ, վայրապար պաճուճանք բանից. զամենայն զդաշնակիցս արդ ընդ միմեանս արկանես, և շիջուցանես սովին զթագաւորութեան ջահ 'ի տանէս Հայոց. չիցէ՞ եղեռն մեծ:

ԸՏՐԷԵՐՍԷՀ

Ես ոչ կամիմ զդոյն:

ՍՈՒՐԷՑ

Դու զարթուցեր զմիտս նոցա:

ԸՏՐԷԵՐՍԷՀ

Ինքնին նոքա յօժարեալք էին:

ՍՈՒՐԷՑ

Այլ թէ ոչ ոք գրգիռ մատուցանէր, չէր որ գլուխ ամբառնայր:

ԸՏՐԷԵՐՍԷՀ

Այլ ես. ա՜հ...

ՍՈՒՐԷՑ

Եւ առ ի՞նչ դժուարին թուիցի քեզ 'ի մահ տալ զայր որ ատելի ամենեցուն լեալ, և պատճառ ևս չարեաց ազգին ողջոյն լինիցի:.. Ե՛րթ ապա, ոչ ևս լուիցես յինէն խօսել զայդցանէ. ե՛լ, և ըստ դիւ-

բայեզ մտաց քոց գործեսցես զամենայն. և առ 'ի խաղաղել զալեկոծ խորհուրդս քո՝ մոռացիր զլաւութիւնս զոր կարէիր առնել ազգին և քումդ անձին: Ես և առանց քո գիտեմ լինել քինահատոյց: Եթէ իմ չէր գթացեալ յընտանիս սիրելի՝ զի մի՛ ցաւս 'ի ցաւսն յաւելուցուն, յիս ելանէր փառքն ազատելոյ զաշխարհս 'ի չարեաց: Տէ՛ր բարձրեալ, ներեա ինձ եթէ վրիպեալ իցեմ յապաղել զարդար վրէժխնդրութիւն զհաճոյականն քեզ, 'ի սնոտի յոյս կապեալ զերծուցանել զանձն իմ 'ի մահուանէ՝ 'ի միակ մխիթար ծնողաց իմոց, վստահացեալ յերդումն անհաստատ քրիստոնէի: Արդ մնա խաղաղութեամբ քաջդ Ատրներսէհ. մի՛ ինչ զքեզ լքուսցէ մահ իմ. եթէ ազգ ընդ իս գրեցար, այլ ոչ և մտերիմ սիրելի: Զայս միայն աղաչեմ զի առաքեսցես 'ի տուն հօր իմոյ ասել, եթէ որդին ձեր Սուրէն քաջութեան խորհրդով 'ի բաղդն ապաստան՝ դիմեաց 'ի վրէժ աղէտից ձերոց: Եթէ և ոչ ինչ կարացից վճարել, այն շատ է զի ճգնեցայց ըստ կարի՝ և մատնեցայց 'ի զոհ աչաց հօր իմոյ: Եւ զի ոչ կենդանեաւ կարէր զիս տեսանել, գէթ զմահացեալս իւր որդեակ՝ մտաց աչացն եդեալ առաջի, հանապազորդ յիշատա-

կաւ իմ առ նա սիրոյս սփոփեսցի : Ա՛հ հայր, մատչիմ ահա պատարագ 'ի միսիթար սրտիդ խորասուզելոյ 'ի խաւար տխրական : Զքեզ զրկեաց յաչաց Սմբատ՝ չտեսանել երբէք զիս զորդեակ քո աղեկէզ, և սա զիս 'ի կենաց բարձցէ մի՛ ևս յօժարել քեզ տեսանել զիս . սա ինքն Ատրներսէհ՝ յորոյ 'ի քաջութիւն ապաւինեալ՝ զազգակցութեանն շաղկապ յօդեցեր ընդ նմա :

ԸՏՐՑԵՐՍԵՀ

Զորպիսի՛ս բարբառի բերան քո :

ՍՈՒՐԵՑ

Այո դու ինքն, դու 'ի մահ զիս առեալ ձգես . դու զիս 'ի դժոխս դատակնքեցեր . այլ և զփառս զանկաւորն քեզ՝ ընդ իս տարայց . մեռայց ես, մեռցի ընդ իս և յաջողութիւն բաղդի որ քեզ 'ի փառս առաջնորդէր : Այլ դիւրին իմն էր քեզ . .

ԸՏՐՑԵՐՍԵՀ

Քաջ է . արարից ըստ քոց հաճոյից . արդարութեան փառք յինէն տարագիր հանաւ : Եթէ արքայի եղէց կուսակից, անիրաւիցիմ ընդդէմ քաջորերոյն և քեզ . և եթէ զձեր կամս լցուցից, նոյնպէս ա-

նիրաւիցիմ առ արքայ ։ Բայց լաւ է ըզ-
բազմացն կատարել զհաճոյս քան զմիոյ ։
և չիցէ արդեօք անիրաւ ... ա՛հ, 'ի յու-
սահատ խորհուրդս տագնապիմ ։ Մի՛ այլ
յերկուասցիս, մեռցի Սմբատ ։ այլ զի մի՛
լուայց զնորա զթախծագին բարբառ
յանբոյժ վէրս ինձ, յիս դարձցի սուրն՝
անդէն և զիս արկանել տապաստ ։ և դու
ել տար զրոյց հօր քում՝ խնդալ յանձն
իւր, զի լցաւ անթերի վրէժխնդրութի՛ն ։
Մնա խաղաղութեամբ ։

ՏԵՍԻԼԵ ։

ՍՈՒՐԷՆ ՀՐԱՀԱՏ

ՀՐԱՀԱՏ

Յո՞ր անյուսութիւն արկեր զնա ։

ՍՈՒՐԷՆ

Ես իսկ ընդարմացեալ կամ ։ որ խրոխ-
տապանծ սիգայր, և զսիրտ երկաթի ու-
նելով զսէր և զգութ ընդոտնէր, ո՞րպէս
յանկարծ փոխեալ 'ի խանդաղատանացն
առ արքայ գորովի ։

ՀՐԱՀԱՏ

Գնաց արդ տալ և զանձն 'ի մահ ։

ՍՈՒՐԷՑ

Աւա՛ղ անհաստատութեան խորհրդոց նորա ։ Հա՛ս նմա Հրահատ՝ եթէ զիս քեզ բարեկամ համարիցիս . արդե՛լ զնա , կա-սեցո՛ զձեռն մի՛ անձին առնել . ասա՛ . . .

ՀՐԸՀԸՏ

Ձեռս մի՞ մխել 'ի Սմբատ ։

ՍՈՒՐԷՑ

Ի զուր յայնժամ ամենայն ջանք իմ ։

ՀՐԸՀԸՏ

Զի՞նչ ապա ։

ՍՈՒՐԷՑ

Սպանցէ որպէս խոստացաւն իսկ . այլ մի՛ 'ի կարծիս անիրաւութեան և անձին ինչ վնասեսցէ ։

ՀԱՆԴԷՍ Դ.

Տեսարանն է 'ի նախադուռն խորանին Սմբատայ, շուրջանակի ունելով նշանս կանգնեալս և դրօշս պարզեալս. և հանդէպ երկուստեք բացուստ 'ի բաց տեսանին կանգնեալ խորանք իւրաքանչիւր գնդի նախարարացն իւրեանց դրօշիւք. յորս 'ի ներքոյ նշանի թագաւորին աղեղան և խաչի՝ արուեստակեալ են միոյ միոյ 'ի նախարարութեանց նշանք։ Եւ թիկնապահք արքայի առ դրան խորանին զրահաւորեալք յոսկի և յարծաթ 'ի պերճ հանդերձանս։

ՏԵՍԻԼ Ա.

ՍՄԲԱՏ, ՇՄԵՐԴ, ԱՐԲՈՒՆ, ԶՕՐԱԿԱՆՔ

ՍՄԲԱՏ

Անհաւաս թուին ինձ ամենայն բանք քո Արբուն։

ԱՐԲՈՒՆ

Ի պատմելն տէր դողան ոսկերք իմ. կատաղութիւն այսպիսի չէ երբէք տեսեալ. և յածել անդ զմտաւ՝ ընդարմացեալ սասանիմ։

ՍՄԲԱՏ

Եւ որպէս. բարեկամք սրտակիցք ինձ

երբեմն Ատրներսէհ և Վահրամ, երկո-
քին իսկ՝ որոց մեծապէս պատիւ և յար-
գանս ցուցի. երկոքին՝ որոց զգաղտնիս
իմ ներքինս հաւատացեալ էի. երկոքին
նոքա զորս ընտրեալ կալեալ էի՝ 'ի միասին
տնօրինել ընդ իս զպէտս աշխարհիս մեծի:
Եւ ես ըմբռնեալ զնոսա 'ի մատնութեան
յանցանս, ոչ միայն զերծ 'ի վրիժուց
պատժոյ և 'ի յանդիմանութեանց զնոսա
կացուցի, այլ իբրև յազգասիրութենէ
բերեալս, 'ի յորդոր մատեայ նոցա թևա-
կոխել 'ի նոյն ազգասիրութիւն, և 'ի նո-
ցա կամս թողի զթագաւորութիւնն. արդ
նոքա դարձեալ 'ի դաշնակցութիւն գան
ինձ հակառակ... Վահրամայ ծանու-
ցեալ այս երկրորդ անգամ զմեծութիւն
վրիպանացն՝ դառնայ 'ի զեղջ և յապաշաւ
ճշմարիտ. քայց Ատրներսէհ...

ԸՐԲՈՒՑ

Ատրներսէհ յամառեալ յիւր սնա-
պարծ գրգռութիւն՝ առ ոչ ինչ գրելով
զզեղումն գթութեան քո, արհամարհէ և
զխայթ իւրումն խղճի՝ որ սովոր է ծնա-
նել 'ի սիրտ դաւադրաց. զզարհուրանս
և զերկիւղ դաշնակցացն փարատեալ 'ի
մտաց նոցա՝ գուն 'ի վերայ եդեալ է
ձգել զնոսա յառաջին զայրոյթ կատաղի:

ԱՄԲԸՏ

Նա միայն զօրավիգն ժանտի՛ց. նա յու-
սադիր նոցո՛ւն. այր խորթաբարոյ դրժող
դաւաճան: Եւ ուստի՞ ձգեցաւ յայդ
չարահնար մատնութեան խորհուրդս.
ա՛հ, դառն հարուած ձեռին բարեկամի...
Ատրներսէհ գայ՚ի մատնութի՛ւն. յԱրբ-
նոյ յունկն հասանէ ձա՛յն: Խօսի յունկն
Շմերդեայ:

ՇՄԵՐԴ

Ակնարկութի՞ տեառն իմոյ արդիւնաս-
ցի անյապաղ:

ԱՄԲԸՏ

Եւ Բագարատ երթիցէ վաղվաղակի
առ Վահրամ ասել զի ելցէ առ իս՝
հանդիպել յինէն թողութեան: Երթայ
Շմերդ:

ԸՐԲՈՒՏ

Այլ, տէր արքայ, եղեռանն մեծի
ինքնին փոխարէն ած՚ի վերայ պատու-
հաս: Այն ինչ մեկնեալ յարքունեաց
այսր անդր յածեալ զաչսն անթարթափ,
լի հեկեկանօք՚ի խորոց սրտին վայիւք
հառաչանաց գարշի խորշի յանօրէն դա-
ւաճանութեան մատնութենէն, և յանձ-
նէ իսկ գլխովին, զի ընդդէմ բարեբարոյ
տեառնդ այս երկրորդ անգամ՚ի դաւա-

ճան մատնուեն խոհուրդս մտաբերեաց, և զոր եսն պատմէի տեառնդ իմում՝ նա ինձ պատմէ զնոյն. և յանձն արարեալ ծանուցանել տեառնդ, յաւելոյր'ի բանս իւր՝ եթէ Ասա՛ նմա զի ես ինձէն ածեմ'ի վերայ զարդար պատուհաս անձին. և զի ոչ անգիտանամ զպարտուպատշաճ հատուցումն: Զայս ասէր, և 'ի ձի աշտանակեալ սրանայր'ի գահաւանդ բարձու մերձակայ լերինդ: Աճապարեալ երագեցի և ես զհետ, այլ 'ի զուր. զի անդէն առաջի աչաց իմոց գահավէժ հոսէր զանձն 'ի վայր յայնկոյս՝ ընդ ժայռն անկռուելի յոտից՝ անհետ եղեալ յաչաց:

ՍՄԲԱՏ

Առ ուժգին ստգտանաց խղճին անձնամահ եղև, և ոչ եհաս առնուլ զչափ գթութեանս իմոյ. չիք ինչ վրիպանաց գործ՝ յորմէ յապաշաւ եկեալ ոչ հանդիպեսցի ոք առ յինէն թողութեան: Այլ իմ բաղդ օր քան զօր 'ի թշուառութիւն փոխի. և դա աջ բազուկ էր ինձ յամենայնի և կորեաւ. կարկտահար թօթափին յինէն ընտիր ընտիրքն քաջացն իմոց: Արդ ե՛լ դու և հսկեսցես տքնութեամբ. այս կացցէ մեզ վկայ անխաբ դաւանացն գործելոց:

ՏԵՍԻԼ. Բ.

ՍՄԲԱՏ

Ո՛վ տէր, խորք սրտից մթինք և անյայտք՝ կան առաջի քո յայտ յանդիման ի-բրև 'ի լոյս միջօրէի անաղօտ. պարգևք և պատուհասք 'ի քէն բաշխին 'ի մարդիկ. դու ետուր զայս գաւազան յիմ ձեռս, և զի քեզ յուսացեալս ոչ առնես յամօթ. յի՛ս տէր Աստուած, հի՞մ անտես արա-րեր զիս և զարքայութիւն իմ: Ընդու-նայնացայ այո՝ զի զհետ եղէ ելանել 'ի գահ, թէ և ինձ ըստ իրաւանց հասա-նէր. եթէ արդ կամք իցեն քեզ՝ առ յի-նէն զարքայութիւնս իմ կամ զկեանս, զի մի՛ բաժանակից եղէց տառապանաց ազ-գիս վհատելոյ: . . Ո՛ Ատրներսէհ, օձ դարանակալ. ուստի՞ ձգեցար ինձ ընդ-դէմ 'ի գրգռութիւն, և ոչ զիջանիս: Ո՞ եբաց և Վահրամայ զդուռն ոխութեան: Սիրելիք 'ի թշնամութիւն գան. թշնամիք զի՞նչ ոչ արասցեն: Հուր սիրոյ բարձեալ է յաշխարհէս մերմէ, շիջեալ և կորու-սեալ: Աստուած երկնից, մաղթեմ 'ի քէն, գէթ զայս մի նուագ լուիցես ա-նարժան քում ծառայիս. զայս զմին ոլա-

զատիմ. տեղալ յերկնից, զի՞նչ տեղաս-
ցես. ա՛հ, դողումն կալաւ զիս. տեղալ
յերկնից հուր յաշխարհս մեր: Եթէ
լցաւ չափ անօրէնութեանց մերոց, և չի-
ցեմք այլ ներողութեան արժանի, մի՛ և ս
յաւելուցումք 'ի չարիս. հուր բարկու-
թեան քո սրբեսցէ զաշխարհս մեր: Այլ
եթէ ըստ անբաւ դթութեան քում թո-
ղուլ հաճեսցիս զմեծեղեռն չարիս մեր,
տեղասցես յայնժամ զհուր սիրոյ քո՝ վա-
ռելզամենեսեան 'ի սէր քո և յիրերաց:..
Ա՛հ զի՞նչ իցէ. նախարարք և իշխանք մի
զմիով ելեւելս առնեն ձեռն տալ հագա-
րացւոյն, և ամօթապարտ դառնան առ
իս մերկ կողոպուտ յընչից և ստացուա-
ծոց: Ո՞ մերկացոյց զձեզ, իմ որդեակք.
ո՞չ դուք մատն անձանց եղերուք: Ես ար-
համարհ թուիմ յաչս ձեր՝ զի անյապաղ
ներումն ամենեցուն շնորհեմ. և արդ
է՞ր ելեալ էք յիմ վերայ. ոչ ինձ՝ այլ ձեզ
և որդւոց ձերոց լարէք զորոգայթ: Պա-
կասեցան գանձք բազմահարուստք, և
զպսակս փառաց մերկացեալ 'ի գլխոյ իմ-
մէ՝ ետու անյագուրդ վիշապին հագա-
րացւոյ: Թովիչք յիմարք, հարկանիցիք
միանգամայն ազգովին 'ի գալար վիշապէդ
յայդմանէ. մերժէք զհայր դորովալից
զոր ետ ձեզ Աստուած, ահա հրաժարեմ

ես, առէք արդ, առէք զոր խնդրէք զհա-
րուածս և զմահունս չարաչարս: Քաջ իսկ
'ի վերայ հասի զի բարձի Թողի արար զմեզ
Աստուած: Այր իւրաքանչիւր անձին
դիւրութեան միայն հոգացեալ՝ ոչ ոք դիւ-
րութեան հանդիպեսցի: Զի՞է քեզ Ատըր-
ներսէհ. իցէ՞ ինչ որ զքեզ արդար երևե-
ցուսցէ և մեղապարտ զիս. ո՞չ դու զիս
ստիպէիր մի՞ իջանել 'ի գահէս. արդ զի՞
եղև քեզ:.. Բա՛ յիմար ցասումն. վաս-
տակի տաժանի զի եղեռնաւոր կարդաս-
ցի, և վարձուց ակն ունի մահուան. շնոր-
հեցից և զայդ քեզ: Մեռցի՞ս յանօրէնու-
թեան քում, չես այլ ևս արժանի ներո-
ղութեան: Զօրականքդ, ելէք. ձերբա-
կալ զԱտրներսէհ շղթայակապ այսր առ
իս... Զի՞նչ խօսիմ ես. մի՞ ինչ ըստ գըր-
գռութեան... ո՛չ. դադարեցէք... եթէ
Թողից նմա և զայս, յաղթեսցի անշուշտ
'ի գթութենէ իմմէ:.. Եւ ո՞րպէս. որ
չարեօք յողայ յաղթել գթութեան, երբէք
համբուրեսցէ՞ զողորմութիւն: Մեռցի
նա ինքն անօրէնն. սպանցի Ատրներսէհ.
գիտասցեն ամենեքին եթէ է յիս և
սպանանելոյ զօրութիւն՝ եթէ կամիցիմ:
Քանզի գիտեմ առ ինչ գրգռեցան ընդ
իս. զոր արժան էր տալ նոցա, և որում
ակնկալեալ մնային մահուան՝ վրիպեցան

'ի յուսոյ անտի, այն նոցա ծանր թուե-
ցաւ: Այո, ոչ գիտացի կշռել վաղվաղա-
կի զարդար զհատուցումն. զմնասդ զայդ
շնորհեցէք ինձ առ ժամն: Ծանեայ արդ
եթէ դուք յոյժ առատագոյն էք յեղեռն
չարութեան քան ես 'ի գործ արդարու-
թեան, որ զարժանն ձեր զմահ ցայսօր
զլանայի: Ընկալ ջիք արդ, առէք..: Հա-
պա... Յորպիսի խորհուրդս յածեալ
ձգին միտք իմ. թաթաւել արեամբ զա-
թոռ իմ. եթէ Աստուած խռովեաց զո-
գիս ամենեցուն 'ի չարիս երագել, ես ար-
գելուցում: Չիցեն շատ արիւնքն ցարդ
գետահետեալք, և ես տակաւին իցեմ
ծարաւի արեան. զի ոչ եթէ մարթացայց
սովին վախճան առնել սպանութեանց.
այլ այս լինիցի նորոգ սկիզբն հարթայա-
տակ ջնջելոյ իշխանութեան Հայկազանց:
Անկցի այո՛ տուն Հայոց, այլ ոչ ես տաց
ձեռն 'ի կործանումն. մանաւանդ կամիմ
զի և զիս լացցեն զթաղեալս ընդ փլատա-
կօք նորա: Արդ մատիք յառաջ, աւասիկ
ես. թէ կամիք ինձ թագաւորել 'ի վե-
րայ ձեր արդարութեամբ և իրաւամբք,
արկէք 'ի բաց զսուսերս և զդաւանս. և
եթէ ինքնահալած գահավէժ կամիցիք
կորնչել, քամեցէք նախ զարիւն իմ՝ որ
յորդահոս առատացեալ պատառեսցէ

ձեզ Ճանապարհ մինչև 'ի յատակս դժոխոց :

ՏԵՍԻԼ Գ.

ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ

ՍՄԲԱՏ

Որդեակ Աշոտ, գիտիցես զի մատնեալ կամք այս երկրորդ անգամ, և ձեռն մատնիչ յամենայն յուսոյ փրկութեան վրէպ զմեզ կացուցանէ : Ատրներսէհ, գոռոզն Ատրներսէհ . . .

ԱՇՈՏ

Արբուն պատմեաց ինձ զամենայն, և ընդարմացեալ պակեայ ընդ լուրն . այլ վստահ 'ի բանս նորա կայցես աներկբայ, և գործիցես ըստ խորհրդոց նորա :

ՍՄԲԱՏ

Զինչպէտք խորհրդոց իցեն ինձ յայսմ հետէ :

ԱՇՈՏ

Մարդասիրութիւն որով կարծես հաստատիլ յիշխանութեանդ, և միաբանել զչարախորհ մարդիկ աշխարհիս՝ անօգուտ է հայր, նա՛ և յոյժ մահաբոյծ . արք գազանաբարոյք անընտելք . սուր և արիւն

դիտէ զնոսա համոզել 'ի խաղաղութիւն: Ի խնդիր են արեան, յորժամ զլասցի ոք նոցա զանձկացեալն տարփմամբ, ծանրացասումն լեալ ինքեանք նիւթեն զնոյն այլոց: Վայրապար են առ նոսա համոզկեր բանք: Հան միանգամ, աղաչեմ զքեզ հայր, մերկեա՛ միանգամ զսուր քո 'ի պատենէ. նա միայն տացէ պատասխանի երկմտութեան նոցա. անշուշտ յաղթանակեսցես և հզօրասցիս այնչափ՝ մինչև հանել և զայլազգին յամենայն սահմանաց աշխարհին մերոյ: Որ զգթութիւն առ անարժանս վատնիցէ, արհամարհ ինչ գրէ զնոյն: Տես, հայր, Աստուած ո՛րպէս խստութեամբ դատի զչարս. Ներեա՛ տէր համարձակութեան որդւոյդ. որ անտեսէ զչարիս, ինքն լուծցէ զվրէժն:

ԱՄԲԸՏ

Եթէ սինլքորք ոմանք 'ի դոյն թևակոխէին, արդար զբանսդ համարէի. այլ արդ 'ի մերկանալ իմ կամովին յիշխանութենէս, պարտեսցին 'ի միտս իւրեանց, և զմիմեանս սատակեսցեն՝ ընուլ զարդար դատաստանն Աստուծոյ 'ի վերայ իւրեանց. մի՛ այլ զայսմանէ խօսիցիս ընդ իս. ընտրեցի զլաւագոյնն: Եթէ զհագարացին խնդրեն, ելցեն առ նա և ընկալցին

'ի նմանէ զպատուհաս չարեաց գործոցն իւրեանց. և կամ թէ յանձանց իսկ ինքեանք զվրէժ լուծցեն. և կամ, զոր ոչն ակն ունիմ տեսանել, յապաշաւ դարձեալ՝ թողութեան հանդիպեսցին 'ի բարձրելոյն: Ա՛հ, վաստակաբեկ եղէ 'ի զուր վասն այլոց. շատ է արդ. յայսմհետէ վասն անձին հոգացայց: Խաղաղութիւն ընդ ձեզ, արք կորովիք անձնամահք. Աստուած այսուհետև ձեզ կացցէ թագաւոր. եթէ տակաւին կամիցիք ինչ ուխտադիր լինել 'ի դաւել զարքայն ձեր, համարձակ լերուք. զի նա երկայնամտէ ձեզ՝ մինչև լցցի չափ մեղանացն և մինչև վայելիցէք յարդիւնս անմտութեան ձերոյ:

ԸՇՈՏ

Յամենայնի յԱստուած ապաւինեալ քո, կարծիցեմ իրաւամբք անտես առնել զամենայն, և կամիցիս լքանել՝ պատճառս տուեալ մեծամեծ չարեաց. երկի՛ր, հայր, մի՛ գուցէ և քեզ գրեսցին չարիքն:

ԱՄԲԸՏ

Արդար են բանքդ. և ես ոչ եթէ աստէն և այժմէն թողեալ լքեալ 'ի բաց մեկնեցայց, այլ միայն զի ոչ 'ի փորձ մատեայց սանձել զանսանձ մարդիկն, և ոչ

ինչ ծանր թուիցի ինձ եթէ հարկ լինիցի մեռանել կամ կալ յիշխանութեան, կամ ելանել մեկնել յաթոռոյ:

ԸՇՈՏ

Եւ ո՞րպէս թողուցուս յանհոգս զթագաւորութիւնն մեծ՝ զոր բազում ճգամբ և քրտամբ ստացաւ հայր քո. զոր թէ ըստ արժանւոյն յանձին կալեալ վարիցես, յաշխարհի և յերկինս պատճառք անչափ փառաց լինիցին քեզ և որդւոցս քոց:

ԱՄԲԸՏ

Եւ ո՞րպէս կալայց խնամով զոր բառնալ յինէն կամի Աստուած:

ԸՇՈՏ

Յուսահատ խորհուրդք ունին զմիտս քո հայր:

ԱՄԲԸՏ

Այն է յուսահատ խորհուրդ, ջանալ պինդ ունել զիշխանութիւն հակառակ կամաց իշխեցելոցն. և զհոյլս վշտաց ածել 'ի վերայ անձին և այլոց, և փառս համարել:

ԸՇՈՏ

Զարդարութենէ բուռն հարեալ վաստակել՝ յուսով ապագայ բարեաց, գործ

է դիւցազանց և Աստուծոյ հաճոյական ։

ԱՄԲԸՏ

Յոլով ամս ունիմ 'ի թագաւորութեա, և անցեալ եմ ընդ փորձ ամենայնի. արդ արժան է՝ կամ զամենեսին զնոսա որք միաբանեալ են այժմ հակառակ ինձ 'ի մահ դատապարտել, և կամ թողուլ զնոսա ազատս. շնորհեսցէ ինձ Աստուած լոյս գործել զարժանն, արդ մի՛ ընդվայր ծախեսցուք զժամս ։

ԸՇՈՏ

Յո՞ գնաս տէր, ո՞չ կարիցեմ իմանալ զոր ինչ կամիցիս գործել ։

ԱՄԲԸՏ

Զոր Աստուած յաջողեսցէ ։

ԸՇՈՏ

Հայր յո՞ դիմեալ աճապարես. ո՛չ խօսի. կործանումն 'ի վերայ կայ. և զիս ընդ հօր իմոյ 'ի մահ դատեսցեն. ելից զհետ նորա. ա՛հ ։ Թագաւոր որ չունիցի զմէտն արդարութեան 'ի ձեռին, կամ անչափ ողորմութեամբն ծաղր լինի և արհամարհ, և կամ բուռն խստութեամբն ատելի գտանի ։

ՏԵՍԻԼԴ.

ՀՐԱՀԱՏ, ԱՇՈՏ

ՀՐԱՀԱՏ

Ա՞ստ իցես արքայորդիդ Աշոտ. ես զՍուրէն խնդրէի:

ԱՇՈՏ

Զի՞նչ բանք են զՍուրենայ:

ՀՐԱՀԱՏ

Տագնապեալ խռովեալ ել մեկնեցաւ 'ի վրանէն 'ի լուր դաւադրութե՛ ընդ-դէմ արքայի, իբրու եթէ և զնմանէ կաս-կածիցէ արքայ. և եթէ զսէրն իցէ փո-խեալ յատելութիւն 'ի պատճառս մնա-լոյ նորա անդարձ:

ԱՇՈՏ

Ճշմարիտ այդ այդպէս է:.. Այլ ես ոչ կարեմ լինել ժամավաճառ. ոչ կամիմ թողուլ զհայրն իմ միայնակ: Գնայ:

ՏԵՍԻԼԸ.

ՀՐԱՀԱՆԳ

Եւ ես տաղտկացայ ի խնամակալու-
թենէն Սուրենայ. երիտասարդ խրոխտ.
որչափ առաւել բարիս առատաձեռնէ
նմա արքայ, ինքն այնչափ առաւել զըր-
գռի ընդդէմ նորա. և այն՝ որպէս հա-
ւանեալս եմ՝ գրգռեալ ի տուտ համբա-
ւոյ: Յիրաւի արքայ ոչ կամի զոք եչէան
մահմեդական յարքայութեան իւրում,
այլ ոչ եթէ ինքն հրաման տուեալ էցէ
բրել զաչքն Հասանայ հօր Սուրենայ. զի
թէպէտ ի բազում յեղանակս հնչեաց
լուրն, այլ այն թուի ճշմարիտ՝ զի յա-
պաւինել սոցա առ արքայ, հրամայեալ
է այսպէս. եթէ դարձցին ի հաւատս,
յեւս կացցէ Աշոտ ի պաշտամանէ բեր-
դին. իսկ եթէ ոչ, եղցէ Հասան ի բեր-
դէն ի բաց տարապնաց: Բայց Աշոտ կաց-
կածեալ իրաւամբք զի Հասան ոչ հան-
դարտէ՝ զրկեալ ի ժառանգութենէն, և
զի ոչ կամէր դառնալ ի հաւատս հարցն,
թէպէտ Աշոտ խոստանայ նմա ոչ ինչ
ինասել, բայց առ ի զառաչս առնուլ ա-
պագայ չարեաց, քան զի նա անշուշտ

դիմէր առ Յուսուփ և հասուցանէր չա-
րիս Աշոտոյ, վասն որոյ բրեաց զաչս նո-
րա: Եւ արքայի հարցևփորձ արարեալ,
և լուեալ զպատճառս Աշոտոյ, լռեաց,
թէպէտ չէր հաւան ընդ գործն: Եւ 'ի
փոխարինել չարեացն այլով իմն հնարիւք,
կալաւ զսա առ ինքն. այլ իցէ՞ չափ խնա-
մոցն և գթոց որովք ընդ որդիս իւր սնու-
ցանէ զնա. Թո՛ղ և զմեծամեծ խոստմուն-
սըն եթէ դարձցի: Այլ սա, է՛հ, յոյժ
վայրագասուն բարուքն է. և լսել անդամ
ոչ կամի զուղիղ զպատճառս դիպացն և
ոչ զկրօնից: Ես յոյժ տհաճ եմ ընդ գը-
նացս սորա. այլ զի անկ է յամենայնի ու-
նել զկողմն յաղթական, վասն որոյ ինձ
պարտք են լռեալ հանդուրժել: Արդա-
ր և յուզեալ միանգամ մտաց ամբոխին 'ի
խոտորնակի կարծիս զՍմբատայ, ոչ ևս
այլ հանդարտեսցին:.. Ահա այսր հա-
սանէ Սուրէն:

ՏԵՍԻԼ Զ.

ՍՈՒՐԷՆ, ՀՐԱՀԱՏ

ՍՈՒՐԷՆ

Հրահատ, ո՞ւր ծածկեալ ես զերեսաքո:

ՀՐԸՀԸՏ

Եւ ես 'ի խնդիրքո հասեալ կայի այսր։

ՍՈՒՐԷՑ

Զի՞ գործէ Ատրներսէհ։

ՀՐԸՀԸՏ

Այն ինչ զիջեալ Ատրներսէհ բանից իմոց՝ զգուշանալ կենաց անձին, կամէր դառնալ յետս և ջանալ ցածուցանել զտագնապ սրտիդ, և խաղաղացուցանել զյուզեալ միտս քո, նախարարն Շմերդ՝ որ իբրև պատգամաբեր է Սմբատայ, եկեալ առ Ատրներսէհ՝ ած զնա միայնակ առ արքայ։ Խռովեալ յոյժ է Սմբատ և ոչ ոք գիտէ զվասն էրն։ Բազում ընդդիմակ կարծիք ընթանան 'ի բանակիս, և եթէ մեծ իցէ պատճառք ցաւոցն, և զԱտրներսէհ խորհրդոց աղագաւ խնդրիցէ։ Այլ որ զիսն տագնապէ, և զոր հաւաստեալ գիտեմ այն է՝ զի երկուք ոմանք արկան 'ի բանտ, Դեհրան և Արբուն։ Իսկ զՎահրամայ չգիտեմ զինչ ասել. աղետալիս պատմեն զնմանէ. 'ի յուսահատ խորհուրդըս 'ի խեղդ ինչմտաբերեալ իցէ, և ժայռք վախք, դարաւանդք սարաւանդք 'ի բերանս ամենեցուն, աստ անդ հծծանք և շշունջ. ամենայն ինչ խառն 'ի խուռն։

ՍՈՒՐԷՑ

Երկիւղալի են բանքդ և անյուսութեան տածիչք. այլ ոչ ինչ ազդեցին 'ի յոյզս մտաց վարանել զիս. նա զհակառակ նոցուն կիրս զգամ յանձին: Յառաջն երկիւղ իմն սնոտի կալաւ զիս, և արդ յորժամ երկնչել պարտ է՝ յոչ ինչ իրաց սարսեմ: Դու Աստուած հզօր, գիտեմ զի չես հաճ ընդ նախատինս իմ, և վասն այսորիկ զհառաչանս՝ զերկիւղ և զարտասուս բարձեալ ես յինէն՝ զի մարթացայց տոկ ունել չարեաց, և կամիս մեռանել ինձ այնպէս աներկիւղ՝ որպէս ցարդ բուռն հարի զիրաց բազմաց:.. Ո՛ հայր իմ վշտահար և տուն հօր իմոյ, ահա յոր ձեռնհաս էի գործեցի զամենայն՝ ձգել և զայլս 'ի վրէժխնդրութիւն, և անձամբ 'ի նոյն փութալ կենօք և մահու:.. Այլ տեսանեմ զՎահրամ:

ՏԵՍԻԼ Է.

ՎԱՀՐԱՄ, ՍՈՒՐԷՆ, ՀՐԱՀԱՏ

ՍՈՒՐԷՑ

Եւ առ ի՞նչ մեռեալ զքեզ կարդային:

ՎԱՀՐԱՄ

Առ 'ի պատրել զՍմբատ՝ Արբուն հրա-

չակեաց զդոյն: Տեսեալ զի արգելաւ ինքն 'ի բանտ, և զի պատրուակ դաւանացն պատառեցաւ, կեղծեաց զմահ իմ 'ի փըրկել զիս:

ՍՈՒՐԵՑ

Զի՞ գործէ և Ատրներսէհ:

ՓԸՏՐԸՄ

Մեծապէս վշտացեալ զի խայտառակեցաւ հնարքն, և զի 'ի միասին ընդ քեզ 'ի մի խորհուրդ գտաւ 'ի նոյն. և ինքն 'ի զուր յուրաստ գայ: Դեհրան զի ապրեցուսցէ զնա՝ ասաց արքայի զամենայն և զպատճառս ոխութեանն. և արքայ Սըմբատ ածեալ ընդ իւր զԱտրներսէհ եմուտ յՈւխթիս 'ի քաղաքն, որպէս լուայ ասել յապարանս Ատրներսեհի ուղղեալ զընթացսն: Ամենայն դաշնակիցք խուճապեալք աճապարեն 'ի փախուստ և 'ի թագուստ, և ինքն արքայ առաքէ արդ և զհետ քո՝ կալանաւորել և զքեզ:

ՍՈՒՐԵՑ

Այլ որ առաքեցաւն յապաղէ յոյժ 'ի լրումն ածել զնոյն՝ ունել զիս. պատրաստ եմ ելանել զհետ նորա, այլ անժոյժ 'ի յամելն: Եղո՛ւկ զիս. որպէս անտեսեաց Աստուած հատուցանել զարդար զիմ վրէժխնդրութիւն:

ԳԱՅՐԱՄ

Այլ իմ այլազգի են խորհուրդք. զեր-
ծուցանել և զքեզ. և ընդ հօր քո և զԱ-
տըրներսեհի մահուան միանգամայն լու-
ծանել զվրէժ արութեամբ քաջութեան:

ՍՈՒՐԵՑ

Աւա՛ղ նմա զի 'ի նանրախորհուրդ զօ-
րականս ապաւինեցաւ: Նոքա անհաւա-
տարիմք թագաւորաց իւրեանց, և ոչ ու-
մեք ցուցցեն զանկեղծ հաւատս. փոքր
միւս ևս այր իւրաքանչիւր և անձին մատ-
նիչ լինիցի: Արդ 'ի վերայ հասի զի Աս-
տուած զուխտս մեր և եթ ընկալցի փոխա-
նակ կատարեալ յաղթութեան, և զփառ-
սըն փոխանակ անյողդողդ հաստատու-
թեան խորհրդոց մերոց կշռեսցէ: Տես-
ցէ ամենայն ոք և հիացեալ առցէ 'ի գո-
վութիւն. զի վասն արդար վրիժուց քի-
նու յոչ ինչ վատութիւն խոնարհեալ՝ մե-
ռանիմք յանօրէն ձեռաց, զամենայն
վրէժ խնդրութիւն յանձն արարեալ յար-
դար դատաւորն երկնի և երկրի:

ԳԱՅՐԱՄ

Այո՛, այլ գիտա՛ զի կամք են Աստու-
ծոյ 'ի քո ձեռս գործել զամենայն: Ես
իսկ եմ եկեալ քեզ 'ի հրաւէր ոչ 'ի բանտ՝

այլ'ի գլուխս զօրաց ։

ՍՈՒՐԷՑ

Որպիսի՞ նորալուրս հնչես յունկն իմ ։

ՎԱՀՐԱՄ

Վերահասո՞ւ իցես պատահելոցն. դաշնակցաց մերոց ամենեցուն լուեալ զի պատառեցաւ առագաստ գաղտնութեանն, 'ի յուսահատութիւն անկեալ տագնապին ։

ՍՈՒՐԷՑ

Ցաւէ ինձ վասն նոցա. ոչ կարացին թօթափել զլուծ վատախորհուրդ թագաւորին ։

ՎԱՀՐԱՄ

Այլ հնար է քեզ զառաջս ունել չարեացն ։ Դու սիրելի արքայի գոլով, և ազգակցութեամբ կապեալ ընդ Ատրներսեհի, եթէ զքեզ տեսցեն յոտին՝ դարման մատուցանել վերահաս վտանգաց, անշուշտ յոյս կալցեն, զի առեալ զթագաւորութիւնն 'ի Սմբատայ՝ դարձեալ 'ի Բագրատունիս յանձնեսցես. զի քաջ 'ի միտ առի եթէ ոչ ոք երբէք յանձին կալցէ զայլոյ ուրուք նախարարութի՞ւ քան զիւրն տեսանել նախապատիւ ։

ՍՈՒՐԵՑ

Կամիցիս ինձ 'ի պատերազմ ընդ Սըմ-բատայ ելանել, և 'ի կարծիս ապաստան՝ մատն լինել անձին և այլոց: Ո՞չ այդպէս. ոչ ընդ մարդկան աշխարհիս բանք են իմ. այլ անձին միայնոյ արքայի ակն եդեալ եմ. և եթէ ոչ յաջողեցայց 'ի սոյն, 'ի կենդանութեան նորա մի՛ այլ կեցից ես. կամ ես կամ նա՝ հարկ է մեռանել միում 'ի մէնջ: Փոխանակ ցամաքեալ աղբերց արտասուաց հօր իմոյ հեղից զարիւն, թէ ոչ զնորայն՝ գէթ զիմս. մինչև Աստուած հաճեսցի բռնամահ վճարել զնա 'ի կե-նաց: Զայս պայման ուխտի կապեցի ընդ անսուտն Աստուծոյ:

ՓԱՅՐԱՄ

Լաւ ևս աջողեսցիս յայդոսիկ՝ եթէ ունկն ինձ մատուսցես: Ահա մեռեալ կարծէ և զիս արքայ. և եթէ լուիցէ կեն-դանի և 'ի թշնամիս իւր, 'ի զարհուրա-նացն անդէն յիմարեսցի. և զիա՞րդ յաղ-թիցիմք 'ի նմանէ. նա և զԱտրներսէհ թերևս վաղվաղակի զերծուցանիցեմք 'ի մահուն վտանգէ:

ՍՈՒՐԵՑ.

Ի սնոտիս տաժանիս. մի՛ երբէք 'ի մարտ

խաղացից ընդ արս ազգայինս. գուցէ և ոչ ինչ վճարիցեմք՝ բայց միայն աղմուկ և խռովութիւն, մինչև ամենեքին յաւար լինիցիմք օտարաց: Տեսէ՞ր զելս սերկեան կռուոյն. այսպէս մեք ծախիմք 'ի սրոյ միմեանց, և 'ի կամել յաղթանակել 'ի վերայ ազգայնոց, վաստակաբեկք տըկարացեալք յաւար լինիմք և 'ի գերութիւն զանձինս մատնեմք որջացեալ թըշնամեաց մերոց՝ որք իբրև զվոհմակս գայլոց քաղցեալս ակնկալեալ մնան տեսանել 'ի քուն զհովիւսն և զպահապանս ոչխարաց: Եթէ ելից 'ի զօրն, յորդոր լինիցիմ նոցա ոչ 'ի մարտ, այլ 'ի խաղաղութիւն: Կարիցէ՞ն դաւով կորուսանել զարքայ, և զօրացեալ միանգամայն առանց բազում արեան հեղլոյ խաղաղել զաշխարհն, քաջ է. ապա թէ ոչ՝ երթ ասա՛ նոցա, դադարեսցեն առժամայս, մինչև դէպքն յաջողք ցուցցեն նոցա զարժանն: Որ յանդէպսն անխորհուրդ ոչ խիզախէ, 'ի կարևոր ժամուն յարդիւնս խոհական ընտրութեանն վայելեսցէ:

ԿԸՏՐԸՄ

Խոհականութեան իցէ ձեռն 'ի գործ արկանել վստահութեամբ, և 'ի խափանարար դժուարութեանց ինչ կասել և

լքանել, և անձնատուր անձնամահ լինել:

ՍՈՒՐԵՑ

Եւ քո զանձին և եթ հոգացեալ զդիւ-
րութենէ, որ ինչ օգտութիւնս քեզ ծնա-
նի՝ ամենեցուն պարտ վարկանիս զնոյն
խորհել ընդ քեզ: Այլ զիս յայսմհետէ
առ արքայի միայն կարես տեսանել վա-
ռեալ քաջագօտի՝ մեռանել կամ մեռու-
ցանել: Գնայ, և Հրահապ զհէպ նորա:

ՏԵՍԻԼ Զ.

ՎԱՀՐԱՄ

Միտք բազմակոհակ, սիրտ խռովա-
յոյզ, անձն իմ բովանդակ յահի և յեր-
կիւղի: Զո՛ր և է իրաց բուռն հարի, ու-
նայնաձեռն վրիպեցայ: Արդ ամենայն
ինչ մերկապարանոց կայ. չիք տեղի հայ-
թայթանաց: Արդ լսէ արքայ զի կենդա-
նի կամ և ապերասան... չերևեցաւ յաշ-
խարհի ոք ապաշնորհ իբրև զիս: Ահ՛.
յայսչափ վաստակոց իմոց ինձ բաժին՝
ապաշաւ անօգուտ, մորմոք սրտի և կա-
տաղութիւն սրտմտութեան: Այս ար-
գասիքեն անմտութեան խորհրդոցն Ար-
քնոյ, և այլ զի՞նչ իրաց մարդ իցէ ակն ու-

նել 'ի վատազգի յառնէ. հնար է ումեք
փոխել զտարազ կենացն, այլ ոչ և զբոյսս
բարուց: Ես բուռն հարի յայս գործ՝ զի
զՀաւնունիս թագաւորազունս գրեցից.
այլ միմիայն գործ վրիպակ, ունել և զԱ-
տըրներսէհ համախոհ ինձ, վեր 'ի վայր
շրջեաց զամենայն: Տեսին զայր Բագրա-
տունի յաշխոյժս արութեան և վրէժխըն-
դիր նոցայն վնասուց, և ես յոչ ինչ հա-
մարեցայ առաջի նոցա: Անյուսութիւն
մեծ յոր անկայ յայնժամ՝ ստիպեաց զիս
յանզգոյշս խոնարհեցուցանել զլսելիս
անմիտ բանից Արբնոյ՝ պատրեալ յառ-
երևոյթ հնարիցն պատշաճութենէ. ո՛ ու-
նայն ջանից 'ի պատրել զթագաւորն: Ար-
բուն զիս գահավէժ քարոզէ կորուսեալ.
և ես առ դաշնակիցսն հասեալ գոյժ տամ
եթէ պատահար անակնկալ 'ի բաց առ
զքողն ուխտին, մի՛ տալ ժամ, այլ ելանել
'ի վերայ արքայի, հարկանել վանել: Որ-
պիսի՛ ամօթ նախատանաց էր զոր կրեցի.
ընկեր առ ընկեր ինձ լու 'ի լու՝ դաւա-
ճան զանձն իմ կարդային և նենգաժոտ
յիմար. լաւ էր ինձ մահ՝ քան այսպիսի
թշնամանաց տանել: Արդ ես յարքայէն
և 'ի զօրաց միանգամայն եմ անարգեալ:
Ա՛հ, կատաղեալ եմ յոյժ, ընտրելի է
ինձ աստէն կայծակնահար ընդ գետին

մտանել : . . Գէթ զՍուրէն ոչ կարացի համոզել գալ ընդ իս 'ի զօրն առ ուխտա-դիրսն . ոչ ինչ յերկուանամ զի լուծա-նէր յայնժամ տարակուսութեան խոր-հուրդ նոցա : Արդ զի՞ գործիցեմ . 'ի յու-սահատ խորհուրդս թաղեալ կամ : . . Զի՞ այսչափ վհատիցիմ, գնացից ես ինձէն առ արքայ . ամբաստան եղէց զինէն և զԱրբնոյ . դարձուցանել 'ի գլուխ նորա զվրէժ ան-մտութե՛ իւրոյ, և ես արեամբ իմով ան-դէն լուացից զիս 'ի չարեաց : Ո՛ տէր, որ-պիսի՛ դառն տուգանօք պահանջիմ զհա-տուցումն անպատեհ փառասիրութեան : Յորժամ անյոյս եղէ 'ի փառաց, յայն-ժամ ծանեայ՝ եթէ լաւագոյն է յար կալ յարբեցութեան քան ջերանիլ յախտ փա-ռասիրութեան :

ՀԱՆԴԷՍ Ե.

Տեսարանն է յապարանս Ատրներսեհի 'ի սենեկի ատենին, յորում արքայ 'ի Թիկնապահացն շրջափակ բազմեալ:

ՏԵՍԻԼ Ա.

ՍՄԲԱՏ, ԱՏՐՆԵՐՍԷՀ

ՍՄԲԱՏ

Ընջ, բազմեաց Ատրներսէհ. լուր զոր քեզն ասեմ, և՝ փութա յանթերի լրումն նորին: Կամիմ զի ունկն դիցես ինձ, և մի հատանիցես զբանս իմ. կացցես լռին և անհառաչ և անխռով. և եթէ բուռն առնիցեն քեզ միտք քո, և գրգիռ արկանիցեն 'ի քեզ, ապա լուայց քեզ որչափ և կամիցիս. յայսմ և եթ լցուսցես զհաճոյս իմ:

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Լուայց մտադիւր բանից տեառն իմոյ:

ՍՄԲԱՏ

Այլ քաջ յուշի կապեսցես՝ մի պակասել 'ի խոստմանէդ, զի տաց և քեզ ա-

սել զոր կամիցիսն : Գիտիցէս Ատրներ-
սէհ, զազգ քո և զծնունդ. դու Բագրա-
տունի յազգէ, այլ աննշան առն որդի և
'ի ծառայութիւն վրացւոյ ուրումն մտե-
լոյ : Իմ գթացեալ 'ի վերայ քո, քեզ և հօր
քումև տեառն հօր քո խնամտարայ, մինչև
յիշխանական պատիւ հասուցանել զնո-
սա, և 'ի քեզ հայէի իբրև յորդեակ հա-
րազատ և սիրելի, և փոյթ մեծ կալայ զի
'ի յառաջադէմն զարգասցիս դու : Հա-
կառակութիւն Վրաց ընդ իս եղեալ, և
ընդ իմով իշխանութեամբ զմասն աշխար-
հին գրաւեալ՝ ետու քեզ 'ի պարգև. և
ևս յորդեալ սիրոյս՝ մինչև թագաւոր ըզ-
քեզ օծի այնր մասին : Լուայ և յոլով
բարուրանս ամբաստանութեան զքէն 'ի
ծանօթից և յօտարաց. այլ ասէի, առա-
ւել գիտէ այր զանձինն քան զայլոց, մի
զիս ընդ քեզ համարեալ կապանօք սիրոյ :
Եւ քան զբազումս 'ի նախարարաց վերա-
գոյն զքեզ տեսեալ, յամենեցուն 'ի միտս
նախանձուկք անկանէին, և 'ի պատճառս
քո երբէք երբէք ատելի եղէ նոցա, և այն-
չափ առաւել՝ զի ուխտադիրք ևս եղեն
սպանանել և զիս վասն քո. արդ իսկ բա-
զումք 'ի նոցանէ նովին ոխութ՝ վառեալ
պատրաստեալ կան : Այլ ես ոչ ինչ փոյթ
զնոցանէ առնէի, զայն և եթ շատ գրե-

լով՝ զի դու ընդ իս իցես 'ի սէր անքակ, և ես չիցեմ անիրաւեալ ումեք թէև այնպէս թուիցիմ. շատ է ասէի, զի Ատրներսէհ ընդ իս է: Եւ որ մեծ և ս է, ա՛հ անհնարին պատրութիւն, և աւա՛ղ ընդունայն ակնկալութեան յուսոյս. այսօր 'ի տեսանելն զքեզ, յանհնարին ապշութիւն մտաց իմոց, յուխտ ընդ թշնամիս իմ մտեալ և կացեալ նոցա գլուխ, փոխանակ զինելոյ վրէժխնդիր և փոխելոյ յատելութիւն զսէրն իմ, ես ոչ 'ի չարիս դատէի զքեզ 'ի միտս իմ, այլ որպէս և դու բաղբաղէիր՝ յանչափ սիրոյ ուղղութեան մոլորեալ զքեզ կարծէի: Եւ զի տեսի զքեզ 'ի թշնամիս իմ, զիս յանդէտըս վրիպեալ համարէի 'ի պատշաճականաց, և տուեալ պատճառս գրգռելոյ արդարադատ մտացդ ընդդէմ ինձ. և վասն այնորիկ 'ի տագնապել զիս խորհրդոց՝ կամէի մատուցանել չարեացն դարման, յանձն եղեալ 'ի դատաստան արդար մըտացդ քոց և Վահրամայ: Վասն որոյ քեզ միայն և Վահրամայ հարցանէի, և լաւագոյն զքոյդ համարեցայ, զի կարծէի անկեղծ մտօք զբարեաց խորհել քեզ. և ըստ կարի և առաւելքան զկար առատաբաշխ երևեցայ քեզ, և եթէ ինձ հնար ինչ էր և 'ի քեզ յօժարութիւն՝ առնուլ և զթագա-

ւորութիւնս իմ, զայն իսկ ոչ զլանայի ։ Զի՞ ևս ասացից զմեծամեծաց . արդիւնք և բանք կացցեն վկայք ճշմարտութեանն ։ Եւ ո՞րպէս մարթ ինչ էր մոռանալ զյիշատակ այնչափ փառացն առատաձեռնելոց . սակայն դու Ատրներսէհ, դու, ա՛հ, զոր և յերազի անգամ նշմարել ոչ բաւէի, ծանեայ, զի դու ոչ բարութեան 'ի խնդիր, այլ միայն 'ի չար կամաց, նենգագործ թշնամի զարթուցեալ կաս ընդդէմ ինձ . դու ինքն կամիս 'ի մահ դաւաճանել զիս ։

ԸՏՐՑԵՐՍԵՀ

Ե՛ս դաւաճան կենաց տեառն իմոյ յետ ընդունելոյ ընդ այնչափ բարութեանց և զկեանս իմ 'ի պարգև . ե՞ս մտաբերիցեմ զմահ . . .

ԱՄԲԸՏ

Ո՞չ կաս դու 'ի բանի քում . բազմեաց . ժուժեա՛ սակաւիկ միւս ևս, ոչ ևս յաւարտ զբանս իմ հասուցի . և ապա անբասիր զանձնդ արասցես թէ կարես . մի՛տ դիր ։ Վաղիւ 'ի խնջոյս զոր ես 'ի հաստատութիւն նորոգ խաղաղութեան դաշին կապելոյ 'ի մէջ մեր պատրաստեցի, դու 'ի նշան ոխութեանդ պատրաստիս ընդունել զայն . զանապակն խառնեալ ինձ մատուսցես աջովն՝ մաղթել ազգիս զա-

ռատութիւն երկնաւոր օրհնութեանն, և ձախու սուր 'ի կող իմ արկեալ՝ զկեն-դանութիւնս յինէն կորզեսցես. և դա-ւակիցքն արտաքոյ և 'ի ներքոյ քեզ սա-տարք: Ճշմարիտ իցեն այսոքիկ եթէ պա-տիր կասկածանք: Կամիցիս լսել և զա-նուանս հնգետասանից քաջացն ուխտա-կցաց. իշխանքն Խութաս, Կադմոս. Զա-ւէն, Կաստոր, Ամբակ, Վաղինակ, Թա-թուլ, Կար, Հայկակ, Գորգ, Վահրամ՝ որ քան զամենեսին սիրելի էր ինձ յետքո, և այլքն. Թող զզօրականս խռովայոյզս՝ որոց աչք 'ի տեսիլ ուղխահոս արեանց միայն զուարճանան. Ա՛հ Ատրներսէհ, կաս անմռունչ յաւէտ յամօթապարտ ա-կընկորութենէդ քան առ 'ի կալ 'ի խոստ-ման քում: Եւ զի՞նչ կամէիր առնել զկնի մահուան իմոյ. Թագաւորե՞լ ընդ իմ. և կարծէիր 'ի խաղաղութե՞ վայելել՝ ձեռն յօծեալ տեառն ամբարձեալ. և ո՞րպէս կա-րէիր հանդուրժել տեսանել դիտապաստ անկեալ 'ի ձեռաց քոց զձեռն բարերար քեզ. և քաղցրանա՞յր քեզ սեղանն և հա-մադամք նորա արեամբս իմով զանգեալք. արիւնացայտ երկիրն որում իշխելն կա-մէիր, աղաղակէր առ քեզ ահագին սպառ-նալեօք զցայգ և զցերեկ յամենայն ար-շաւանս քո. զո՞ սպաներ այր արեանց.

հատո զարիւնն արդար. այսպիսո՞ւմ փա-
ռաց ակն ունէիր: Ա՜հ, և օր մի և եթ կա-
րէի՞ր հանդարտել կալ հաստատուն. կար-
ծէիր եթէ չգուցէ Աստուած յերկինս
և արդարութիւն յերկրի: Եղո՜ւկ քեզ.
ես 'ի ցաւոց սրտիս ոչ կարեմ ժոյժ ու-
նել կալ անկարեկիր քեզ՝ 'ի յուշ բերեալ
զայնր ժամու զդառն աղէտս քո: Բա՛ կրից
բռնութիւն, յո՛ր վախս անդնդոց ան-
զերծ հոսես զայր: Եւ ո՞րպէս մարթ էր
քեզ մոռանալ զերախտեաց բազմաց յի-
շատակութիւն՝ ոչ ինչ խայթ 'ի միտս կրե-
լով: Եթէ յանձն քո հայեսցիս, զՍմբատ
տեսանէիր որ զգեցուցանէր զքեզ յայս
տարազ: Եթէ զգործս քո զանցեալս յի-
շեսցես, Սմբատ կայր առ քեզ ձեռն քեզ
տալ 'ի գործ, և ապա վարձահատոյց լի-
նել հարիւրապատիկ. եթէ զբնակութի՞
քո նախկին՝ զընտանիս և զծնողս, և ահա
դարձեալ Սմբատ ընդ առաջ ելանէ՝ 'ի
պատիւ զամենեսին զձեզ կոչելով. և ո՞ր-
պէս անխիղճ յանդորրու կեցցես: Ես
զքեզ հանի յայս բարձ աւագութեան.
արդ զի՞ կամիս զիս բառնալ 'ի կենաց.
տաղտուկ են քեզ բարութիւնքն, և կամիս
պարաւանդել ջլատել զձեռն, զի մի այլ
քեզ լինիցի բարեաց մատակարար: Ո՜
անհնարին գիւտ չարեաց. ընդունել ըզ-

բարին, և չարիս ընդ այնր կշռել: Ի՞ երբէք զի անտես զխնդրով քով և զանց զբանիւքդ արարեալ իցեմ. եթէ էր ինչ քեզ պատճառանս պատճառել, ի՞ր ծածկեցեր յինէն. ո՞չ ապաքէն քոյոցդ պատըսպարան յար կայի՝ ոչ ինչ խտրոց 'ի մէջ մեր երբէք արկեալ. զոր ինչ ինձ կամէի՝ 'ի քեզ տեսեալ լնոյր իմ փափաք. և զի յառաջնում նուագին այնպէս մտադիւրագոյնս ներեցի, տեսեալ զքեզ նկուն 'ի պատերազմի ընդդէմ ինձ, և այն չազդեաց 'ի սիրտ քո. չամոքեաց զխստացեալ միտս քո: Արդ ասա՛ զի՞ եղև քեզ, զի յայդ անագորոյն գործ մտաբերեցեր այս երկիցս. ասա, ժամ է արդ պատասխանւոյ:

ԸՏՐԵԵՐՍԵՖ

Յապշութե՞ մեծի ընդարմացեալ կամ, ոչ եթէ 'ի մահուանէ ինչ և 'ի քո ցասմանէդ զարհուրեալ, այլ զի ո՞ մատնիչ անձին իմոյ՝ ոչ գիտեմ, և ոչ իսկ մարթեմ իմանալ: . . . Արքայ, ճշմարտիւ այո ասացեր զամենայն. խնամք գթոցդ առ իս անպատումք են, և ես իսկ միշտ յերախտագէտ միտս էի. այլ զԿոստանդին զիշխանն Եգերացւոց զիմ և զքո զդոռ թըշնամի, զոր կալեալ կապեալ, փոխանակ սպանանելոյ՝ իբրև սիրելւոյ հօր քեզ 'ի

պարգև առաքեցի, և դու առեալ զայրն
չուառական՝ ուխտ խաղաղութեան ընդ
նմա հաստատեցեր. և զոր ինչ յառաջն
ինձ միայնոյ սիրելւոյ քում պարգևէիր,
զնոյն նմա փոխանակ պատժոյ մահու
շնորհեցեր թագ կապեալ 'ի գլուխ նո-
րա, և հանեալ զնա 'ի պատիւ թագաւո-
րի, որով ես յամենեցունց պարսաւ և
անարգանս գտի, և դովին զամենայն ըզ-
տուեալսն քո ինձ առ ոտն հարեր առաջի
ամենեցուն. և որ քևն պարծէի՝ քև նա-
խատ յամենեցունց եղէ. և ոչ է մարթ
պարզել բանիւք՝ եթէ յո՛ր կատաղութի
վառեալ տոչորիմ հրով սրտմտութեան
յայնմ յօրէ և առ յապա հակառակ քո:
Ամենայն այր եգերացի, արք սինլքորք,
ծիծաղին զինև, սպառնացեալ հատուցա-
նել զվրէժ իմոյ յանդգնութեան: Ժամ
'ի ժամէ՝ օր յօրէ մնայի դէպ ժամանակի
զարդար զվրէժն պահանջել 'ի քէն. և որ
ինչ 'ի ձեռն օտարի և պատերազմաւ ան-
հնար եղև, ես ինքն 'ի գլուխ հանել փու-
թայի. ծանեայ զի յայսմ անիրաւ գտայ,
այլ ոչ և 'ի փափաքելն զմահ քո: Քաջ
իսկ առաջի արարեր զերախտիսդ առ իս,
այլ ոչ և զգործս քո զքակտիչս երախ-
տեաց: Արդ զի ոչ յաջողեցայ 'ի սոյն,
մի ակնկալցիս տեսանել յիս զապաշաւ,

զարտասուս և զմեղկաղէտ հեծութիւնս։ Բաղդն 'ի քո կողմն է, և ինձ հակառակ։ Գիտեմ յոր ես բուռն հարի, և զոր արդ քեզ անկն է գործել. արդ յիս թողցես օրինակ յետնոց, և 'ի մահ իմ միայն զքեզ յապահովի կալցես։

ՍՄԲԱՏ

Այդպէս յանդուգն խիզախես Ատրներսէհ, և քաջութիւն կեղծել համարիս՝ 'ի վրիպանս անդ յամառեալ պնդել. այլ տեսցուք եթէ ցվախճան կացցես անփոփոխ. իցեմ և ես իբրև զքեզ դիւրայեղ։ Ասացեր անիրաւել ինձ առ քեզ՝ արձակեալ զԿոստանդին 'ի կապանաց. այդպէս անքակ հաստատութիւն սիրոյդ վաղվաղակի յատելութի՞ շրջեցաւ՝ պատճառս անխորհուրդս բաղբաղեալ. չէր արժան քեզ հարցանել 'ի վերայ հասանել ճշմարտութեան։ Զոր ինձ 'ի պարգև ետուր՝ ոչ ապաքէն տէր եմ իմոցն, 'ի վար առնուլ ըստ պէտս։ Գիտացեալ իմ եթէ զայլ ոք բռնագոյն կամին կարգել իշխան Եգերացիք, և խռովել զիս և զքեզ, լաւ համարեցայ շնորհս առնելնոցա՝ պարտապանս ինձ կացուցեալ, և այն ինչ զարծարծեալ զբոցն շիջուցանել։ Այլ այդ բանք ոչ սրբեսցեն զքեզ 'ի մեղանաց. ոչ ինչ

հարցեր, և վաղվաղակի թողեր զսէրն. մանաւանդ եթէ և առ ատել արարեալ էր իմ, չէր քեզ արժան վաղ ընդ փոյթ մոռանալ զբարութիւնսն զամենայն, և վասն այսորիկ խնդրել դաւաճանել, որ նա և յերդուեալ թշնամեաց միջի վատ և ապառում մտաց գործ է: Ցաւէ ինձ զի հատեր կտրեցեր զսիրոյն շաղկապ 'ի հարուած աննորոգելի. և կորուսի զքեզ օտարացեալ յաւիտեանս ժամակաց:

ԸՏՐՑԵՐԱԵՏ

Ձեն ինչ պէտք պատասխանւոյ. զի օրէնք են յաշխարհի՝ յաղթողին տէր լինել իրաւանց. եթէ ինձ յաջողէր բաղդն, յայնժամ և ես իբրև զարդարութենէ բուռն հարեալ պարծէի:

ԱՄԲԸՏ

Դեռևս պատրողական բանիւք յանդըգնեալ անպատկառ 'ի վէգ գաս ընդ իս. գէթ անագան ապաշաւեա...

Ստեփաննոս Պոլոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Ասարախան



ՏԵՍԻԼ Բ.

ԱՇՈՏ, ՍՈՒՐԷՆ, ՍՄԲԱՏ, ԱՏՐՆԵՐՍԷՀ

ԱՇՈՏ

Զամենայն զդաւակիցսն ցարդ ոչ գի-
տացեր հայր. ահա և Սուրէն ընդ նոսա:

ԱՏՐՆԵՐՍԷՀ

Եւ դա՛ մատն անձին եղև:

ՍՄԲԱՏ

Դո՞ւ ևս որդեակ...

ՍՈՒՐԷՆ

Այո, իմովս խորհրդով հնարեցաւ դա
զամենայն, ես խնդրեմ զվրէժ կորստեան
աչաց հօրն իմոյ:

ՍՄԲԱՏ

Եւ զի՞նչ. և տակաւին զհետ ես վրի-
ժուց:

ՍՈՒՐԷՆ

Եւ իցէ՞ ինձ հնար մոռանալ՝ զօր ամե-
նայն առաջի աչաց նկարեալ զաղէտս նո-
րա յանիրաւի:

ԱՄԲԱՏ

Միթէ առ ոչի՞նչ գրեցեր զայնչափ բարեաց վայելս, զփառաց և զպատուոյ և զաւագութեան, և միթէ զմահ ինձ նիւթել կոչեցի զքեզ առ իս:

ԱՈՒՐԷՑ

Անոտի է ամենայն և 'ի զուր. գործք մեծամեծք թափուրք 'ի սիրոյ՝ աճիւնք են սոսկ 'ի հրոյ. զխնամս սիրոյ ցուցանէր առ իս հայր իմ. այլ քոյդ պատիր խաբէութեան միտք են՝ փոխել զիս 'ի կրօնից. և զի ձախողակ բազդի պատահեցայ, սպա՛ն ահա և զիս, և Աստուծոյ տացես զվրէժ արեան մերոյ և աղետից:

ԱՄԲԱՏ

Ցո՛ր վայր ժամանէ յանդգնութիւն. ծածկագէտդ սրտից Աստուած, զո՛ր սէր եռանդուն տածէի 'ի սիրտ իմ յերկոսին 'ի սոսա. երկոքին իսկ ծարաւիք արեան իմոյ: Քո այս պարգև բարեաց, չունել զոք սիրելի յաշխարհի, և 'ի քեզ միայն անձկով բերիլ՝ տաղտկացեալ յերկրաւորաց. և զատելիս սիրել վասն քո: Այլ դու Սուրէն, հի՞մ անիրաւեալ համարիցիս զիս հօր քում: Հաւ քո 'ի ճշմարիտ կրօնս քրիստոնէից ծնեալ, և ապա 'ի դէնս

այլազգեաց փոխեալ վասն օգտի շահու, ես փութացայ դարձուցանել զորդի նորա զհայր քո, որ յամառէր այնչափ՝ մինչև անկեալ 'ի ձեռս Աշոտոյ, երդմնահար յանուն Աստուծոյ՝ դառնալ խոստանայր. և ապա փոխեալ 'ի մտաց, կասկածէր Աշոտ զի 'ի թողուլ զնա ազատ, նա 'ի հաւատակիցս իւր ապաւինեալ՝ չարիս 'ի գլուխ իւր հասուսցէ, վասն այնորիկ և ինքն ևս ընդդէմ երդման իւրոյ բրէր զաչս նորա. արդարև յայսմ յանցեաւ Աշոտ. այլ ես ոչ վրէժխնդիր զարթեայ զգուշացեալ 'ի մեծագոյն չարեաց. այլ և դուք այժմ ակնկալեալ մնայք դատակնքոյն ձերոյ:

ՍՈՒՐԷՑ

Սակայն և այնպէս ես պարտապան եմ քինախնդիր լինել զուր կորստեան աչաց հօր իմոյ. և առ ի՞նչ ստիպել ցայդ վայր դառնալ 'ի քո կրօն. բայց միայն խռովել զամենայն մարդ գալ ընդ քեզ 'ի կռիւ: Արդ անցո և ընդ մեզ զցանկութիւն փափաքանացդ. և այն Ա՞ծ յոր կարծես ապաւինել՝ նա և զմեր վրէժ և զայլոցն հանցէ 'ի քէն:

ԱՇՈՏ

Մի՛ ցայդ վայր խրոխտաս Սուրէն. յուշ ած միանգամ զքաղցրութիւն և զգը-

թութիւն արքայիդ. ծանիր եթէ քանի
երախտապարտ իցես նմա: Որչափ հա-
մոզկեր բանիւք աղաչեաց զՀայրն քոդառ-
նալ 'ի Ճշմարիտ կրօնս հարց իւրոց, ա-
ռաջի արարեալ և զստութիւն օրինացն
զոր դաւանի. և նա թուէր իմն հաւանել
բանիցն, և ապա յամառեալ կայր. և
դարձեալ կեղծաւորէր, մինչև ստիպեալ
յերդումն գալ յանուն Աստուծոյ՝ ոչ
ինչ ամօթ համարէր երդնուլ սուտ. և իցէ
ինչ այլ մեծեղեռն ամբարշտութիւն:
Դու զմարմնոյ աչաց լաս զկորուստ սա-
կաւօրեայ. այլ ես զհոգւոյն զյաւիտե-
նական: Եւ եթէ արքայդ մեծ խիստ ոք
էր՝ զամենայն զտուն նորա հալածական
վարէր յաշխարհէս մերմէ. սա աւասիկ
զորդի նորա զքեզ իբրև զսիրելւոյ իւրոյ
որդի կոչեաց առ իւր և մեծապէս խնամ
կալաւ. և դու կամիցիս վրէժ առնուլ 'ի
մարդասէր բարոյից:

ՍՈՒՐԵՑ

Ոչ կամիմ ես ունկն մատուցանել շա
ղակրատանաց բանից. 'ի խնդիր եմ մա-
հու. պարտապան եմ աչաց հօր իմոյ.
զի թէ ոչ կարաց հայր իմ լսել՝ եթէ խըն-
դրեցաւ վրէժ քինու աչացն, լուեալ զմահ
իմ՝ գիտասցէ զի ոչ պատրեցայ 'ի սնոտի

փաղաքշանաց. այլ կացի հաստատութ՝ յուխտին իմում:

ԸՏՐՑԵՐԱԷՑ

Եթէ դառն իցէ քեզ արքայ՝ տանել բանից արհամարհանաց, տո՛ւր զմեզ զերկոսին վաղվաղակի 'ի մահ. շատ իսկ թանգուզեցեր սնոտի բարրանօք 'ի չքմեղս լինել:

ԱՄԲԸՏ

Այո՛, վիրագ գազանամիտ. այժմ իսկ 'ի միասին զձեզ դատեցայց. ա՛յ դիւազգեացք չարանենգք. քան զամենայն թըշնամիս իմ դուք բուռն ինձ եղերուք. հընչեսցեն ականջք մարդկան 'ի լսել զանլուր պաղատանս ձեր առ իս, և զարդար զպատուհասն՝ յոր անզերծ ըմբռնեսջիք:... Այլ ո՛րպէս. տեսանեմ զՎահրա՛մ... Անշուշտ յապաշաւանս նորա գթացեալ Աստուծոյ՝ պահեաց 'ի ժանեաց գահավէժ մահուն:

ՏԵՍԻԼ Գ.

ՎԱՀՐԱՄ, ՍՄԲԱՏ, ԱՇՈՏ, ԱՏՐՆԵՐՍԷՀ, ՍՈՒՐԷՆ

ՍՄԲԱՏ

Յառաջ մատիր այր աննենգ, բարեկամ քաջ:

ՎԱՀՐԱՄ

Մի՛ այդչափ 'ի պատիւ հանցես արքայ զմատնիչ զոք դաւաճան:

ՍՄԲԱՏ

Յետ արտասուաց չիցեն ինչ մեղանք. դու ինձ Թիկունք կացեր և աջ բազուկ յամենայնի, և զկեանս իմ քեզ պարտիմ:

ՎԱՀՐԱՄ

Արքայ, մի 'ի պատիրս ըմբռնեսցիս. ես բուռն եմ 'ի Թշնամիս քո, և ցանկամ տեսանել զքեզ խոնարհեալ 'ի պատուոյդ, և զՀաւնունիս Ճոխացեալ փոխանակ քո. և յանցանաց իմոց անյիշատակութիւն ոչ ինչ զիս յապաշաւ ձգէ: Ես յայտնեցի զդաւն, զի մի 'ի ձեռս Ատրներսեհի վը-Ճարեսցի ամենայն, և ես մերկ և լոկ կա-ցից մնացից. և կամ էր ինձ 'ի վատթարել

նորա նշաւակեալ, և 'ի հնչել ձայնի վասն
իմ գահավէժ մեռեալ, երթալ առ զօրն
և խրախոյս կարդալ. ոչ տալով ժամ պա-
րապոյ՝ ելցուք 'ի վերայ և յաղթանակես-
ցուք ասել. զոր և արարի իսկ խորհրդով
Արքնոյ, այլ ոչ յաջողեցաւ, զի ոչ ոք
լսէր ձայնիս. և Սուրենայ իսկ յորդոր
եղէ գալ ձեռն տալ ինձ, այլ և նա սա-
լացեալ սրտիւ անլուր գտաւ: Եւ ես
մերկ և թափուր յամենայնէ մնացի՝
միայն զամօթն ունելով ինձ բաժին: Արդ
եթէ կամիցիս ինչ վարձահատոյց լինել,
զի պատճառ եղէ յայտնելոյ դաւանացն,
բարձ յինէն զնախատինս. կամիմ զի ըստ
անմիտ խորհրդոց Արքնոյ հատուսցես
նմա զմահ. զի բանիւ նորա մատն եղէ
դաւադրաց և փառաց անձին իմոյ: Ապա
'ի խնդրել և զմահ անձին՝ սրբեցից զա-
րտաս մեղանաց յինէն:

ՍՄԲԸՏ

Ո՛ կատաղութիւն անսանձ. տէր զի՞
գործիցեմ. չիցէ՞ք տակաւին յագեալք,
և իցէ՞ ոք այլ՝ հնարել զարթուցանել և
զնա յիմ վերայ. արդ մատիք առ իս ա-
մենեքին. ժայթքեսցեն և անդունդք
դժոխոց զամենայն զդիւացն դասակս.
այլ տէր եմ ես անձին իմոյ, և հրամանա-

հան թագաւորութեան մեծի, և կամիմ 'ի նմին կալ անփոփոխ. Հնչեսցեն դարք զիմ զայս յաղթութիւն վերջին: Յաղթանակել կամիմ 'ի վերայ ամենայնի, նա և արդար ցասման այնպէս՝ զի և դուք վայելեսջիք յարդիւնսն: Ատրներսէհ, սիրելի իմ ես. իբրև թշնամւոյ որ կամի զմահ իմ՝ շնորհեմ զկեանս քո. կեցցես դու. ես եմ որ զքեզդ աղաչեմ. յառաջին բարեկամութիւն կապեսցիս ընդ իս. արդ 'ի նորոգ իմն հակառակութեան ազգ բուռն հարցուք, մինչև յայտնի լինիցի՝ եթէ ո՛ զառաւելն շնորհեաց կամ ընկալաւ: Ի բազմապատիկ բարերարութիւնս իմ առ քեզ կամիմ յաւելուլ և ևս: Դու ես դարձեալ թագաւոր Վրաց և ինձ եղբայր սիրելի և ձեռն հզօր: Ընկալ և դու Սուրէն որդեակ սիրելի, ընկալ և տիրեսցես մասին քոյոյ իշխանութեան, և մասամբն առաւելաւ. ոչ այլ 'ի քէն պահանջեմ փոխել զկրօնսդ. յոր կրօն և հաճեսցիս՝ կաց 'ի նմին. միայն ջանասցիս յաղթել սրտմտութեանդ՝ ուսեալ իմովս օրինակաւ: Այլ ես զԱստուած աղաչեմ, զի հաճեսցի ընդ հեզութեան բարոյից տալ քեզ միտս զգաստս՝ ճանաչել զճըշմարտութիւն:

ՍՈՒՐԷՑ

Ո՛ արքայդ հզօր. վայելեալ 'ի քաղցր մարդասիրութիւն քո՝ յարդիւնս քրիստոսական հաւատոյն ձերոյ, պատկառիմ, ծանուցեալ 'ի փայլմանէ շողոյն՝ զլուսոյն առաւելութիւն. և զի զանիրաւ զյարձակումն՝ արդարութեան կարծէի պարտիս. և զի ոչ ակն ունէի կենաց շնորհ ընդունել 'ի քէն՝ յետ պատառելոյ առագաստի դաւանացն, ոչ ինչ պատճառաց ունկն մատուցեալ՝ զմեռանելն արիասիրտ ինձ փառս համարէի. արդ 'ի զեղջ և յապաշաւ անչափ ըմբռնեալ կամ ընդ այս գործ մարդասիրութեանդ. և միտք իմ և սիրտ վկայ ճշմարիտ բանիցս: Հապա ընդ քեզ է Աստուած, մինչև փոխել և զիս 'ի մտաց՝ բարձեալ յինէն զատելութիւնն մեծ զոր անշէջ կարծէի: Քրիստոնեայ եմ իբրև զքեզ, ո՞ թագաւոր, նախանձաւոր քումդ հեզութեան և սիրոյ: Բազում ինչ լուեալ 'ի քէն զՔ՚ն՚է Յ՚ն՚է, և ոչ զարթնուի խստացեալ. արդ բացան միտք իմ իմանալ զամենայն: Փոյթ մեծ կալայց և զհօր իմոյ փոխանակ մարմնոյ աչացն զհոգւոյն աչսն լուսաւորել. այս լոյս հաւատոյս իմոյ՝ քո պարգև է մեծագոյն քան զամենայն փառս և զճոխութի

աշխարհի. ա՜հ, եթէ որպիսի՛ սէր զար-
թեաւ 'ի միտս առ քեզ արքայ...

ԱՏՐԵԵՐԱԷՑ

Ա՜հ, զի՞նչ բարբառ արժանի յարգանաց
արձակիցեմ քեզ տէր. ոտնհարութիւն
երախտեաց դուռն է քեզ նորոգ բարե-
րարութեան. առաքինութիւն տարօրի-
նակ. գթութիւն անչափ՝ որ զքոյդ ար-
դարութիւն անաղօտ ևս ճառագայթար-
ձակ յօրինէ, զիմ զառանցանս և ևս ծանր
յարդարէ:

ԱՄԲԱՏ

Արդ մոռացումն լիցի անցելոցն ամե-
նայնի. լերուք արք. թողէք և Վահրամայ
զվնասն. նա մատն եղև ձեզ, այլ մատնու-
թի՞դ այդ սրբեաց զձեզ և յօդեաց ընդ իս
'ի սէր նախկին: Ա՜ Վահրամ. Դու քաջդ
Վահրամ, ա՛նց յառաջին բարձ իշխանու-
թե՞դ. մատիր առ իս, և 'ի նոյն համբաւ
արութեան քո պայծառասցիս: Եւ Ար-
բուն՝ և նա ներողութեան հանդիպեսցի:
Այսօր ոչ ոք սգասցի: Եւ զայլ ապըս-
տամբսն 'ի միասին լռեցուսցուք:

ՊԱՏՐԱՄ

Արա տէր զբարին յաչս քո. այլ ես
ընդ մարդասէր կամս քո յաւէտ յապուշ

կրթեալ եմ. մինչև ոչ ինչ հոգալ զբա-
րեացն առ իս: Քանզի որ բարձիւդ աւա-
գութեան զնմանութիւն Աստուծոյ բե-
րես յանձին, այլ և գթութեամբ և մար-
դասիրելովդ առ մարդիկ՝ ամենայնիւ զու-
գական նմին գտար: Ո՛ աստուածիմաստ
թագաւոր. յայսմհետէ և առ պատուան-
դանիդ կալ՝ ինձ պարգև մեծ է: Առ սայր
սուսերի նենգաժոտ առն իբրև զիս՝ աջ
խաղաղութեան մատուցանել, զայս և
զմտաւ անգամ ածել իցէ՞ հնար: Այլ
դու արքայ. դու գրեալդ ընդ մահկա-
նացուս, 'ի վեր քան զհասողութիւն մտաց
մահկանացուաց առաքինացար: Ես յու-
սահատ 'ի կենաց, ըստ բերել դիպացն և
ըստ պահանջել օրինաց դատաստանին՝
կեղծէի քաջութեան խորհրդով փափա-
քել մահուան, և ոչ յանձին ունել զկեն-
դանութիւն վատութեամբ հանդերձ:
Արդ յապուշ հարեալ՝ ոչ եթէ միայն
ստիպիմ փոխել զբարբառն, այլ եթէ
հնար ինչ իցէ՝ զամենայն լեզուս հնչեցու-
ցանել ընդ անպատում անյիշաչարութի՞
քո 'ի գովութիւն. փոխանակ այսր ամե-
նայնի արժանի գահակալ զքեզ միայն Ճա-
նաչեմ աթոռոյդ, և 'ի նոյն անմահանալ
քեզ մաղթեմ, այնպէս՝ զի եկեսցէ ժա-
մանակ, և յերկնից 'ի բարձանց ակնար-

կեալ քո 'ի տառապեալ ազգս այս Հայոց, խնամակալ լինիցիս նոցա և ձեռնտու, խաղաղաւէտ անդորրանալ ամենեցուն յերկրի և յերկինս ընդ քեզ:

ԸՏՐՑԵՐԱԷՑ

Տէր արքայ, հաճեսցիս ընդ իս զի զսէրն աղօտացեալ՝ հաւատարմութեան երդմամբ անդրէն հաստատեցից. և յայսմ հետէ գործք արդեանցն վկայ անսուտ կացցեն: Եթէ անարգաբար յեղծումն եդի և յապականութիւն զսուրբ սէր բարերարի սիրելւոյ, յայսմ հետէ երկնաւոր հրով վառեալ՝ անշէջ պահեցից, մի՛ ևս ինչ ծուխս հանել չարեաց: Տացէ Աստուած յերկայն աւուրս բարութեան ճոխանալ քեզ. և ինձ յաջողեսցէ նախանձաւոր փառաց քոց՝ բազում անթիւ մահունս կրել վասն քո, փոխանակ կենացըն զոր 'ի քէն արդ ընկալայ:

ԸՇՈՏ

Հայր իմ և տէր, և ես արդ 'ի ցնծութենէ սրտիս այլ յայլմէ լինիմ, զի մեծի և վսեմախոհ Թագաւորի որդի գտայ՝ որ գիտէ զհուրն 'ի ցօղ փոխարկել, զպատկեր Աստուծոյ յանձին բերելով յերկրի: Ես ստիպէի զքեզ չներել, այլ ներեսցես

և ինձ: Արդ հայեցեալ յարդարութիւնն Աստուծոյ գիտացի՝ զի ոչ ուսանէք երկիւղ զքեզ կալցէ. ամենեքին այսուհետև՝ ի հլու հանդարտութեան կացցեն, զծա- ռայութիւնն քեզ՝ փառս անձանց գրե- լով. և ոչ ոք այլ հակառակ քո սուր վե- րացուսցէ. զի քաջ գիտացեր յաղթող հանդիսանալոցդ ամենեցուն: Առաքի- նութիւնք քո կացցեն օրինակ թագաւո- րաց աշխարհի. և յաջողութիւն սրոյն հայկայ՝ ի քեզ. յերկարեացես՝ ի գահդ՝ զերծուցանել՝ ի թշնամեաց ըստ յառա- ջագոյն ժամանակացն զաշխարհս մեր. մինչև դիւցազունք մեր նախանձ քան զիւ- րեանց խաղաղ վայելս նկատեալ աստէն բարութիւնս, քև երանի մեզ որդւոց իւ- րեանց կարդասցեն. և Քրիստոսի անուն յաշխարհս մեր պայծառացեալ, իբրև՝ ի վայրէ տաճարի արփւոյն՝ աստի ընդ ամե- զեր փայլեսցէ:

ՍՄԲԱՏ

Ընդ բարեգուշակ մաղթանս յաջողու- թեան բերկրի սիրտ իմ. այսպէս կատա- րեսցի. և Աստուած ընդ մեզ անմեկնելի բնակեսցէ. հոյակապ տաճարք կանգնեա- ցին նմա յաշխարհս մեր անթիւք: Եւ մեք եկցուք արդ օրհնել զանէն բարձրեալ՝

առաւաւցուցանել՝ի մեզ զգթութիւն իւր:
Զայն տուք և դաշնակցաց ամենեցուն՝
եթէ ծանեաւ ալքայ զամենայն, և չնո-
հեաց, եթող:





18/II